Այս բոլորը վկայում էին այն մասին, որ սիրիական խոշոր բուրժուազիան և կալվածատերերն ի վիճակի չէին վերացնել կամ կանգնեցնել երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական զարգացման այն ընթացքը, որի հիմքը դրեցին 1958 թ. ազդարարչին ռեֆորմը և 1961 թ. հուլիսյան զեմոկրատները:

Սակայն բուրժուա-կալվածատերական շրջաններին հաջողվեց համաձայնության գալ բանակի հրամանատարության հետ, 1962 թ. ապրիլի 2-ին Սիրիայի նախկին պրեզիդենտ Մուսթաֆա Քուաթլիի նախաձեռնությամբ Հոմսում կայացավ Գամալուսի զինվորական գլխավոր հրամանատարության ներկայացուցիչների հանդիպումը Հալեպի և հարավի բանակային հրամանատարության ներկայացուցիչների հետ: Հանդիպման ժամանակ Հեզաշքման զեմավարները համաձայնություն եկան երկրում դրությունը կայունացնելու ուղղությամբ ձեռնարկվելիք համատեղ միջոցառումների և միջազգային, հասկապես միջաբարական ապարեզում կատարվելիք քալիների շուրջը: Որոշվեց ստեղծել սիրիական զինված ուժերի ընդհանուր հրամանատարություն՝ բազմապես բանակի այն բարձրաստիճան սպաներից, որոնք չէին մասնակցել ռազմական Հեզաշքումներին: Ելնելով դրանից, պետական Հեզաշքումներին մասնակից մի քանի սպաների խորհուրդ արվեց հեռանալ Սիրիայից: Որոշվեց նաև, որ բանակի նոր գլխավոր հրամանատարությունը կազմի ժամանակավոր կառավարություն և Եգիպտոսի հետ միավորվելու հարցի շուրջն անցկացնի հանրաքվե<sup>17</sup>:

<sup>16</sup> Նույն ազգում, 3.IV.1962, „Cahiers de l'Orient contemporain“, 1962, № 48, annec 19, p. 78.

<sup>17</sup> «الشرق» Գամալուս, 3.IV.1962; M. Kerr, The arab cold war, p. 51.

1962 թ. ապրիլին գերագույն հրամանատարությունը բանակցություններ սկսեց շնորհագրկված պրեզիդենտ Նազիմ Կուլոբի հետ՝ երա սահմանադրական իրավունքները վերականգնելու վերաբերյալ: Ապրիլի 16-ին Ահմեդ Քեչիք ալ-Ազմեն կազմեց կառուցիոն կառավարություն, որի մեջ մյուս քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ միասին մասն Բասս կուսակցության երկու անդամներ: Միբիական բանակի հրամանատար գեներալ Զահրեզիներ ստանձնեց նաև պաշտպանության միևնույն պոստը:

Կառավարական զնկարացիայում խոսվում էր Միբիայում սհասարակական ազատությունների վերականգնման, ազգային կապիտալի խրախուսման, 1958 թ. ազրարային օրենքները շնչին փոփոխություններով վերականգնելու, ինչպես նաև մեռնարկությունների շահույթների բաշխմանն ու զնկավարմանը բանվորների մասնակցության, խոշոր ընկերությունների ազգայնացման մասին և այլն: Ալ-Ազմեի կառավարությունը հայտարարեց, որ ինքը հավատարիմ է արաբական միասնության սկզբունքներին<sup>21</sup>:

Սակայն գործնականում այս կառավարությունը նույնպես մտադիր չէր մինչև վերջ շնչյալ հայտարարել Սահմանադիր ժողովի ընդունած հակադեմոկրատական զնկրեաները: Նա աշխատավորական մասսաների հեշման տակ զիմեց միայն մասնակի զիջումներ: Այսպես, 1962 թ. ապրիլի 30-ին վերացվեցին ազրարային ռեֆորմի օրենքի մեջ 1962 թ. փետրվարի 28-ին ազ-Դավալի-րիի կառավարության մուցրած փոփոխությունները: Արագացվեցին կալվածատիրական հողերի բռնագրավման և բաժանման անմպերը, հատկապես երկրի արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջաններում: Բացի բռնագրավված հողերից, գյուղացիներին բաժանվեց մոտ 100 հազար Էա պետական հող<sup>22</sup>, Կրկին ազգայնացվեց տնամասիյա ընկերությունը: Սակայն դրա հետ միասին կառավարությունը մայիսի 24-ին օրենք ընդունեց սիբիական և արաբական բանկերի ազգազգայնացման մասին<sup>23</sup>:

Փորձելով հանգստացնել աշխատավորական մասսաներին և երանց ուղադրությունը շնչել տեսեսական խնդիրներից, Ազմեի

<sup>21</sup> „Cahiers de l'Orient contemporain“, 1962, № 48, année 19, p. 80.

<sup>22</sup> В. П. Вихорова, Экономика современной Сирии, стр. 104.

<sup>23</sup> Լույս ածույմ, „Etudemens, sur la vie“, 1962, mai, année 9, № 100/36, p. 127—134.

կառավարութիւնը Հարց բարձրացրից երկրի զեմնկրաաացման անհրաժեշտութիւն, կուսակցական զործունեութիւն, մամուլի, ցույցերի ու միաինգների ազատութիւն և գրաքննութիւն վերացման մասին: 1962 թ. հանձնաժողով ստեղծվեց երկրի քաղաքական կյանքի հիմունքների մշակման և հասարակական ազատութիւններ տալու համար: Նաև նախատեսվում էր հանձնաժողով ստեղծել սահմանադրութիւն մշակման համար: Քաջի այդ, հանձնաժողով ստեղծվեց արարական երկրների ազազա միավորման ձևերի ու հիմունքների մշակման և այդ երկրների կառավարութիւնների հետ համապատասխան խորհրդակցութիւններ անցկացնելու համար<sup>24</sup>:

Ազգարային սեփարմ կիրառելու ուղղութիւնմը Ազմէի կառավարութիւն գործողութիւնները թեև փոքր լափով էին ստեղծարում կալվածատերերի շահերը, այնուամենայնիվ, առաջացրին նրանց խիստ զգոճութիւնը: Նրանք կառավարութիւնից պահանջեցին առաջին հերթին բաժանել պետական հողերը և միայն զրանց անբավարար լինելու զեպում բուսադրավել մասնավոր հողերը<sup>25</sup>:

Կառավարութիւն տշափավորութիւնից քացաՀալտորնն զգոճ էին նաև խոշոր բուրժուազիան, առևարական և զործարար շրջանները: Նրանք պահանջում էին ստեղծել ազմելի սուժեզ կառավարութիւն, ընդունակ վերականգնելու սահմանադրական կյանքը, բնացնելու վստահութիւն և հանգստութիւն և տերկիրը հասցնելու առաջադիմութիւն նոր քնագծերի: Միրիական բուրժուազիայի պահանջները հետագայում շարադրվեցին Միրիայի առևարական, արդյունաբերական և գյուղատնտեսական պալատների կոնգրեսի կողմից 1962 թ. նոյեմբերին կառավարութիւն համար մշակված հանձնարարականներում: Այնտեղ նշված էր, որ կառավարութիւնը պետք է հրաժարվի ազալնացման քաղաքականութիւնից, պաշտպանի և հարգի մասնավոր սեփականութիւնը, խրախուսի մասնավոր ձեռներեցութիւնը, վերացնի վալլուտային սահմանափակումները և խրախուսի արարական ու ստարերկրյա կապիտալ ներդրումները<sup>26</sup>: Գրա հետ միասին քա-

<sup>24</sup> „L'Orient“, 14.V.1962; M. Kerr, The arab cold war, p. 51; „The Middle East. A survey... 1963“, p. 369.

<sup>25</sup> В. П. Вукторов, Экономика современной Сирии, стр. 105.

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 30:

գաղաքական գործիչների մի խումբ պայքար սկսեց արձակված Սահմանադիր ժողովը վերականգնելու համար, 1962 թ. Հունիսի 8-ին նախկին պրեմիեր մինիստր Քալեդ Ազրմի բնակարանում կայացավ Սահմանադիր ժողովի նախկին 40 անդամների և մի շարք քաղաքական գործիչների խորհրդակցություն, Այնտեղ որոշվեց հրավիրել Սիրիայի ազգային կոնգրես՝ ազգային բույր ուժերը համախմբելու և գործողություն խարտիա մշակելու համար, Այդ կոնգրեսի գումարման համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով<sup>27</sup>։

Հունիսին մի խումբ ակաեազոր քաղաքական գործիչներ, որոնց թվում և Խալեդ ալ-Ազրմը, Ջալիլ աս-Սաիդը և ուրիշներ, խնդրագիր հղեցին պրեզիդենտ Նազիմ Կուզսիին, որտեղ հանգես էին գուլիս երկրի սահմանազրություն և ընտրական օրենքի մեջ փոփոխություններ մտցնելու գնմ և պահանջում էին Սիրիայում վերականգնել պառլամենտական կյանքը<sup>28</sup>։

Սիրիայում իրենց գործունեությունն ակաիվացրին նաև ԱՄՆ-ի հետ միասնության վերականգնման կողմնակիցները, Հուլիսի 7-ին ԱՄՆ-ի հետ միավորման լուսուցիչ ճեքք անցավ Հալեպի տեղաստի գործարաններից մեկի աշխատողների գործազույր<sup>29</sup>։

Քաղաքական իրազրությունը երկրում շարունակում էր մնալ անկայուն և տագնապալի, Մի կողմից պաշտոնապես ընթանում էին միասնությունը նախապատրաստող հանձնաժողովի խորհրդակցությունները, իսկ մյուս կողմից՝ կառավարությունը ձեռքարկում էր ԱՄՆ-ի հետ միասնության կողմնակից սպաներին, Մրան զուգահեռ Գամաախուսի մերձակայքում իրենց գաղտնի ժողովներն էին գումարում Սահմանադիր ժողովի նախկին անդամները, որոնք պահանջում էին հրավիրել Սահմանադիր ժողով 1962 թ. սեպտեմբերին երանք ստացան Կուզսիի բանավոր համաձայնությունը Սահմանադիր ժողով գումարելու և նոր կառավարություն կազմելու մասին<sup>30</sup>։

1962 թ. սեպտեմբերի 13-ին Սահմանադիր ժողովի արտակարգ նստաշրջանը հավանություն ավեց 1950 թ. սահմանազրության մեջ մացրած փոփոխություններին, որից հետո իր լիազրությունները վայր դրեց և, համաձայն 1961 թ. ժամանակավոր

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 89։

<sup>28</sup> «Новейшая история арабских стран», стр. 80.

<sup>29</sup> «الشرق الأوسط», 26.VII.1962.

<sup>30</sup> „L'Orient“, 3, 5, 10.IX.1962.

սահմանադրության, վերածվեց պառլամենտի նրա նախագահ ընտրվեց անկախական Սաիդ Ղազին: Անկախականների մյուս ներկայացուցիչ Խալիդ Ազրմին հանձնարարվեց կազմել կառավարություն, որը և ստեղծվեց սեպտեմբերի 17-ին: Կառավարության կազմում կար 21 միևիսար, այդ թվում՝ Բաասի 3 անդամ, բուրժուա-կալվածատիրական կուսակցությունների 8 անդամ, իսկ մնացածները անկախականներ էին<sup>21</sup>:

Խալիդ Ազրմի կուսիցիոն կառավարությունը արձակեց պառլամենտը և պարտավորվեց մեկ տարվա ընթացքում նախապատրաստել ու անցնացնել պառլամենտի նոր ընտրություններ: Նա խոսաացավ վարել «շեյխի ներքին և արտաքին քաղաքականություն, որը համապատասխանի Սիրիայի բազմալիք» շահերին, «նրա աշխատավորական մասսաների շահերին», պահպանել ագրարային սեփուրի վերաբերյալ սրենքը, «պաշտպանել բուհուրների իրավունքը և, միևնույն ժամանակ, խրախուսել մասնավոր նախաձեռնությունը, «գիտնական շահագնեսություն» հիմունքներով տնտեսական պայմանագրեր ու համաձայնագրեր կնքել «տարերկրյա պետությունների հետ»<sup>22</sup>:

Սակայն իրականում տնտեսության թնկազմաուում Ազրմի կառավարության քաղաքականության հիմքում զրվեցին առևտրական, արդյունաբերական և գյուղատնտեսական պալատների՝ Հալեպում կայացած կոնգրեսի ընդունած հանձնարարականները<sup>23</sup>: Նրա կառավարության քաղաքականությունը, որը ուղղված էր «տարերկրյա կապիտալի հետ տնտեսական կապերի ընդլայնմանը, աշակցություն գտավ արևմտյան պետությունների կողմից: 1962 թ. գեկտեմբերին ԱՄՆ-ի կառավարությունը համաձայնվեց վարկ արամադրել Սիրիային՝ ալրազացների կառուցումը ֆինանսավորելու համար, 1963 թ. հունվարին Ֆրանսիան Սիրիային նրաշխարհից երկարաժամկետ խոշոր բանկային վարկ, իսկ 1963 թ. փետրվարին ԳՅՀ-ի կառավարությունը համաձայնագիր աստրագրեց վարկ արամադրել Սիրիային՝ Եփրատի վրա կառուցվող ամբարտակի առաջին հերթի շինարարությունը ֆինանսավորելու համար»<sup>24</sup>:

21 «Новейшая история арабских стран», стр. 80.

22 В. П. Викторова, Экономика современной Сирии, стр. 50.

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում, էջ 51:

1963 թ. սկզբներին Նշանակալի շափով աճեցին Բաաս կուսակցության զինքերը և դերը նրկրի քաղաքական կյանքում: Ջիշիով այդ կուսակցության և յունիոնիստական<sup>26</sup> կողմակերպությաններն պահանջին, կառավարությունը 1962 թ. Նունիսին հարկադրված էր հայտարարել, որ Միրիան կողջունի ԱՄՆ-ի հետ ֆինանսարկի միասնության հաստատումը<sup>27</sup>: Սակայն, իրականում, նա կոնկրետ ոչ մի քայլ չդիմեց այդ ուղղությամբ: Այդ պատճառով էլ Բաաս կուսակցության ղեկավարությունն ուժեղացրեց իր հարևանները կառավարության վրա: Կուսակցության ղեկավար Սալահ Քիթաբը Միրիայում հաստատված սեփմը որակեց հետադիմական: Կուսակցությունը կառավարությունը մեղադրում էր հատկապես այն բանի համար, որ նա չեղյալ հայտարարեց ազգայնացման վերաբերյալ 1961 թ. զեկրետները<sup>28</sup>:

Ի պատասխան այդ մեղադրանքների, Ազրմի կառավարությունը որոշեց արգելել Միրիայում Բաաս կուսակցության գործունեությունը, փակել քաղ-Բաաս թերթը և Նրա խմբագիր Սալահ Քիթաբին բանտարկել մեկ ամիս ժամանակով: Գրան անմիջապես հեռեց յունիոնիստների ապագիր օրգանների արգելումը: Նրանք մեղադրվում էին թկեզծ յունիոնիստ ապագրելու մեջ, որը թյուրիմացության մեջ է գցում հասարակական կարծիքը<sup>29</sup>:

1962 թ. զեկտեմբերին արվեց միջկուսակցական պայքարը կառավարության ներսում: Բաասի ներկայացուցիչները կազմեցին ասոցիալիստների բլոկ, որը հանդես էր գալիս կառավարության քաղաքականության քննադատությամբ: Նրանք մասնավորապես նկատի ունեին ծփրատի ամբարտակի կառուցումը ֆինանսավորելու համար արևմտագերմանական կառավարության հետ վարվող բանակցությունների ձգձգումը, սիրիական նավթը օտարերկրյա ընկերությունների մասնակցությամբ արդյունահանելու սիրիական կառավարության մտադրությունները և այլն: Գեկտեմբերին պրեզիդենտ Նազիմ Կուդաբի, պրեմիեր մինիստր Նալեզ Ազրմի, գեներալ Զահրեզզինի և Մոսթիսիստական բլոկի ներկայացուցիչ Ազրամ Հաուրանի մասնակցությամբ կայա-

<sup>26</sup> ԱՄՆ-ի հետ միավորման կողմակիցներ:

<sup>27</sup> K. S. Abu Jaber, The arab Ba'ith, p. 75.

<sup>28</sup> «البعث» 6.X.1962; K. S. Abu Jaber, The arab Ba'ith, p. 66.

<sup>29</sup> K. S. Abu Jaber, The Arab Ba'ith, p. 66.

ցավ հասույճ խորհրդակցություն՝ կառավարության մեջ նրանց բռնած զիրքը քննարկելու համար: Այդ խորհրդակցության հանձնարարականների համաձայն կառավարությունը զեկ-տեմբերի 8-ին որոշում ընդունեց պահանջել ԳՏԸ-ից՝ կոնկրետ պատասխան տալ նփրատի ամբարտակի շինարարության ֆինանսավորմանը մասնակցելու մասին, մինչև 1963 թ. մարտը օրինադրի նախապատրաստել քաղաքական կուսակցությունների վերակառուցման վերաբերյալ, իսկ 1963 թ. ամռանը անցկացնել պառլամենտական ընտրություններ<sup>30</sup>:

1962 թ. զեկտեմբերի 23-ին կառավարական հրամանագրով վերացվեց արտակարգ դրության մասին օրենքը, որ մտցվել էր 51 ամիս առաջ: Դրա փոխարեն ընդունվեց նոր օրենք, ըստ որի, արտակարգ դրություն մտցնելու համար անհրաժեշտ էր կառավարության անդամների 2/3-ի համաձայնությունը և պառլամենտի հավանությունը<sup>31</sup>:

1963 թ. հունվարի կեսերին սիրիական բանակի զորամասեցը Դամասկոսում, Կաթանայում և Կունեյարայում զննապետներ Արզուլ Քարիմ Նահլավյի, Մուհիբ Հիլալի, Ֆաիզ Ռիֆատի և Ֆախուրի Օմարի հրամանատարությամբ խալեզ Ալքաժի կառավարությունը տապալելու անհաջող փորձ կատարեցին<sup>32</sup>: Հեղաշրջման կազմակերպիչները պահանջում էին Ջահրեզզիեի հրամարականը: Բացի այդ, նրանք պահանջում էին արգելել Ակրամ Հաուրանիի գործունեությունը Սիրիայում, թույլ չտալ, որ Սիրիայի կոմկուսի գլխավոր քարտուղար Խալեզ Բեկզաշը վերադառնա Սիրիա, բանակից ազատել բոլոր ձախ բարձրաստիճան սպանեցին, լրիվ վերակառուցել սիրիական բանակը և վերանայել կառավարության քաղաքականությունն արաբական հարցում<sup>33</sup>:

Հարևան Իրաքում 1963 թ. փետրվարին իշխանության անցումը Բաաս կուսակցության ձեռքը էլ ազելի ստեղծացրեց սիրիական բաասականների զիրքերը: Նրանք բացահայտորեն ողջունում էին Իրաքում տեղի ունեցած հեղաշրջումը և այնտեղ հաստատված ռեժիմը<sup>34</sup>: 1963 թ. փետրվարի 17-ին իրաքյան կառա-

<sup>30</sup> „L'Orient“, 8.XII.1962.

<sup>31</sup> «Honeyshaya istoriya arabskix stran», str. 80.

<sup>32</sup> „L'Orient“, 15.I.1963.

<sup>33</sup> „Chronology of Arab Politics“, Beirut, 1963, vol. I, № 1, p. 49.

<sup>34</sup> «الوثائق العربية ١٩٦٣», بيروت ١٩٦٤ ص ٢٧.



վարութեան հրահրով Միշել Աֆլախի ղեկավարութեամբ Բաղդադ ժամանեց սիրիական Բաաս կուսակցութեան պատվիրակութիւնը՝ քննարկելու Իրաքի հետ Սիրիայի միավորման նախագիծը։ Այդպիսի ինքնուրուշութիւնը կառավարութեան նկատմամբ սպառնացիւ մեղ գտնվող կուսակցութեան հոգմից, զկայում էր նրա գիրքերի զգայի ուժեղացման մասին։

Փեայտե հալիզ Ազըմի կառավարութիւնը հանդես էր գալիս ընդդէմ Բաաս կուսակցութեան, սակայն զերշինիս ճշումն այնքան ուժեղ էր, որ սրտացին զործերի միեխառը ստիպման էր կառավարութեան անուանից հրապարակել մի հայտարարութիւն, որտեղ կոչ էր արժում ֆեդերացիա հիմնել Սիրիայի և Իրաքի միջև<sup>64</sup>։ Սակայն դա չվերացրից քաղաքական պայքարը մի կողմից պրեմիեր մինիստր հալիզ Ազըմի, իսկ մյուս կողմից՝ քաասականների և լուսինիստական մյուս կողմակերպութիւնների միջև Ամրոզ փետրվար ամսին շարունակվեց կառավարական հեղաժամը, որը ծագեց ՎՍՍՍՍՍՍՍՍՍ կայսրները կազմակերպութեան և Բաաս կուսակցութեան անդամ մինիստրների հրամարակների հետեանքով։

Այդ հղանմամբ հնարավոր չեղավ լուծել սովորական միջոցներով 1963 թ. մարտի 8-ին Սիրիայում կատարվեց նոր պետական հեղաշրջում։ Պրեզիդենտ Նազիմ Կուզսին, զենեւրալ Հահրեզդիէր, կառավարութեան մինիստրները, ինչպես նաև Ակրամ Հասրանին ձերբակալվեցին։ Պրեմիեր մինիստր հալիզ Ազըմը իր ընտանիքով ասպատանեց թուրքական զենայնատանը<sup>65</sup>։ Սկզբում հեղաշրջման կազմակերպիչներն էին սիրիա-իւրալիական գիւնարագարի գծի սիրիական զորքերի հրամանատար, զենեւրալ մայր Հիյազ Հարիրին, զինվորական հետախուզութեան պետ Ռաշիդ Քուսեյնին և Մուհամեդ ա-Սուֆին, որը պատասխանատու պաշտոն էր զբաղում սիրիական քանակի զլիավոր շտաբում։ Սակայն Քուսեյնին և ա-Սուֆին զերշին պահին հետացան զաւարտութիւնից, պատճառարանելով, թէ հեղաշրջման մասին լուրերը հայտնի են զարձել կառավարութեանը։ Հարիրին որտեղ զործել ինքնուրուշ, իր ծրագրերի մասին նախօրոք տեղյակ պահելով Բաասի ղեկավարութեանը և ապահովելով քաասական սպաների աշակցութիւնը<sup>66</sup>։ Այդ պատճառով էլ Բաասը թեև անմիջական

<sup>64</sup> «الوثائق العربية» ص 31

<sup>65</sup> «Пресса», 9.II.1963.

<sup>66</sup> M. Kerr, The arab cold war, p. 38; «Chronology of Arab Politics», 1963, v. 1, № 1, p. 55.

մասնակցութիւն շունեցա՛յ Հեղաշրջման կազմակերպման գործում, սակայն դարձա՛յ միակ ոչ ռազմական խմբավորումը, որին կարող էր դիմել Հարիրին՝ կառավարութիւն կազմելու առաջարկութեամբ: Միրիական բուրժուազիայի քաղաքական խճճավորումներն այդ պահին իրենց վերջնազանապէս Հեղինակազրկել էին մասսաների այցում:

Մարտի 9-ին Քաաս կուսակցութեան ղեկավար Սալահ Քիթաբի գլխավորութեամբ կազմվեց նոր կառավարութիւն: Նրա մեջ մտած 20 մինիստրներից 10-ը Քաաս կուսակցութեան անդամներ էին: Մնացած 10-ը ներկայացնում էին բանկախականներին և յունիտեթական կազմակերպութիւնների ղեկավարներին, Կառավարութեան մեջ մտան նիճաղ ալ-Կասիմը՝ «Միացյալ արաբական հակառիցք», Սամի Սուֆանը՝ «Սոցիալիստական միասնութեան շարժումից», Խանի ալ-Հինդիին և Զիճաղ Դախին՝ «Արաբական ազգային շարժումից» և ուրիշներ<sup>67</sup>:

Հարկ է նշել, որ բաասականների իշխանութեան գլուխ անցնելը Միրիաում շուեկիցվեց այնպիսի սանձարձակ բռնութիւններով, ինչպես Իրաքում: Բայց այստեղ ևս կատարվեցին բազմաթիվ ձեռքարկութիւններ, արգելվեցին աշխատավորների միտինգներն ու ցույցերը, հետապնդվում էին մյուս կուսակցութիւնները:

Նոր կառավարութեան հայտարարութեան մեջ նշվում էր, որ նա հանդես է գալիս «հանուն արաբների միասնութեան և արաբական սոցիալիստական հասարակութեան կառուցելու», և որ նա իր «հիմնական խնդիրը համարում է ԱՄՆ-ի և Իրաքի հետ Միրիայի միութեան հիմնումը»<sup>68</sup>:

Մարտի 24-ին սրենսդիր և գործադիր իշխանութեանը հանձնելովեց «հեղափոխական հրամանաարութեան ազգային խորհրդին» (ՀՀԱԿ): Նրա նախագահ և սիրիական բանակի հրամանատար նշանակվեց գններալ լեյտենանտ Լուեյ ալ-Աթաթին:

Քաաս կուսակցութեանը թեև անցա՛յ իշխանութեան գլուխ, սակայն այդ շրջանում ժողովրդական մասսաների մեջ շունեք լայն հենարան: Այդ պատճառով էլ նրա առջև կանգնած կարևոր խնդիրներից էր իր քաղաքական դիրքերի ամրապնդումը, որին և

<sup>67</sup> M. Kerr, The Arab cold war, p. 60; «Chronology of Arab politics», 1963, v. I, № 1, p. 56.

<sup>68</sup> «الوثائق العربية» ص ٥٥

ետ փորձեց Հասնել, Հայտարարելով, որ պատրաստ է բանակցություններ սկսել ԱՄՆ-ի և Իրաքի ղեկավարների հետ՝ արտապահ ֆեդերալիզ պետություն ստեղծման հարցի շուրջը:

Մարտի 10-ին բանակցություններ սկսվեցին իրաքյան պատվիրակության հետ, որին ղեկավարում էր Իրաքի պրեմիեր մինիստրի տեղակալ և արտաքին գործերի մինիստր Ալի Սալահ Սաադին: Մարտի 11-ին հրապարակվեց սերիա-իրաքյան համատեղ հայտարարություն, որանց ասված էր, որ երկու կողմերն էլ ամիսանուսթյան նպատակներին հարցում ունեն միանման տեսակետներ: Երանք անհրաժեշտ գտան ընդլայնել համագործակցությունը ԱՄՆ-ի, Սիրիական Արաբական Հանրապետության (ՍԱՀ) և Իրաքի միջև նրկու կողմերն ընդգծեցին շարժումների նպատակների նույնությունը: ԱՄՆ-ում, Իրաքում, ՍԱՀ-ում, Ծմենի Արաբական Հանրապետությունում, Ալժիրում և նրանց քաղաքականությունը միավորելու անհրաժեշտությունը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային ասպարեզում՝ «ժողովարարական միասնության նպատակների իրագործման և դրանցան շեղումների ու ընդհանրության լծիանալու քաղաքականություն սկզբունքների ապահովման»<sup>49</sup>:

Մերիայում իրենց գործունեությունն աշխուժացրին յունիոնիստական կազմակերպությունները: Մակայն շուտով ի հայտ եկան որոշակի տարածայնություններ քառասականների և յունիոնիստական կազմակերպությունների՝ «Արաբական միացյալ ճակատին», «Սոցիալիստական միասնության շարժման» և «Արաբական ազգային շարժման» միջև: Թունիոնիստները Մերիայի կառավարությունից պահանջում էին անհապաղ միավորվել ԱՄՆ-ի հետ: Իսկ քառասականները զրո համար առաջ էին քաշում մի շարք նախնական պայմաններ: Եզիպտոսի հետ միավորվելու դուրս ձևերի գեմ հանդես էր գալիս Ակրամ Հասուբեհի խումբը: Այս խմբավորումների միջև մշտական բանակցություններ էին ընթանում, որպեսզի մինչև սիրիական պատվիրակության կահիրե մեկնելը կարգավորեն իրենց միջև եղած տարաձայնությունները: Ի վերջո, երանք որոշեցին առժամանակ զազարեցնել վեճերը<sup>50</sup>:

1963 թ. մարտի կեսերին ԱՄՆ-ի կառավարության հետ բանակցությունների համար կահիրե մեկնեց սիրիական պատվիրակությունը՝ Սալահ Բիթարի ղլխավորությամբ: Հետագայում երան-

<sup>49</sup> «Пресса», 12.III.1963.

<sup>50</sup> M. K e r i, The Arab cold war, p. 107.

միացավ իրաքյան պատվիրակությունը: Բանակցությունները, որոնք ընթացան երեք փուլով, տեղի են մարտի 14-ից մինչև ապրիլի 17-ը: Սակայն բանակցությունների արդին առաջին փուլում միացյալ պետության ղեկավարության և քաղաքական կուսակցությունների զորեականության, ինչպես նաև այլ հարցերի շուրջ լուրջ տարաձայնություններ ծագեցին պրեզիդենտ Նասերի և սիրիական պատվիրակության միջև<sup>51</sup>:

Կահիրեում շարունակվող բանակցությունների պահին սիրիայում կրկին սրվեցին տարաձայնությունները Բաաս կուսակցության և յունիոնիստական խմբերի միջև, սպասնալով ձախողել կահիրեի բանակցությունները: Յունիոնիստները պահանջում էին սիրիական պատվիրակության մեջ մտցնել յունիոնիստական բուլթը խմբերի ներկայացուցիչներին: Բաասը ստիպված էր զիջել Այդ պահանառով էլ ապրիլի 6-ին, երբ սկսվեց բանակցությունների երրորդ փուլը, սիրիական պատվիրակության կողմը զգալի չափով փոխվել էր: Բաասի ներկայացուցիչներն այնտեղ այլևս մեկնաշեղծ զիրք չունեին, իսկ պրեմիեր մինիստր Սալահ Քեթարի փոխարեն պատվիրակության ղեկավար զարմավ ՀՀԱԽ-ի նախագահ, պեներալ լեյտենանտ Լուիյալ-Աթաֆին<sup>52</sup>:

Վերջապես՝ 1963 թ. ապրիլի 17-ին, ԱՄՂ-ի, Սիրիայի և Իրաքի միջև ստորագրվեց համառոտ հայտարարություն՝ բանակցությունների արդյունքների մասին: Այնտեղ ասված էր, որ երեք պետությունների պատվիրակությունները որոշեցին համապատասխան հանրաքվե անցկացնելուց հետո ստեղծել նոր ֆեդերատիվ պետություն՝ Արաբական Միացյալ Հանրապետություն: Նոր պետությունը քաղկացած էր լինելու երեք շրջաններից. եզիպտական, սիրիական և իրաքյան: Նրա մայրաքաղաքը լինելու էր Կահիրեն: Նոր պետության կենտրոնական իշխանության իրավասություն մեջ մտնելու էին արտաքին քաղաքականությունը, պաշտպանությունը, ազգային անվտանգությունը, ֆեդերալ հարկերը, ներքին և արտաքին փոխադրությունները, ֆեդերացիայի քյուշեի մշակումը, մաքսային հարցերը, ֆեդերացիայի տնտեսական քաղաքականություն և տնտեսական զարգացման ծրագրերի մշակումը, երեք շրջանների տնտեսական զարգացման պլաններին

<sup>51</sup> «الوثائق العربية» ص ٥٦, M. Kerr, The Arab cold war, p. 64.

<sup>52</sup> «الوثائق العربية» ص ٢١٥

կոորդինացիան, երեք շրջանների միջև ապրանքափոխանակու-  
թյան և բոլոր զննարումների կոորդինացիան, տեղեկատվության  
գործի ղեկավարումը, մշակույթի և կրթության բնագավառում աշ-  
խատանքների կոորդինացումը:

Նոր պետության բարձրագույն օրենսդիր մարմին Համադրվեց  
ազգային ժողովը՝ կազմված երկու պալատներից, գեպուտատնե-  
րի պալատից, որն ընտրվելու էր ուղղակի զաղտնի քվեարկու-  
թյամբ՝ յուրաքանչյուր շրջանի բնակչության թվին համապատաս-  
խան և ֆեդերալ խորհրդից, որը բաղկացած էր լինելու յուրա-  
քանչյուր շրջանի հավասար թվով ներկայացուցիչներից: Ֆեդերալ  
կառավարությունը պատասխանատու էր լինելու ազգային ժողովի  
առջև:

Ֆեդերատիվ պետության ղեկավար Հանդիսանալու էր ազգա-  
յին ժողովի կազմից 4 ասորի ժամանակով ընտրված պրեզիդենտը:  
Նա լինելու էր նաև ղեկաված ուժերի գլխավոր հրամանատար և  
պաշտպանության ազգային խորհրդի նախագահ: Պրեզիդենտը  
պետք է իրավունք ունենար արձակել օրենքներ, առաջարկել և  
մերժել զրանք, նշանակել պրեմիեր մինիստր և մինիստրներ,  
գործերի հրամանատարներ, ֆեդերալ բարձրագույն զատարանի  
անդամներ, ֆեդերալ պետության բարձրաստիճան պաշտոնյա-  
ներ: Նախատեսվում էր ընտրել երեք վիցե պրեզիդենտ՝ յուրա-  
քանչյուր շրջանից մեկական:

Բացի այդ, ԱՄՆ-ի երեք շրջաններից յուրաքանչյուրն ունե-  
նալու էր իր օրենսդիր խորհուրդը, որը օրենքներ էր ընդունելու  
ավյալ շրջանի համար, ինչպես նաև իր կառավարությունը, որը  
պատասխանատու էր լինելու ավյալ շրջանի օրենսդիր խորհրդի  
առջև:

Երեք երկրների պատվիրակությունները համաձայնվեցին, որ  
անցման շրջանում իշխանության օրենսդիր և գործադիր մարմինը  
լինելու է պրեզիդենտական խորհուրդը, որի նախագահ լինելու  
էր պրեզիդենտը: Պրեզիդենտական խորհրդում երեք շրջաններն  
էլ ներկայացվելու էին հավասար թվով անդամներով: Որոշում-  
ներն ընդունվելու էին մայնների պարզ մեծամասնությամբ, բայց  
պրեզիդենտն ունենալու էր վետոյի իրավունքը:

Նոր ֆեդերատիվ պետության սահմանադրությունը պիտի  
մշակվեր և ժողովրդական հանրաքվեի հովանությունն արժանա-  
նար առաջիկա 5 ամիսների ընթացքում: Այն իր ուժը պահպանե-  
լու էր ամբողջ անցման շրջանի համար, սակայն ոչ ավելի, քան

20 ամիս նրա ընդունման օրից: Սահմանադրության տեքստի մշակման համար ստեղծվեց հատուկ կոմիտե: Սահմանադրությանը հավանություն տալուց հետո պետք է ստեղծվեր միասնական զինվորական հրամանատարություն, արտաքին քաղաքականության խնդիրներով զբաղվող կոմիտե, արարական փոխհարաբերությունների և արարական ընդհանուր շուկայի կոմիտե և մի շարք այլ կոմիտեներ, որոնք պետք է նախապատրաստեն ֆեդերալ ինստիտուտների ստեղծումը: Նաև համահայնություն ձևեր բերվեց, որ յուրաքանչյուր շրջանում գործող օրենսդրությունը մնալու է ուժի մեջ, մինչև որ այն փոխարինվի համապատասխան սահմանադրական մարմնի կողմից<sup>23</sup>:

Այդպիսիք էին նշխարաստի, Միրիայի և Իրաքի ծրագրվող միավորման սկզբունքները:

Միրիայի կոմիտեի Կենտկոմն այդ կապակցությամբ հրապարակված հայտարարության մեջ կառավարությանը նախազգուշացնում էր՝ ֆեդերացիա ստեղծելու գործում չզիմել հապնեպություն, որը, նրա կարծիքով, բնածագույն վտանգ էր ներկայացնում ոչ միայն Միրիայի, այլև արարական ազատագրության ընդհանուր գործի համար: Եկառաջին թագի իսկական ամուր միասնություն, պահանջում է նախ և առաջ հասառուել զեմոկրատական ազատություններ, ստեղծել կառավարման այնպիսի նախ, որը հանդիսանա ազատ պաշտամենական ընտրությունների արդյունք, որպեսզի ժողովրդի ներկայացուցիչները կարողանան ազատորեն արտահայտել իրենց կարծիքը ֆեդերատիվ միության հիմունքների և ներ մասին: Այսպիսին է առողջ հիմքերի վրա խարսխված արարական միության ազատագրական զեմոկրատական ուղին, որը կապահովի նրա ամրությունը», — ասված էր Միրիայի կոմիտեի Կենտրոնական կոմիտեի հայտարարության մեջ<sup>24</sup>:

Ի կատարումն այդ բանի 17-ի որոշումների, Միրիայում կազմվեց հատուկ հանենաժողով, ֆեդերացիա ստեղծելու կապակցությամբ սահմանադրական և իրավական փոփոխություններ մտցնելու հարցը քննարկելու համար: Կահիրեի մեկնեց մի նոր պատվիրակություն՝ դպրոցական ծրագրերի, կոմունիկացիաների

<sup>23</sup> «الوثائق العربية» من ٤٨٢—٤٩٧

<sup>24</sup> «[Проблемы мира и социализма], 1967, № 7, стр. 49.

և ֆեզդերացիայի քաղաքացիության ստատուսի միտրինակություն մտցնելու համար 1963 թ. մայիսի 1-ից Միրիայում և Իրաքում բարձրացվեց ֆեզդերացիայի զրոշը<sup>55</sup>:

Բիթարի կառավարությունը մի շարք քայլեր կատարեց զոյություն ունեցող ռեժիմին յունիոնիստական և սոցիալիստական տեսք տալու համար 2ևրրակալվեցին մի քանի քաղաքական գործիչներ և սպաներ, որոնք մեղադրվում էին 1961 թ. նոյեմբերից Միրիայի անշատուսը կազմակերպելու մեջ, նրանցից ոմանք զրկվեցին քաղաքացիական իրավունքներից<sup>56</sup>, Մայիսի սկզբներին կրկին ազգայնացվեցին սիրիական բանկերը<sup>57</sup>:

Սակայն շատ շանցած հարարերությունները երեք պետություններին, հատկապես Միրիայի և ԱՄՆ-ի միջև կրկին սրվեցին: Միրիական կառավարությունը սկսեց յունիոնիստական երեք կազմակերպությունների ակտիվիստներին հետապնդումը, նրանց ներկայացուցիչները հանվեցին ՀՀԱԿ-ի կազմից<sup>58</sup>:

Մայիսի 3-ին եգիպտական կառավարությունը որոշեց որոշ ժամանակով հետաձգել մայիսի 12-ին նշանակված բանակցությունները՝ միացյալ զինվորական հրամանատարություն ստեղծելու վերաբերյալ: Այդ որոշումը պատճառաբանվում էր նրանով, որ զինվորական միավորումը չի կարող արդյունավետ լինել, եթե քաղաքական միավորումը սպառնալիցի տակ է: Քաղաքական միավորման տակ հասկացվում էր երեք պետություններում քաղաքական ճակատներին ստեղծումը, այսինքն՝ հանուն միասնության հանդես եկող բոլոր քաղաքական ուժերի միավորումը: Քանի որ այդպիսի հակառ ԱՄՆ-ում հանձին Արաբական Սոցիալիստական Միության արգեն զոյություն ունի, ուստի մնում էր նման ճակատներ ստեղծել Միրիայում և Իրաքում: Սակայն յունիոնիստական կազմակերպություններին և Բաաս կուսակցության միջև տարաձայնություններն այնքան խորն էին, որ ազգային ճակատ ստեղծելու վերաբերյալ բանակցություններն արդյունք չափեցին<sup>59</sup>:

<sup>55</sup> „Chronology of Arab politics“, 1963, v. 1, № 2, p. 159.

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 139—140:

<sup>57</sup> „Arab political documents“, 1963, p. 253—254.

<sup>58</sup> Г. И. Мухомин & Смыслов армян в Сирии («Полное армян», 1963, № 34, стр. 14).

<sup>59</sup> K. S. Abu Jaber, The Arab Be'ith, p. 71.

1963 թ. ապրիլի վերջերին սիրիական բանակից Հնուացվեցին 47 յունիոնիստ սպաներ, որոնք անմիջապես փոխարինվեցին բասաական սպաներով<sup>60</sup>։ Մալխի 2-ին դրան հաջորդեց կառավարական ճգնաժամ, որովհետև Բիթարի կառավարության 6 յունիոնիստ միևնույնիստ ի նշան բազմի հրաժարական ավելցին, նշանք պահանջում էին Բասս կուսակցության հետ համապարհերկայացուցիչներ ունենալ կառավարության կազմում և ՀՀԱԿ-ում։ Չնայած Բիթարը խզորեց նրանց հետ վերցնել իրենց հրաժարականները և համազորակցել գոյություն ունեցող զմավարությունները հազիմահարիու համար<sup>61</sup>, յունիոնիստների հակահառաժարական էլույթները չէին զազարում։ Մալխի 8-ին մեծ հուզում տեղի ունեցավ Հալեպում<sup>62</sup>։ Այդ ելույթ սրը կառավարությունն արգելեց յունիոնիստական կազմակերպությունների պատկանող շաւվիհաս և սՄասուֆ ալ-Ջամահիրա թերթերի հրատարակումը, որոնք, իբր, միասնության գործին վնասում էին<sup>63</sup>։ Մալխի վերջերին հուզումներ տեղի ունեցան Գամաակոսի միբնակա Քարուն վայրում, որտեղ յունիոնիստները կենտրոնացնելով զբաժանակալին և հետևակալին զորամիավորումներ, կառավարությունից պահանջեցին անհապաղ կենսազործել միասնության վերաբերյալ ծրագրերը և վերականգնել բանակից վարսված սպաներին։ Յունիոնիստների դրան հաջորդած ցույցերը Բիթարի կառավարությանը ստիպեցին 1963 թ. մալխի 10-ին հրաժարական տալ<sup>64</sup>։

Նոր կառուցիտն կառավարության կազմումը հանձնարարվեց սՄացիալիստական միասնության շարժման նախկին ղեկավար, սակալն հետազայում ատրաւայնությունների պատճառով նրանից հեռացած Սամի ալ-Ջունգիթին<sup>65</sup>։ Կառավարական ճգնաժամի ալդպիտի նշք կարելի էր դիտել որպես բասաականների մի նոր փորձ՝ մերձենալու յունիոնիստների հետ և հաշտվողական դիրք գրավելու միավորման հարցում։ Սակալն զա միայն արտաքնապես էր այդպես, իրականում երկրում իսկական իշխանությունը սկսեց

<sup>60</sup> „The Middle East. A survey and directory, of...“ 1963, p. 370; K. S. A bu Jaber, The Arab Ba'th, p. 71.

<sup>61</sup> Ibid., p. 71; M. Kerr, The arab cold war, p. 107.

<sup>62</sup> „Chronology of the Arab politics“, 1963, v. I, № 2, p. 140.

<sup>63</sup> ٱلجعثا, 9.V.1963.

<sup>64</sup> „Chronology of the Arab politics, 1963“, v. I, № 2, p. 140; K. S. A bu Jaber, The Arab Ba'th, p. 72.

<sup>65</sup> „Chronology of Arab politics“, 1963, v. I, № 2, p. 142.



աստիճանաբար անցնել բանակի ձեռքը, որտեղ յունիոնիստներին հնաարցնելուց հետո գերակշռող դիրք էին զբաղում բաասականները:

Կառայցիոն կառավարություն ստեղծելու ուղղությամբ Սաֆի ալ-Քունդիի փորձերը վերջացան անհաջող և երեք օր անց՝ 1963 թ. մայիսի 13-ին, կառավարության կազմումը կրկին հանձնարարվեց Սալահ Բիթարին: Նոր կառավարության կազմում չկար ոչ մի յունիոնիստ և նրա թուրք անգամները փաստորեն Նշանակվեցին «Հեղափոխական հրամանատարության ազգային խորհրդին կողմից»<sup>66</sup>:

Կառավարության հայտարարության մեջ ասված էր, որ նա անկեղծորեն ցանկանում է երկրի թուրք քաղաքական ուժերի համադրածակցությունը, որպեսզի հնարավոր գտնես միավորման վերաբերյալ համաձայնագրի իրագործումը և որ Ֆեզեկրացիայի ստեղծումը մնում է նոր կառավարության գլխավոր խնդիրը<sup>67</sup>:

Սակայն Բիթարի կառավարության մեջ յունիոնիստների բացակայությունը առաջ բերեց Միրիայի և ԱՄՆ-ի հարաբերությունների հետագա սրում: 1963 թ. մայիսի 17-ին սալ-Ահմադ Թերթում ազգազրկեց նրա խմբագիր և ԱՄՆ-ի հայտնի հասարակական գործիչ Հասանեյն Հեյկալի հոգվածը, որտեղ նա գրում էր, որ ԱՄՆ-ի և սիրիական Բաասի ղեկավարների հարաբերությունները այն աստիճան են լարվել, որ անհնար է գտնելու որևէ համադրածակցություն կամ սխաղաղ զույակցություն<sup>68</sup>:

Ապրիլի 17-ի զինվարացիան 1963 թ. հուլիսին ձախողվեց այն բանից հետո, երբ սիրիական կառավարությունը բացահայտեց պետական դավադրություն և ձերբակալեց Իրաքի և ԱՄՆ-ի հետ միավորման կողմնակիցներին: 1963 թ. հուլիսի 18-ին պրեզիդենտ Նասերի հետ սիրիա-եգիպտական հարաբերությունների հարցերը ընկարկելու համար Ալեքսանդրիա մեկնեց սիրիական պատվիրակությունը, զենեքալ լեյտենանտ Լույն ալ-Աթասիի գլխավորությամբ: Այդ նույն օրը Գամաֆոսի բանակի արձակված սպաների մի խումբ կապիտան Մուհամեդ Նաբահանիի գլխավորությամբ Գամաֆոսի կայազորի մի մասի և կապի զվարթյն ունկնդիրների աջակցությամբ, փորձեց գրավել բանակի

<sup>66</sup> „Chronology of Arab politics“, 1963, v. I, № 2, p. 141.

<sup>67</sup> «البعث», 20.V.1963; „Arab political documents“, 1963, p. 260—263.

<sup>68</sup> «الأمم», 17.V.1963.

զլխավոր շտաբի շենքը և ռադիոկայանը: Մակայն փողոցային մարտերից հետո պետական հեղաշրջման այդ փորձը տապալվեց<sup>69</sup>: Դավադրության մասնակիցները ձերբակալվեցին և նրանցից շատերը մահվան դատապարտվեցին: Բիթարի կառավարությունը հեղաշրջման փորձին մեղսակից համարեց յունիոնիստներին և նրանցից 58 հոգու ձերբակալեց: Նրանց թվում կային մարզիկ, որոնք մասնակցել էին Կահիրեի բանակցություններին<sup>70</sup>:

1963 թ. հուլիսի 22-ին պրեզիդենտ Նասերը հայտարարեց, որ սիրիական կառավարության գործողություններն անհնար են դարձնում միավորվելը Միրիայի և Իրաքի հետ<sup>71</sup>:

Սրեց երկրների միավորման պլանների ձախողումից հետո Բասս կուսակցությունը 1963 թ. սոստոսի վերջերին բանակցություններ սկսեց Իրաքի կառավարության հետ՝ երկու երկրների միավորման և միասնական պետություն ստեղծելու հարցի շուրջը: Կարճիքների փոխանակման համար Իրաք մեկնեց սիրիական մի պատվիրակություն: Մի այլ պատվիրակություն Իրաք ժամանեց Եստեհսական համագործակցության զեբարերյուլ համաձայնագիր կնքելու շուրջը բանակցություններ վարելու համար<sup>72</sup>:

Իրաքի կառավարությունը, նախքան Միրիայի հետ միավորման հարցի քննարկումը, փորձեց միջնորդի դեր կատարել Միրիայի և ԱՄՆ-ի միջև: Օգոստոսի 21-ին Կահիրեի մեկնեց իրաքյան պատվիրակությունը՝ Իրաքի պրեզիդենտ Աբեֆի զլխավորությամբ: Նրա նպատակն էր փորձել համաձայնության զալ հանրաքվե անցկացնելու շուրջը, եթե ոչ նշված ժամկետին, ապա զոնն ազելի ուշ՝ եզրպատ-սիրիական հարաբերությունները կարգավորվելուց հետո: Մակայն Աբեֆի առաքելությունը հաջողությամբ չպսակվեց: ԱՄՆ-ի ղեկավարները նրան հասկացրին, որ Բասս կուսակցության հետ Միրիայում և Իրաքում համագործակցելն այդ կուսակցության ներքին քաղաքականության պատճառով անհնարին էր<sup>73</sup>:

Իրանից հետո Աբեֆը ժամանեց Դամասկոս, որտեղ սիրիական կառավարության հետ նրա վարած բանակցություններն ա-

<sup>69</sup> «*الجمهورية*», 19.VII.1963.

<sup>70</sup> Նույն տեղում, 21, 22, 25.VII.1963.

<sup>71</sup> Նույն տեղում, 23.VII.1963.

<sup>72</sup> Նույն տեղում, 14.VII.1963.

<sup>73</sup> K. S. Abu Jaber, The arab Ba'th, p. 76.

վարտվեցին պայմանավորվածությամբ այն մասին, որ անհրաժեշտ է Սիրիայի և Իրաքի միջև հաստատել լրիվ տնտեսական միասնություն և այն պետք է իրականացվեր աստիճանաբար: Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում էր ստեղծել տնտեսական միասնական և տնտեսական պլանավորման խորհուրդներ<sup>74</sup>, 1963 թ. հոկտեմբերի 8-ին ստորագրվեց զինվորական համաձայնագիր և ստեղծվեց պաշտպանության գերագույն խորհուրդ: Իրաքի պաշտպանության մինիստրը դարձավ երկու երկրների միացյալ բանակների գլխավոր հրամանատար: Այդ հրամանատարության շտաբը լինելու էր Գամասկոսում<sup>75</sup>:

Սեպտեմբերի 17-ին՝ ապրիլի 17-ի համաձայնագրով նշանակված Հանրաքվեի օրը, Բաասի համարարարական ղեկավարությունը հավաքվելով Բաղդադում, հրապարակեց մի հայտարարություն, որով Սիրիային և Իրաքին կոչ էր անում միավորվելու նախատեսվում էր միասնական պետության պրեզիդենտ ընտրել Արեֆին, իսկ պրեմիեր մինիստր Սալահ Բիթարին<sup>76</sup>:

1963 թ. սեպտեմբերի վերջին Սիրիայում և Իրաքում տեղի ունեցան Բաաս կուսակցության մարզային կոնֆերանսներ, որտեղ ընտրվեց նոր մարզային ղեկավարություն յուրաքանչյուր երկրի համար և ընդունվեցին հանձնարարականներ՝ կուսակցության առաջին 6-րդ կոնֆերանսի համար: Այդ հանձնարարականներից կարևորներն էին՝ Իրաքի և Սիրիայի միջև միության հաստատումը, երկու երկրների կուսակցական կազմակերպությունների միավորումը, ինչպես նաև կուսակցության գաղափարական հիմունքներում համապատասխան ճշտումներ մտցնելու անհրաժեշտությունը<sup>77</sup>: Չնայած Իրաքի հետ մերձեցմանը, Սիրիայում չէին զազարում յունիոնիստների էլույթները, որոնք վճռակտորին պահանջում էին վերականգնել բանակից արձակված սպաներին և անհասպաղ կիրառել ԱՄՆ-ի հետ միավորվելու վերաբերյալ որոշումները:

Բանակում ուժեղացավ պայքարը մի կողմից պաշտպանու-

<sup>74</sup> «البعث», 3.IX.1963.

<sup>75</sup> Vgl. «الوثائق العربية»: The Middle East and North Africa 1964—1965\*, p. 542.

<sup>76</sup> «البعث», 18.IX.1963.

<sup>77</sup> Նայն տեղում, 28.IX.1963.

Քյան մինիստր և գլխավոր շտաբի պետ գններու Ջիյազ Հարիրիի, իսկ մյուս կողմից՝ քասսական սպաների միչև, որոնց գլուխ էր կանգնել պրեմիեր մինիստրի անդակալ և Ներքին գործերի մինիստր Ամին Հաֆեզը։ Հունիսի վերջերին Ամին Հաֆեզը, օգտվելով Ջիյազ Հարիրիի քացականությունից, հրաման արձակեց քանակից արձակելու Ջիյազ Հարիրիի կողմնակից 30 սպաների։ Նորոնց պաշտոններում նշանակվեցին քասսական սպաներ։ Վերագանալով Սիրիա, գններու Հարիրին հարկադրված հաշտվեց կատարված փաստի հետ, շնորհիվ զրկվել էր այն ուժերից, որոնց վրա կարող էր հենվել քասսականների դեմ մղվող պայքարում։

Հեղափոխական հրամանատարության ազգային խորհրդի նախագահ Լուի ալ-Աթաֆին, որի հետ միասին Հարիրին կատարել էր մարտի 8-ի հեղաշրջումը, գերագույնց չգնալով քասսականների հետ, 1963 թ. հուլիսի 9-ին ՀՀԱԿ-ը Հարիրիին հանեց պաշտպանության մինիստրի ու գլխավոր շտաբի պետի պաշտոններից և նրա փոխարեն նշանակեց Ամին Հաֆեզին։ Հուլիսի 27-ին Ամին Հաֆեզը նշանակվեց նաև ՀՀԱԿ-ի նախագահ և սիրիական քանակի գլխավոր հրամանատար։ Ըստ որում, նա պահպանեց նաև պրեմիեր մինիստրի անդակալի, ներքին գործերի մինիստրի և Սիրիայի զինվորական նահանգապետի պաշտոնները։ Այսպիսով, երկրում փաստական ամբողջ իշխանությունն անցավ գններու Ամին Հաֆեզի ձեռքը։

Սակայն շուտով շատ սուր տարածայնություններ երևան եկան ՀՀԱԿ-ի ներսում, որտեղ ուժեղ պայքար ծավալվեց Ամին Հաֆեզի և նրա անդակալ գններու Մուհամեդ Ումրանի միջև<sup>76</sup>։ Այս բոլորն արտացոլում էին Սիրիայում և Իրաքում կառավարող Բաաթի ներսում լուրջարող դադափարական և քաղաքական պայքարը, որն ընթանում էր Միչև Աֆլակի և Սալահ Բիթարի կողմից գլխավորվող կուսակցության համաարարական աչ հետադիմական ղեկավարության և ազգային կազմակերպությունների ազնի լափավոր ղեկավարների միչև։ Ըստ որում, ազգային կազմակերպություններում նախ խմբերի գերքերը զգալի լսփով ուժեղանում էին։

Ներկուսակցական պայքարի և մշտական հակասությունների հիմքը կուսակցության ներսում միմյանց արամագծորեն հակա-

<sup>76</sup> Г. Мирский, Развитие событий в арабском мире («Новое время», 1965, № 6, стр. 5).

ոսկ սոցիալական խազերի և խմբերի առկայությունն էր, որոնց շահերը չէին կարող շրախվել: Կուսակցությունն անդամներ էին քաղաքային մանր բուրժուազիայի պահպանողական շրջանները և նրա ավելի հեղափոխական խազերը, ազգայնական մտավորականները և բանվորները, գյուղական հարուստները և ազքատ գյուղացիները, բարձրաստիճան և շարքային պաշտոնյաներն ու սպաները<sup>78</sup>:

Կուսակցության ներսում տեղի ունեցող պայքարի բնորոշ արտահայտությունն էին 1963 թ. հեկտեմբերին կայացած համարարական Զ-րդ կուսակցական կոնֆերանսի բնգունած որոշումները: Նրանցում մի կողմից արդարացվում էին Բասսի աչ շրջանների հետադիմական և հակակոմունիստական գործողությունները հատկապես Իրաքում, իսկ մյուս կողմից՝ ակնհայտ էին կուսակցության ձախ շրջանների փորձերը՝ իսկապես կանգնելու զարգացման ոչ կուպիտալիստական ուլու վրա: Դա ակնառու երևաց հեղափոխության մեջ բուրժուազիայի դերի բնորոշման մեջ, որանց բնոգծված էր նրա օգտրտունիղմը և արաբական երկրներում նեոգաղութատիրությունը աչակից լինելու հանգամանքը: Կոնֆերանսը հեղափոխության շարժիչ ուժեր համարեց բանվորներին, գյուղացիներին և հեղափոխական մտավորականությունը<sup>80</sup>:

Կուսակցության մեջ ձախ ուժերի դիրքերի ուժեղացումն արտացոլվեց նաև սոցիալիստական երկրների հետ հարաբերությունների վերաբերյալ որոշման մեջ: Բանաձևում եղվեց, որ չնայած Սիրիայի և Իրաքի կառավարությունների հաչակած բլոկներին չմիանալու քաղաքականությանը, ամեն կերպ պետք է ամրապլքել բարեկամական հարաբերությունները սոցիալիստական երկրների ժողովուրդների հետ: Կոնֆերանսի ավարտից հետո բասական մամուլում հրապարակվեցին բազմաթիվ հոդվածներ, որտեղ շեշտվում էր, որ ի սարբերություն կապիտալիստական սիստեմի հետ ունեցած հակասությունների, Բասս կուսակցության և սոցիալիստական երկրների միջև եղած հակասություններն անտազոնիստական չեն: Մատնանշվում էր, որ դրանք միայն զազա-

<sup>78</sup> Ю. Островитенов, Прошлое и настоящее национального социализма партии Баас («Мировая экономика и международные отношения», 1966, № 1, стр. 43).

<sup>80</sup> Նույն տեղում, К. S. Abu Jaber, The Arab Ba'ith, p. 80.

փարսկան և քաղաքական բնույթի են և վերաբերում են սոցիալիզմին անցման ձևերին, մինչդեռ կապիտալիստական սխառածի հետ հակասություններն անառգոնիստական բնույթ են կրում<sup>81</sup>։

Գեռ ազնվին, կոնֆերանսի զաղափարական հանձնաժողովը Հայաստանից, որ Բաաս կուսակցությանը պարբեր էլ խորթ չի եղել մարքսիզմը և շատ զեպքերում եւ զանվել է մարքսիստական գաղափարախոսության ազդեցության տակ և որ բարքսիզմը հանդիսանում է սոցիալիստական զաղափարախոսության ազդուրներին մեկը, որին պետք է օգտվի Բաասը<sup>82</sup>։

Սակայն, եթե կուսակցության ձախ ուժերը փնտրում էին Հակահակապիտալիստական զարգացման, ինչպես նաև բոլոր առաջադիմական ուժերի միավորման և Ազգային ճակատի ստեղծման ուղիներ, եթե զեպքերի զարգացման բնական ընթացքը կուսակցության ատանվող անդամներին ստիպում էր անկեղծորեն ուղղել իրենց նախկին սխալները, ապա կուսակցության աչ զեկավարությունն իրականում մտադիր չէր հավատարիմ մնալ սոցիալիստական զեկավարացիաներին։

Կուսակցության Ծ-րդ Համարաբանական կոնֆերանսը որոշում ընդունեց Իրաքի և Միրիայի ֆեդերատիվ միությունն ստեղծելու մասին։ Այդ միության անտեսական քաղաքականությունը պետք է խորսխվեր սոցիալիստական սկզբունքների վրա։ Մասնանշվեց, որ արաբական երկրների յուրաքանչյուր միավորում անպայմանորեն պետք է նախատեսի նաև ԱՄՆ-ի միացումը՝ որպես չիիրազ անդամ<sup>83</sup>։

Բաասի նորընտիր Համարաբանական զեկավարության մեջ մտան ձախ բաասականների շատ ներկայացուցիչներ։ Թեև կուսակցության զիխավոր քարաուղար մնաց Միշել Աֆլակը, սակայն Համարաբանական զեկավարության կազմում լինորվեցին Բաասի այնպիսի աչ ակնաուվոր գործիչներ, ինչպես Սալահ Բիթարը և Քալիբ Շարիբին<sup>84</sup>։

Բաասի ձախ թևի նշման ներքո երկրում պահպանվեցին աշխատավորների նախկին նգանումները և անցկացվեցին նոր

<sup>81</sup> Եսյե անգում։

<sup>82</sup> Եսյե անգում։

<sup>83</sup> «البعث», 28.X.1963; «Arab political documents», 1963, p. 438—444.

<sup>84</sup> «البعث», 28.X.1963; K. S. Jaber, The Arab Ba'ith, p. 81.

միջոցառումներ վախճնալով կորցնել մասսաների վրա ունեցած ազդեցությունը, Բաասի աչ ղեկավարությունը Հարկադրված էր դիմել զինուժների 1963 թ. հունիսի 23-ի ղեկրեաով որոշ փոփոխություններ մտցվեցին ազրարային ուժերի վերաբերյալ օրենքի մեջ: Ձգալի շահով կրճատվեց Հողատիրության առավելագույն շահը: Կալվածատերերին թողնվող Հողերի շահը սահմանվեց 15—55 հա ուղղվող Հողեր և 80—300 հա շոտոզվող Հողեր<sup>85</sup>: Գրաշնորհիվ ազրարային ուժերը Միրիայում գարնավ ամենամարտական ամբողջ Արարական Արևելքում:

1963 թ. հոկտեմբերին փոփոխության ենթարկվեց Եկզրարային Հարաբերությունների կազմակերպման մասին օրենքը: Նոր օրենքով բարձրացվեց բերքից վարձակալի հասանելիք բաժինը, ընդունվեցին մի շարք միջոցառումներ՝ նրա իրավունքները կալվածատիրոջ կամայականություններից պաշտպանելու ուղղությամբ և այլն: Սակայն երկրում գյուղացիական ղեկավարական կազմակերպությունների բացակայության հետևանքով, որոնք կարող էին վերահսկողություն սահմանել նշված օրենքների կատարման վրա, վերջիններիս կենսագործումը Հանդիպում էր կալվածատերերի ուժից զիջագրությունը: Բասական իշխանությունների թողալույն հետևանքով կալվածատերերն ահաբեկում էին գյուղացիներին և գրավում նրանց տրված Հողերը: Այդ պատճառով էլ գյուղացիության վիճակը վատանում էր, իսկ ազրարային ուժերի կիրառումը, Համեմատած ԱՄՆ-ի կազմում եղած առաջին տարիների հետ, դանդաղում:

Կառավարությունը ազգային կապիտալի արտասահման արտահոսքի կապակցությամբ փորձեց իր ձեռքը վերցնել երկրի վարկա-ֆինանսական սխտեմի վերահսկողությունը: 1963 թ. մայիսին ազգանացվեցին երկրի բոլոր մասնավոր բանկերն ու ապահովագրական ընկերությունները: Միաժամանակ վերահսկողություն մտցվեց վալյուտային գործառնությունների վրա և փակվեց ազգա վալյուտային շուկան<sup>86</sup>:

Ի պատասխան դրա, օրիական ազգային բուրժուազյան զիտավորյալ խիստ սահմանափակեց իր գործունեությունը, փակեց

<sup>85</sup> В. П. Викторов, Экономика современной Сирии, стр. 106.

<sup>86</sup> А. В. Вавилов, Характер социально-экономических преобразований в Сирии («Проблемы экономики и истории стран Ближнего и Среднего Востока», М., 1966, стр. 51).

շատ մեծնարկություններ և բանվորներին էլ արձակեց: Գամա-կոսի առևտրական պալատը տնտեսության միևիուրի կողմ հուշազրում Բիթարի կառավարությունից պահանջում էր վերացնել վերահսկողությունը արտասահմանի հետ կապված ֆինանսական գործառնությունների վրա, խրախուսել մասնավոր մեծնեկրծցությունը և կատարել այլ գիշումներ: Կառավարությունը շտապեց թուլացնել վալյուտային վերահսկողությունը և բանկերին թույլատրեց արտասահմանյան վալյուտան վաճառել ազատ կուրսով<sup>67</sup>:

Բիթարի կառավարության անհետևողականությունը հանգեցրեց աշխատավորական ժողովների գրուսիան վառարացմանը: Բանվորների աշխատավարձը կրճատվեց Համարյա 15% -ով: Երեսու անկեց գործազրկությունը: Ազնիքի քան 100 հազար սիրիացիներ աշխատանք փնտրելու համար թողնեցին երկիրը:

Երկրի ներսում յունենալով ամուր հեկարան և վախենալով գրեվորական հեղաշրջումից, Քասսը 1962 թ. հուլիսի 1-ին հայտարարեց սեփական զինված ուժերի՝ ազգային զվարդիայի ռուսեզոման մասին՝ բազմացած 25 հազար մարդուց<sup>68</sup>, Այգ ուժերի հրամանատար նշանակվեց զնդապետ Համագ Երիզը: Կուսակցության 6-րդ համարարարական կոնֆերանսի որոշումների համաձայն նախապատրաստական աշխատանքներ սկսվեցին Սիրիայի և Իրաքի ֆեդերատիվ միության ստեղծման ուղղությամբ: Կողմերը համաձայնեցրին տնտեսական միավորման սկզբունքները և նախապատրաստվեցին ընդհանուր քաղաքացիություն մտցնելուն ու երկու երկրների միջև տեժնագրային սխտեմը վերացնելուն: Մակայն Իրաքի Քասս կուսակցության ղեկավարության պատակառույթը վերջ դրեց երկու երկրների քաղաքական միավորման պլաններին:

Սալահ Բիթարը, որը զեն էր այդ միության անհապաղ իրականացմանը և որը հոկտեմբեր ամսին տապալվեց Քասս կուսակցության սիրիական շրջանային ղեկավարության ընտրությունների ժամանակ, 1963 թ. հոյեմբերի 12-ին հրաժարական տվեց: Նոր կառավարությունը, որ մեծ մասամբ բազմացած էր ձախբասականներից, կազմեց Ամին Հաֆեզը: Մակայն կառավարու-

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>68</sup> Քասս կուսակցության ուղղումների թիվը այդ ժամանակ հասնում էր 10 հազարի:



թյան մեջ մտան ետև աչ քառասնականների մի քանի ներկայացուցիչներ, մասնավորապես, պրեմիեր մինիստրի տեղակալի պաշտոնը զբաղեց Մուհամեդ Ումրանը: Ամին Լաֆեզը և նրա կողմնակիցներն ավելի չափավոր հայացքների տեր էին և պաշտպանություն էին գտնում Քաասի ձախ թեր կողմից: Մուհամեդ Ումրանի և նրա կողմնակիցների, ինչպես նաև նրանց պաշտպանող ազգային զվարդիայի հրամանատար Օրեյդի վրա էր հենվում Քաասի աչ զեկավարությունը՝ Միշել Աֆլակի զախավորությունը:

Եստով Մուհամեդ Ումրանի և Ամին Լաֆեզի միջև բացահայտ պայքար սկսվեց: Վերջինս վարում էր տարրեր քաղաքական ուժերի հաշտեցման քաղաքականություն: Նա բանախց ազատ արձակեց նախկին պրեզիդենտ Նազիմ Կուզարին և նախկին պրեմիեր մինիստր Խալեդ Ալլամին և ուրիշների: Գեկտեմբերի սկզբներին Ամին Լաֆեզը զեկրեա հրապարակեց թուր քաղաքատարկյալներին ներում շնորհելու մասին: Մուհամեդ Ումրանը հանդես էր գալիս Ամին Լաֆեզի այդ քաղաքականության դեմ, որ շուրջը հավաքելով ԱՄՆ-ի հետ միավորման կողմնակիցներին, Մուհամեդ Ումրանը պահանջում էր պայքարել ձախ քառասնականների, Ակրամ Լաուրանիի և նրա կողմնակիցների դեմ<sup>89</sup>:

1984 թ. սկզբներին Ամին Լաֆեզը ՀՀԱԽ-ում ընկավ մեկուսացման մեջ: ՀՀԱԽ-ի տեղամերի մեծ մասը պաշտպանում էր Մուհամեդ Ումրանին: Գրան զուգրեթաց երկրի ներսում հուզումներ սկսվեցին: 1984 թ. գեաորվարի 22-ին՝ Եզիպտոսի հետ Սիրիայի միավորվելու օրը, ելույթներ տեղի ունեցան Համայում, որոնք ձեռվեցին կառավարության կողմից: Մասսայական ձերբակալություններ տեղի ունեցան Հոմսում, Կաթակիայում, Լալնպում, Գեյթ էլ-Չորում և այլուր<sup>90</sup>:

Պայքարը Քաասի ներսում կրկին սրվեց: 1984 թ. հունվարի սկզբին Սալահ Բիթարն Իրաքում քառասնական ուժերի անկման մեջ մեղադրեց իրաքյան Քաասի զեկավար Սաադին<sup>91</sup> և առաջարկեց զառապարտել նրա խմբին: Այդ պատճառով Քաասի մարզային զեկավարությունը 1984 թ. հունվարի 24-ի նիստում, առա-

<sup>89</sup> Г. Мирская, Развитие событий в арабском мире (Кто воле время), 1985, № 6, стр. 5).

<sup>90</sup> «الوثائق العربية» ص 80

<sup>91</sup> Քառասնականների ուժերը Իրաքում ընկավ 1982 թ. նոյեմբերին:

շարկեց Բիթարին Վտարել կուսակցութեան շարքերից<sup>22</sup>, Բասսի Համաարարական աշ զեկավարութիւնը Հարկադրված էր անցնել գործի, որովհետեւ Բիթարի Հեռացումը լուրջ Հարված կհասցնէր նրա շահերին: Միշել Աֆլահը, սպառազոտելով իր Հեղինակութիւնը, Հրավիրեց մարզային կոնֆերանս, որին մասնակցեց նրա կողմնակիցների մեծամասնութիւնը: Այս քննարկումները ընտրվեց նոր մարզային զեկավարութիւն<sup>23</sup>, Գրան ի պատասխան Սաադին Դամասկոսում Հրավիրեց Բասսի արտակարգ Համաարարական կոնֆերանս, սակայն նրա մասնակիցների մեծ մասը Միշել Ալֆահի կողմնակիցներն էին: Սաադին թեկ չվտարվեց կուսակցութիւնից, բայց և չնարվեց նրա նոր Համաարարական զեկավարութեան կազմում:

Միջոցառում ստեղծված ծանր կացութիւնից դուրս գալու ելքը, ինչպես նշում էր Միջոցային կոմիտեւը, ազգային դեմոկրատական վարչակարգի Հաստատումն էր: Կոմիտեւը պահանջում էր երկրում ստեղծել լայն Ազգային ճակատ, որի վրա և կարող էր Հենգիլ ազգային դեմոկրատական վարչակարգը<sup>24</sup>:

Բասսականների Համար ստեղծվեց ծանր դրութիւն: Նրանք գնալով մեկուսանում էին: Հուլիս անհրաժեշտ էր դառնում կուսակցութեան արատեղիայի և տակտիկայի վերանայումը և դիրքերի պահպանումը: Այդ պրոցեսի Հիմքը դրված էր կուսակցութեան Յ-րդ Համաարարական կոնֆերանսում: Տվյալ պահին կուսակցութեան տակտիկայի գլխավոր խնդիրը գասակարգային Հենարանի ընտրման Հարցն էր: Իրարում յասական պեժմի տակալումից Հետո Միջոցային Բասսը որդեգրել էր բուրժուազիայի և աշխատավորների միջև խուսանակելու տակտիկան: Կուսակցութեան զեկավարութիւնը ճաշկանջով պրոպագանդում էր իր սոցիալիստական կայատակներն ու մտադրութիւնները, ինչպես նաև Հակաիմպերիալիստական դիրքը և խիստ կերպով Հանդես գալիս ամերիկյան և անգլիական իմպերիալիզմի դեմ: Մարտի Ե-ի Հեղաշրջման առաջին տարեգրգռի օրը կուսակցութեան զեկավարութիւնը Հրապարակեց Հատուկ Հայտարարութիւն, որտեղ ընդունում էր իր թույլ տված սխալները և խոստանում անել ամեն ինչ իր շարքերը մարքելու Համար և պայքարել իմպերիալիզմի և ուսայտ-

<sup>22</sup> K. S. Abu Jaber, The Arab Ba'ith, p. 57; „The Middle East and North Africa 1965—1966“, p. 567.

<sup>23</sup> «الوثائق العربية»; K. S. Abu Jaber, The Arab Ba'ith, p. 82.

<sup>24</sup> «Проблема мира и социализма», 1963, № 12, стр. 62—64.

կանության դեմ, նա միաժամանակ խոստանում էր արարական միասնության համար պայքարը միավորել Հանուն ազատության և սոցիալիզմի մզմոզ պայքարի հետ<sup>95</sup>։ 1964 թ. ապրիլի 26-ին մացվեց նոր ժամանակավոր սահմանադրություն։ Այնտեղ արձանագրված էր, որ Միջին Եվրոպական դեմոկրատական սոցիալիստական հանրապետություն է, որը հավատում է արաբների միասնությանը և պայքարում դրա իրականացման համար։ Սահմանադրությունը սոցիալիստական հասարակարգի հիմք հռչակեց արտադրամիջոցների հասարակական սեփականությունը, որը կարող է լինել ինչպես պետական, այնպես էլ կոլեկտիվ։ Անձնական սեփականության առավելագույն շահը սահմանվում էր ըստ օրենքի։ Բարձրագույն օրենսդիր իշխանությունը տրվեց ԵԱՀՊՊ-ի հեղափոխական խորհրդին։ Նրան հանձնվեց նաև գործադիր մարմինների գործունեության վրա վերահսկողության իրավունքը։ ԵԱՀՊՊ-ի հեղափոխական խորհուրդն ընտրում էր պրեզիդենտին, վիցե պրեզիդենտին և պրեզիդենտական խորհրդի անդամներին։ Գործադիր իշխանությունն իրականացվում էր պրեզիդենտական խորհրդի և Մինիստրների խորհրդի կողմից<sup>96</sup>։

1964 թ. ապրիլի 21-ին Հաֆեզի կառավարությունն ազգայնացրեց երկու արդյունաբերական ձեռնարկություն Գամախոսում և մեկ ֆաբրիկա՝ Լաթաքիայում։ Ազգայնացվեցին նաև 15 այլ խոշոր ձեռնարկություններ։ Ազգայնացված ձեռնարկություններում մտցվեց ինքնակառավարման սեփմ և դրանց նախկին տերերը զրկվեցին իրենց բոլոր իրավունքներից։ Այդ ձեռնարկությունները պետք է զննվարժին վաճառական խորհուրդները, որոնց մեջ մշտնում էին մեկական ներկայացուցիչներ կառավարությունից, Բաաս կուսակցությունից, արհմիությունից և 4 ներկայացուցիչ բանվորներից ու ծառայողներից։ Ազգայնացված ձեռնարկությունների շահույթը բաժանվելու էր հետևյալ կերպ. 30%-ը՝ պետությունը, 30%-ը՝ արտադրության ընդլայնմանը, 25%-ը՝ բանվորներին ու ծառայողներին, 5%-ը հատկացվելու էր սոցիալական կարիքների, իսկ 10%-ը՝ ձեռնարկության բանվորների համար բնակարաններ կառուցելու նպատակով<sup>97</sup>։

<sup>95</sup> Ю. Островитянов, Прошлое и будущее национального социализма партии Басс, стр. 47.

<sup>96</sup> «الوثائق العربية» ص 179

<sup>97</sup> В. П. Викторов, Экономика современной Сирии, стр. 58.

Կառավարության այս միջոցառումները բանկերի և ապահովագրական ընկերությունների ազգայնացումից հետո առաջին քայլերն էին երկրի տնտեսության վրա պետական վերահսկողություն սահմանելու ուղղությամբ:

Ի պատասխան կառավարության այս գործառնությունների, 1964 թ. ապրիլին սկսվեց առևտրականների գործազույլը. նրանք պահանջում էին լեզլալ հայտարարել բանկերի, ապահովագրական ընկերությունների և ձեռնարկությունների ազգայնացումը<sup>98</sup>:

1964 թ. կեսերին ընտրվեց պրեզիդենտական խորհուրդ. որի կազմի մեջ մասն Ամին Հաֆեզը որպես նախագահ, Սալահ Բիթարը և Մուհամեդ Ումրանը որպես տեղակալներ և Բասս կուսակցության երկու ներկայացուցիչներ՝ ղոկտոր Նուրեդդին Աթասին և Մանսուր ալ-Աթրաշը որպես անդամներ<sup>99</sup>, Սալահ Բիթարը կազմեց նոր կառավարություն, որը բաղկացած էր հիմնականում բասսականներից: Կառավարությունը հայտարարեց, որ ընթանալու է արարական սոցիալիզմի ուղիով. պայքարելու է շահագործման դեմ, ամբապնդելու է ազգային տնտեսության ինքնուրույնությունը, խրախուսելու է հասարակական սեկտորի զարգացումը, տնտեսությունը վարելու է պլանավորման հիմունքներով, հեռանդականորեն կիրառելու է ազդարային ուղիները և այլն<sup>100</sup>: Զիշելով գեոմերաական ուժերի պահանջին, կառավարությունը ներում շնորհեց քաղաքական բանասարկյալներին, թույլատրեց արհմիությունների քաղաքական գործունեությունը և նրանց համազգային ֆեդերացիայի ստեղծումը: Ընդունվեց արհմիությունների նոր, ավելի առաջադիմական կանոնադրություն<sup>101</sup>:

Սակայն կուսակցության ձախ ուժերին և աշխատավորական մասսաներին ղիշումներ անելով հանդերձ, Բասսի ղեկավարությունը միաժամանակ ձգտում էր սերտ համագործակցության խաչոր բուրժուազիայի հետ, գտնելով, որ տնտեսության զարգացման գլխավոր միջոցը մասնավոր՝ ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա կապիտալի ներգրավումն է: Ժողովրդին ուղղված իր գիմումներում Բասսի ղեկավարությունը բոլոր գասակարգերի և

<sup>98</sup> „The Middle East and North Africa... 1965—1966“, p. 557.

<sup>99</sup> Նույն տեղում:

<sup>100</sup> «الوثائق العربية» ص ٢٢٩—٢٤٤

<sup>101</sup> «Нормы рабочего кодекса страны», стр. 84.

խաղերի զարգացման և ազգային միասնության կոչ էր անում, ընդգծում առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի բանահասու նշանակությունը և ժառանգությունները ազգային անտեսության զարգացման բնագավառում, բազմիցս մատնանշելով նաև մասնավոր սեկտորի անձեռնմխելիության մասին<sup>109</sup>։

Կառավարության անտեսական քաղաքականությունն ապահովում էր Միրիայում վայելատային ազատ գործանությունները։ Կառավարությունն արտադրության ընդլայնման նպատակով բուրժուազիային մեծ քանակությամբ վարկեր և փոխառություններ էր արամադրում։ Միրիայի անտեսական զարգացմանը մեծ մասշտաբով սկսեց մասնակցել օտարերկրյա կապիտալը, եփրատի վրա ամբարտակ կառուցելու համար բանակցություններ էին վարվում ԳՖՆ-ի, ՄԳՄ-ի ֆորերկայի համար՝ Ճապոնիայի, իսկ ավստրալիացիներին զործարանի շինարարության համար՝ Անգլիայի հետ։ Ճապոնական ընկերությունները երկաթի և ֆոսֆորի հանքերի հետազոտման աշխատանքներ էին կատարում<sup>110</sup>։

Սակայն սիրիական բուրժուազիան այ բուսականների կոր քաղաքականությանն անվստահությամբ էր վերաբերվում։ Չունենալով իր ներկայացուցիչները կառավարության մեջ և պետական իշխանության մյուս բարեբազիր մարմիններում, նա վախենում էր ազգայնացման կոր ալիքից, իսկ Բասաի զիչումները գնահատում էր որպես կառավարության անող թուլության և անկայունության նշան։ Այդ պատճառով էլ շունենալով զինված ելույթների կազմակերպման իրական հնարավորություններ (բանակը լրիվ վերահսկում էին բաասականները), սիրիական բուրժուազիան իր հակակառավարական գործունեությունը ծավալեց երկրի անտեսական կյանքը կազմալուծելու ուղղությամբ։ Օգտագործելով իր դիրքը անտեսական կյանքում, նա հույս ուներ ստիպել բաասական կառավարությանը՝ զիմելու զգալի քաղաքական զիչումների, այդ թվում՝ համաձայնվել բուրժուազիայի ներկայացուցիչներին մտցնելու կառավարության կազմի մեջ։

Բուրժուազիան հրաժարվում էր երկրի ներսում կապիտալ ներդրումներից։ 1964 թ. սկզբներին մի շարք մեռնաբանություններ,

109. Ю. Островитяков, Прошлое и настоящее национального социализма партии Баас, стр. 47.

110. Նույն տեղում։

պատճառաբանելով դժգոհություններն ու միջոցների բացակայությունը, սկսեցին փակել իրենց ձեռնարկությունները կամ էլ կրճատել արտադրությունը: Արդյունաբերողներն արտադրության ընդլայնման նպատակով պետությունից ստացած փոխառությունները զանազան պատրվակներով չէին վերագործնում պետական բանկերին և այն սցզաագործում էին որպես շրջանառու կապիտալ: Ըստ սրում, կրանք շահույթներն առարում էին արտասահման: Միայն 1963—1964 թթ. արտասահման էր առաքվել 800 մլն սիրիական լիրա<sup>104</sup>, 1964 թ. վերջին կրճատվեց բամբակյա կտրեզներ, ցեմենտի, շաքարի, պահածոների և այլ ապրանքների արտադրությունը: Եխտ ընկավ հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների բաժնեատմաների կուրսը<sup>105</sup>, Երկրում սահղծվեց ծանր դրություն: Ընդամյա պլանը չէր կատարվում, վտանգի տակ էր տեսնական քոչոր պլանների կատարումը: Ծառերիկրյա կապիտալի խիստ պակաս էր զգացվում: Միջազգային վալյուտային ֆոնդի ավյալներով օտարերկրյա մաքուր ակտիվները 1963 թ. զեկտեմբերից մինչև և 1964 թ. հունվարը եղկրում 131 մլն սիրիական լիրայից կրճատվել էին 97 մլն լիրայի: Միայն 1964 թ. առաջին երկու ամիսներին շրջանառության մեջ գտնվող դրամի քանակը կրճատվել էր 6 մլն լիրայով: 1964 թ. քյուշիյում գոյություն ուներ քացահայտ զեֆիցիտ: Երկիրը գտնվում էր տեսնական սեանկացման եզրին: Այդ քոչորի պատճառը քաղաքական գործոններն էին: Բիթարի կառավարությունը կորցրել էր գործարար շրջանների վստահությունը և ընայած 1963 թ. լավ բերքին ու գոհացուցիչ առևտրին, սիրիական շուկան քաղաքական անկայուն դրության հետևանքով անդամալուծվել էր<sup>106</sup>:

Աճող գործազրկությունը և տեսնության նզնածամային վիճակը ուժեղացրին աշխատավորական մասսաների դժգոհությունը Բասս կուսակցության քաղաքականությունից: Այ բատսականների իշխանության զլուխ գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում աշխատավորների նյութական վիճակը որևէ լավով չբարելավվեց և նրանց հնարավորություն չտրվեց մասնակցելու երկրի քաղաքական և սոցիալական կյանքին: Միրիական բուրժուազիան հույս

<sup>104</sup> «البيروت» 27.1.1965.

<sup>105</sup> В. П. Викторова, Экономика современной Сирии, стр. 53—54.

<sup>106</sup> Ю. Остроукино, Прошлое и настоящее национального социализма партии Бас, стр. 48.

ուներ ոգտվել ժողովրդական մասսաների ահող զժգոհությունից և հենվել նրանց օգնության վրա՝ բուսական ուսման գծով մղվող պայքարում: Մակայն նրա հույսերը լարգարացան:

Ժողովրդական մասսաների զժգոհությունը նպաստեց այն բանին, որ կուսակցության ներքում ձախ ուժերը սկսեցին գիտակցել սոցիալ-անտեսական հետագա վերափոխումներ կատարելու անհրաժեշտությունը: Նրանք կառավարությունից պահանջեցին անմիջապես անտեսակել կոնկրետ անտեսական ու սոցիալական միջոցառումներ, զոտի պետական ապարատը և այլն: Մղվեցին հարաբերությունները Բասսի աչ ղեկավարների և բունակի միջև, որի առաջադեմ սպաները պաշտպանություն գտնելով Բասսի ձախ թևի կողմից, վճռականորեն պահանջում էին շատ միջոցներ ձեռք առնել հրկրի անտեսական գրությունը բարելավելու ուղղությամբ և ուժեղացնել պայքարը հետադիմության դեմ, որը հենվում էր արևմտյան հրկրների օգնության և աշակցության վրա: Երկրում դասակարգային պայքարի խիստ սրման պայմաններում Բասս կուսակցությունը կանգնեց մասնավոր կապիտալի գիրքերի վրա հարձակում գործելու անհրաժեշտություն առջև, ուշադրություն շղարձելով խոշոր բուրժուազիայի և Բասսի աչ շրջանների գիմադրության վրա: Ուժեղացող ներկուսակցական պայքարը հանգեցրեց Բասսի ձախ թևի գիրքերի ամբապնդմանը: Միշել Աֆլակը հարկադրված եղավ հրաժարվել կուսակցության ղեկավարի պոստից և նրա փոխարեն Բասս կուսակցության համարարական ղեկավարության գլխավոր քարտուղար ընտրվեց Մուսեֆ Թազազին: Կուսակցության սիրիական մարզային ղեկավարության գլխավոր քարտուղար դարձավ գններալ Ամին Հաֆեզը: Սիրիական մարզային ղեկավարությունում սկսեց վճռական դեր խաղալ կուսակցության ձախ թևը<sup>107</sup>:

1964 թ. հոկտեմբերի 4-ին Ամին Հաֆեզը կազմեց Սիրիայի նոր կառավարություն: Դա Ամին Հաֆեզի կողմնակիցների հողաթանակն էր, որն ամբապնդվեց Մուհամեդ Ումրանի հեռացումով: Նա մեղադրվեց զավադրական գործունեության մեջ և նշանակվեց Սիրիայի դեսպան Մադրիդում: Դրան հետևեց Ումրանի կողմնակից մի շարք բարձրաստիճան սպաների արձակումը բանակից<sup>108</sup>:

<sup>107</sup> «الوثائق العربية» من ٦٤٣—٦٤١

<sup>108</sup> «Новой время», 1964, № 42, стр. 28.

Ամեն Հաֆեզի կառավարությունը սիրիական թաափ ձախ  
թնի ամենաակտիվ աշակցությունը ձեռնամուխ եղավ սոցիալ-  
տնտեսական մի շարք վերափոխումների, որոնց նպատակն էր  
ամրապնդել պետական սեկտորը, նշել բուրժուազիայի ու կալ-  
վածատերերի հետադիմական մասի դիմադրությունը, Այդ միջո-  
ցառումներից ամենանշանակալին 1964 թ. դեկտեմբերի 22-ի  
դեկրետն էր՝ երկրի բոլոր օգտակար հանածոների պաշարների  
ազգայնացման և ստարերկրյա ընկերությունների ու մասնավոր  
անձանց կողմից նրանց շահագործումն արգելելու մասին Այս  
դեկրետը քաղաքական մեծ արձագանք գտավ Արաբական Արևել-  
քում, որովհետև արաբական երկրների պատմության մեջ առաջին  
անգամ պետությունն իր ձեռքն էր վերցնում սեփական բնական  
հարստությունների մշակումն ու շահագործումը: Դեկրետը լուրջ  
հարված էր միջազգային նավթային ընկերություններին, մասնա-  
վորապես արևմտագերմանական «Կոնկորդին», որն աշխատում էր  
ձեռք բերել սիրիական նավթի արդյունահանման կոնցեսիան<sup>109</sup>:

1965 թ. հունվարին հրապարակվեցին դեկրետներ՝ 115 ար-  
դյունաբերական ձեռնարկությունների ազգայնացման մասին:  
1965 թ. հունվարի 11-ին պետությունն իր վերահսկողության տակ  
վերցրեց 21 էլեկտրակայան: Դրամականում ու Հայնպում մասնա-  
կիտրեն ազգայնացվեց ևս 11 արդյունաբերական ձեռնարկություն:  
1965 թ. մայիսին դեկրետ ընդունվեց բոլոր բամբակազտիչ գոր-  
ծարանների ազգայնացման մասին<sup>110</sup>:

Ազգայնացված գործարաններն ու ֆաբրիկաները Սիրիայում  
ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկություններն էին: Թրան-  
ցում գրառված էր 12 հազար մարդ, իսկ ընդհանուր կապիտալը  
կազմում էր 243 մլն սիրիական լիրա<sup>111</sup>: Այս միջոցառումների  
շնորհիվ արդյունաբերության բնագավառում պետական սեկտորը  
գարնավ տիրապետող: Մասնավոր սեկտորի ձեռքում մնացին  
մանր և արհեստագործական ձեռնարկությունները:

Կառավարությունը միաժամանակ ձգտում էր իր կողմը գրա-  
վել մանր և միջին բուրժուազիային, ձեռնարկություններում պա-  
հել բարձրորակ ինժեներատեխնիկական կադրերին, որոնք հա-  
ճախ իրենք էին ձեռնարկատերերը: Այդ պատճառով էլ մի շարք

<sup>109</sup> В. П. Викторова, Экономика современной Сирии, стр. 60—61.

<sup>110</sup> «الثورة» 3.1, 5.1, 12.1.1965.

<sup>111</sup> В. П. Викторова, Экономика современной Сирии, стр. 66—69.



ձեռնարկություններ ու լրիվ ազգայնացվեցին, կառավարութիւնը նախկին ձեռնարկատերերին որպէս սեփականութիւն թողեց նրանց կապիտալի 10—25%-ը<sup>112</sup>,

Այդ նույն նպատակով կառավարութիւնը խոստացավ զննել մանր բաժնետերերին պատկանող բոլոր բաժնետոմսերը, սակայն դորձնականում ամեն կերպ ձգձգում էր դրա կատարումը:

Համաձայն նոր զեկրեաների, ենթադրում էր ազգայնացված ձեռնարկութիւններ զբա նույնպէս արածնել ինքնակառավարման սիստեմը:

Կառավարութիւնն ազգայնացման քաղաքականութիւնը եռանդուն աշակցութիւն էր ցույց տալիս Միրիալի կոմունիստական կուսակցութիւնը: Այն երկրի բոլոր առաջագնծ ուժերին կոչ էր անում միավորվել՝ երկրում անցկացվող սոցիալ-անտեսական բարեփոխումները պաշտպանելու համար: Եւ այդ զեկրեաների ընդունումը, — ասված էր Միրիալի կոմիտեի Կենտկոմի հայտարարութիւն մեջ, — սերտորեն կապված է Միրիալում և մյուս արարական երկրներում երկու հիմնական տենդենցների միջև ընթացող պայքարի գլխավոր ուղղութիւն հետ. ազգային՝ որը նախատեսում է Միրիալի զարգացումը ոչ կապիտալիստական ուղիով և հետադիմական, որը մեր երկիրը տանում է խոշոր իմպերիալիստներին, կապիտալիստներին և ֆեոդալներին շահույթներ ապահովող, իսկ ժողովրդական մասսաներին ուղինչ լավող կապիտալիստական ուղիով<sup>113</sup>,

Միրիալում կիրառված սոցիալ-անտեսական վերափոխումները լայն հետքավորութիւններ էին բացում երկրի առջև՝ ընթանալու ոչ կապիտալիստական ուղիով:

Ինչպէս և պետք էր սպասել, Ամին Հաֆեզի կառավարութիւնն անտեսական և սոցիալական քաղաքականութիւնը խիստ սրեց դասակարգային պայքարը երկրում: Խոշոր և միջին ձեռնարկութիւններն ազգայնացումը լուրջ հարված հասցրեց մասնավոր սեկտորին և, քնակամարար, հանգեցրեց առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի դժգոհութիւնը: Ազգայնացումը կառավարութիւնն կողմից մանրակրկիտ շարժվեց և վերահսկողութիւն ընթացվեց, թույլ արվեցին մի շարք սխալներ: Դա արտահայտվեց մասնավորապէս այն բանում, որ խոշոր և միջին բուր-

<sup>112</sup> Նույն տեղում, էջ 57:

<sup>113</sup> «الاجابة», № 20, 24.1.1965.

ժուազիայի ձեռնարկությունների հետ միասին ազգայնացվեց նաև մանր ապրանքարտադրողների և առևտրական միջնորդների սեփականությունը: Երանց զմտնությունն անմիջապես ազտագործեցին խոշոր բուրժուազիան, նրա քաղաքական խմբավորումները և հետագիմական հոգևորականությունը:

Դեռևս զեկրետներին հրատարակման հարթուակին Գամաակոսում հայտնարեվեց հակակառավարական զավազություն, որին մասնակցել էին նաև որոշ աչ բաասականներ<sup>114</sup>: Միրիա-յիբանանյան սահմանի վրա ուժեղացվեց մաքսային հակադրությունը, որպեսզի թույլ շարվի ազգայնացված ձեռնարկությունների կուպիտալի արտահանումը: Աշխատանքի մեխանարությունն ինքն էր նշանակում ազգայնացված ձեռնարկությունների զերեկտորներին և վարչական խորհրդի անդամներին: Այդ ձեռնարկությունների զեկավարման համար ստեղծվեց արդյունարերություն սոցիալիստական սեկտորի զեկարտամենտ<sup>115</sup>:

Սակայն քնած շէր նաև հետագիմությունը: 1965 թ. հունվարի 22-ին Գամաակոսի Օմայաների, ինչպես նաև այլ մզկիթներում քաղաքական քարոզներ հնչեցին. հոգևորականությունը զատապարանց կառավարության քայլերն ազգայնացման ուղղությամբ և ժողովրդին սորբազան պայքարիս կոչեց ընդդեմ կառավարության: Առևտրականների նվիրատվությունները միշոցով ստեղծվեցին, այսպես կոչված՝ «Մուհամեդի շոկատներս, որոնց զեկավարում էին հետագիմական կրոնաքաղաքական «Մուսուլման կորայներս կազմակերպության ներկայացուցիչները: Մարտածի զիմեց Միրիայի առևտրական բուրժուազիան, իր հեանից տանելով միջին և մանր առևտրականներին<sup>116</sup>:

Սակայն Ամին Հաֆիզի կառավարությանը վճռական աշակցություն ցույց ազեցին բանվորները, զուղացիները և Միրիայի բուրբ առաջագեմ ուժերը: Երկրում տեղի ունեցան բազմամարդ ցույցեր ու միտինգներ՝ ի պաշտպանություն կառավարական զեկրետներին: Հետագիմական ուժերի խոռվությունը ձախողվեց: Կառավարությունը, հենվելով աշխատավոր մասսաների աշակցության վրա, կարող էր ընթանալ իր սկսած սոցիալ-տնտեսական

114 E. Немов, Январские декреты в Сирии («Международная жизнь», 1965, № 3, стр. 147).

115 «За рубежом», 1965, № 6, стр. 2: «Правда», 27.1.1965.

116 «Новойшая история арабских стран», стр. 85.

վերափոխումների հետագա խորացման ուղիով: Արագացվեց ագրարային սեֆորմի կիրառումը:

1965 թ. փետրվարի 13-ին կառավարությունն ազգայնացրեց սեղամթերքներ և զեղարայք ներմուծող ընկերությունները: Սեղամթերքների և զեղարայքի ներմուծման վրա պետական մենաշնորհ սահմանվեց<sup>117</sup>: 1965 թ. մարտին ազգայնացվեցին այն քոյր ֆիրմաներն ու նավթային ընկերությունները, որոնք զբաղվում էին Սիրիայում նավթամթերքների մշակմամբ, վաճառքի և փոխադրման գործով: Նրանց թվում էին նրեք խոշոր օտարերկրյա ֆիրմաներ՝ «Սոկոնի վալուում օյլ», «Շելլ» և «Էսսո», որոնք ապահովում էին անդական շուկայում նավթամթերքների պահանջի 67%-ը<sup>118</sup>:

1965 թ. մայիսին պետական մենաշնորհ հաստատվեց Սիրիայից ցորենի, գարու և բամբակի արտահանման վրա, որը կազմում էր երկրի արտահանումայն 70%-ը<sup>119</sup>: Այս միջոցառումների շնորհիվ պետական սեկտորը սկսեց առև երկրի արդյունաբերական արտադրանքի 80%-ը: Պետության վերահսկողության տակ անցավ արտաքին առևարքի 60%-ը<sup>120</sup>: Արտահանման և ներմուծման գործառնությունների ղեկավարման համար ստեղծվեց պետական «Միմեկու» ընկերությունը, 10 մլն սիրիական լիրա կապիտալով:

Այս միջոցառումներին զուգընթաց անդի էր ունենում ներքին կյանքի զեմոկրատականացում: Ազատ արձակվեցին քաղաքական բանտարկյալները, թուլատրվեց Սիրիա վերադառնալ վտարանդիներին: 1965 թ. օգոստոսին Ազգային հեղափոխական խորհրդի (ԱՀԽ) վերակազմավորված և ընդլայնված կազմի մեջ բացի Քասսի ներկայացուցիչներից և սպաներից մտան Սիրիայի բանվորական արձմիությունների ընդհանուր ֆեդերացիայի, գյուղացիական կազմակերպությունների, ուսուցիչների ու փաստաբանների արձմիությունների, կանանց և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները: ԱՀԽ-ի հիմնական խնդիրը զարմավ սահմանադրության մշակումը: 1965 թ. սեպտեմբերի 1-ին ԱՀԽ-ն ընտրեց հինգ հոգեանոց պրեզիդենտական խորհուրդ՝ կազմված բաասականներից<sup>121</sup>:

<sup>117</sup> «الثور», 13.II.1965.

<sup>118</sup> В. П. Викторова, Экономика современной Сирии, стр. 61.

<sup>119</sup> «الثور», 4.V.1965.

<sup>120</sup> В. П. Викторова, Экономика современной Сирии, стр. 60.

<sup>121</sup> «Правда», 24.X.1965; «The Middle East and North Africa, 1966—67», London, 1966, p. 630.

Աշխուժացավ բանվորական և արհմիութենական շարժումը 1965 թ. ապրիլին կայացան Միրիայի բանվորական արհմիության ընդհանուր ֆեդերացիայի (ԲԱԸՖ) ղեկավար մարմինների ընտրութունները, նորընտիր գլխավոր կամիան հաստատեց նոր կանոնադրությունը: Այնտեղ ասված էր, որ Միրիայի արհմիությունների հիմնական նպատակն է հասնել տարաբան օտարեր կրկրների բանվորների միասնությանը և աշակցել սոցիալիստական ու ազգային ազատագրական շարժման ուժերին այն պայքարում, որ նրանք մղում են իմպերիալիզմի, գաղութատիրության և կապիտալիզմի դեմ<sup>122</sup>, Բանվորների պահանջով Միրիայի ԲԱԸՖ-ը դուրս եկավ Ազատ արհմիությունների միազգային ֆեդերացիայից և կապեր հաստատեց Արհմիությունների Համաշխարհային ֆեդերացիայի հետ:

Ուժեղացավ նաև գյուղացիական շարժումը: 1965 թ. սեպտեմբերին կայացավ գյուղացիական կազմակերպությունների առաջին համասիրիական համագումարը, իսկ նույն թվականի դեկտեմբերին՝ գյուղացիական կոոպերատիվների առաջին համագումարը<sup>123</sup>,

Սոցիալ-անտեսական վերափոխումներ կիրառելու կառավարության քաղաքականությունը սրեց պայքարը Բաասի ներսում: Կառավարության ձախ թնջ, աշակցություն գտնելով Բաասի առաջադեմ ուժերի կողմից, անհրաժեշտ էր գտնում ավելի առաջ դնել զարգացման ոչ կապիտալիստական ուղիով: Այդ թնջ և մյուս հետադիմական ուժերը, ընդհակառակը, գտնում էին, որ ներքաղաքական կյանքի հետագա զեմոկրատացումը և հարձակումը մասնավոր կապիտալի վրա պետք է կանգնեցնել, որովհետև Միրիան, իրր թե, շատ հեռուն է գնացել, որը կարող է նրան մեկուսացնել արաբական միացյալ աշխարհից: Այդ տեսակետին սկսել էր ավելի շատ հակվել նաև կառավարության ղեկավար Ամին Հաֆեզը<sup>124</sup>:

Պայքարը Բաասի երկու թևերի միջև հատկապես սրվեց 1965 թ. սեպտեմբերին և ձախ թնջ որոշ ժամանակ հասավ առավելության: Գեներալ Հաֆեզը հեռացվեց կուսակցական գործ-

<sup>122</sup> «Рабочее движение в странах Азии и Северной Африки», М., 1969, стр. 352.

<sup>123</sup> В. М. Федоренко, Новые горизонты Сирии, М., 1968, стр. 7.

<sup>124</sup> П. Демченко, Сирия на новом пути («Новое время», 1966, № 16, стр. 23).

րից և զինված ուժերի հրամանատարությունից, կազմվեց նոր կառավարություն ձախ թևի ղեկավարներից մեկի՝ Յուսեֆ Զուեյնի, ղեկավարությամբ: Զախ թևի ներկայացուցիչներն առաջատար դիրքեր զբաղեցին կառավարության և Քաասի մարզային ղեկավարության մեջ: Միջինական Քաասի գլխավոր քարտուղար ընտրվեց ձախ բաասականների ղեկավարներից Սալահ Զազիզը<sup>125</sup>:

Զուեյնի կառավարությունը հայտարարեց, որ լի է սոցիալիստական հասարակարգ կառուցելու վճռականությամբ, պատրաստ է իրականացնելու սոցիալ-տնտեսական վերափոխումներ՝ աշխատավորների բարեկեցության բարձրացման նպատակով և ամբաստանելու բարեկամական հարաբերությունները ՄՍՀՄ-ի ու սոցիալիստական մյուս երկրների հետ: Կառավարական ծրագիրն արժանացավ ժողովրդական մասսաների հավանությանը, բայց հանդիպեց բուրժուա-կալվածատիրական խավերի ուժեղ դիմագրությունը: Ծրագրի դեմ եռանդուն պայքարում էր նաև Քաասի աջ թևը<sup>126</sup>:

Զախ ուժերի գերակշռությունը, սակայն, չատ կարճատև եղավ: 1965 թ. դեկտեմբերին պայքարը կուսակցության ներսում քաղաքական սուր ճգնաժամի բնույթ ընդունեց: Գեկտեմբերի 21-ին Ամին Լաֆեզը, օգտվելով կուսակցության համաարարական ղեկավարության աշակցությունից, հայտարարեց Քաաս կուսակցության սիրիական հասվածի ղեկավարության ցրման մասին<sup>127</sup>: Նրա աեղամները՝ պրեմիեր մինիստր Զուեյնը, վիցե պրեզիդենտ Նուրեդդին Ալֆահին, ինչպես նաև պրեզիդենտական խորհրդի անդամներ Զամիլ Շեյան և Ֆարիզ Զասըմը հրաժարական տվեցին: Նոր կառավարություն կազմելը հանձնարարվեց Սալահ Քիթարին<sup>128</sup>:

Քիթարի նոր կառավարությունը կազմվեց 1966 թ. հունվարի 1-ին: Նրա կազմում չընդգրկվեց Քաաս կուսակցության սիրիական հատվածի նախկին ղեկավարության, ինչպես նաև սիրիական բանակի և ոչ մի ներկայացուցիչ: Փետրվարի 15-ին, ի խախտումն սահմանադրության, ղեկրնա արձակվեց Ազգային Հեղա-

<sup>125</sup> «Новейшая история арабских стран», стр. 87.

<sup>126</sup> «الوثائق العربية» 1965, ص 703.

<sup>127</sup> «الثور» 22, 23.XII.1965.

<sup>128</sup> «البعث» 24, 26.XII.1965. «الثور» 29.XII.1965.

փոխական խորհրդի կազմի մասնակի փոփոխման և ընդլայնման մասին: Երա կազմից հանվեց 20 մարդ, այդ թվում՝ ցրված մարզային ղեկավարության անդամները և բանակի առաջադիմական ներկայացուցիչները: ԱՆԽ-ի կազմը 95-ից հասցվեց 134-ի: Այսպիսով, երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը, որպիսին այդ ժամանակ ԱՆԽ-ն էր, փոփոխվեց համարյա 50-տոկոսով և կազմվեց մեծ մասամբ աչ բաասականներից ու երանց կողմնակիցներից<sup>129</sup>:

Սակայն դա չզնաժամի մեական լուծում էր: Փազաքական առումով այն մնում էր չլուծված, և կուսակցության ներքում շարունակվում էր սուր պայքարը:

Աչ բաասականների իշխանության զուխ անցնելը աշխուժացրեց բուրժուազիայի և կալվածատերերի գործունեությունը: Երանք սկսեցին ազիւի համառօրին պահանջել վերացնել ազգայնացման և ազրարային ռեֆօրմի վերաբերյալ օրենքները և թուլյատրել Եազաա ձեռներեցությունը: Այդ պահանջները, որպես Հալեպի արդյունարերական և առևարական պայատի հուշագիր, պաշտոնապես ներկայացվեցին Բիթարի կառավարության քըննարկմանը<sup>130</sup>: Բուրժուազիայի պահանջները լրիվ համընկնում էին տեսական ալն դրույթների հեա, որոնք առաչ էր քաշում Բիթարը կառավարություն կազմելուց առաչ: Բիթարը փորձում էր ապացուցել, որ իբր Եզիտական սոցիալիզմի գարը վաղուց անցել է և պնաք է կողմնորոշվել դեպի Եարևատանվրուպական սոցիալիզմը<sup>131</sup>: Այս պահանջներին համապատասխան օրենագիծ մշակվեց շատ արդյունարերական ձեռնարկությունների ապազգալնացման ու իրենց նախկին տերերին վերազարմնելու և ձեռնարկություններում քանվորական վերահսկողության վերացման մասին<sup>132</sup>:

Բուրժուա-կալվածատերական շրջանների, ինչպես նաև մաավորականության մի մասի մյուս պահանջը զինվորականներին երկրրի քազաքական ղեկավարությունից հեռացնելն էր: Բանակի ներկայացուցիչները հանվեցին Ազգային հեզափոխական խոր-

<sup>129</sup> «التور», 2, 5.I.1966, «البعث», 5.I.1966.

<sup>130</sup> «الشرق», 23.II.1965.

<sup>131</sup> Л. Медведко, Сирия после февральских событий («Международная жизнь», 1966, № 7, стр. 90); «Правда», 18.V.1966.

<sup>132</sup> «التور», 25.II.1966.

հըրդի, Քատսի սիրական մարզային ղեկավարութեան, ինչպես նաև կառավարութեան կազմից<sup>133</sup>։ Քանի որ սիրիական բանակի սպայական կազմի մեծ մասը բազկացած էր ձախ բաասականներից, ուստի Քիթարը հարց բարձրացրեց վերանայել սպայական կազմը համայնիւ միջոցները, որպեսզի նրանում պակասեցվի սոցիալական տարրը։ Պատրաստվում էր հրաման արձակել մի մեծ խումբ առաջագնդ սպաների բանակից հեռացնելու և երկրից արտաքսելու վերաբերյալ<sup>134</sup>։

Այսպիսով, Քիթարի կառավարութեանը վճռական կուրս վերցրեց վերացնելու իրականացված առաջադիմական վերափոխումները, ձախ բաասականներին հեռացնելու երկրի կառավարումից, իսկ վերափոխումների կողմնակից սպաներին՝ բանակից։

Եսա բողոքներում՝ Գամակոսում, Լոմոսում, Համայում, Լաթակիայում և այլուր տեղի ունեցան աշխատավորների գործադուլներ և ցույցեր։ Յուզարաբները պահանջում էին շարունակել սոցիալ-անտեսական վերափոխումների իրականացումը, հետևողականորեն պայքարել իմպերիալիզմի դեմ, մասնավորապես նրանց կազմից և արարական հետադիմական աշակցութեամբ կախատեսվող սծայամական պակտիս ատեղծման դեմ, ամբապնդել միասնությունը արարական առաջադիմական երկրների հետ։ Աշխատավորները նաև պահանջում էին ուժեղացնել բարեկամական կապերը սոցիալիստական պետությունների հետ<sup>135</sup>։ Նախապատրաստվում է ընդհանուր գործադուլ։

Այսբանական հետադիմական մտայնը, ինչպես նաև արևմուտյան թերթերը սկսեցին գրել Սիրիայում ավանդական բուրժուական վավաճատիրական կուսակցությունների գործունեության վերականգնման հնարավորության մասին։ Մական ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հետադիմության սպառումները շարժարացան։ Երկրում իրականացված սոցիալ-անտեսական վերափոխումների հետևանքով յուրը տեղաշարժեր էին կատարվել աշխատավորական մասսաների դիտակցության մեջ, բարձրացել էր բանվորների, գյուղացիների, զինվորականների, հեղափոխական մտավորականության, սովորող երիտասարդության և սիրիական ժողովրդի ալլ խավերի ակտիվությունը։ Երկրում ուժեղացավ առա-

133 «Известия», 27.II.1966.

134 «Правда», 18.V.1966.

135 Նույն տեղում։

չազիմական ուժերի միավորան կզուսւմը, Բաասի աչ ղեկավարութիւնը Ֆերազնահատեց քանակի և Բաասի սիրիական մարզային ղեկավարութիւն ուժը, Սիրիական Բաասի ձախ թիւ առաջարկեց անհապաղ հրաժիրել կուսակցութիւն համաարարական կամ մարզային արտակարգ կոնֆերանս՝ երկրում ստեղծված դրութիւնը քննարկելու համար, Սակայն Բաասի համաարարական ղեկավարութիւնը մերժեց այդ առաջարկութիւնը<sup>136</sup>:

Սիրիական Բաասի հեղափոխական ղեկավարութիւնը տեսնելով, որ ներկուսակցական կոնֆլիկտը հնարավոր չէ լուծել խաղաղ ճանապարհով և զիտակեցելով այն վտանգը, որ սպառնում էր Սիրիայում բոլոր առաջադիմական վերափոխումներին, զիմեց քանակի օգնութիւնը: 1966 թ. փետրվարի 23-ին զինվորական միավորումները լուծարքի ենթարկված Բաասի սիրիական մարզային ղեկավարութիւն անդամների և կողմնակիցների հրամանատարութիւնը զինվորական հեղաշրջում կատարեցին: Կուսակցութիւն համաարարական ղեկավարութիւնը հեռացվեց Սիրիայի կառավարմանը մասնակցելուց, նրա ղեկավարները՝ Միշել Աֆլախը, Մուսիֆ Ռազզազը, Սալահ Քիթարը և զեներալ Ումրանը տեսչին կայանքի ենթարկվեցին: Ձերբակալվեց և Մեզզե ամրոցում ներկայվեց պրեզիդենտական խորհրդի նախագահ Ամին Հաֆիզը, որը զինված դիմադրութիւն էր ցույց տվել հեղաշրջման ժամանակ<sup>137</sup>:

Իշխանութիւնն անցավ Բաասի սիրիական մարզային ժամանակավոր ղեկավարութիւնը, որի կազմի մեջ մասն կուսակցական ձախ, հեղափոխական ղեմոկրատական թեի ներկայացուցիչները: Նրա գլխավոր քաղաքաւար կրկին նշանակվեց զեներալ Սալահ Ջադիզը: Ժամանակավոր սահմանադրութիւնը լծղայ հայտարարվեց, և ազգային հեղափոխական խորհուրդը, որ գործում էր ժամանակավոր պառլամենտի իրավունքներով, ցրվեց: Սիրիական Արարական Հանրապետութիւն պրեզիդենտ նշանակվեց պրեզիդենտական խորհրդի նախագահի նախկին տեղակալ Լուրնդին Աթասին:

Հեղաշրջումը լայն աշակցութիւն գաավ ժողովրդի այն բոլոր խավերի կողմից, ովքեր կանգնած էին զարգացման ու կապիտա-

<sup>136</sup> «Правда», 18.V.1966; Л. Медведко, Сирия после февральских событий («Международная жизнь», 1966, № 37, стр. 90).

<sup>137</sup> «الوثائق العربية» ص 119—117



լիստական ուղու վրա: Այն կատարած բանակի սպայական կազմը հիմնականում քաղաքի և գյուղի աշխատազորների հետ կապված զինվորատական տարրերից էր բաղկացած, Հեղաշրջումը պաշտպանեցին բանվորական և գյուղացիական արհմիությունները, ուսանողական կազմակերպությունները և այլն<sup>138</sup>: Կատալարություն կազմելը հանձնարարվեց Յուսեֆ Զուեյնին, նրա կազմում հախ բասսականների հետ միասին մտան նաև մի շարք առաջադեմ գործիչներ, այդ թվում նաև կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները<sup>139</sup>: Դա, անշուշտ, զգալի լավագույն ամրապնդեց նոր վարչակարգը: Պրեմիեր մինիստր Յուսեֆ Զուեյնը «Պարզաստ-ի թղթակցի» հետ ունեցած զրույցում նշեց, որ նոր ղեկավարությունը իշխանություն հարցում վերջ է տալու Բասսի մենաշնորհին, աչելի յուրատեսակ սմենակայությունը, որն իրականում նրանց միայն մեկուսացնում էր ժողովրդական մասսաներից<sup>140</sup>:

Զուեյնի կառավարությունն իր հիմնական խնդիրը հույսով էր կապում վերջ հասցնել առաջադիմական վերափոխումները, կառուցել բուրժուազիստական հասարակարգ գիտական հիմունքներով, հաշվի առնելով արարական աշխարհում գոյություն ունեցող կոնկրետ պայմանները<sup>141</sup>:

Կուսակցության ղեկավարության առջև կանգնեցին ինչպես համազգային, այնպես էլ ներկուսակցական պրոբլեմներ: Բասսի սիրիական մարզային ղեկավարության և համաարարական ղեկավարության միջև եղած սուր տարաձայնությունների կապակցությամբ որոշվեց հրավիրել բասսի սիրիական հատվածի մարզային կոնֆերանս: Այն բացվեց 1966 թ. մարտի 10-ին Դամասկոսում և ունեց ներկու շաբաթ: Կոնֆերանսի որոշումներն ամրապնդեցին նոր քաղաքական կուրսը և շրջադարձային կետ հանդիսացան սիրիական Բասսի պատմության մեջ:

Վերլուծելով փետրվարի 23-ի նախօրյակին երկրում ստեղծված զրույթունը, կոնֆերանսը նշեց, որ հզնամամը կուսակցության մեջ հրահրվել էր համաարարական ղեկավարության կող-

<sup>138</sup> Նույն տեղում:

<sup>139</sup> «Արաբա», 4.III.1966; «البعث», 2.III.1966.

<sup>140</sup> «Արաբա», 17.IV.1966.

<sup>141</sup> «البعث», 4.III.1966.

միջ, որը ղեկավարելու է 21-ին, ի խախտումն ներկուսակցական ղեկավարության, ցրել էր կուսակցության սիրիական մարզային ղեկավարությունը: Կոնֆերանսն ընդունեց կուսակցության ներսում աչ քննման առկայությունը, որը և հիմք հանդիսացավ կուսակցության զոյությունը սպանուցող հզանաժամի առաջամասը: Եւ աչ քննման կողմնակիցների վրա դրեց նախկինում թույլ արված անհաղորդությունների և սխալների պատասխանատվությունը: Կոնֆերանսն ընդգծեց, որ փետրվարի 23-ի ղեկավարը ներկուսակցական ղեկավարության վերականգնելու միակ միջոցն էին:

Ներքին քաղաքականության բնագավառում ընդունված որոշումների նպատակն էր ամելի խորացնել և զարգացնել սոցիալ-տնտեսական վերափոխումներն արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառում, իրականացնել կուսակցության ծրագիրը՝ երկիրը սոցիալիստական ուղիով զարգացնելու վերաբերյալ, ժողովրդական մասաներին ներգրավել երկրի կառավարման մեջ, լայն համագործակցություն հաստատել րուր շխկապես սոցիալիստական, յունիոնիստական և առաջադիմական տարրերի միջև, ղեկավարության լայն ազատություններ առարմիություններին, համագործակցություն հաստատել մանր թուրծազիայի հետ, բանակը մասնակից դարձնել սոցիալիստական վերափոխումներին և այլն:

Միջարարական հարաբերությունների բնագավառում կոնֆերանսն ընդգծեց, որ արարական միանություն խնդիրը կարող է հաջող լուծվել միայն բնկափոխական դադարախախտության և հնդափոխական ուժերի համատեղ պայքարի հիմքի վրա, սոցիալիզմի կառուցման հիմքի վրա: Այդ պատճառով էլ առաջնահերթ նշանակություն արվեց սերտ համագործակցության հաստատման արարական առաջադեմ երկրների՝ Սիրիայի, ԱՄՆ-ի, Ալժիրի և Ծմենի միջև:

Արտաքին քաղաքականության բնագավառում հատկապես ընդգծվեց սոցիալիստական երկրների հետ համագործակցության ընդլայնման ու սոմրազնոման անհրաժեշտությունը:

Կոնֆերանսն ընարեց կուսակցության նոր ղեկավարություն՝ հանրապետության պրեզիդենտ նուրեդդին Աթախի գլխավորությամբ<sup>142</sup>:

<sup>142</sup> *العراق*, 16.IV.1966.

Կենֆերանսի որոշումները հավանության արժանացան աշխատավորական մասսաների, ինչպես նաև միջին խավերի և մանր բուրժուազիայի շատ ներկայացուցիչների կողմից:

Այնուհետև Զուհյի կառավարությունը մեծամասինը եղավ վերահիշյալ որոշումների կենսագործմանը: Ավելի արագ թափով սկսեց իրականացվել ազրարային ռեֆորմը: Ընդունվեց հողերի բաժանման նոր պլան: Փանի որ հողատերերը համառ դիմադրություն էին ցույց տալիս ազրարային ռեֆորմի կիրառմանը, կառավարությունը պատժի մի քանի միջոցներ մացրեց նրանց նկատմամբ, ովքեր սարսուտածի կենթարկելին կամ կզգձգելին հողերի բաժանումը: Նման դեպքերում նախատեսվում էր բռնագրավել ոչ միայն հողերի ավելյուկը, այլև ամբողջ հողային սեփականությունը, առանց որևէ հատուցման<sup>143</sup>:

Ազրարային ռեֆորմի արագ ավարտման նպատակով 1966 թ. հուլիսի 29-ին զործող օրենքի մեջ մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարվեցին: Մասնավորապես ընդլայնվեցին տեղական իշխանությունների լիազորությունները, կրճատվեցին հողի տարման հետ կապված էկսկանությունները և այլն<sup>144</sup>:

Հողի բաժանման հետ միաժամանակ կազմակերպվում էին պետական փորձնական սնտեսություններ, գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ և հողի համատեղ մշակման ընկնություններ<sup>145</sup>: Կառավարությունը վարկերով ապահովեց կոոպերատիվ տնտեսություններին և գյուղատնտեսական այլ միավորումներին, ինչպես նաև առևտրականներին, արհեստավորներին և սահմանափակ նկատույնների տեր մարդկանց: Գյուղացիների շահերը պաշտպանելու համար 1966 թ. ապրիլի 17-ին հիմնվեց գյուղացիական միությունների ֆեդերացիա<sup>146</sup>: 1966 թ. հուլիսի 8-ին Լաթաքիայում րացվեց Սիրիայի գյուղատնտեսական Զ-րդ կոնֆերանսը, որի նպատակն էր հանձնարարականներ մշակել գյուղատնտեսության զարգացման համար:

Մեծ նշանակություն տալով Եփրատի ամրարտակի շինարարությունը, կառավարության որոշմամբ 1966 թ. մայիսի 13-ին

<sup>143</sup> В. Гусева, Сирия: новая страница истории («Международный ежегодник. Политика и экономика», М., 1967, стр. 253).

<sup>144</sup> «الثور», 20.XI.1966.

<sup>145</sup> В. Гусева, Сирия: новая страница истории, стр. 253.

<sup>146</sup> «الثور», 8.VII.1966.

ստեղծվեց ամբարտակի շինարարության քարձրագույն կոմիտե՝ Յուսեֆ Զուեյնի նախագահությամբ: 1967 թ. ապրիլի 25-ին ստեղծվեց պետական շինարարական ընկերություն, որը պետք է վերահսկեր երկրի բոլոր ոռոգելի կառույցները, այդ թվում նաև՝ մոխրափ ամբարտակի շինարարությունը<sup>147</sup>:

Միջոցներ ձեռնարկվեցին տնտեսության պետական սեկտորի ամրապնդման և ընդլայնման համար: 1966—1970 թթ. նոր հեղափոխ պլանի համաձայն կապիտալ ներդրումների հիմնական մասը նախատեսվում էր մի շարք կարևոր տնտեսական պլանների կենսագործման համար, այդ թվում էներգոսխառնման կառուցման, նավթահանման և նավթամշակման արդյունաբերության զարգացման, արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցման նպատակով:

Կառավարությունը դիմեց մի շարք քայլերի՝ բանվորների, ծառայողների և ցածր եկամուտ ունեցող խավերի կենսամակարդակը բարձրացնելու ուղղությամբ: 1966 թ. մարտի 18-ին բարձրացվեց բանկերի, ապահովագրական ընկերությունների և Հումս ու Համաշի էլեկտրակայանների բանվորների և ծառայողների աշխատավարձը<sup>148</sup>, սկսվեց ազգայնացված արդյունաբերական ձեռնարկությունների շահույթների 25 տոկոսի բաժանումը բանվորներին ու ծառայողներին, որը նախկին կառավարությունը երկար ժամանակ արգելադրում էր: Ապրիլին մշակվեցին միջոցառումներ՝ պետական ապարատը հետադիմական և կաշառակեր ստորերից մաքրելու համար<sup>149</sup>:

Բասսի էսի ղեկավարությունը բանակը հուլիսից սկսակցություն անբաժան մասը», և երկրի հեղափոխական վերափոխումների նախնական մասնակիցը: Բանակին հարավայություն տրվեց ոչ միայն պաշտպանել երկրի հեղափոխական նվաճումները, այլև մասնակցել սոցիալական վերափոխումների իրականացմանը: Կառավարությունը բանակը զտեց այ բառասակտներից և ստալի քաշեց բրանակը պաշտպանության և խաղաղ շինարարության» համար լողունը: Արևազանքելով այդ լողուններին, բանակը սկսեց մասնակցել խաղաղ ստեղծագործական աշխատանքին,

<sup>147</sup> «Правда», 17.IV.1966.

<sup>148</sup> «الثور» 18.III.1966; Л. Медведко, Страна после февральских событий, стр. 93—94.

<sup>149</sup> «Новейшая история арабских стран», стр. 90.

ժամանակորպես մի քանի արդյունաբերական գրչիկտների, Գամասկոս—Կատանա երկաթգծի, ոտոզիչ շրանցքների շինարարությունը և գյուղատնտեսական աշխատանքներին<sup>120</sup>,

Միրիաչի ևօր ղեկավարները վարում էին արաբական բուր առաջադիմական երկրների հետ մերձեցումը և համագործակցելու քաղաքականությունը: 1966 թ. մարտի 13-ին սիրիական պատվիրակությունը Ցուսեֆ Զուհյեի ղեկավարությամբ Կահիրեում մասնակցեց արաբական պետությունների ղեկավարների խորհրդակցությունը<sup>121</sup>,

Փայլեր կատարվեցին նաև ԱՄՆ-ի հետ տնտեսական և առևտրական հարաբերությունները բարելավելու համար. կնքվեցին մի շարք համաձայնագրեր, առևտրական գործարքներ և այլն: Սահղժվեց մի կամիտե, որը պետք է կարգավորեր երկու երկրների միջև ղեկնա բաժանման ժամանակվանից գոյություն ունեցող լուծված հարցերը<sup>122</sup>,

1966 թ. նոյեմբերին Միրիան և ԱՄՆ-ը կնքեցին համառոտ պաշտպանության պայմանագիր, որը նախատեսում էր կոորդինացնել քաղաքական և ուղղմական գործողությունները, եթե կողմերից որևէ մեկը հարձակման ենթարկվեր, Բացի այդ, կողմերը համաձայնվեցին համագործակցել և իրենց գործողությունները կոորդինացնել տնտեսության, մշակույթի և ինֆորմացիայի ապարեղներում: Միրիան և ԱՄՆ-ը որոշեցին դիվանագիտական ներկայացուցչություններ փոխանակել ղեկավարների մակարդակով<sup>123</sup>,

1967 թ. մարտին բանակցություններ տեղի ունեցան Իլյաթի հետ առևտրական փոխանակության ընդլայնման, տնտեսության բնագավառում երկու երկրների ջանքերը կոորդինացնելու, ինչպես նաև Սփյուստի շրերի համառոտ օգտագործման հարցերի շուրջը<sup>124</sup>, Իսկ մինչև այդ՝ 1966 թ. դեկտեմբերին, բանակցություններ էին տեղի ունեցել Ալժիրի Ազգային ազատագրության հակառակ<sup>125</sup> և

<sup>120</sup> «البعث», 3.IV. 1.VIII.1966.

<sup>121</sup> «الأمم», 18.III.1966, «النور», 15.III.1966.

<sup>122</sup> «الأمم», 8.IV.1966, «البعث», 10.VI.1966.

<sup>123</sup> «Трава», 4.XI.1966.

<sup>124</sup> «البعث», 23.III.1967.

<sup>125</sup> Նույն տեղում, 17. XII. 1966.

Մարտկոչի ժողովրդական ուժերի ազգային միության պատվիրակությունների հետ<sup>156</sup>, 1967 թ. մարտին համառոտագիր ստորագրվեց Սուդանի հետ առևտրի և տնտեսական համագործակցության ընդլայնման մասին<sup>157</sup>,

1966 թ. ապրիլի 18-ին սովետական կառավարության հրավերով բարեկամական այցով Մոսկվա ժամանեց սիրիական կառավարական պատվիրակությունը՝ պրեմիեր մինիստր Յուսեֆ Չուլեյի գլխավորությամբ: Բանակցությունների ավարտից հետո արձանագրություն ստորագրվեց ներառի ամբարտակի և հիդրոէլեկտրակայանի, ինչպես նաև այլ օբյեկտների շինարարության ընդգրկումով սովետա-սիրիական տեխնիկական համագործակցության մասին<sup>158</sup>:

1966 թ. սեպտեմբերի 10-ին սիրիական կառավարությունը տրաք պետրոլեում կոմպանիա (ԵՌՊԿ)-ից պահանջեց ավելացնել Միրիայի տերիտորիայով անցնող նավթի համար կոնցեսիոն վճարումները, ինչպես նաև վճարել նավթային ընկերությունների սխալ հաշվումների հետևանքով վերջին տասը տարիներին զոյացած պարտքը: Այդ գումարը մոտավոր հաշիվներով կազմում էր 40 մլն ֆունտ ստերլինգ<sup>159</sup>: Մակայե երկարատև բանակցությունները դրական արդյունք չափեցին: Միրիական կառավարությունը ղեկավարների Ց-ին կալանք դրեց ԵՌՊԿ-ի՝ Միրիայի տերիտորիայում գտնվող գոյքի վրա, հայտարարելով միաժամանակ, որ կալանքը կվերացվի, եթե ընկերությունը բավարարի կառավարության պահանջները: Ի պատասխան՝ ԵՌՊԿ-ի վարչությունը փակեց Միրիայի տերիտորիայով անցնող նավթամուղը: Երա նպատակն էր առաջացնել Իրաքի և Լիբանանի կառավարությունների ղեկավարությունը<sup>160</sup>, քանի որ նավթի մատակարարման զազարեցումը սպառնում էր նրանց շահերին և պահասեցնում կոնցեսիոն վճարումները: Մակայե, հակառակ ընկերության սպասումներին, Իրաքը և Լիբանանը պաշտոնապես հայտարարեցին,

<sup>156</sup> «العمدة» 27.III.1967.

<sup>157</sup> Նույն տեղում, 29.III.1967, 16.IV.1967.

<sup>158</sup> «Пресса», 19.IV.1966. Համագորտախոս համառոտագիրը ստորագրվեց 1966 թ. փետրվարի 18-ին («Известия», 20.XII.1966).

<sup>159</sup> P. Андреевски, Нефтяная война («Новое время», 1967, № 1, стр. 24).

<sup>160</sup> Իրաքում արդյունահանվող նավթը Միրիայի և Լիբանանի տերիտորիաներով անցնող նավթամուղով գալիս է գալիս Միջերկրական ծով:

որ իրենք պաշտպանում են Միքիայի արզարացի պահանջները<sup>161</sup>,  
Համանման դիրք զբաղեցին նաև ԱՄՆ-ի, Ալժիրի, Եմենի, Քու-  
վեյթի և արաբական մի շարք այլ երկրների կառավարություն-  
ները:

ԵԻՊՅԱ-ի դեմ մզվող պայքարում մեծ ազանց ներդրեց Մի-  
քիայի կամուրջը, որը հանդես էր գալիս երկրի բոլոր առաջադի-  
մական ուժերի հետ միասին:

Կառավարության ու հայրենասիրական ուժերի միասնությու-  
նը և արաբական երկրների, սոցիալիստական պետությունների ու  
համաշխարհային առաջադիմական հասարակության պաշտպա-  
նությունն ապահովեցին Միքիայի հաղթանակը ԵԻՊՅԱ-ի դեմ  
մզվող պայքարում: 1967 թ. մարտի 2-ին ընկերության վարչու-  
թյունը հայտարարեց սիրիական կառավարության պահանջները  
բազմապատկույթ իր համաձայնության մասին<sup>162</sup>:

Կառավարության առաջադիմական ներքին և արտաքին քա-  
ղաքականությունը վայելում էր աշխատավորական մասսաների  
սկսելով աշակցությունը: Գրությունը երկրում կայունանում էր:  
Սակայն կառավարության քաղաքականության դեմ սկսեցին ա-  
վելի նուանդուն հանդես գալ երկրի հետադիմական շրջանները, ազ-  
գայնացման խոշոր ձևակերպությունների նախկին տերերը, հողերի  
ավելացուցիչ զբնված կալվածատերերը և Բաասի աչ թևի կողմնա-  
կիցները: Նրանք սպառնալից էին առանձին սխալները, որ թույլ  
էին արվում սոցիալիստական վերափոխումների ժամանակ, կրու-  
նական նախապաշարումները, ազգային և կրոնական տարրերու-  
թյունները, Եկոմունիստական վտանգիչ մասին Հեքյուրանքները և  
այլն:

Ամբողջ 1966 թ. և 1967 թ. սկզբներին երկրում չէին գաղա-  
րում պրովոկացիաներն ու զավաղությունները: 1966 թ. սեպ-  
տեմբերի 6-ին կառավարությունը հայտարարեց այն զավաղու-  
թյան բացահայտման մասին, որ կազմակերպել էին Միչել Աֆլա-  
կը և Սալահ Բիթարը<sup>163</sup>: Մեկ օր անց կառավարությունը տեղե-  
կացրեց մեկ այլ զավաղություն բացահայտման մասին, որի  
կազմակերպիչը Բաասի սիրիական մարզային ղեկավարության

161 «Правда», 13.18.XII.1966.

162 «البعث» 3.III.1967.

163 Նույն տեղում, 7.IX.1966.

նախկին անգամ մայր Սալիմ Հաթումն էր<sup>164</sup>։ Երկու դավադրություններն էլ վերացվեցին։ Դավադրների ձերբակալման հետ միասին սկսվեց պետական ապարատի, ձեռնարկությունների և ընկերությունների զտումը բուրժուական տարրերից և այ բաասականների դրածոներից։

1866 թ. հոկտեմբերի առաջին կեսին կայացավ Բաասի Համաարարական Զ-րդ կոնֆերանսը։ Նա վճռականորեն զատապարտեց այ բասական նախկին ղեկավարների՝ Միշի Աֆլակի, Սալահ Բիթարի և Մունիֆ Թազզազի հետադիմական կուրսը, մատնանշելով, որ նրանք կատարում էին հետադիմության և իմպերիալիզմի քաբեմած գործակալների և առևկիցների գեր, փորձելով սկուսակցությունը շեղել հեղափոխական ուղուց և կտրել նրան ժողովրդական մասսաներից<sup>165</sup>։

Դավադրություններին զուգընթաց ուժեղացավ յարվածությունը սիրիա—խորայելական սահմանի վրա, 1866 թ. վերջերից խրայելական զինված ուժերը զրվեցին մտրտական վիճակի մեջ։ Բանակ զորակոչվեցին լրացուցիչ ուժեր։ Սիրիական սահմանագլխին Խորայել կենտրոնացրեց խոշոր սազմական ուժեր<sup>166</sup>։

Ներքին և արտաքին հակահեղափոխության վտանգը էլ ալեցի համախմբեց սիրիական ժողովրդին։ Ամբողջ նրկրում ըստեղծվեցին բանվորների, գյուղացիների, զինվորների, կուսակցական կազմակերպությունների և իշխանության մարմինների ներկայացուցիչներից բաղկացած զգուսթյան կոմիտեներ։ Բաասի սիրիական մարզային ղեկավարության որոշմամբ հիմնվեց ժողովրդական պաշտպանության բարձրագույն կոմիտե, որը սկսեց կազմակերպել ժողովրդական աշխարհազորայինների խմբեր<sup>167</sup>։ Աշխարհազորայինների հետ ձուլվեց նախկինում զուտ կուսակցական հիմքի վրա կազմված սզզային զվարդիան։ Բարձրագույն կոմիտեի մեջ մտան ինչպես զինվորական իշխանությունների, այնպես էլ արհմիութենական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Աշխարհազորի մեջ մտնում էին քնակություն բուլթր խավերը, որոնց զենք բաժանվեց։ 1867 թ. մտրտին որո-

164 , 10.IX.1966.

165 , 16, 20.X, 1. XI.1966.

166 «ИЗВЕСТИЯ», 28.V.1966; 2.II.1967.

167 «الجمهورية» 23.V.1966.



շում ընդունվեց աշխարհագրայինների շեկատևերը միավորել ժողովրդական բանակի մեջ, որը կանոնավոր բանակի հետ միասին, ազրեսիայի ղեկաբում, կմասնակցեր երկրի պաշտպանությանը<sup>168</sup>,

1967 թ. փետրվարին կայացավ Միրիայի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի պլենումը, որը քննարկեց Միրիայի ներքին և արտաքին քաղաքականության հարցերը: Պլենումն ընդունեց Միրիայի առաջադիմական բոլոր ուժերի համագործակցության կարևորությունը քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր ընազավաններում՝ սիմպերիալիստների, սիոնիստների և տեղական հեռադիմականների տանկությունների դեմ հանդիման, որոնք շանում են ձախողել երկրի զարգացումը սոցիալիզմի ուղիով և թուլացնել Միրիական Արարական Հանրապետության բարեկամական կապերը սոցիալիստական երկրների հետ<sup>169</sup>,

1967 թ. մարտին, սիրիա-խորաշելական սահմանի վրա շահագրոգ պրովոկացիաների կուսակցությամբ, ՄԱԿ-ի ղեկավար քարտուզար Ու Տանի առաջարկությամբ, վերջին յոթ տարում առաջին անգամ սկսեց նիստեր զումարել զինազաղաղի դժով սիրիա-խորաշելական խառը հանձնաժողովը: Սակայն սիոնիստները չէին հանդարտվում: 1967 թ. ապրիլի 7-ին խորաշելական սահմանապահ զորքերը Տիրբրիա լճից հարավ կազմակերպեցին մի նոր պրովոկացիա, որին մասնակցում էին տանկեր և ինքնաթիռներ<sup>170</sup>, Միրիական կառավարությունը վճռական բողոք հայտնեց և խառը հանձնաժողովից պահանջեց համապատասխան միջոցներ ձեռք առնել Խորաշելի նկատմամբ:

Ազրեսիայի ղեկաբում Միրիային պաշտպանելու իրենց պատաստակամությունը հայտնեց ԱՄՆ-ի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի, Սուդանի և Քուվեյթի կառավարությունները<sup>171</sup>, սկենիգաթ թերթը գրում էր, որ այդ ազգական պրովոկացիաները պատահական բնույթ չէին կրում, որ նրանք նախապատրաստվել էին Բեյրութում մարտին կայացած ամերիկյան զիվանագետների

168 Լույս տեղում, 8.III.1967:

169 «Проблема мира и социализма», 1967, № 6, стр. 82—83.

170 «Превд», 9.IV.1967.

171 «Известия», 9.IV.1967.

խորհրդակցության ժամանակ, և գրանցված իմպերիալիստները վրեժ էին լուծում սիրիական ժողովրդից՝ «ԻՊՊԿ»-ի դեմ նրա մզած հաշոց պայքարի համար<sup>172</sup>:

Սովետական կառավարությունը եռսա հզից իսրայելից, նախազգուշացնելով նրան արարական երկրների դեմ ազդեցիկ գործողություններին<sup>173</sup>:

Ուժեղացավ նաև Ենթին Հետազոտության գործունեությունը: Մայիսի 9-ին խոշոր առևտրականները և հոգևորականությունը, որոնց ոգեշնչում ու պաշտպանում էին իմպերիալիստական և արարական Հետազոտական շրջանները, նոր փորձ կատարեցին տապալելու երկրում գոյություն ունեցող վարչակարգը: Նրանք արհեստական զժվարություններ առաջացրին առևտրի և Դամասկոսի ու Հալիպի բնակչությանը մթերքներով ապահովելու գործում: Դրանով նրանց հույս ունեին երկրում առաջ բերել անկարգություններ ու խուճապ և օժտեղակել Սելիմ եաթուժին՝ իրագործելու հակահառավարական զավազությունը, որին աշակցում էր նաև ամերիկյան հետախուզությունը: Նրա մասնակիցները հատուկ պատրաստություն էին անցել սիրիա-հորդանանյան սահմանից ոչ հեռու գտնվող Մաֆրակ նամքարում: Ելույթի համար որպես պատրվակ «գտազորովեց» «Ջայլ Եսորի» ամառգրում հակահրոնական հողվածի լույս ընծայումը, որը տեղի էր ունեցել առանց կառավարության գիտություն և ակնհայտ պրովակացիոն նպատակներով:

Սակայն այդ պրովակացիոն ելույթն անմիջապես ճնշվեց իշխանությունների կողմից՝ առաջադիմական կազմակերպությունների և բանվորական արհմիությունների անմիջական մասնակցությամբ: Սիրիական իշխանությունները ձերբակալեցին այդ ելույթի հրահրիչներին և նախազգուշացրին առևտրականներին, որ առևտուրը չվերսկսելու դեպքում կրճատվեն նրանց խառնուրդները և ապրանքները: Ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը պարեկներին՝ զինված բանվորների և ծառայողների, օժտեղակությամբ սկսեց հաշվառման ենթարկել փակ խանութները և այլնունակ բնագրավել գրանք: Բանագրավվեց 80 խանութ, որոնք պատկանում էին Դամասկոսում, Գումմայում և Հալիպում սարսամի գլխավոր կազմակերպիչ խոշոր առևտրականներին: Դրա

<sup>172</sup> «3a pyбeжoм», 1967, № 16, cтp. 3; «Пpанк», 24.V.1967.

<sup>173</sup> «Пpанк», 27.IV.1967.

հետ միասին բացատրական աշխատանք էր տարվում մանր առևտրականների և արհեստավորների շրջանում, որոնց զավագիրները շանտաժի և խաբուսիքի փորձով փորձում էին սզտագործին իրենց շահագրիտական նպատակների համար<sup>174</sup>,

կառավարության քայլերը վնասականորեն պաշտպանեց Սիրիայի կոմունիստական կուսակցությունը: Մայիսի 10-ին նրա զենավարությունը բաց նամակ ուղարկեց կառավարությանը, որտեղ սզտագործում էր հետադիմականության և իմպերիալիստական գործակալների քայլերը, որոնք, շեղվելով կրոնական զգացմունքների հետ, փորձում էին անկարգություններ առաջ քերել, ապակոզմոսոչի առևտրականներին ու արհեստավորներին, որպեսզի խանգարեն Սիրիայի առաջընթացը ազգայնացման և առաջադիմության ուղով և վտանգի տակ զենն նրա ազգային անկախությունը<sup>175</sup>:

Այդ նույն ժամանակ լարվածությունը սիրիա-իսրայելական սահմանի վրա զենվում աճում էր: 1967 թ. մայիսի 14-ին ՄԱԿ-ում Սիրիայի ներկայացուցիչը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին տեղեկացրեց սիրիական սահմանի մոտ իսրայելական զորքերի կենտրոնացման և «Սիրիայի դեմ Իսրայելի կողմից պատերազմի բացահայտ սպառնալիքի մասին»: Նա նշեց, որ Սիրիայի դեմ ուղղված իսրայելական զավագրության հետևում կանգնած են Միացյալ Նահանգները<sup>176</sup>:

1967 թ. մայիսի 24-ին սովետական կառավարությունը նոր հայտարարություն արեց Մերձավոր Արևելքի դրություն մասին, բնորոշելով, որ վնասականորեն պաշտպանում է արաբական երկրներին, և նրանց դեմ ուղղված ամեն մի ագրեսիա դիմադրության կհանդիպի Սովետական Միության և քոչոր խաղաղասեր պետությունների կողմից<sup>177</sup>:

1967 թ. մայիսին կայացած խորհրդակցության ժամանակ արաբական երկրների կոմունիստական կուսակցություններն անհրաժեշտ համարեցին կրկին համաշխարհային հասարակության ուշադրությունը հրավիրել արև փաստի վրա, որ իմպերիալիզմն Իսրայելին սզտագործում է ընդդեմ արաբական ազգային-ազա-

174 «الثور»، 11.V.1967.

175 «الثور»، 10.V.1967.

176 «Пресса», 10.V.1967.

177 Նույն տեղում, 24.V.1967.

ստացրական շարժման, ընդգիծ ԱՄՆ-ի, Միբրիայի և Ալժիրի, որանդ իրականացվել են սոցիալ-տնտեսական վերափոխումներ: Նրանք դիմեցին իրենց երկրներին հայրենասիրական, առաջադիմական և հեղափոխական ուժերին, կոչ անելով համախմբվել ընդդեմ իմպերիալիզմի, սիոնիզմի և հեռադիմության, հանուն արարական երկրների լրիվ ազատագրման, առաջադիմության և բոլոր քիազավառներում հետամնացության վերացման<sup>178</sup>:

Մակայն իսրայելական ազրեստները, անսալով ողջախոհության նախը և կատարված նախազգուշացումները, նոր ազրեսիա սանձազերեմեցին արարական երկրների դեմ: 1967 թ. հունիսի 5-ին իսրայելական զորքերն առանց պատերազմ հայտարարելու հարձակվեցին ԱՄՆ-ի, Միբրիայի և Հորդանանի վրա: Պատերազմի հենց առաջին օրը նրանց հաջողվեց ռժշակցիկ այդ երկրների օվիացիայի մեծ մասը: Իսրայելիկ պաշտպանում էին ԱՄՆ-ը, ինչպես նաև՝ Անգլիան: Այդ պատեանում էլ արարական երկրները խզեցին զիվանագիտական հարաբերությունները նրանց հետ:

Ազրեսիայի իսկ առաջին օրը Միբրիայի աշխատավորական մասսաները որպես աշխարհագրայիններ մասն ժողովրդական բանակի մեշ: Ոնքեապաշտպանության կազմակերպման և տնտեսական ոնզերվների մոբիլիզացման համար բոլոր քաղաքներում ստեղծվեցին շՀայրենիքի և հեղափոխության պաշտպանության կոմիտեներ: Նրանց մեշ, բացի Բասսի անդամներից, մասն նաև երկրի մյուս առաջադիմական կազմակերպությունների, բանվորական և դյուղացիական, կանանց և երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները: Այդ կոմիտեներում մեծ դեր էին խաղում կոմունիստները<sup>179</sup>:

Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները, հովատալիմ իրենց ինտերնացիոնալ պարտքին, իսրայելական ազրեսիայի ժամանակ գրավեցին արարական ժողովուրդներին պաշտպանելու վճռական ու հետևողական դիրքը: 1967 թ. հունիսի 5-ին սովետական կառավարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ դասապարտելով Իսրայելի ազրեսիան, արեց մի շարք անհետաձգելի առաջարկներ, այն վերացնելու համար<sup>180</sup>: Սրկու օր անց՝ հունիսի 7-ին, հրապարակվեց սովետական

178 Նույն տեղում, 2.VI.1967:

179 «العالم» 24, 29.I.1968.

180 «Правда», 6.VII.1967.

կառավարության նոր հայտարարությունը, որով լուրջ նախազգուշացում էր արվում ազդեցորին՝ զաղարեցնելու ազգամական գործողություններն արարական երկրների դեմ<sup>181</sup>,

1967 թ. հունիսի 9-ին Մոսկվայում ստորագրվեց սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունների կենտրոնական կոմիտեների և կառավարությունների հայտարարությունը, որտեղ մերկացվում էին իմպերիալիզմի պլանները Մերձավոր Արևելքում և պատրաստակամություն էր հայտնվում լայն աշակցություն ջույց տալու արարական ժողովուրդներին: Հայտարարության մեջ որոշակիորեն ասված էր, որ սոցիալիստական երկրները ձեռք կառնեն ծայրահեղ միջոցներ, եթե Եսրայելը շարունակի իր ազդեցիկան<sup>182</sup>:

Պատերազմի ընթացքում, որ տևեց վեց օր, արարները պարտություն կրեցին: Եսրայելական ազդեցությունը կարողացան գրավել արարական երկրներին պատկանող զգալի տերիտորիաներ, որոնց ընդհանուր տարածությունը կազմում է 60 հազար կմ<sup>2</sup>, Եսրայելը ԱՄՆ-ից զավթեց Միևայի թերակղզին, զուրա գալով Սուեզի ջրանցքի արևելյան ափը, Շարմ ալ-Շեյխը, Հորդանանի ամրոցը արևմտյան մասը մինչև Հորդանան գետը, Երուսաղեմ, Բեթզեհեմ ու Նաբլուսա քաղաքները և Միջին Արևելյան պատկանող Ալ-Կունեյտրան ու Գուանի բարձրությունները, կանգ տանելով Գամաս-կոսից ընդամենը 40 կմ հեռավորության վրա<sup>183</sup>:

Չնայած ռազմական հաջողություններին, Եսրայելին և երաթիկունքում կանգնած ԱՄՆ-ին ու Անգլիային չհաջողվեց հասնել իրենց դիտավոր նպատակին՝ տապալել առաջադիմական վարչակարգերը Միջինայում և ԱՄՆ-ում, վերացնել այդ երկրների ժողովուրդների սոցիալ-տնտեսական եզրեւումները, վարկարեկել սոցիալիզմի զաղափարները, ճեշել ազգային-ազտագրական շարժումները Մերձավոր ու Միջին Արևելքում և խախտել արարական ժողովուրդների բարեկամական հարաբերությունները ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ:

Երկրի հարավային շրջանների գրավումը և իսրայելական ազդեցիկայի հասնանքները բարձրացրին Միջինայի վիճակը: Երկրի առջև կանգնեցին ազդեցիկայի քաղաքական և տնտեսական հետե-

181 Նույն տեղում, 8.VII.1967:

182 Նույն տեղում, 11.VI.1967:

183 Г. С. Никитина, Государство Израиль, М., 1968, стр. 386.

վանքների վերացման, Միրիայի սոցիալ-տնտեսական զարգացման առաջադիմական կուրսի շարունակման և պաշտպանունակութիւնն ամրապնդման խնդիրները:

Այս պայմաններում Միրիայի կոմկուսը նորից կոչ արեց ամբաստանել բոլոր առաջադիմական խմբերի և կուսակցութիւնների համագործակցութեանը, ստեղծել լայն ժողովրդական նահատ, որի խնդիրը պետք է լիներ ժողովրդական մասսաների մորիլիզացումը: Միրիական կոմունիստները նշում էին, որ նահատը չպետք է փոխարինի պաշտոնական իշխանութիւնը երկրում, որ նահատի ստեղծումը չի նշանակում որևէ առաջադիմական կազմակերպութիւնն դերի նսեմացում կամ նրա գործունեութիւնն դադարեցում: Կոմկուսը գտնում էր, որ պետք է ծափալել սկզբունքային քննադատութեան նրա մեջ մտնող առաջադիմական ուժերի միջև՝ «Հենց այդ ուղիով,—նշում էր Միրիայի կոմկուսը,—կարելի է հազիւ հասնել բազմաթիվ զմայրութիւններ երկրում և զտագործել բոլոր հնարավորութիւններն ու ուժերը իմպերիալիզմի, հետադիմականութեան և սխոնիզմի դաժնագորութիւնները ձախողելու և ազգային առաջադիմութեան ուղու պահպանման ու ամրապնդման համար, որով բնթանում է Միրիան»<sup>184</sup>:

Հենվելով Սովետական Միութեան և սոցիալիստական մյուս երկրների, ինչպես նաև բարեկամ արաբական երկրների օգնութեան վրա, սիրիական իշխանութիւնները մի շարք միջոցներ ձեռք առան վերացնելու ազրեխայի հետևանքները: Քայլեր կատարվեցին բանակի վերազինման և վերակազմման ուղղութեամբ: Իրենց գործունեութեան ակտիվացրին «Հայրենիքի պաշտպանութեան կոմիտեները»: Ժողովրդական բանակի շարքերը մասնատանյակ հազարավոր սիրիացիներ<sup>185</sup>:

Կառավարութեանը վերսկսեց պատերազմի պատճառով դադարեցված տնտեսական պլանների և ազրաբային ռեֆորմի կենսագործումը: 1958 թ. հունիսին ավարտվեց խոշոր կալվածատերերին պատկանող 1 մլն 300 հազար էա հողերի բռնազրավումը: Օտարված հողերի 85 տոկոսը բաժանվեց անհող և քիչ հող ունեցող գյուղացիներին<sup>186</sup>, 1958 թ. դեկտեմբերի 19-ին ընդունվեց

<sup>184</sup> «Пресса», 1.XI.1957.

<sup>185</sup> Նույն տեղում, 27.IV.1958.

<sup>186</sup> «البعث», 12.VII.1958.

գեղերև՝ գյուղացիներին 500 հազար եւս պեճական հողեր բաժանելու վերաբերյալ<sup>187</sup>։

Կառավարութունն ավելի շատ ուշադրութուն սկսեց դարձնել գյուղատնտեսության նշուժատեխնիկական բազայի վերականգնման վրա։ Նախկին կալվածատիրական հողերի վրա հիմնվեց 370 գյուղատնտեսական կոոպերատիվ<sup>188</sup>։ Նրանք բոլորը սպասուղական բնույթի էին, թևն նրանցում կիրառվում էին նաև արտադրական համագործակցության տարրեր ևներ՝ համաանդ սոսոզում, գյուղատնտեսական տեխնիկայի քառագործում և այլն։ Կառավարութունը զգալի արտադրություններ էր ապրիս կոոպերատիվներին (արտոնյալ պայմաններով բանկային վարկեր էր արամագրում, մատակարարում սերմեր, զնում գյուղատնտեսական մթերքներ, ազատելով նրանց վաշխառուներից և միջնորդ զևորդներին և այլն)։ Կոոպերատիվների կողքին պետության կողմից հիմնվեցին նաև տասնյակ պեճական ֆերմաներ<sup>189</sup>։ Կառավարութունն ամեն կերպ աշխատում էր ավելացնել արտահանվող գյուղատնտեսական կուլտուրաների արտադրությունը։

Սակայն, շնչած այս բոլոր տեղաշարժերին, գյուղացիության ճնշող մասի կենսամակարդակը զեռնս ցածր էր, զեռնս շին լուծվել գյուղատնտեսության շահութարերության և արտադրողականության բարձրացման հարցերը։ Ճարարանչլուր տարի հազարավոր գյուղացիներ աշխատանք փնտրելու նորատակով զնում էին հարևան արարական երկրները։ Օրինակ, արձանազրված է, որ ամեն տարի Լիրանանի գյուղատնտեսության մեղ զբաղված են ճղել 150—200 հազար արուվարնով աշխատող սիրիացիներ<sup>190</sup>։

Միրիայում մեծ հույսեր էին կապում Սփրատի ամբարտակի շինարարության հետ։ Նրա շինարարության վերաբերյալ համաձայնագիրը, սիրիական հետազոմական շրջանների ճնշման տակ, կառավարութունը ԳՁԷ-ի հետ կնքել էր զեռնս 1963 թ.։ Միրիական կառավարության կողմից երկրի օգտակար հանածոների ազգայնացումից հետո, որը շոշափում էր ատարերկրյա նավթային բնկերութունների, այդ թվում նաև արևմտագերմանական ԵԿՆ-կորդիո շահերը, ԳՁԷ-ը զազարեցրեց համաձայնագրի կատարու-

187 «Труды», 19.XII.1968.

188 Г. Мирский, Путь Сирийской республики, стр. 139.

189 В. Гусев, Сирия: Новая страница истории, стр. 253.

190 «Бюллетень иностранной коммерческой информации», 1967, № 25, стр. 2.

մը 1966 թ. սիրիական կառավարությունը դիմեց Սովետական Միությանը և վերջինս համաձայնվեց անհրաժեշտ օգնություն ցույց տալ Սիրիային՝ այդ ամբարտակի շինարարության գործում։ Ամբարտակի կառուցման առաջին փուլով նախատեսվում է փակել Եփրատ գետի ջրերի հոսքը և ստեղծել արհեստական ջրամբար, որի շնորհիվ լրացուցիչ կոտորվի 600 հազար հա հող, Միաժամանակ նախատեսվում էր կառուցել 300 հազար հիլոմետր կարողությամբ էլեկտրակայան և 160 կմ երկաթուղիամբ էլեկտրահաղորդման գծի։ Այդ ծրագիրն արդեն իրագործված է։

Արդյունաբերական օբյեկտների շինարարության քննադատում հիմնական ուշադրությունը դարձվում էր նրանց վրա, որոնք մտա ապագայում տնտեսական շահույթ կտային։ Կառավարությունն արագ թափով կառուցեց 410 կմ երկաթուղիամբ նավթամուղ, որը Կարաշուկի նավթակենտրոնից ձգվում էր միջերկրածովյան Տարսուս նավահանգիստը։ Զգալի աշխատանքներ կատարվեցին Լոմսի նավթամշակման գործարանի ընդլայնման և Տարսուսի նավահանգստի վերասարքավորման ուղղությամբ, այն հաշվով, որ վերջինս կարողանա ընդունել տանկերներ<sup>191</sup>։ 1968 թ. հուլիսի 27-ին հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ առաջին տանկերի բեռնավորումը սիրիական նավթով<sup>192</sup>։ Սիրիական նավթի գնորդներ գործան Ֆրանսիան և Իտալիան։ Այսպիսով, Սիրիան մտավ նավթ արտահանող երկրների շարքը։ Դա Սիրիային հաշտվեց Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ համագործակցելու շնորհիվ։ Սիրիան դարձավ առաջին արաբական երկիրը, որն առանց օտարերկրյա ընկերությունների մասնակցության իրագործեց նավթի արդյունահանումը, մշակումը և արտահանումը միջազգային շուկա։

Մեծ ուշադրություն էր դարձվում նաև մյուս օբյեկտների շինարարությանը։ Առանձնահատուկ նշանակություն էր ձեռք բերել ՍՍՀՄ-ի օգնությամբ իրականացվող Հաթաբիա—Հալիպ—Կամըշի 770 կմ երկաթուղիամբ երկաթգծի կառուցումը, որը Սիրիայի արեւելյան և հյուսիսային մարզերը կկապի Միջերկրական ծովի հետ։ Արդեն շարք են մտել այդ երկաթգծի Հալիպ—Քարկա և Տարսուս—Ակկար տեղամասերը, որոնք Եփրատի հիդրոհանգույցի շինարարության շրջանը կապում են երկրի խոշոր արդյունաբերա-

<sup>191</sup> «Правда», 17.IV.1969.

<sup>192</sup> նույն տեղում։



կան կենտրոնների և մերձծովյան շրջանի հետ<sup>193</sup>, Շարունակվում էր ազտոճանապարհների և կամուրջների շինարարությունը:

Կառավարությունն ամեն կերպ ամրապնդում էր պետական սեկտորը:

Ջզախի աշխատանքներ էին կատարվում նաև կուլտուրական շինարարության, ինչպես նաև ազգային տեխնիկական մտավորականության ստեղծման ուղղությամբ: Այսպես, ուսանողների թիվը 1963 թ. 3 հազարի փոխարեն, 1967 թ. հասավ 7 հազարի<sup>194</sup>:

Կառավարությունը շարունակում էր աշխատավորների կենսամակարդակի բարձրացման քաղաքականությունը: 1969 թ. սկզբին ղեկընտ հրապարակվեց սահմանափակ եկամտաձեռք (տարեկան ոչ ավելի, քան 1800 լիրա) ունեցողներին եկամտահարկերից ազատելու մասին<sup>195</sup>, Նույն թվականի հունվարին կառավարությունն սկսեց ազգայնացված ընկերությունների մանր բաժնեատերերի բանկատոմսերի արժեքի վճարումը<sup>196</sup>: Մի շարք քայլեր կատարվեցին սոցիալական ապահովագրության, առողջապահության և կրթության բնագավառներում:

Աշխուժացավ գյուղացիների ընդհանուր ֆեզերացիայի գործունեությունը: Այն զույգերից իր երկրորդ կոնֆերանսը, որտեղ քննարկվեցին գյուղացիական մասսաների կազմակերպման և ֆեզերացիայի գործունեության կատարելագործման խնդիրները:

Կառավարությունն ահրաժեշտ միջոցներ ձեռք առավ որպեսզի նրկրների հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: Հետագա զարգացում ապրեցին բարեկամակոն կուպերը սոցիալիստական երկրների հետ:

Արարա-խորայնական պատերազմը և նրա հետևանքները որոշ բարդություններ առաջացրին նաև Միրիայի ներքաղաքական կյանքում: Իշխանության ղեկի մոտ գտնվելու ժամանակամիջոցում Բասաֆի ղեկավարությունը կարողացավ առավելագույն չափով ստեղծացնել իր ազդեցությունը մասսաների վրա: Սակայն, ինչպես նշվեց 1968 թ. հուլիսին կայացած արաբական երկրների կոմունիստական ու բանվորական կուսակցությունների խորհրդակցու-

<sup>193</sup> Նույն տեղում:

<sup>194</sup> «البعث» 24.XI.1968.

<sup>195</sup> «الثورة» 31.XI.1969.

<sup>196</sup> Նույն տեղում:

թյունում, բարարական առաջադրմական երկրներում հասարակական խոր վերափոխումները շամրապնդվեցին քաղաքական համապատասխան միջոցառումներով, որը հանգեցրեց մասսաների և առաջին հերթին բանվոր գասակարգի հեռացմանը քաղաքական ղեկավարությունից և արտադրության վրա սահմանված վերահսկողությունն ակտիվ մասնակցելուց»<sup>197</sup>։ Այս գիտողությունը որոշ չափով արգարացի էր նաև Միքիայի նկատմամբ։ Պատերազմը հաստատեց ժողովրդական լայն մասսաների վրա ավելի ամուր հենվելու անհրաժեշտությունը, որովհետև միայն նրանց միջոցով էր հնարավոր պաշտպանել երկրի առաջադրմական նվաճումները։ Միքիայի շատ ղեկավարներ դա հասկանում էին։ Այդ պատճառով էլ սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել բանվոր գասակարգին, գյուղացիությունը և ձանաչեցին բանվոր գասակարգի ավանգարդային գերը։

Սակայն Արարական սոցիալիստական վերածնություն՝ Բասա կուսակցության (ԱՄՎԿ) սիրիական մարզային ղեկավարության՝ բանվոր գասակարգին և գյուղացիությունը մերձենալու քաղաքականությունը, նոր բարդություններ հարուցեց։ Դրանք սերտորեն կապված էին իսրայելական ազրեսիայի հետևանքների վերացման, երկրի զարգացման տեմպերի, հարևան արարական երկրների, առաջին հերթին ԱՄՆ-ի և Իրաքի հետ համագործակցելու մեղքի, մերձավորարևելյան ճգնաժամի հաղթահարման ուղիների հետ<sup>198</sup>։

Բասաի 1968 թ. սեպտեմբերին կայացած մարզային և համարարական կոնֆերանսները շուտեցին այդ հարցերը<sup>199</sup>,

1969 թ. մարտին տեղի ունեցավ Միքիայի կուսուսի կենտրոնի պլենումը, որը քննարկեց երկրի ներքին գրություն և իսրայելական ազրեսիայի հետևանքների վերացման հետ կապված մի շարք հարցեր։ Պլենումը զգուշացրեց այն վտանգավոր հետևանքներից, որ կարող էր առաջացնել պառակաումը Բասաի ներքում, մասնանշելով, որ հենց այդ բանի վրա են հույսը դնում սիմպերիտիզմը, ներքին հետադիմությունը և իսրայելական էքստրեմիզմը»<sup>200</sup>։

<sup>197</sup> «[Првдз», 26.IX.1968.

<sup>198</sup> Е. П р и м а к о в, Сирия в час единства («За рубежом», 1969, № 20, стр. 16).

<sup>199</sup> «[بعث]», 9.XII.1968.

<sup>200</sup> «[Првдз», 5.III.1969.

Սաղած տարածայնություններից շատպեղին պարզելի հետազոտական տարրերը, որոնք ակադեմիային իրենց գործունեությունը, և իմպերիալիստական սրտ պետություններ: 1969 թ. փետրվար—ապրիլ ամիսներին արևմտյան մամուլը մեծ ազմուկ բարեյուսքից Սիրիայում իբր թե գոյություն ունեցող ասուր ներքազաքական հղանամիս շուրջը<sup>301</sup>: Այդ կամպանիայի նպատակն էր էլ ավելի սրել գոյություն ունեցող տարածայնությունները, որպեսզի պատակախն կուսակցությունը, փոխեն նրա առաջադիմական կուրսը, վարկարեկեն հաստատված բարեկամական և արդյունավետ հարաբերությունները ՄՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ, քայքայեն Քասսի համագործակցությունը մյուս առաջադիմական կազմակերպությունների, առաջին հերթին Սիրիայի կոմկուսի հետ, ինչպես նաև մեկուսացնեն Սիրիան արաբական առաջադիմական երկրներից: Սակայն նրանց պլանները չիրականացան:

Գոյություն ունեցող տարածայնությունները քննարկելու համար Քասսի ղեկավարությունը 1969 թ. մարտի 20-ին հրավիրեց արտակարգ կոնֆերանս: Կոնֆերանսի հասցեով կուսակցական և հասարակական կազմակերպություններից սասցվեցին բազմաթիվ հեռագրեր և ուղերձներ, որոնցում կոչ էին արվում գոյություն ունեցող տարածայնությունները լուծել բոլոր առաջադիմական ուժերի համախմբման և երկրի առջև կանգնած համազգային խնդիրների լուծման հիման վրա: Քասսի ղեկավարությունը նման կոչով դիմեց նաև Սիրիայի կոմկուսը<sup>302</sup>:

Աշխատավորական մասսաների և տարրեր քաղաքական կազմակերպությունների գործողությունների միասնությունը բարերար ազդեցություն ունեցավ կոնֆերանսի աշխատանքների վրա:

Կոնֆերանսը հաստատեց նախորդ կոնֆերանսների մշակած գրույթները ներքին, միջարարական և արտաքին քաղաքականություն հարցերում, որոնք ապահովում էին Սիրիայի զարգացումը առաջադիմության ուղիով: Եշելով երկրի բոլոր ուժերի և ռեսուրսների մոբիլիզացման կարևորությունը իսրայելական ագրեսիայի հետևանքների վերացման համար, կոնֆերանսը միաժամանակ քննարկեց, որ անհրաժեշտ է առաջիկայում ևս իրականացնել սոցիալական և տնտեսական վերափոխումներ, որոնք կապահովեն

<sup>301</sup> „The Economist“, L., 1969, March 8, v. 200, № 6550, pp. 25—16.

<sup>302</sup> «Пресса», 27.III.1969.

այդ պայքարի հաղթությունը: Մերձավորարևելյան ճգնաժամի լուծման հարցի կազակցությունը կոնֆերանսն արտահայտվեց հօգուտ արաբական երկրների միջև գործադուլությունների ավելի սերտ համագործակցության՝ հանուն արաբական միասնական ուղղման հակառի ստեղծման:

Կոնֆերանսը դատապարտեց ԱՄՆ-ի, Անգլիայի և ԳՖՆ-ի քաղաքականությունը, որոնք թշնամական դիրք էին զբաղվել արաբական երկրների հանդեպ, և հավանություն տվեց սոցիալիստական երկրների, առաջին հերթին Սովետական Միության հետ բազմակողմանի համագործակցության և բարեկամական հարաբերությունների զարգացման քաղաքականությանը:

Կոնֆերանսի կարևոր որոշումներից մեկը հանդիսացավ այն, որ առաջին անգամ Բաասը ճանաչեց այլ առաջադիմական կազմակերպությունների գոյությունը Միջին Արևելքում: Բաասի ղեկավարությունը հանձնարարվեց ոչ միայն շարունակել համագործակցությունը այդ առաջադիմական ուժերի հետ, այլև ամեն կերպ ընդլայնել այն, Եփեսոսի նոր հնարավորություններ, որոնք կերպարավորեն ներքին հակառի ամբաստանումը և կազանտվեն ժողովրդական և հասարակական կազմակերպությունների, բոլոր առաջադիմ ուժերի արդյունավետ մասնակցությունը նրան<sup>22</sup>:

1969 թ. մայիսի 1-ին սիրիական ժողովրդի քննարկմանը զբղվեց ժամանակավոր սահմանադրություն նախադիժը: Այդ սահմանադրությամբ Միջին հուլիսիում էր Եգիպտոսական ժողովրդական սոցիալիստական հանրապետություն: Բարեբաղույն օրենսդիր իշխանությունը զբղում էր ժողովրդական խորհրդի վրա, որն ընտրվում էր ուղղակի քվեարկությամբ՝ 4 տարի ժամանակով: Տեղերում իշխանությունը հանձնվում էր խորհուրդներին, որոնց միջոցով բազաբացիները կարող են իրականացնել իրենց քաղաքական իրավունքները: Սահմանադրությունը սիրիական պետության տեսեսությունը սահմանեց որպես սոցիալիստական պետության տեսեսություն, որը խաբսխված է պլանային հիմունքների վրա և բացառում է շահագործման ձևերը: Մատնանշվում էր սեփականության երեք ձևերի անկալություն Միջին Արևելքում՝ ժողովրդական, կոլեկտիվ և մասնավոր: Մասնավոր սեփականության լավերը սահմանվում էին օրենքով, նրա շահերը լավեք է հակասել հա-

<sup>22</sup> «البعث», 27.IV.1969.

սարակութիւնը շահերին և պետք է համապատասխանեն սոցիալական պահանջներին ու ծառային ժողովրդի բարեկեցութեան աճին<sup>204</sup>։

Համահայն սահմանադրութեան դրույթներով, 1969 թ. մայիսի 13-ին ընդունվեց որինք՝ կառավարման տեղական մարմինների վերաբերյալ, որը զգալի շահով նպաստում է ժողովրդի համախմբմանը զոյութուն ունեցող ռեժիմի շուրջը։

1969 թ. մայիսի 29-ին կազմվեց Սիրիայի նոր կառավարութեանը, որի մեջ մտան Բասսի անդամները, մի քանի քաղաքական անկախ գործիչներ և Սիրիայի կոմկուսի մեկ ներկայացուցիչ։ Պրեմիեր մինիստրի պաշտոնը ստանձնեց նուրեզդին Աթասին, որը մեծ դեր խաղաց Բասսի ներսում եղած սարակախութիւնները հարթելու գործում։ Պաշտպանութեան մինիստր դարձավ գեներալ լիտենանտ Հաֆեզ Ասադը, իսկ արտաքին գործերի մինիստր՝ Մուհամեդ Աշաֆին<sup>205</sup>։

Կառավարութեան առջև ծառայած կարևոր խնդիրներից մեկը ժողովրդական խորհրդի ընտրութիւնների անցկացումն էր, ինչպես նաև անտեսական և սոցիալական վերափոխումների վերաբերյալ կուսակցութեան կոնֆերանսներում ընդունված որոշումների կենսագործումը։ Կառավարութեանը խոստանում էր համագործակցել արաբական առաջադիմական պետութիւնների հետ, համախմբել արաբական բուրժուազիան։ Բացի այդ, կառավարութեանը մտադիր էր ընդլայնել Սիրիայի հարաբերութիւնները սոցիալիստական երկրների և մյուս բարեկամ պետութիւնների հետ<sup>206</sup>։

Սիրիայի կառավարութեանը դիմեց կոնկրետ քայլերի՝ արաբական երկրների հետ հարաբերութիւններն ամրապնդելու համար, որպեսզի համատեղ միջոցառումներ մշակվեն խորայնական ազդեցիկ հետախնդիրը վերացնելու համար։ 1969 թ. հունիսի 8-ին Գամաֆուսում կայացավ Սիրիայի, ԱՄՆ-ի, Իրաքի և Հորդանանի բանակի շտաբների պետերի հանգիպումը, որտեղ քննարկվեցին արևելյան և արևմտյան սազմաւակատների, և ընդհանրապես արաբական պետութիւնների միջև ավելի սերտ սազմական համագործակցութեան հաստատելու հարցերը<sup>207</sup>։ Հետագա-

204 «الشرق», 2.V.1969.

205 նույն տեղում, 29.V.1969.

206 նույն տեղում։

207 «Правда», 10.VII.1969.

յում համապատասխան բանակցություններ վարվեցին ԱՄՆ-ի ղեկավարութան հետ, որի ընթացքում քննարկվեցին նաև անտեսութիան, տեխնիկայի, գիտության և մշակույթի բնագավառում սիրիա-եգիպտական համագործակցությունն ընդլայնելու հարցերը:

Միրիայի կառավարությունը շարունակում էր ամրապնդել հարաբերությունները սոցիալիստական երկրների հետ: Եւ ղեկավարահաստիակ հարաբերություններ հաստատեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետության հետ: 1969 թ. հունիսի 25-ին նրանց միջև կնքվեց տնտեսական և տեխնիկական համագործակցության համաձայնագիր<sup>208</sup>, 1969 թ. հուլիսի 3-ին ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և սովետական կառավարության հրավերով քարեկամական այցով Մոսկվա ժամանեց ԱՄՆ-ի կուսակցական կառավարական պատվիրակությունը, պրեմիեր մինիստր Նուրիդզին Աթաթի գլխավորությամբ<sup>209</sup>:

Արաբական երկրների դեմ Իսրայելի ագրեսիվ գործողությունների ակտիվացման կապակցությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիան 1970 թ. հուլիսի 15-ին ընդունեց մի հայտարարություն, որանդ իր մտահոգությունը հայտնելով Մերձավոր Արևելքում ստեղծված սպառնալի դրության կապակցությամբ, բոլոր խաղաղասեր պետություններին կոչ էր անում զնուական միջոցներ ձեռք առնել մերձավորարևելյան նգնաժամի արագ վերացման և արգաբացի ու խաղաղ կարգավորման համար<sup>210</sup>:

Այսպիսով, Միրիայի պատմական զարգացումը վերջին տարիներին ցույց է տալիս, որ Իսրայելի 1967 թ. հունիսյան ագրեսիան չհասավ իր նպատակին: Հենվելով քարեկամ արաբական ու սոցիալիստական երկրների և ժողովրդական մասսաների վրա, Միրիայի Արաբական Հանրապետությունը շարունակեց ընթանալ առաջադիմական սոցիալ-տնտեսական վերափոխումների խորացման և ընդլայնման հանապարհով:

208 Նույն տեղում, 22.VII.1969.

209 Նույն տեղում, 3.VII.1969.

210 Նույն տեղում, 18.VII.1970.

ПОЛИТИЧЕСКИЕ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ  
ПРЕОБРАЗОВАНИЯ В СИРИИ (1962—1970 гг.)

Резюме

В статье рассматривается политическое и экономическое положение в Сирии, создавшееся после выхода страны из состава ОАР. Автор освещает государственный переворот 8 марта 1963 г. и приход партии Баас к власти, победу левых сил внутри этой партии, установление прогрессивного режима и осуществление прогрессивных социально-экономических преобразований в Сирии.

Значительное место уделено освещению деятельности Коммунистической партии Сирии и советско-сирийского дружественного сотрудничества.

الزواير—بوداغوا

التحويلات السياسية والاجتماعية والاقتصادية في سوريا

١٩٧٠—١٩٦٢

(ملخص)

يعالج المقال الوضع السياسي والاقتصادي لسوريا بعد انفصالها عن الجمهورية العربية المتحدة. ويؤرخ المقال لثورة الثامن من آذار، ومسائل انتقال السلطة ليد حزب البعث العربي الاشتراكي، ولانصار الجناح اليساري داخل هذا الحزب، ولتوطيد دور القوى التقدمية، ولتطبيق التحويلات الاجتماعية والاقتصادية التقدمية في سوريا.

يخصص المقال مكانا بارزا لنشاط الحزب الشيوعي السوري ويلقى الاضواء على اهمية التعاون والصدافة بين سوريا والائتلاف السوفياتي.

ՀՈՂԱՆՆԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԻՎ ՓՈՒԼ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ  
(1952—1957 թթ.)

Քաղաքական անկախություն նվաճած Եգիպտոսի ժողովուրդների առջև կանգնում են մի շարք կարևորագույն խնդիրներ, որոնց լուծումով էլ պայմանավորվում է երանց անկախության ամրապնդումը: Այդ խնդիրներին մեջ կարևորագույններից մեկը ազգային անկախ անտեսության ստեղծումն է, որն իր ողջ բարդությամբ կանգնեց նաև եգիպտական ժողովրդի առջև՝ 1952 թ. հունիսյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո: Այդ հեղափոխությունը կատարվեց եգիպտական բանակի ժիչին սպայական կազմի գլխավորությամբ, որը հանդիսանում էր եգիպտական ազգային բուրժուազիայի ձգտումների արտահայտիչը: Եգիպտոսի նոր ղեկավարները, ձգտելով ամրապնդել իրենց դիրքերը երկրի ներսում, շահագրգռված էին վերափոխություններ կատարել երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգի մեջ:

Հեղափոխությանը հաջորդած առաջին տարիներին եգիպտական նոր ղեկավարության ձեռնարկած բուրժու միջոցառումներն ուղղված էին երկրի տնտեսական և քաղաքական անկախության ու պաշտպանունակության ամրապնդմանը, ինչպես նաև սոցիալական ծայրահեղ անհավասարության մեղմացմանը: Դրա համար անհրաժեշտ էր երկրի ներսում թուլացնել զաղութատիրության և ներքին հետադիմության դիրքերը, միջոցներ գտնել ֆինանսավորելու տնտեսության արագ զարգացումը և, մասնավորապես, սոցիալական կանգնեցնել ազգային արդյունաբերությունը:

Ահա այս նպատակին ուղղված տնտեսական-քաղաքական խոշոր միջոցառում էր 1952 թ. սեպտեմբերի 9-ի հոգային բարեփոխումների օրենքը: Ըստ այս օրենքի, հինգ տարվա ընթացքում



ձևանարկվելու էին խոշոր միջոցառումներ, որոնց իրագործումը կհանգեցնեն եզրիպատական գյուղում նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների հաստատմանը: Մոզիտական մի շարք ուսումնասիրողներ (Լ. Ն. Վատոլինա, Մ. Յ. Գաստաուլյին, Ի. Պ. Իվանովա, Վ. Կ. Արխիկին և ուրիշներ) անդրադարձել են այդ օրենքին, վերլուծելով դրա առանձին գրույթները<sup>1</sup>: Դրանով իսկ նրանք որոշակի ավանդ են ներդրել եզրիպատական հողային քարեփոխումների հարցի ուսումնասիրման քննարկմանը:

Յուրեքերկրացի մի շարք ուսումնասիրողներ (Դ. Ուորիներ, Ք. Ուիլոկ, Փ. Ս. Լակուտյուրներ, Պ. Վասիկիտախ և ուրիշներ) նույնպես անդրադառնում են հողային քարեփոխումների առաջին օրենքին և նրա գործադրման ընթացքի որոշ կողմերին<sup>2</sup>: Դրանց անդրադարձել են նաև եզրիպատական որոշ հեղինակներ, որոնք անմիջական մասնակցություն են ունեցել այդ օրենքի մշակման, ընդունման և իրագործման ասպարեզում (Ս. Մարեյ, Բ. ալ-Քարափ)<sup>3</sup>: Այս հեղինակներին արժանին հասուցելով հանգրծ, պետք է նշել, որ նրանք նույնպես հիմնականում հետապնդել են այն նպատակներ, իսկ ոմանք երբեմն արտահայտել են ոչ ճիշտ մտքեր՝ հողային քարեփոխումների առաջին փուլի ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

Նախքան հեղափոխությունը նդիպառում 1 մլն կմ<sup>2</sup> ընդհանուր տարածությունից 2,5 մլն հա-ն<sup>4</sup>, (6 մլն ֆեդան)<sup>5</sup> կազմում էին մշակելի հողատարածությունները:

<sup>1</sup> Л. М. Ватолина, Экономика Объединенной Арабской Республики, М., 1962; М. Ф. Гатуллин, Экономика ОАР на новом пути, М., 1966; И. П. Иванова, Сельское хозяйство Объединенной Арабской Республики, 1962—1965 гг., М., 1970; В. К. Архикин, Проблемы кооперирования сельскохозяйственного производства в Египте, М., 1972.

<sup>2</sup> Д. Уорниер, Земельные реформы в странах Ближнего Востока (Египет, Сирия, Ирак), М., 1958; J. et S. Lacouture, L'Egypte en mouvement, Paris, 1962; K. Wheelock, Nasser's New Egypt, New York, 1960; P. Vatikotis, The Egyptian Army in politics, Bloomington, 1961.

<sup>3</sup> سيد مرعي، الإصلاح الزراعي في مصر، القاهرة، 1957  
دكتور راشد البرادي، الفلسفة الاقتصادية للثورة القاهرة، 1955

<sup>4</sup> الكتاب السنوي للاحصاءات العامة للجمهورية العربية المتحدة، 1952—1966، القاهرة، 1967، ص 50

(Այսուհի հարչի ընդհանուր պետական և հասարակական օգտագործման հողատարածությունները):

<sup>5</sup> 1 ֆեդանը=0,42 հա:

1951 թ. նրկրի 21 մլն բնակչությանից 15 մլն-ը՝ գյուղացիներ էին, Հողատիրությունը Ծգիդատուում արտահայտվում է նրեք ձևով՝ միքի (պետական հողատարածություններ), վակֆ (կրոնաբարեգործական շտարվող հողատարածություններ)՝ և մուլք (մասնավոր հողատարածություններ), Ծթն հաշվի առնենք, որ յուրաքանչյուր գյուղացիական ընտանիք կազմված էր միքին հաշվով 6 հողաց և, հետևաբար, ընտանիքների թիվը հասնում էր 2,5 մլն-ի, ապա պարզ կգանես, որ յուրաքանչյուր գյուղական բնակչին միքին հաշվով պետք է ընկներ 0,4 ֆեզան հողատարածություն, իսկ մեկ ընտանիքին՝ 2,4 ֆեզան: Ծգիդացի ուսումնասիրող Ա. Ալրուն մտաադրապես հենց այս թիվն է համարում այն նվազագույնը, որն անհրաժեշտ էր գյուղական մի ընտանիք կերակրելու համար (ի դեպ, իր իսկ վկայությամբ, մանր հողատերերի միայն 10%-ն էր տիրում այդ նվազագույնին)՝ Իսկ ինչպիսի՞ն էր հողատիրության վիճակը նախահղադրական Ծգիդատուում: Այդ մասին պատկերացում է առիա հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ I\*

Հողատիրության շաբը (ֆեզաններով)	Հողատերերի թիվը (հազ.)	Հողատերերի թիվը %-ով	Հողատարածությունները (հազ. ֆեզան)	Հողատարածությունները %-ով
5-ից պակաս	2642	94,3	2122	35,4
5-10	79	2,8	526	8,8
10-20	47	1,7	638	10,7
20-50	22	0,8	654	10,9
50-100	6	0,2	430	7,2
100-200	3	0,1	437	7,3
200-ից ավելի	2	0,1	1177	19,7
<b>Հնդամենք</b>	<b>2801</b>	<b>100</b>	<b>5984</b>	<b>100</b>

\* «Statistical Pocket Year-Book, 1953», Cairo, 1954, p. 1.

7 Որք խոչըր հողատերեր, սխած վաղ ժամանակներք, որդեղք իրենց հողատարածությունները զրծ պահին բնազդաբաններք և կամ ժառուսուժիք, զրոնք նվիրում լին կրոնաբարեգործական հաստատություններին և զրոնով ապուսում իրենց ծյապան փայարամիք նվաճաներք: Հողատերոչ անժառանգ լինելու զնչքում կրա մաժիք հետ զրոնք զանում լին վկրիշյալ հաստատություններ անվանելուք:

\* A. Aky, *Fezalan Emleri*, M., 1954, cyp. 32.

\* «الكتاب السنوي... 1952-1977» ص 50

Աղյուսակից երևում է, որ Հոգատերերի 94,3%-ն ունեն 3-ից 5 ֆեզան Հողատարածություն: Երանց պատկանող Հողատարածությունները կազմում էին ընդհանուր Հողատարածությունների միայն 35,4%-ը: Դրանց 72%-ը, կամ 2018,1 Հազ. Հողատերերի տարեկան միջին եկամուտը չէր անցնում 40 դրենից<sup>10</sup>: Մրանք սակավահող գյուղացիներն էին:

Մասնավոր Հողատերերի մյուս խումբը, որը տիրում էր 3-ից մինչև 10 ֆեզանի, կազմում էին միջակ գյուղացիները:

Հաջորդ խումբը ունենր գյուղացիներն էին, որոնք ունեին 10-ից մինչև 50 ֆեզան Հողատարածություններ: Կազմելով Հողատերերի ընդհանուր թվի միայն 2,5%-ը, երանք տիրում էին Հողատարածությունների 21,6%-ին: Այս խումբն արգեն օգտագործում էր վարձու աշխատուժ:

Խոշոր Հողատերերի խումբը կազմում էին 50 ֆեզանից ավելի Հող սեփեցողները: Կազմելով Հողատերերի ընդհանուր թվի ընդամենը 0,4%-ը, երանք տիրում էին Հողատարածությունների 34,2%-ին: Ընդ որում, երանցից 188 մարդ ուներ 1000 ֆեզանից ավելի հող<sup>11</sup>:

Ի մի բերելով N 1 աղյուսակի այն թվերը, որոնք վերաբերում են ունենոր և խոշոր Հողատերերին, տեսնում ենք, որ երանք կազմում էին ընդամենը 2,9%-ը, սակայն տիրում էին Հողատարածությունների 55,8%-ին: Ամենախոշոր Հողատերը Ծախաուսի արքայական ընտանիքն էր, որին պատկանում էր 196 Հազ. ֆեզան հող<sup>12</sup>: 3800 օտարերկրացիներ 1951 թ. հանդիսանում էին 233013 ֆեզան Հողատարածությունների սեփականատերեր, կամ երանցից յուրաքանչյուրին ընկնում էր 61,32 ֆեզան հող<sup>13</sup>:

Վակֆային Հողատարածություններն այդ նույն ժամանակ կազմում էին 600 Հազ. ֆեզան<sup>14</sup>:

Այս պայմաններում սակավահող գյուղացին ո՛չ Վնարավորություն, և ո՛չ էլ Հետաակար ուներ նոր Հողեր գնելու միջոցով բարելավելու իր վիճակը, քանի որ մեկ ֆեզան Հողատարածություն

<sup>10</sup> A. Añ py, Феллахе Египта, стр. 25. 1 դրենը 1952 թ. = 2,52 սուրու

<sup>11</sup> տճրե, Կաշիթ, 13.IX.1952.

<sup>12</sup> „Aspect Général de la Reform agraire en Egypte“, Cairo, 1954 p. 5.

<sup>13</sup> A. Añ py, Феллахе Египта, стр. 35.

<sup>14</sup> G. Harris, Egypt, New Haven, 1957, p. 219.

արժէր մտաւարացեա 800 գինեյ<sup>15</sup>, Այդ պատճառով էլ նա ստիպ-  
ված էր հարուստ հողատերերից վարձակալել փոքրիկ հողակտոր-  
ներ: Այդպիսի սակազանող վարձակալողներին թիվը նախքան հե-  
ղափոխութիւնը հասնում էր 107 հազարի<sup>16</sup>,

Եգիպտոսի գյուղացիութեան հիմնական զանգվածը հողագործ  
էր և տարեցատարի ներառում էր գյուղացիների նորանոր խմբերի:  
Հողագործի գյուղացիների ստվար բանակի մի խոշոր շեղատն էին  
կազմում վարձակալողները՝ թիվով 682 հազ. տնտեսութիւն<sup>17</sup>:  
Սրանք իրենց ապրուստը հայթայթում էին հողակտորներ վարձա-  
կալելով: Վարձակալման ժամկետը 1—3 տարի էր: Վարձակալ-  
ման պայմանագիր չէր կնքվում, այլ հողատերն ու վարձակալը  
համաձայնվում էին բանաձոր կերպով: Վարձակալույնը կատար-  
վում էր զերբէնիս համար շափազանց ծանր պայմաններով: Մեկ  
ֆեզան հողատարածութեան տարեկան միջին եկամուտը կազմում  
էր 60 գինեյ, Գրանից 40 գինեյը արվում էր վարձավճար, իսկ  
կիսի դա կատարվում էր բնամթերքով, ապա երբեմն հասնում էր  
բերքի 80%-ին<sup>18</sup>, Սակազանող և հողագործի գյուղացիների այս  
մասը շահագործվում էր կալվածատերերի կողմից նաև գյուղա-  
տնտեսական սարքեր ու բանող անասուններ վարձակալելիս և  
սերմացու ու պարտք վերցնելիս: Վաշխատուական նպասակներով  
հող էին վարձակալում նաև ունեւոր և խոշոր հողատերերը, որոնք  
այդ հողերը մշակում էին օգտագործելով վարձու աշխատում:

Եգիպտական հողագործի գյուղացիների մի խոշոր մասն էլ  
ապրուստը հոգում էր իր աշխատուծը վանտելով: Սրանք գյուղա-  
տնտեսական բանվորներն էին: Ըստ Ե. Իսազիի տվյալների,  
1939 թ. գրանց թիվը հասնում էր 1.618 հազար մարդու<sup>19</sup> և պետք  
է նեթագրել, որ հեղափոխութեան նախօրյակին այն հասած կլի-  
ներ մտաւարացեա 2 միլիոնը նրանք կատարում էին գյուղատեր-  
տեսական տարեշրջանային զանազան աշխատանքներ և պատու-

<sup>15</sup> «Аграрные реформы в странах Востока», М., 1961, стр. 15.

<sup>16</sup> Н. П. Иванова, Сельское хозяйство Обедневенной Арабской Республики, 1952—1965 гг., стр. 30.

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> «Аграрный вопрос в странах Азии и Северной Африки», М., 1968, стр. 186.

<sup>19</sup> Ш. Исаян, Египет в середине XX в. (Экономический обзор), М., 1958, стр. 204.

Հական այլ գործեր, նրանց եկամուտը երաշխավորված չէր և շահերին ստիպում էր մեկնել քաղաք՝ մշտական աշխատանքի հույսով: Սակայն այնուհետև նրանք փաստորեն լրացնում էին գործազուրկների առանց այն էլ հոծ բանակը: Գյուղատնտեսական բանվորները եզիպտական հասարակության ամենալքավոր խավերից մեկն էին:

Դեռևս զարսակզրին, երբ համաշխարհային շուկայում քամբակի մեծ պահանջարկ կար, ինչպես բրիտանական գաղութատերերը, այնպես էլ եզիպտական նորաստեղծ ազգային բուրժուազիան շահագրգռված էին զրա արտադրության ընդլայնմամբ: Այդ նպատակով եզիպտական ազգային բուրժուազիան նախանկնեց գյուղատնտեսական սինդիկատների ստեղծումը: Այդ սինդիկատները հիմնվում էին փայտափրակյան սկզբունքների վրա: Դրանց պարտականությունն էր գյուղատնտեսական աշխատանքների համար մեռք բերել աշխատամիջոցներ, ինչպես նաև իրացնել պատրաստի արտադրանքը: Դրա համար էլ անհրաժեշտություն առաջացավ ստեղծել պետական հատուկ ֆոնդ, որը պետք է վարկավորման մատչելի ազբյուր հանդիսանար այդ սինդիկատների անդամների համար: 1923 թ. գյուղատնտեսական սինդիկատները սկսեցին կոչվել կոոպերատիվ ընկերություններ: 1931 թ. վարկավորման մակարդակը բարձրացնելու համար ստեղծվեց եզիպտոսի գյուղատնտեսական վարկավորման գրամատունը: Ասկայն ինչպես պետական հատուկ ֆոնդից, այնպես էլ այս գրամատունից վարկավորվում էին ոչ միայն մանր գյուղացիները, այլև խոշոր հողատերերը: 1952 թ. կային 1727 կոոպերատիվ ընկերություններ՝ մոտ 500 հազ. անդամ-փայտերերով<sup>22</sup>, Դրանց սակավահող անդամների վիճակը քիչ էր տարբերվում մնացած սակավահող գյուղացիների գրությունից:

XX դ. սկզբին կապիտալիստական Հարաբերությունները մուտք գործեցին եզիպտական գյուղ և ավելի ծանրացրին գյուղացիների սոցիալական դրությունը: Այսպես, 1900 թ. 5114 հազ. ֆեզան հողատարածությունները պատկանում էին 914,4 հազ. սեփականատերերի<sup>23</sup>: Եզիպտոսի բնակչության թիվը այդ ժամանակ

<sup>22</sup> В. К. Азискик, Проблемы кооперизации..., стр. 63.

<sup>23</sup> التطور الاقتصادي في البلاد العربية، ١٩٥٠—١٩٦٥، بيروت ١٩٦٧، ص ٢١٧—٢١٨.

կազմում էր 10 մլն մարդ, որոնցից, պետք է ենթադրել, որ գյուղի բնակիչներ էին մասավորապես 6 մլն-ը: Ինչպես արգենտացիք, Հնդկաստանի բնակչության հարցում, երբ գյուղական բնակչությունը կազմում էր 15 մլն մարդ, 2801 հազ. սեփականատերերի պատկանում էր 6 մլն ֆեզան հողատարածություն: Այս ավելաները համեմատելով տեսնում ենք, որ ավելի քան 50 տարիների ընթացքում ճյախի հողատարածություններն ավելացել էին ընդամենը 16,8%-ով, այնինչ գյուղական բնակչությունն ունի էր 87%-ով, իսկ հողատերերի թիվը ավելի քան եռապատկվել էր: Ընդ որում, եթե խոշոր և ունեւոր հողատերերի թիվը քանակապես և տիրույթների չափերով համարյա փոփոխություն չէր կրել, ապա մանր հողատերերի թիվը քառապատկվել էր<sup>22</sup>, հողատերերի թվի անը հիմնականում տեղի էր ունեցել հողակտորների հետագա ժանրային հաշվին: Դա պարզորոշ երևում է հետևյալից, եթե 1900 թ. հողատիրության ձիշին չափը կազմում էր 5,59 ֆեզան, ապա 1952 թ.<sup>23</sup> 2,13 ֆեզան<sup>23</sup>, Չեյին հողակտորներ ունեցող գյուղացիները առիպված էին լինում պարտք վերցնել ունեւորներից և երբ ժամանակին չէին վերագրվում, կամ չէին հասցնում ժամանակին ժուծել պետական հարկերը, ապա նրանց հողակտորները և բանող անասունները քանազրավում էին: Զրկվելով սեփականությունից և աշխատամիջոցներից՝ այդ գյուղացիները կարող էին վաճառել միայն իրենց աշխատուժը: Բնակչության բուռն աճի և նոր հողերի յուրացման շարժանքի գանդաղ ընթացքի պայմաններում դա նշանակում էր աշխատուժի շարունակական արժեքազրկում, էժան աշխատուժի առկայությունը, ինչպես ուրիշ պարաբային երկրներում, այնպես էլ Եգիպտոսում, գյուղատնտեսական մեքենաների ներդրումը դարձնում էր անշահավետ և պատճառ դառնում հետամնաց տնտեսական հարաբերությունների գոյատևմանը:

Սակավահող և հողազուրկ գյուղացիների թվի ավելացմանը զուգընթաց մեծանում էր շքավորների թիվը և շքավորության աստիճանը: Ա. Այբուն իր գրքում մեղ է բերում ֆրանսիացի լրագրող Քրիստիան օր Կասերի հետևյալ խոսքերը. «Ես տեսել եմ իսպանական լա-Մանչի ամենաաղքատ գյուղերը, կանաչ հրվանդանի

<sup>22</sup> Այս տեղում, էջ 218:

<sup>23</sup> Այս տեղում:

կզգիներէ հյուզակները, Անգուլայի խորքային շրջաններէց Լուսնայի բարձրաժանգակի տեղաբնակներէ եզեզնյա քողտիկները, բայց ոչ մի անզ չեմ հանդիպել այնպիսի աղքատութիան, ինչպիսին Եգիպտոսում է<sup>21</sup>։

Բարձուական որոշ պատմարաններ, անգրագանալով Եգիպտական գյուղացու թշվառ վիճակին և աղքատութիանը, շատ դիպրում շրջանցում են հորցի բուն էութունը և կատարում մակերեսային եզրակացութիւններ։ Այսպես, Ֆրանսիացի հետազոտողներ Փ. և Ս. Լակուտուրները, հատկապես նկատի ունենալով գյուղացիութիւնը, գրում են. «Ինչի՞ց է, որ ժողովուրդը (Եգիպտական—Ս. Ա.) իրենից ներկայացնում է անտանելի կեղտոտութիւն, անտարբերութիւն, դանդաղաշարժ և անգործունյա մարդկութիւն մի հուսահատեցնող անտարան, Հիմնական պատճառը պետք է գիտնել մի մասի ազիտութիւն և նյութական անհավատալի թշվառութիւն մեզ, որոնք ժանրանում են այդ ժողովուրդի վրաս<sup>22</sup>։ Անկախութիւնով այս տրամարանութիւնը, երանք ի վերջո հանգում են այն եզրակացութիւն, որ եգիպտական ժողովուրդը լիթարգիտական քնի մեջ է<sup>23</sup>։ Իր հերթին Ա. Այրուն Ֆայլաւհի աղքատութիւն պատճառը տեսնում է երա անշրջահայացութիւն, անտնտեսութիւն, թուլութիւն, միայնակութիւն և ազիտութիւն մեզ<sup>24</sup>։ Բայց վերահիշյալ հեղինակները չեն քացատարում, թն որտեղի՞ց են գալիս այդ ազիտութիւնը, թշվառութիւնը, թուլութիւնը, նախահնդագոսիական Եգիպտոսի գյուղացիութիւն ժանր կացութիւնն առաջին հերթին այդ երկրում տիրող հասարակական-տնտեսական հետամնաց հարաբերութիւնների արդունք էր։ Զպետք է նաև մտանալ, որ Եգիպտոսը հարյուրամյակներ շարունակ եղել է թուրքական և ազա բրիտանական տիրապետութիւն տակ, Ժտար տիրողները, համազորժակցելով տեղական ավատատիրական ավագանու հետ, դաժանորեն շահագործել են եգիպտական աշխատավորութիւնը և երան պահել անավոր աղքատութիւն ու ազիտութիւն մեզ։

Եգիպտական հողի աշխատավորներին անմիջիթար վիճակի հակադրութիւնն էր կալվածատերերի ցոփ ու շտալլ կյանքը։ Վեր-

<sup>21</sup> А. А ё р у, Феллахи Египта, стр. 124.

<sup>22</sup> J. et S. Lacouture. L'Egypte en mouvement, p. 362.

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 376.

<sup>24</sup> А. А ё р у, Феллахи Египта, стр. 75.

չինեներս համարյա լրիվ կարգիչ էին գյուղից և ապրում էին հիմնականում մայրաքաղաքում ու Ալեքսանդրիայում: Մտացած խոշոր եկամտանեերը նրանք ծախսում էին եվրոպական զանազան քաղաքների զվարճարաններում կամ ներդնում անասնաբույսի ու արտադրողական, բայց արագորեն եկամուտ բերող շուկերում: Խոշոր հողատերերն իրենց մեռնում պահելով անասնաբույսի հիմնական լծակները, մեծ ազդեցություն ունեին երկրի ներքին և արտաքին քաղաքականության վրա: Երկրի կառավարությունը հիմնականում կազմված էր լինում նրանց ներկայացուցիչներից, իսկ խորհրդարանում անօրինակ էին նրանց կուսակցությունները: Ամեն գնով նրանք արգելադրում էին նույնիսկ այն կիսաապառաժապրների ընդունմանը, որոնք ուզում էին երկրի անասնաբույսի մեղ որոշ շահով առաջադիմական քայլեր կատարելու: Մակայն հողային հարաբերությունների հարցը եզրիտական գյուղում 1930-ական թվականներից սկսած ավելի ու ավելի էր սրվում և ի վերջո զարձակ քաղաքական կուսակցությունների մշտական թնկարկման առարկա: Բայց այդ կուսակցությունները, որոնք արտահայտում էին կամ խոշոր հողատերերի, կամ խոշոր բուրժուազիայի և կամ էլ երկուսի շահերը, զեմ էին հողատիրության հին կարգի մեջ որևէ փոփոխություն մտցնելու: Ուստի այդ հարցը մինչև 1952 թ. հուլիսի 23-ի հեղափոխությունը անդից չարժեկց: Հեղափոխություն, որ ուզում էր խոշոր հողատերերի իշխանության և բրիտանական ազդեցության զեմ, կատարեց սկզբում սպաներ<sup>28</sup> գազանի բանակային կազմակերպությունը:

Հեղափոխությունից զեռ երկու ամիս շանցած Եգիպտոսի նոր ղեկավարները որևէ ընդունեցին հողային բարեփոխումների վերաբերյալ: Երենքի նախադիժը կազմել էին եգիպտական անասնագետներ Ահմեդ Ֆուադը և Ռաշիդ ալ-Բարադին: Այն խմբազրել էր Հեղափոխության Ղեկավար կորհրդի<sup>29</sup> (ՀՂԿ) անգամ, փոփոխապես Փամալ Մալեմը: Ակզբնական նախագծում հողային սեփականությունը սահմանափակվում էր 50 ֆեզակով<sup>30</sup>:

<sup>28</sup> Բանակային հեղափոխական կազմակերպություն՝ հիմնադրված Գ. Ա. Նասերի կողմից՝ 1942 թ. 1952 թ. հուլիսի 23-ին կատարելով ազգական հեղաշրջում, այս կազմակերպությունն անցով իշխանության գլուխ Եգիպտոսում:

<sup>29</sup> սկզբում սպաներ կազմակերպության զործադր կաժոնն ուղղու սկեց կողմի 1952 թ. հուլիսի 22-ից:

<sup>30</sup> J. et S. Lacouture, L'Egypte en mouvement, p. 354.



Նախագիծը հանդիպեց խոշոր հողատերերի համառ զինազը-  
րությանը: Նրանք ձեռնարկեցին հնարավոր բոլոր միջոցները՝  
անհնարին դարձնելու նրա ընդունումը: Նրանք աշխատում էին  
երկպառակություն սերմանել «եկզատ սպաներ» կազմակերպու-  
թյան անդամների միջև, փորձում կաշառել պատասխանատու անե-  
նավորություններին և ՀՂԽ-ի անդամներին: Ի վերջո տեսնելով, որ  
անհնար է վիժեցնել օրենքի ընդունումը, նրանք սկսեցին շանքեր  
թափել, օրպեսզի հողատիրության սահմանափակումը պակաս չլինի  
500 ֆեդանից. «Մուսուլման հզրայրներ»-ի<sup>31</sup> առաջնորդ Հասան  
ալ-Հոսեյնին ղեկավարեն էր համաձայնվում նույնիսկ դրան<sup>32</sup>, Հե-  
զափոխությունից հետո վարչապետ դարձած Ալի Մահերը, որն  
արտահայտում էր խոշոր հողատերերի շահերը, նույնպես գտնում  
էր, որ հողատիրության սահմանափակումը լպիտք է 500 ֆեդա-  
նից ցածր լինի<sup>33</sup>, Ինչ վերաբերում է Վաֆդին<sup>34</sup>, ապա այն մինչև  
վերջ էլ զեմ մնաց հողատիրության սահմանափակման սկզբուն-  
քին: Ինչևէ, խոշոր հողատերերը հասան այն քանին, որ հողատի-  
րության առավելագույն լափը սահմանվեց փաստորեն 300 ֆե-  
դան: Սակայն ինչպես վարչապետ Ալի Մահերը, այնպես էլ հնա-  
մակալական խորհրդի<sup>35</sup> նախագահ Բահա էդ-Պին Բարաքաթը և  
այդ խորհրդի անդամ զեդապիա Ռաշադ Մահաննան զեմ կանդ-  
եցին նույնիսկ այդպիսի սահմանափակմանը: ՀՂԽ-ի անդամնե-  
րի գերակշիռ մեծամասնությունը լավ էր գիտակցում, թե ինչի  
կարող է հանգեցնել խոշոր հողատերերի ճնշմանը ենթարկվելը ու  
զիջելը և դրա համար էլ առանց տատակվելու Ալի Մահերին ա-  
զատեց վարչապետի պաշտոնից և հենց հաշորդ օրը՝ սեպտեմբերի  
9-ին, հրապարակեց հողային բարեփոխումների № 178 օրենքը:

<sup>31</sup> Մուսուլմանական Հեազմական կրեա-բաղաբական կազմակերպու-  
թյան՝ Հեմազբվատ 1923 թ.

<sup>32</sup> M. Hopkins, Egypt the crucible, Boston, 1970, p. 92.

<sup>33</sup> K. Wheelok, Nasser's New Egypt, p. 77.

<sup>34</sup> Եգիպտական բուքուա-կազմատիրական կուսակցություն՝ Հեմազբվատ  
1918 թ.:

<sup>35</sup> 1922 թ. հուլիսի 26-ին ՀՂԽ-ի սրբմամբ Եգիպտոսի և Սուրանի թագավոր  
Յուրուկ I-ը գահընկեց արվեց: Նրա սրգին՝ անշափառու Ահմադ Յուսուբը, Հալկ-  
վեց Եգիպտոսի և Սուրանի թագավոր և կազմվեց հեաժակալական խորհուրդ-  
կորդի նախագահ էր թաղաքական գործիչ Բահա էդ-Պին Բարաքաթը, սեզամ-  
ենքն էին իշխում Մուհամմադ Աբդել Մահեյմը և «եկզատ սպաներ» կազմակերպու-  
թյան անգամ Ռաշադ Մահաննան:

Օրենքը բաղկացած էր 28 հոդված ընդգրկող 6 դրուսեններից: Գրանք էին. հողատիրության սահմանափակումը, գյուղատնտեսական կոտակերատիվների ստեղծումը, գյուղատնտեսական հողակերատների նվազագույնի սահմանումը, վարձակալուղի և հողատիրոջ հարաբերությունների նշգրտումը, գյուղատնտեսական բանվորների իրավունքների սահմանումը և հավելյալ հարկերի հաստատումը<sup>\*</sup>:

Օրենքի առաջին գլուխը վերաբերում էր հողատիրության սահմանափակմանը: 1-ին հոդվածով մեկ անձի համար առավելագույն հողատիրությունը սահմանվում էր 200 ֆեդան:

2-րդ հոդվածը վերաբերում էր քաջատուփյուններիին: Այն ընկերություններին թույլ էր տալիս ունենալ 200 ֆեդանից ավելի, բայց արգեն անձյակ հողատարածություններ, եթե դրանք մշակելի էին դարձվում վաճառելու համար: Այդ իրավունքից սզուվում էին նաև անհատները: Այս հողատարածությունները 25 տարի ժամկետով շէին ընկնում 1-ին հոդվածի պահանջների գործադրման տակ, որի ընթացքում հողատիրը կարող էր դրանք վաճառել:

3-րդ հոդվածում ասվում էր, որ կառավարությունը հաշորդ հինգ տարիների ընթացքում տեղ կհանգելի հավալյալ հողատարածություններին՝ յուրաքանչյուր տարի բնագրավելով դրանց մեկ հինգերորդը: Բնագրավումները սկսվելու էին առավել խոշոր հողատիրերից, սակայն տարեկան թերքը հավաքելուց հետո միայն:

4-րդ հոդվածով հողատիրոջը թույլատրվում էր հավելյալ հողատարածություններից յուրաքանչյուր զավակին հանձնել մինչև 50 ֆեդան, սակայն այդ նպատակով առանձնացված հողատարածությունը չպետք է անցներ 100 ֆեդանից: Մնացած հողատարածությունները թույլատրվում էր վաճառել միայն հողագործությանը զրաղվող, վարձակալող կամ բանվոր այն գյուղացիներին, որոնք մշակում էին այդ հողատարածությունները և լուծելին 10 ֆեդանից ավելի հող: Նրանցից յուրաքանչյուրին կարող էր վաճառվել առավելագույնը 5-ական և նվազագույնը՝ 2-ական ֆեդան հող: Հողատարածություն զեռող պետք է լիներ լափահաս և դատվածություն լուծեցող եղիպտահամ քաղաքացի: Հողն արցելվում էր վաճառել հողատիրոջ մուտիկ ազգականներին: Առթև ու վաճառքը պետք է արտահայտվեին գրավոր ձևով և հաստատված լինելին արդարա-

<sup>\*</sup> Օրենքի ակտից բաց ենթ թաղել 2-րդ գլուխը և որոշ հոդվածներ, որոնք քննարկվող հարցին հետք էն անվում:

դատութիւնն անզական մարմիններէ կողմից: Օտարերկրացիներէ հողատարածութիւնները չպետք է զերազանցեին 20 ֆեդանին:

5-րդ հողվածը վերաբերում էր փոխհատուցմանը: Հազիւյալ հողատարածութիւններէ բնագործական համար հողատիրոջը արվում էր փոխհատուցում այդ հողերի վարձակալական արժեքի սասանապատիկ չափով՝ դումարած նաև զրանց վրա եղած շարժական և անշարժ կառույցների և ժառանգի արժեքները:

6-րդ հողվածով պարզարանվում էր, որ բնագործական հողերի փոխարին արվելու են տարեկան 3% շահութաբերութիւնամբ 30 տարվա ընթացքում վճարելի պետական պարտատուներ:

9-րդ հողվածը սահմանում էր, որ բնագործական հողերն ամեն մի գլուղում պետք է բաժանվեին սակավահող և հողազուրկ գյուղացիներին այնպես, որ նրանք առավելագույնն ունենային 5 և նվազագույնը՝ 2 ֆեդան հողակտորներ: Այս դեպքում էլ նոր հողատերը պետք է լինէր լափահաս, դատվածութիւն չունեցող և զրազմունքով հողազործ եզրպտական քաղաքացի: Նա հող կարող էր ստանալ այն դեպքում, եթէ նրա հողակտորը պակաս էր 5 ֆեդանից: Հողակտոր արվում էր առաջին հերթին վարձակալողին կամ գյուղատնտեսական բանվորին, ինչպես նաև նրանց, ում ընտանիքը մեծաթիվ էր և առավել ընչազուրկ: Հողարժանուժը կատարվում էր միայն զրազոր ձևով:

10-րդ հողվածից պարզվում է, որ հող ստացող գյուղացին որպես փոխհատուցում պարտավոր էր պետութիւնը վճարել իր տարեկան վասսակի 15% -ը, որից պետութիւնն տարեկան շահութաբեր կազմում էր 3%: Փոխհատուցումը մարվելու էր 30 տարվա ընթացքում:

12-րդ հողվածում ասվում էր, որ ստեղծվում է սեղանային բարեփոխումների բարձրագույն կոմիտեա (ՀՐԲԿ), որն իրազորում է հողերի բնագործական ու վերաբաժանումը:

Հետ 15-րդ հողվածի հողերի բնագործական ու բաժանումը պետք է ավարտվեին հինգ տարվա ընթացքում:

Օրենքի երկրորդ գլուխը վերաբերում էր գյուղատնտեսական կոոպերատիվներին:

18-րդ հողվածում սահմանվում էր, որ յուրաքանչյուր առանձին գյուղի բնագործական և բաժանված հողատարածութիւններին նոր տերերը, որոնք առավելագույնն ունեն 5 ֆեդան, պետք է կազմեն գյուղական կոոպերատիվ համայնքներ: Առանձին դեպքերում, երբ զրա անհրաժեշտութիւնը կար, հասարակական գործերի

Մինիստրի թույլտվութիամբ կարելի էր միասնական կոուպերատիվ կազմել նաև ավելի քան մեկ գյուղի բնակիչներին:

19-րդ հոգվածը պարզաբանում էր գյուղատնտեսական կոուպերատիվների պարտականութիւնները.

1. Անդամների համար գյուղատնտեսական վարկի մեծաքանակութիւն:

2. Անդամների ապահովումը հողամշակման միջոցներով ինչպիսիք են սերմերը, պարարտանյութը, բանող անասունները, գյուղատնտեսական մեքենաները, ինչպես նաև այն ամենը, ինչ անհրաժեշտ է բերքի պահպանման և տեղափոխութիւն համար:

3. Ցանքի և հողամշակման կազմակերպումը լավագոյն մեղով (սերմերի զտում, բերքի տեսակագործում, պայքար գյուղատնտեսական վնասատուների դեմ, սոսոցող առուների բացում):

4. Հիմնական բերքի վաճառք:

5. Բոլոր տեսակի գյուղատնտեսական, ինչպես նաև հասարակական ծառայութիւնների կատարում, որոնք կարիքը կզգան կոուպերատիվ անդամները:

Օրինքի շորորդ գլուխը վերաբերում էր հավելյալ հարկերին:

25-րդ հոգվածում ասվում էր, որ սկսած 1953 թ. հունվարի մեկին 200-ից ավելի ֆեզան հողատարածութիւնների վրա զբոստում էր հավելյալ հարկ, որը կազմում էր հիմնական հարկի մեծապատիկը:

30-րդ հոգվածով պարզաբանվում էր, որ հավելյալ հարկերը չէին վերաբերում 2-րդ հոգվածի բացառութիւններին:

Հինգերորդ գլուխը սահմանում էր հողատիրոջ և վարձակալողի հարաբերութիւնները:

32-րդ հոգվածի համաձայն հող կարող էր վարձակալել միայն այն անձամբ մշակողը:

33-րդ հոգվածում ասվում էր, որ վարձավէարը չէր կարող լինել ավելի, քան հիմնական հարկի յոթնապատիկը, իսկ եթե այն վճարվում էր բնամթերքով, ապա բոլոր ծախսերը գուրո բերելուց հետո այն չպետք է գերազանցեր բերքի կեսին: Հողատերը պարտավոր էր մուծել պետական բոլոր (այդ թվում նաև հավելյալ) հարկերը: Նա պարտավոր էր կատարել հողի վերականգնման խոշոր աշխատանքները և գյուղատնտեսական կառույցների վերանորոգումը: Վարձակալողը պարտավոր էր կատարել բոլոր այն աշխատանքները, որոնք կազմած էին հողի մշակման հետ: Ոռոգման,

սերմի և հանքային պարարտանյութերի ժախսերը նա կիսում էր հողատիրոջ հետ:

35-րդ հոդվածով չէր թույլատրվում վարձակալման ժամկետ սահմանել երեք տարուց պակաս ժամկետով:

36-րդ հոդվածը պահանջում էր, որ վարձակալումը անպայման լինի գրավոր համաձայնագրի մեով և երկու օրինակից, որոնցից մեկը լինելու էր վարձակալողի, իսկ մյուսը՝ հողատիրոջ մոտ:

Վեցերորդ գլուխը վերաբերում էր գյուղատնտեսական բանվորների իրավունքներին:

38-րդ հոդվածում ասվում էր, որ գյուղատնտեսական բանվորի քրավորակի շահը սահմանելու համար գյուղատնտեսությունում մինիստրը, իր իսկ ընտրությամբ, ամեն մի շրջանի համար կազմում է վեց հոգուց բաղկացած առանձին հանձնախմբի՝ մինիստրության բարձրատիճան մի պաշտոնյայի գլխավորությամբ: Հանձնախմբի անդամներից 3-ը ներկայացնելու էին հողատերերի, իսկ մյուսը 3-ը՝ գյուղատնտեսական բանվորների շահերը: Այս հանձնախմբի քառուսնյակն օրինական չէին համարվելու, մինչև չհաստատվեն գյուղատնտեսության մինիստրի կողմից:

39-րդ հոդվածով գյուղատնտեսական բանվորներին թույլատրվում էր կազմակերպել արհմիություններ՝ պաշտպանելու համար իրենց միասնական շահերը<sup>26</sup>:

Հիմնականում ալապիսին էր եզրիպտական գյուղի պատմության մեջ հողային բարեփոխումների առաջին օրենքը:

Նոր օրենքը եզրիպտական գյուղի սոցիալական կառուցվածքի մեջ որոշակի փոփոխություններ էր մտցնելու: Եզրիպտոսի ղեկավարների համար բարեփոխումների հիմնական նպատակներից մեկը գյուղում սոցիալ-քաղաքական հենարան ստեղծելն էր: Եթե քաղաքում այդ հենարանը լինելու էր ազգային բուրժուազիան, ապա գյուղում՝ մանր գյուղացիությունը: Թրենքը պետք է վերջ դներ խոշոր հողատերերի տնտեսական հզորությանը: Նրա հաջորդ նպատակն էր գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը, որը ենթադրվում էր իրականացնել կոոպերատիվ ձևի տնտեսությունների ցանցի ստեղծմամբ: Եզրիպտական ազգային արդյունաբերության թույլ վիճակը ստիպում էր նոր ղեկավարությանը՝ միջոցներ գտնել ֆինանսավորելու հրկրի արդյունաբերականացման ծրագրերը: Այս կուպակցությամբ հողային բարեփո-

<sup>26</sup> R. el-Barawy, *The Military Coup in Egypt*, Cairo, 1952, Appendix 3, *The Agrarian reform law*, p. 227.

խումենրի բարձրագոյն կոմիտեի նախագահ Գամալ Սայմը ա-  
սում էր. «Նոզային բարեփոխումների սկզբունքային նպատակը  
կապիտալի փոխազդումն է գյուղատնտեսութունից զիպի արդյու-  
նարներութունն»<sup>27</sup>, Ըստ եզրուպահան նոր ղեկավարների՝ գրան  
պետք է ծառայեր նաև կարգաձայններին արժող և պետական  
պարտատուներով արտահայտված փոխառուցումը, Վերջին-  
ներս, գրգիլով շրջանառութիւն մեջ, պետք է խթանէին երկրի  
արդյունարերութիւնն զարգացումը, անձնակ հողատարածութիւնն-  
րի յուրացումը և միամտանակ կանխէին շուկայում գրամական  
մեծաքանակ գումարների աւայութիւնը և գրանջ հոսքը զիպի  
արտասահման: Վերջապետ, հողային բարեփոխումները պետք է  
նպաստէին գյուղի բնակիչների կենսամակարդակի բարձրաց-  
մանը:

Անհրաժեշտ է նշել, որ այս օրենքը, շնայած որոշ թերութիւն-  
ներին, ուներ հեղափոխական բնույթ: Եզրուպահ ողջ պատմու-  
թիւն մեջ առաջին անգամ ձեռք էր բարձրացվում տիրապետող  
գասակարգի շահերի վրա: Զպետք է անտեսել այն հանգամանքը,  
որ խոշոր հողատերերը, որոնք, ինչպես արգեն սազել է, ապրում  
էին հիմնականում Կահիրեում և Ալեքսանդրիայում, հենց իրենք  
էլ հանդիսանում էին խոշոր արդյունարերողներ և ներկայացնում  
էին ստարիբրյա մոնոպոլիաների հետ համազորակցող եզրու-  
պահան խոշոր բուրժուազիան: Այս առանձնահատկութիւնը  
պարզ է, որ հետք էր թողնում երկրի տնտեսական և քաղաքական  
ողջ կիւնքի վրա: Այսպիսով, ձեռք բարձրացնելով գյուղում խո-  
շոր հողատիրութիւնն զիբքերի վրա, նոր ղեկավարութիւնը ուժեղ  
թշնամի էր ձեռք բերում նաև քաղաքում, որն իր ձեռքում էր պա-  
հում երկրի տնտեսական, քաղաքական և հասարակական ուղղ-  
վածութիւնն հիմնական շտակները և արտասահմանում ուներ իր  
հովանավորողները: Այս էր պատճառը, որ եզրուպահան հեղափո-  
խութիւնն ղեկավարութիւնը հետագա տարիներին համոզվելով,  
որ խոշոր բուրժուազիայի հետ խաղաղ գոյակցութիւնն անհնար  
է, ի վերջո ձեռնարկեց նրա իրավունքների ազիլի ու ազիլի սահ-  
մանափակմանը:

Օրենքը հողագործ և սակավահող գյուղացիներին ճարավո-  
րութիւն էր ընձեռում ձեռք բերել հողակտորներ կամ որոշ շտակով  
ընդարձակել ունեցածը և համեմատաբար քիչ ենթարկվել կալվա-

<sup>27</sup> J. et S. Lacouture, L'Égypte en mouvement, p. 384.

ծառերերի և միջնորդների կամայականութուններին՝ հողի վար-  
 ւակայման զեպշում: Գյուղատնտեսական բանվորների օրավարը  
 օրենքը զնում էր սրտչակի սահմանի մեջ և կալվածատերերն այլևս  
 իրավունք չունեին անհրաժեշտ եվազագույնից ցածր վճարել նրանց:  
 Լուրջ նշանակություն ուներ նաև այն, որ գյուղատնտեսական բան-  
 վորներին օրենքով թույլ էր արվում կազմակերպել իրենց արհ-  
 միությունները: Ի վերջո օրենքի զրահան կողմերից էր նաև գյու-  
 ղատնտեսական հատպերաաիվ համայնքների ստեղծումը: Այն կա-  
 ռոզ էր մանր հողատերերի մասնատված տնտեսությունները հա-  
 մախմբել և դարձնել տնտեսական ախպիտի միավորումներ, ս-  
 քունք ի վիճակի կլինեին պայքարելու խոշոր և սևեոր հողատերերի  
 դեմ: Այն նաև հնարավորություն կտար միավորված հողատարա-  
 ծությունները մշակել ավելի ասաչազիմական կզանակով, կրնդ-  
 յայներ արտադրությունը և բերքի իրացումը կզարձներ անուվել  
 արդյունավետ: Բացի այդ, այն համայնքի անգամներին կզաս-  
 տիրակներ միասնական գործունեության հողերանությունը:

Օրենքն ուներ նաև լուրջ թերություններ, նախ և ասաց այն  
 200 ֆեզան հողատարածությունը, որ թույլատրվում էր ունենալ,  
 հատկապես եզիպտական պայմաններում խոշոր հողատարածու-  
 թյուն էր և հողատիրոջը տարեկան կարող էր բերել 6000 գինեկի<sup>28</sup>  
 եկամուտ: Ծիծ դրան ավելացնենք այն 100 ֆեզանը, որ հողատե-  
 րը կարող էր ձևակերպել իր արդիների տնտեսով, ապա դա կհաս-  
 ներ 8000 գինեկի: Օրենքով փաստորեն չէր սահմանափակվում  
 անմշակ հողատիրությունների քանակը 25 տարիների ընթացքում:  
 Դա հողատիրոջը հնարավորություն էր ապխս դիմելու զանազան  
 կեղծիքների և մշակելի շատ հողատարածություններ գրանցել  
 որպես անմշակ: Բացի այդ, հավելյալ հողատարածությունների  
 վաճառքը թույլատրելը հողատիրոջը հնարավորություն էր ապխս  
 ձևոք բերել հավելյալ խոշոր եկամուտներ՝ ի հաշիվ հողային սպե-  
 կուլյացիայի:

Մակավահող և հողազուրկ գյուղացիներին ծանր կացություն  
 մեջ էր զցում այն, որ ազառիկով ստացված հողակտորի զիմաց  
 նրանք պարտավոր էին տարեկան բավականին խոշոր մի զումար  
 վճարել: Օրենքը չէր սահմանափակում վարձակալման տրվող հո-  
 ղերի շահը: Դա հողատերերին հնարավորություն էր ընկնում զրանք  
 հաննել զանազան գործամույնների, որանք այդ հողը մշակում էին  
 վարձ: աշխատումի միացում: Որպես 28-րդ հոդվածի պահանջի

<sup>28</sup> H. Hopkins, Egypt the crucible, p. 92

իրագործման արգյունք, օրենքի հրապարակումից երկու ամիս  
անց գյուղատնտեսական բանվորներին համար սահմանված օրա-  
վարձը շտիպազանց ցածր էր: 39-րդ հոդվածը, որ վերաբերում էր  
նրանց արհմիությունների կազմակերպմանը, բաժանակիս մշու-  
շապատ էր: Օրենքի բացասական կողմերից էր և այն, որ թույլ էր  
տրվում հողակատրոններ զննել նաև այն գյուղացիներին, որոնք ու-  
նեին 10 ֆեզան հողատարածություններ: Այս հանգամանքը  
որոշ թվով հողատերերի ի վերջո մտցնում էր ունևոր գյուղացի-  
ների շարքերը: Վերջապես, ասորերը սահմանափակումները ոչ բո-  
լոր գյուղացիներին էին հնարավորություն տալիս ի հաշիվ օրեն-  
քի ստանալ հողատարածություններ:

Հողային բարեփոխումների անցկացման համար ողջ Եգիպ-  
տոսի ասորածքը բաժանվում է 22 շրջանների, որից 14-ը ներքին,  
իսկ 8-ը՝ Վերին Եգիպտոսում: 1952 թ. հոկտեմբերի 26-ին Եգիպ-  
տոսի գյուղատնտեսության մինիստրը ասորագրեց 112 նամակ-  
ներ, որոնք ուղղված էին աստվել խոշոր հողատերերին: Մրանց  
ազնւցուկ հողատարածությունները ՀՔԲԿ-ի որոշմամբ պետք է  
բռնագրավվեին առաջին հերթին: Այդ նամակներում մինիստրը,  
հենվելով հողային բարեփոխումների սեպտեմբերյան օրենքի  
վրա, հողատերերին առաջարկում էր բնաձուլ ազգասիրության, և  
աչակցել ՀՔԲԿ-ի պաշտոնյաներին, արագորեն կենսագործելու  
օրենքի պահանջները նրանց հողերի նկատմամբ: Այդ նամակները  
ասորերը նահանգներ էին տանում 22 պաշտոնյաներ<sup>20</sup>:

Երբ կառավարության ներկայացուցիչները հասան նահանգ-  
ները, ականատես եղան մի այնպիսի դրուսյան, որը բազմասիրու-  
թյանն էր ոչ մի առնչություն չունեի: Ոռոգման մեքենաները  
կանգնած էին տասնյակներով, որովհետև բնակարժակիս փլացել  
էին կամ էլ հողատերերը դրանք թողել էին առանց վառելանյութի:  
Իրենց զժգոհությունն էին սկսել արտահայտել վարձակալողները,  
որովհետև այնու ոչ ոք նրանց չէր մատակարարում պարարտա-  
նյութեր, սերմացու, մշակման և ոռոգման միջոցներ և այլն: Մայից  
Մարիլը, որ 1956 թ. հունիսից դարձավ ՀՔԲԿ-ի նախագահ, գրում  
է, որ գյուղատնտեսական ասորելուցը փաստորեն կազմալուծ-  
վեց և էլ հնար չկար հապաղելու կամ սպասելու Վարձակալական  
գործերը կարիք ունեին դրանք վարող պաշտոնյաների, մատյան-

<sup>20</sup> 52—51 ص مصر، فى الإصلاح الزراعى فى مصر، ص 52—51



ների, պայմանագրերի, կապի միջոցների և հսկողություն<sup>40</sup>։  
 ՀԲԲԳ-ի շատազ զիմումները գյուղատնտեսական գրամատուն, վա-  
 ունիանյութերի վարչություն և այլ պետական հիմնարկություններ,  
 որոնցից սրանք օգնեն այդ վիճակից դուրս գալու համար, մնա-  
 ցին անհետանալու։ Մա պատահական չէր։ Ինչպես արդեն ասվել է,  
 խոշոր հողատերերը քաղաքում գրազնցնում էին բարձր պաշտոն-  
 ներ և, պարզ է, չէին աշակցի այն միջոցառման իրականացմանը,  
 որը նրանց վնաս էր բերում։ Առաջին քայլերի հետ զժվարություն-  
В рядах лиц, «наносивших ущерб безопасности государству», в первую очередь оказались коммунисты, а также члены демократических организаций страны. В числе профсоюзных, студенческих, молодежных и других прогрессивных организаций была запрещена также деятельность Лиги иракских женщин. Было арестовано много юристов, инженеров, учителей, рабочих.

<sup>29</sup> См. „Iraqi Review“, vol. 1, № 27, 1960, p. 6.

<sup>30</sup> Uriel Dann, Iraq under Qassem. A Political History. 1958—1963, Jerusalem, 1969, p. 321.

<sup>31</sup> ПАСВ — Партия арабского социалистического возрождения.

<sup>32</sup> «Всемирное профсоюзное движение», № 12, 1963, с. 25.

В лагерях смерти Нукрат ас-Сальман и аль-Рашид<sup>33</sup> томились сотни политических заключенных, подвергавшиеся невыносимым пыткам<sup>34</sup>.

В числе жертв было немало женщин. Среди них были декан факультета журналистики доктор Роз Хадури, секретарь Лиги иракских женщин Сафира Джамиль, Хафиза Махдия и сотни других женщин. «Их преступление состояло в том, что они боролись против империализма, распевали песни о независимости и свободе...»<sup>35</sup>.

Героини Ирака, матери сирот и вдовы борцов подвергались страшным пыткам: «Зловещая тишина ночи разрывается криками мужчин и воплями женщин. Стойкую героиню Сафиру вводят в одну из комнат дворца, срывают с нее одежду и цепью подвешивают к большому окну. Она стоит обнаженная перед группой остервенелых подлецов, стоит с высоко поднятой головой, и ее тело украшают «ордена» патриотизма и благородства — синие кровоподтеки и шрамы... Через несколько часов пыток в ее камеру бросают изуродованный труп мужа...»<sup>36</sup>.

Это лишь небольшая часть того, что пережили иракские женщины.

18 ноября 1963 г. баасистский режим в Ираке пал. Однако репрессии продолжались. 16 декабря 1963 г. военный трибунал вынес приговор «о тюремном заключении сроком от 5 до 30 месяцев 28 иракским учительницам по обвинению их в коммунистической деятельности»<sup>37</sup>.

5 марта 1966 г. свыше 400 женщин вышли на улицы Багдада с требованием освобождения своих мужей, братьев, сыновей и сестер. В результате 18 из них было арестовано<sup>38</sup>.

<sup>33</sup> Лагерь аль-Рашид — самый большой военный лагерь в Ираке.

<sup>34</sup> См. Центральный архив ВЦСПС. Документальные материалы международного отдела ВЦСПС, ф. 1, оп. 10, ед. хр. 1931.

<sup>35</sup> «За рубежом», № 29 (162), 20 июля 1963, с. 18.

<sup>36</sup> Там же.

<sup>37</sup> Али Мохаммед, Террор в Ираке продолжается, «Проблемы мира и социализма», № 2, 1964, с. 94.

<sup>38</sup> См. „Amnesty for Iraqi Political Prisoners (International Committee), Information Bulletin“, Paris, 1966, № 2, p. 8.

Многочисленные женские делегации в Ираке обращались в министерства юстиции, здравоохранения, внутренних дел, правосудия с требованием освобождения политзаключенных и улучшения их положения.

• • •

17 июля 1968 г. в Ираке к власти пришло прогрессивное крыло партии ПАСВ. Последующий период политического развития отмечен достижениями в области демократизации и прогресса в стране. Положение женщины в условиях прогрессивно-революционного режима изменилось. В числе многих демократических организаций возобновила свою деятельность также Лига иракских женщин.

В ноябре 1968 г. ЦК ИКП опубликовал проект Хартии сотрудничества национальных сил в едином фронте Ирака, в котором были специальные разделы об охране прав женщин и детей. В разделе «Жизнь народа» подчеркивалось: «Запретить использование труда подростков, оказать помощь детям грудящихся в получении образования, предоставить работницам отпуска по беременности и уходу за ребенком, обеспечить их детей яслями и ликвидировать дискриминацию в зарплате женщины и мужчины»<sup>39</sup>.

В третьем пункте — «Освобождение женщины» — подчеркивалась необходимость обеспечения работой женщины с соблюдением равенства с мужчинами в зарплате и условиях работы, а также обеспечения женщины всеми политическими и социальными правами.

В Хартии, предложенной коммунистами, было уделено большое внимание вопросам брака и развода, наследование, запрещалось многоженство. Коммунисты выступали в защиту материнства, заботились о воспитании детей.

В сентябре 1970 г. на втором съезде коммунистической партии Ирака, вновь было принято решение об эмансипации женщины<sup>40</sup>.

<sup>39</sup> ۱۹۶۸—۱۱—۱۷ بیروت «الاخبار»

<sup>40</sup> См. Jack Woddis. Iraqi Communist Party holds its Second Congress, „Comment“, London, 13.III.1971, № 9, p. 133.

15 июля 1969 г. был принят закон о пенсиях и социальном обеспечении. Он предусматривал также «выплату пособий с денежной компенсацией трудящимся по старости, при временной нетрудоспособности, инвалидности, при рождении ребенка и в случае смерти кормильца». Пенсия устанавливалась в размере от 6 до 30 динаров в месяц по старости и инвалидности, и пособие — от 300 филсов до 1 динара 250 филсов в день<sup>41</sup>.

Статья 151 Закона о труде, принятого в 1970 г., устанавливала равную заработную плату, равный рабочий день, пенсию и трудовые права мужчин и женщин<sup>42</sup>.

Новым трудовым кодексом ст. 79, §1 запрещается применение женского труда в ночное время, а также в цехах и на объектах, вредных для женского организма. Одновременно установлен ночной отдых для работающих женщин не менее 11 часов. Статья 81 определила максимум рабочего времени для беременных женщин не более 7 часов<sup>43</sup>.

Отдельные статьи трудового кодекса относятся к оплате беременных женщин во время отпуска, а также в период кормления новорожденных.

В стране ширится сеть ясель, детских садов и школ. В Иракской республике в 1975—76 учебном году впервые переступили школьный порог 350 тысяч ребят<sup>44</sup>. В том же учебном году только в сельских районах впервые распахнули свои двери 410 начальных школ, что в полтора раза больше, чем намечалось планом школьного строительства<sup>45</sup>, разработанным министерством просвещения республики<sup>46</sup>. Одновременно растет число женщин-учительниц.

Президент Ирака Ахмед Хасан аль Бахр, отвечая на вопросы специального корреспондента «Правды», отметил, что

<sup>41</sup> См. А. Ф. Федченко. Ирак в борьбе за независимость, с. 299.

<sup>42</sup> «الثورة» بغداد 17—5—1975

<sup>43</sup> См. там же.

<sup>44</sup> См. «Коммунист», Ереван, 6 сентября 1975 г.

<sup>45</sup> В настоящее время в Ираке успешно осуществляется программа строительства 1300 новых начальных школ.

<sup>46</sup> См. «Коммунист», Ереван, 10 сентября 1975 г.

«перед революцией 17 июля 1968 г. встали две такие главные задачи, как защита достигнутых национальных и прогрессивных завоеваний и их развитие и проведение новых социальных преобразований, обеспечение условий для перехода к социализму»<sup>47</sup>. Закон о труде создал благоприятные условия для повышения активности женщины в общественной жизни Ирака.

Конференция иракских женщин, созванная в Багдаде в марте 1973 г., проходила под девизом «Место женщины — в авангарде революционного строительства».

В условиях прогрессивно-революционного режима активизировалась деятельность Лиги иракских женщин. На V съезде Лиги, состоявшемся в конце марта 1973 г., в центре внимания были вопросы расширения женского движения в стране, участия женщины в национальном строительстве и повышения их роли в развитии республики.

Съезд избрал центральный совет Лиги в составе 31 человека. Председателем Лиги стала Рамзия Хейри, первым заместителем — Закия Исмаиль Хакки, вторым — Хамида Тайбар. Избран также исполнительный комитет из состава центрального совета.

В январе 1974 г. состоялся 8 региональный съезд Партии арабского социалистического возрождения Ирака. Отчет, одобренный генеральным секретарем регионального руководства партии, президентом республики Ахмедом Хасаном аль-Бакром, является политической платформой партии.

В политическом отчете, в разделе социальных и культурных преобразований, говорится об ускорении «процесса эмансипации и обеспечения для женщины ее собственного места в обществе»<sup>48</sup>.

Региональное руководство призывает бороться «за разоблачение реакционных, отсталых тенденций и идей, приносящих способности женщин, рассматривающих ее человеческое существование лишь под одним углом зрения»<sup>49</sup>.

<sup>47</sup> «Правда», 6 марта 1973.

<sup>48</sup> «Арабская нация единая, ее миссия бессмертна». Политический отчет VIII регионального съезда, январь 1974 г., Хельсинки, 1975, с. 187.

<sup>49</sup> См. там же.

Одной из причин сохранения сил реакции руководство ПАСВ видит в сохранении «существующих цепей, сковывающих освобождение женщин...»<sup>80</sup>.

В 70-х годах укрепляется связь Лиги иракских женщин с женскими организациями других арабских стран и с МДФЖ, по инициативе которой проводятся семинары женских организаций. На этих семинарах обсуждаются вопросы повышения роли женщины в политической, экономической и культурной жизни своих стран, ликвидации неграмотности среди женщин в арабских и африканских странах. Одновременно такие мероприятия способствуют укреплению дружеских связей между организациями разных стран. Лига иракских женщин является активной участницей этих семинаров и конференций.

Делегации иракских женщин участвовали на первом семинаре женских организаций арабских и африканских стран в Алжире в марте 1974 г., на международном семинаре в Хартуме весной того же года, посвященном повышению роли женщины в производстве и общественной жизни; на конференции представительниц женских организаций арабских стран в Дамаске (июль 1974 г.), на конференции представительниц женских организаций 15 арабских стран в Каире в ноябре 1974 г., посвященной вопросам участия женщины в борьбе арабских народов против империализма и колониализма, за ликвидацию израильской агрессии. Иракские женщины участвовали в работах симпозиума женщины стран Азии и Африки по теме «Женщина и социальное развитие», созданного в марте 1975 г. в Александрии Организацией солидарности народов Азии и Африки в рамках Международного года женщины.

Установлены дружеские связи между Лигой иракских женщин и комитетом советских женщин.

Таким образом, женское движение в современном Ираке представляет большую общественную силу и играет активную роль в осуществлении прогрессивных социально-экономических преобразований.

---

<sup>80</sup> См. там же.



ԻՐԱՔԻ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ  
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ  
 (1945—1975 թթ.)

Ա մ ֆ ո փ ո Վ

Հողվածում լուսարանվում է Իրաքի կանանց մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Կանանց շարժումը, որը ձևավորվել է 1920-ական թվականներին, Իրաքի դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումների բաղկացուցիչ մասն է կազմում:

Հատուկ ուշադրություն է դարձված Իրաքում ծավալված հակաիմպերիալիստական պայքարին կանանց մասնակցությանը, երանց դերին 1920, 1948, 1952 և 1958 թթ. ազատամբությունների ժամանակ: Զգույի տեղ է հատկացված Իրաքի կանանց լիզայի գործունեության լուսարանմանը:

Միտածամանակ ցույց է տրվում այն ակտիվ դերը, որ այսօր կատարում են Իրաքի կանայք երկրում կենսագործվող առաջադեմական սոցիալ-անտեհա՛ան վերափոխումների ընագավառում:

كليريني صوتليان

مشاركة المرأة العراقية في الحياة الاجتماعية والسياسية

١٩٧٥—١٩٤٥

(ملخص)

يوضح المقال مسألة اشتراك المرأة العراقية في الحياة الاجتماعية والسياسية. تولى الحركة النسائية التي تشكلت في العشرينات جزاً لا يتجزأ، من الحركات الوطنية—التحريرية والديمقراطية في العراق.

واعترا انتباها خاصا لمشاركة المرأة في النضال المعادي للاستعمار في العراق، وبصورة خاصة أثناء الانتفاضات التي جرت

في الاعوام ١٩٢٠ و ١٩٤٨ و ١٩٥٢ و ١٩٥٦. كما تخصصنا مكانا  
بارزا لتأريخ نشاط عصبة المرأة العراقية.  
وابرزنا في ذات الوقته الدور الفعال الذي تشطلم به  
المرأة في ميادين التحولات الاجتماعية التقدمية الجارية في  
البلاد.

ԼԻՔԱՆԱՆԻ 1840 Ք. ՄԱՅԻՍ-ՀՈՒԼԻՍԱՆ ԱԳՍԱՄՐՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մարքս-լենինյան պատմագիտության կողմից Եզիպտոսի և ընդհանուր առմամբ ամբողջ Արարական Արևելքի նոր պատմության կենտրոնական զեմքերից մեկի՝ Մուհամեդ Ալիի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությանը տրված գնահատականը հանրահայտ է:

Ներքին քաղաքականության ասպարեզում ընդգծվում են նրա օրոք (1805—1849 թթ.) Եզիպտոսի ներգիտության վերացումն ու եվրոպականացման սկիզբը, արտադրողական ուժերի զարգացումն ու հասարակական նոր հարաբերությունների սաղմնավորումը, ֆեոդալական անիշխանության սանձահարումը, կենտրոնական պետականության ստեղծումը: Դրա հետ միասին մատնանշվում է վերևից սիջեցվող բարենորոգումների անցկացումը ժողովրդական շարժումների ճնշման պայմաններում՝ ի շահ կառավարող նոր զինաստիպի ու նրա զլխավոր հենարան նորհիտկ հողատերերի դասակարգի:

Արտաքին քաղաքականության ասպարեզում մարքսիստ-պատմաբանները միահամուռ առաջադիմական են համարում Մուհամեդ Ալիի եռանդուն պայքարը օսմանյան բռնաախրության և եվրոպական գաղութարարության դեմ և իրավամբ շեշտում են նաև նրա նվաճողական-մեծագետական ձգտումները, հատկապես հույն ժողովրդի ազատամարտը արյան մեջ խեղդելու գործին նրա եռանդուն մասնակցությունը (1824—1827 թթ.):

Մուհամեդ Ալիի արտաքին նվաճողական ձգտումներին ու միջոցառումներին անդրադառնալիս մարքս-լենինյան պատմագիտությունը նաև որոշակի սահմանագիծ է անցկացնում 1831—

1833 թթ. պատմա-աշխարհագրական Սիրիայի<sup>1</sup>, այդ թվում և  
 Լիբանան լեռան վրա նրա իշխանութիւնի հաստատմանը հանգեց-  
 նող հակաօսթմանական ելույթի և նախընթաց քաջերի միջև  
 Ազիլին, ըստ էութեան առարկման չի ենթարկվում այն հանգա-  
 մանքը, որ եզրպատական տիրապետութեան տասնամյա ժամանա-  
 կաշրջանը որոշակի առաջադիմական նշանակութիւն է ունեցել  
 Միջերկրական ծովի արևելյան ափի արարների, այդ թվում և  
 լիբանանյան ժողովրդի համար:

Սակայն, եթե ընդհանուր գծերով մեր պատմագիտութեան  
 շնորհիւ միարանութիւն է տիրում Սիրիայի վրա եզրպատական տի-  
 րապետութեան զնահատականի խնդրում, ապա այդ տիրապետու-  
 թեան ժամանակաշրջանի առանձին զբաղանքն ու երևույթներ սո-  
 վորարար շարադրվում ու մեկնարանվում են ոչ միայն յուրովի,  
 այլև հաճախ իրարամերձ գիրքերից: Դա վերաբերում է առաջին  
 հերթին լիբանանյան կիսանկախ իշխանապետութեանը 1788—  
 1840 թթ. զլխավորած Բաշիր II Շիհաբի և Մուհամեդ Ալիի փոխ-  
 հարաբերութիւնների բնույթին, օսմանյան սուլթանի դեմ նգիպ-  
 տոսի տիրակալի երկրորդ պատերազմի ժամանակ (1833—  
 1841 թթ.) լիբանանյան լեռնականների գիրքորոշմանը և վերջիննե-  
 րիս մի հասովածի կողմից 1840 թ. մայիսի վերջերին եզրպատական  
 իշխանութիւնների դեմ սկսված զինված պայքարին, որը Սիրիա-  
 յի վրա Մուհամեդ Ալիի գերիշխանութեան վերացմանը հանգեց-  
 նող իրադարձութիւնների շղթայի ուշագրավ օղակներից մեկն է:

Այդ իրադարձութիւնների հավաստի ուրվանկարը գծելն ա-  
 ռաջին հայացքով կարող է աւելան էլ քարդ գործ չթվալ: Վերջին  
 հաշվով ուսումնասիրողի տրամադրութեան ներքո առկա են կարե-  
 վոր նյութեր պարունակող մի շարք սկզբնաղբյուրներ: Դրանցից  
 հիշատակելի են քարոն Ի. զը Տեսասայի «Օտար պետութիւնների  
 հետ օսմանյան (Բարձրագոյն) դրան պայմանագրերի ժողովա-  
 ծու»-ի երրորդ հատորի առաջին գիրքը՝ իր ասարեմութիւն վազե-  
 րագրերով<sup>2</sup> (որոնք հիմնականում կրկնված են 1840—1910 թթ.  
 Սիրիայի և Լիբանանի վերաբերյալ քաղաքական զեկուցագրերի և

<sup>1</sup> Պատմա-աշխարհագրական Սիրիան, որ մինչև համաշխարհային առաջին  
 պատերազմի սկսած օսմանյան կայսրութեան մի մասն էր կազմում, ընդգրկում  
 էր ժամանակակից Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը:

<sup>2</sup> I. de Testa, Recueil des Traites de la Porte Ottomane avec les  
 Puissances Etrangères, t. 3<sup>e</sup>, 1<sup>er</sup> p., Paris, 1866.

միջազգային պայմանագրերի ժողովածու-ի էջերում<sup>3</sup>), իրա-  
գարմությունների գործուն մասնակից Քաննուա աշ-Շիդիակի  
էվիրանան լնուան երևիկների վերաբերյալ հաղորդումների գիր-  
քը<sup>4</sup>, հալի Հումամ Ֆահի մենագրությունում ազատագրեման  
Արու Սամրա Ղանեմի ընտանեկան արխիվի և իրա ժամանակա-  
կիցների սովյալները<sup>5</sup>, Բելյուսի ուսական Հյուպատոս Կ. Բալի-  
լիի «Միրիան և Պաղեստինը թուրքական տիրապետության ներքո,  
պատմական և քաղաքական առումով» աշխատությունը<sup>6</sup>, Ֆրան-  
սիական Հյուպատոս Բուրբի հաղորդումները, որոնք իր հեղին է  
ունեցել պատմարան Ազել Իսմայիլը<sup>7</sup> և, վերջապես, Ռուսաստանի  
արասրին քաղաքականության արխիվում պահվող խիստ կարևոր  
փաստաթղթերը:

Հակառակ սկզբնաղբյուրների առատությանը, ինչպես սովե-  
տական, այնպես էլ արաստահմանյան արևելագիտական գրակա-  
նության մեջ բավականին լայն ուշադրության արժանացած 1840 թ.  
լիբանանյան անցուղարկերի գնահատականի հարցում առ այսօր  
միասնական տեսակետ գոյություն չունի:

Սովետական արարագիտներից այդ անցուղարկերին առավել  
հանգամանալից անդրադարձել է Ի. Մ. Սմիլյանսկայան, որն  
իր մենագրության մեջ<sup>8</sup> առաջինը փորձ է արել խառնափնթոր  
հաղորդումներից կորզելու գեպքերի հաղորդականության շղթան,  
պարզելու ապստամբության մասնակիցների սոցիալական դեմքը

«مجموعة المحررات السياسية والمفاوضات الدولية عن  
سوريا ولبنان من سنة 1840 الى سنة 1910، دمشق، 1910»  
طنوس الشدياق كتاب اخبار الاعيان في جبل لبنان  
بيروت 1959

خليل همام فائز، ابو سمر<sup>9</sup> غانم اذالبطل اللبناني القايره  
1950

<sup>3</sup> К. М. Баянли, Сирях и Палестина под турецким превтельством  
в историческом и политическом отношениях, М., 1962.

<sup>4</sup> A. Ismail, Histoire du Liban du XVIII<sup>e</sup> siècle à nos jours, t. IV,  
Redressement et déclin du féodalisme Libanais (1840—1861), Beyrouth,  
1958.

<sup>5</sup> И. М. Смиллинская, Крестьянское движение в Ливане в первой  
половине XIX в., М., 1965.

և վերլուծելու մեզ հասած ապստամբական կոչերն ու մյուս փաստաթղթերը: Ի. Մմիլյանսկայան, 1840 թ. մայիս-հուլիսյան շարժումը բնութագրելով որպես եզիպտական իշխանությունների սոցիալ-տնտեսական միջոցառումների դեմ ուղղված գյուղացիական զինված շարժում, համարյա ուշադրություն չի դարձրել դեպքերի քաղաքական կողմին: Ի. Մմիլյանսկայային է հետևել մեր մի այլ արարագետ՝ Զ. Ի. Լեխեր<sup>9</sup>, իսկ Լ. Ն. Կոտլովը<sup>10</sup> խնդրոստարկա զինված անցուղարձները գուրս է թողել լիբանանյան գյուղացիական շարժումների շրջանակից:

Արաբ ապստամբաներ Ա. Ռուստամի, Յ. Հիտտիի, Ա. Իսմաիլի, է. հուրիի, Ա. Քարբիևի, Փ. Սալիբիի և այլոց աշխատություններում<sup>11</sup> իրադարձությունների ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքական կողմերը թեպես շոշափված են, սակայն որպես կանոն շեշտը դրված է արաբին-քաղաքական ազդակների վրա: Ըստ որում, տարբեր հեղինակներ, միտքան լինելով օսմանյան գործակալների ներդրումից խնդրում, նայած իրենց քաղաքական կողմնորոշմանն ընդգծել են կա՛մ անդլիական, կա՛մ էլ ֆրանսիական կառավարությունների քայքայիչ դերը: Բացառություն է կազմում մարքսիստ ապստամբան Յ. Կազանը<sup>12</sup>, որը դրական գնահատական տալով եզիպտական տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական տեղաշարժերին, 1840 թ. զինված ապստամբությունը (իբրևաներով՝ չափերազուր սահղափոխությունը) ոչ միայն չի հա-

<sup>9</sup> З. И. Левин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972.

<sup>10</sup> Л. Н. Котлов, Стеволение национально-освободительного движения на Арабском Востоке, М., 1975.

<sup>11</sup> اسد رستم، بشير بى السلطان والعزیز ۲-۱ بیروت ۱۹۵۷-۱۹۵۶  
 فیلیپ حتی لبنان فی التریخ بیروت ۱۹۵۹  
 امیل خوری وعادل اسماعیل السیاسه فی الشرق العربی ۱-۲  
 بیروت ۱۹۶۰-۱۹۵۹

<sup>12</sup> فواد قازان نظره جدیده الی الثوره اللبنانیه ۱۸۴۰  
 ضد الوجود المصری وتصالفه مع البشیر الکبیر-«الطریق»  
 بیروت ۱۹۷۳ العدد ۶ ص ۶۱-۸۱

մարում գլուղացիական շարժում, այլև ներկայացնում է որպես Քուրթական և անգլիական մեծաթիվ զորեակալների կողմից աշխուժացած տեղական «հինգերորդ զորաայան»՝ ֆեոդալական հետադեմ վերնախավի կողմից բարձրացված խռովություն:

Սույն հոգնվածում մինք զլիազորապես փաստարկելու ենք այն տեսակետը, որ լիբանանյան 1840 թ. մայիս-հուլիսյան անցուցարձերը, հասունանալով սոցիալ-տեսեսական որոշակի հիմքի վրա, հրահրվել և աշխուժացվել են նախ իշխանապետ Բաշիր II Շիհարի կողմից՝ ներքաղաքական ակնքախ ու լափազանց խորամանկ հաշվարկներով, ապա և՛ Արևելյան Հարցի շուրջը մենամարտող եվրոպական պետությունների ու նրանց շահերի ստատյունում իր հոգնվարքը երկարածեղել փորձող «հիվանդ մարդու» Քուրթիայի կողմից:

\*\*\*

1840 թ. մայիսից տեղի ունեցած լիբանանյան իրազարմությունների վերաբերյալ արարապահների շրջանում համարյա համընդհանրորեն ընդունված տեսակետն այն է, որ Մուհամեդ Ալիի՝ ամիր Բաշիր II Շիհարի աշակցություններ լիբանան լեռը ամեն գնով և իսպառ զինաթափելու համառությունը, ընկալվելով որպես զանգվածային զորահավաք կատարելու մտադրության հայտարար, լցրել է եզրպատգիների կամայականություններից դժգոհ լեռնականների համբերության բաժակը և Դալբ ալ-Կամարում սարերայնորեն սկսված շարժումն էլ շուտով վերածել է համաժողովրդական զինված ապստամբության:

Այդ տեսակետն է պաշտպանում, օրինակ, Բեյրութի ամերիկյան համալսարանի պատմության դասախոս Փամալ Սալիբին, որը 1965 թ. լոնդոնում անգլիերեն լեզվով լույս ընծայված «Լիբանանի ժամանակակից պատմություն» աշխատության էջերում 1840 թ. անցուցարձերի մեջ ամիր Բաշիրի գերն է սկզբանե անտի անփառունակ է ներկայացնում: Ես չանք լի խնայում այն տպավորությունն ստեղծելու, որ երկրի իշխանապետը՝ Մուհամեդ Ալիի ավագ որդի Իբրահիմ փառալի բուրբ կարգադրությունների հլու կամակատարը, առավել ծառայամիտ է եղել Լիբանան լեռան քրիստոնյաների զինաթափման գործը զուգի բերելու հարցում: Այս կազակցությունը նա, ի միջի այլոց, գրում է. «1840 թ. մայիսի վերջերին, հնազանգվելով Մուհամեդ Ալիի կարգադրությանը, Բաշիր II-ը Դալբ ալ-Կամարի շրջանի քրիստոնյաներին և գրուղներին կոչ արեց հանձնել իրենց զենքերը: Այդ քաղաքի բնակիչները Շուֆում լավագույնս զինվածներն էին և նրանց զինաթա-

փումը պծաք է հեշտացնելը երկրի մյուս շրջանների զինաթափումը<sup>13</sup>։

Առաջին հերթին նշենք, որ Սալիբին թյուրիմացության մեղ է այն իմաստով, որ եգիպտական իշխանությունները պահանջում էին ոչ թե լիոնականների զինքերն ընդհանրապես, այլ 15000 այն հրացանները, որոնք երկու տարի առաջ ամիր Բաշիրի ձեռքով իրենք էին քրտնակալներին՝ Հաուրանի գրուզների 1837—1838 թթ. ապստամբական շարժման ճեղմանը մասնակցել ապու համար, բնածանելն իզուր չէ, որ լակիրտեցինք։ Ամիրը, եգիպտացիների մատակարարած հրացանների շուրջ կեսը արամազրելով քրիստոնյա հպատակներին, մյուս մասը, այդ օրերին Բելլուսում առական հյուպատոսությունը վարող և իրազարմություններին քաշատեղյակ Կոնստանդին Բազիրի (և ոչ միայն նրա) վկայությամբ, խնամքով դասավորել էր իր պալատի նկուղներում, անհրաժեշտության դեպքում և անշուշտ իր նկատմամբ երբեմնի հնազանդությունը ցուցարհրելու պարագային բաժանելու համար իր հպատակների մյուս հատվածին՝ գրուզներին<sup>14</sup>։

Այնուհետև՝ Բաշիր II-ը, անկախ այն հանգամանքից, որ զինաթափման հրամանը իր շոշափելի ժանրությամբ վերարերում

<sup>13</sup> Камалъ С. Салиби, Очерки по истории Ливана, перевод с англійского („The Modern History of Lebanon“). вступительная статья и редакция Н. С. Луцкоя, М., 1969, стр. 92.

<sup>14</sup> К. М. Базилъ, Сирия и Палестина..., стр. 190. Եգիպտական իշխանությունները 1837 թ. փորձեցին զինաթափել և զորազույգ հեղ տարով շեղել արժանացած Հաուրանցի գրուզներին, որոնք շնչի Անթիշի զինավորությամբ ապստամբեցին և ապստանեցին լեռայն անմատչելի շրջանում, 1838 թ. զարևանք, Հաուրանցի իրենց զավակակիցներին սկզբնական հաշտությունից խանդավաճած, գրուզները հսկանդիպական ապստամբության բարձրացրեցին ևս ըստ իսկ Ուադի աթ-Քալաթ, Եսլինիսի զբաղի սմանդակություն ստացան Մուսիբ՝ Հանկին Եսաիր ազ-Չին իմադի, Հասան Զամրյատի և մի քանի այլ շնչիկիցի զեզերի Թ. Սալիբին մեղ ժանթ աշխատության մեղ (էջ 87—88) պնդում է, որ վերջիններս հավանաբար քաշակելով էին ամիր Բաշիրի գործակալների կողմից։ Իշխանապետը իրոք կարող էր շահագրգռված լինել շեղվածազր գրուզ շնչիկիցի ոչ միայն Մուսիբի հնուցմամբ, այլև եգիպտական իշխանությունների հետ նրանց հարաբերությունների ի սպառ վտաճարացմամբ։ Բաշիր զեզերում փաստ է, որ հենց այս կապակցությամբ եգիպտացիներից զենք ստանալով, ամիրը հարկազույգից իր որդի ծաղիմ հրամանատարության ներքև և անդանքին քաշածախթ քրիստոնյա Ջիրիս ազ-Չիրսի ստանդարտությամբ 4000 զինյալ մարտակալներին ուղարկել լեռա, եգիպտական զորքերի հետ միասին հնասպնդելու և ճեղչու ապստամբներին, մի կեղք ևս ավելացնելով գրուզ-մարտական փոխհարաբերություններում։



էր Հենց իրեն՝ լիբանանյան իշխանապետին, խառնափնթոր իրազարմություններին այդ օրերին իրականում երբեք էլ թարեհան չէր իր հպատակներին զինաթափելու փորձի նկատմամբ և Եուլենիսկ, ինչպես զեռ կահաններ, գաղափարաբար քաշայերում էր նրանց հակառակամտությունը զինաթափման հրահանգին: Եվ իրոք, ապստամբ լեռնականները, հունիսի 8-ով թվագրված իրենց մի կոչում ընդգծելով, որ եզրիպատկան իշխանությունների դեմ ավելի շուտ չեն ապստամբել օտարզապես քի հարգանքս իրենց իշխանապետի, քանի որ հույսեր են կապել Երբնց պատիվը, ազատությունն ու գոյությունըս պահպանելու հարցում նրա միջոցառումների հետ, ի հերքումն Սալիբիի պնդման, նշում են, որ Քաշիր II-ը սրբալուստեղանքներն և հայրենասիրորեն քաղմիցս միջամտել է կահիբի ներկայացուցիչների մոտ ու Հենց վերջերս էլ հանձն է առել մինչև կիլիկյան Տարսուս հոգնեցուցիչ մի ճանապարհորդութուն՝ Իրբահիմ փաշայից զինաթափման հրամանի վերացումը ձեռք բերելու, սակայն վերադարձել է Լեոնուսիայն, ասպանալիքների և նվաստացումների ենթարկված: Ռուսական հյուպատոս Քազիլին ևս Քելլուսից Պսիխ՝ իր վերադառ գնապանին հունիսի II-ին սուղարկած զնկուցադրում վկայել է, որ լիբանանյան իշխանապետը Իրբահիմ փաշայի հրամանը համարել է բանժամանակ և վտանգավորը, հետևաբար և անհրաժեշտ նախազգուշացումներ է վատարել ում որ հարկն է<sup>15</sup>: Ավելի ուշ շարագրված իր գրքում Քազիլին նաև արձանագրել է, որ ամիրը գաղանի նամակով (որն, ի դեպ, գաղանի չի մնացել և ասվել ու պատմվել է Լիբանան լեռան մի ծայրից մյուսը) փաշային հաղորդել է այն մասին, որ սչի կարող զիմել նման քայլի, որ լեռնականները չեն հանդուրժի այդպիսի վիրավորանքը... և կապստամբեն<sup>16</sup>: Լիբանանցի պատմաբան Ազել Իսմայիլն իր հերթին վկայակոչում է Քաշիր II-ի 1840 թ. մայիսի 31-ի նամակը եզրիպատկանների սիրիական զորախումբի սպայակույտի պետ Սուլեյման փաշային, որին ևս զգուշացրել է, որ Լիբանան լեռը բնման է մոխրի ներքո անթնդված կաշի և Հենց որ մեկն ու մեկը ձեռք տա, ապա քնդհանուր հրգեհ կրանկի<sup>17</sup>:

Հասկանալի է, որ այլևս հիմք չկա պնդելու, որ 1840 թ. մայիսի վերջերին ԵՊայր ալ-Կամարի բնակչությունը չէր պատրաստ-

<sup>15</sup> I. de Testa, Recueil des Traites..., t. 3<sup>e</sup>, 1<sup>er</sup> p. p. 74.

<sup>16</sup> К. М. Баэнэн, Сирия и Палестина..., стр. 190.

<sup>17</sup> A. Ismail, Histoire du Liban..., t. IV, p. 42.

վում առանց առարկութիւն ենթարկվելու ամիրի հրամանին<sup>18</sup>, և դա այն պարզ պատճառով, որ ամիրը ոչ թէ զինաթափման հրամանն էր արձել, այլ անհամբ ինքն իսկ եգիպտական իշխանութիւններից ստացել էր այդ հրամանը և քանի որ Լիբանան լեռան արաբաշահ տարածութիւն վրա սեղմված իշխանագետական քնակավայրի նահապետական միջուկը պաշտոն փոզոցի հետ հարաբերութիւն մեղ էր բազմաթիվ սողանցքներով, հրամանի մասին զիտեին և, հետևաբար, վրդովված էին բուրբուր Ընդհակառակը, ինչպես հազորդում է Քազիին, ի հեռուկա Երրաճիմ փաշայի սպանաւորների, ամիրի սգազանի գործակալները, նույնիսկ հարազատ սրդիները մասհույզ մազովրդին զուշացնում էին զինաթափվելուց<sup>19</sup>։

Իսկ ժողովուրդը մտահոգվելու որոշ հիմքեր ուներ։ Տակափին հունվար ամսին լուր էր հասել, որ Եգիպտոսում զորահավաքի էին ենթարկել նաև Կահիրեի բժշկական դպրոցում սովորող լիբանանցի պատանիներին և որ Քեյրութ մամանած մի շոգենափից համազգեստներ էին բեռնաթափում մարտնական լեռնականների համար։ Եվ քանի որ մտտիկ անցյալում զինաթափումը միշտ էլ սիրիացի մահմեդականների զորահավաքի նախահայտարարն էր եղել, զինաթափման մայիսյան հրամանը մարտնականներն ընդունեցին որպես նվիրագործված կարգի խախտմամբ (իրեն քրիստոնեյա, նրանք չպետք է ծառայեին մահմեդական պետութիւն կանոնավոր զորաբանակում) իրենց ևս պաշտօնական զինվորական ծառայութիւն կանչելու մտադրութիւն բացահայտի, մանավանդ որ Տրիպոլի և Քաալքայի մամանող եգիպտական նորանոր զընգեր կարծես թէ պատրաստվում էին Լիբանան լեռան քրիստոնեաքնակ հատվածը ացցանի մեղ վերցնելու Այսպիսով հենց իրենք՝ եգիպտական մի քանի հազար հրացաններ ստացած մարտնականները, անշուշտ ոչ առանց իշխանապետի նուանդուն քաշալերանքի, որոշեցին հակառակվել կենտրոնական կառավարութիւն կարգադրութիւնը և կանխել նրա մտադրութիւնների իրագործումը։

Մայիսի վերջերին ապստամբական կայծը բռնկեցնող զրդապատճառներին անդրադառնալով՝ Քազիին վկայել է, որ իշխանապետութիւն հպատակների շրջանում խոր հուզում է առաջ բերել քրիստոնեյաներին զորակոչելու եգիպտական մտադրութիւն

<sup>18</sup> К. С. Салиба, Очерки по истории Ливана, стр. 92.

<sup>19</sup> К. М. Базиля, Сирия и Палестина..., стр. 191.

մասին զրույցը և որ լեռնականները ժառանգ որևէ հիմնավոր պատճառիս են զենք վերցրել Մուհամեդ Ալիի դեմ<sup>20</sup>, Քիտնական դիվանագետն անկասկած գիտակցաբար է մոռացել, որ ինքն իսկ սրպես հյուպատոս հունիսի 11-ին Կ. Պոլսում սուլթան զեռպան Ա. Պ. Քուստենին հասցնազրած զազանի մի շեկուցազրում շեշտել էր, որ, քիշտ է, բլեռնականներն ամենից ազնի էրկուլուզ էին կրում զորակոչիկների հավաքազրումիցս, սակայն սվըստահորեն կարելի է ասել, որ սպասածրության շարժառիթ եղան ժանր հարկերը և եզիպտական իշխանությունների տարրեր հանցազորությունները<sup>21</sup>։

Ասենք, որ կարծես հավաստելով Ռուսաստանի հյուպատոսի անզնկազրի վերջին գիտազությունը, ամիր Քաշիրի որդի իշխան Ամիրին հունիսի 12-ին հանձնված իրենց գրության մեջ ապաստամբներն ընդգծում էին իրենց զժողոճությունը ոչ միայն զիտթափման և զորազրման մաազրութունից, նրանք դառնությամբ հիշեցնում էին նոր և ապօրինի հարկերը, հատկապես հանգուցլալների, նույնիսկ պատերազմի դաշտում զոճվածների համար պահանջվող ֆիրզան, նրանք հիշեցնում էին, նան, որ հարկահավաքման նպատակով ուզարկված եզիպտացի մուհասիլները իրենց ստեճարձակ են պահել զյուզերում, պատվազրիկն փոխատականների կանանց ու զուսարերին, ժանրից պիտիվայր կախել ու մարակահարել ընդզոզ ալրերին, ապրել շքավոր լեռնականների հաշվին, հարկերը վերցնելուց բացի զբաղվել զբաստների, հացահատիկի և այլ բարիքների բռնազրավմամբ<sup>22</sup>, նրանք առանկին զայրուլթով բողորում էին տարապարհակ այն ժանր աշխատանքների զեճ, որոնց բռնազրավել էր ազգարնակչությունը։ Բելլութից ոչ հետո գտեճվող կոռնայլում հայտնաբերված քարածխի հանքը շահազորժելու համար, օրինակ, բռնի հավաքազրել էին մերձակա բնակավայրերի բնակիչներին, նրանց ստիպել էին հայթայթելու աշխատանքային զործիքները, իսկական արժեքի քառօր զեճ՝ գերաններ ու պարկեր, իսկ աշխատանքի և հանքաքարի Բելլութ տեղափոխման համար շատ ցածր էին վարձատրել, բողջբողջներին զուհահարել ու անարգել տեղիպտական ֆելլահների նման՝ ժանտախտի համաճարակի կապակցությամբ լեռնականներին հար-

<sup>20</sup> К. М. Баажан, Сирях ж Палестина..., стр. 189.

<sup>21</sup> АВПР. ф. «Посольство в Константинополе», л. 701, л. 36.

<sup>22</sup> I. de Testa, Recueil des Traités..., t. 3<sup>e</sup>. 1<sup>er</sup> p., pp. 78-80.

կազմել էին համարյա երի կիր հայթաթիւ Եզ վերջապես, քար-  
տաշներին, որմնագիրներին և ընդհանրապես շինարար բոլոր  
բանվորներին հազարազրել էին հեռավոր վայրերում ազգական  
կառույցների վրա աշխատելու և վարձատրել ընդունված աշխա-  
տավարների քառորդ չափով միայն<sup>25</sup>։

Այս և այլ կամայականութունները, անշուշտ, անկախ այն  
հանգամանքից, թե ընդգծված իրադրությունը իր գույների թանձ-  
րությունը հավաստի՞ էր, թե ոչ, մասնահատուկ չէին կերանան  
լիսանը և այս կամ այն չափով կանոնի վերաբերված ու առավել հա-  
մառօրին զործադրվում էին Սիրիայի մյուս հատվածներում։ Այդ  
պատճառով էլ պատահական չէր, որ 1833 թ. վերջերին և 1840 թ.  
սկզբներին տարբեր վայրերում տարբերային հուզումներն աննա-  
խընթաց ուժգնությունը հաշորդում էին իրար<sup>26</sup>։ Եզ հիմ, ինչպես  
գիտուկ նկատել է Քաղիլին, աշնագրի հեղինակավոր մի անձնավոր-  
ություն, ինչպիսին Քաղիլ II-ն էր, երկակի խաղով տարված  
լլիներ և շիտաափեր ապատամբական շարժումն անձամբ նախա-  
ձեռնեկուց ու գլխավորելուց, ապա եզիպտական իշխանությունների  
զեմ իր զինյալ զիրքորոշմանն ամբողջ կերանան լիսան հետ կհա-  
րեր նաև սիրիական ազգաբնակչության զգալի մասը<sup>27</sup>, և կան-  
տում իրադարձություններն էլ անկասկած բոլորովին այլ բնթացք  
կստանային։

Անհրաժեշտ է ասել, որ իր ժամանակին Քաղիլին հանդես է  
բերել ավելի խորաթափանցություն, քան մեր օրերում Սալիբին,  
որը, ինչպես տեսանք, կարճ ու կտրուկ, իշխանապետին հննց

<sup>25</sup> Եւլի Ենզում։

<sup>26</sup> Եւլիլի 1821 թ. ապրիլին, Կաղալի շրջանի կազմ, բնիկ կրուսզեմ-  
քի Սալից Ալին հարաբարում էր. «Մուհամեդ Ալին քանիտում է Սիրիային  
տիրել ոչ թե ստրուկներին ազատագրելու, այլ իրեն նկատելի նոր ազգային  
ազատելու համար։ Ամառացած ու ազիբով Եզիպտոսն ուլլա ի վիճակի չէ  
բավարարելու իր տիրոջ ամենակուլ կարիքները, և հետևարա անհրաժեշտ են նոր  
հոգիք, նոր հզատակներ։ Ուրեմն Սիրիան փառչի որևէ է զանալու։ Սակայն կա-  
րել է կասկածել, որ Մուհամեդ Ալիի բռնաորությունը Սիրիայում տիրան  
հնչա անցել, որքան Եզիպտոսում։ Այնպեք, նկարի ափին, ժողովրդին վարում  
են թույլ հոսի նեան։ Լեքրուի, Ծրուսզեմի, Գալիլայի և կրանանի կրելում  
բնավ էլ համեստ հոս չկա։ Գն անհնազանց ու մարտունակ քան ընդր, որևեք  
լիանր ունեն որպես միշնարեք և որևեք համար հազիբական պատերազմը  
նախընտրելի է հազիբական Լեքումիքս (ան՝ «Correspondence d'Orient, par  
M. Michaud et M. Poujoulat, t. IV. Paris, 1834, p. 407.

<sup>27</sup> K. M. Вазули, Сирия и Палестина..., стр. 190.

սկզբից և առանց որևէ վերապահութեան զիրքորոշել է Մուհամեդ Ալիի նամբարում՝ ընդգծել ընդզգած լիբանանցիներին<sup>26</sup>,

Ո՞րն էր Բաղդիլիի ընդնշմարած իշխանապետական երկակի խաղը: Փորձենք պատասխանել այս հարցին:

Օսմանյան կայսրութեան շրջանակներում կային առանձնաշնորհյալ նրկրամասեր, որոնք հանգամանքների բարեբաւտիկ դատավորութեամբ յուրօրինակ ինքնավարութեան էին վայելում: Այդպիսի առանձնաշնորհյալ մի անկյուն էր նաև Լիբանան լեռը, որի ինքնավարութեանը, սակայն, որևէ պաշտոնազբով նվիրագործված շիխնով, գոյատևելու ոչ մի երաշխիք չունէր<sup>27</sup>, և իշխանապետն էլ, գտնվելով Աքոյի փաշայի ստորադրման ներքո, հարկազրկած էր ճկվել օսմանյան այդ աստիճանավորի կամքի ու հարկային ընդաքաղց կարգադրութեաննորի առաջ:

Որպես Մուհամեդ Ալիի երկարամյա հովանավորյալն ու նաև զորեղ աշակիցը ինչպես բուն Լիբանան լեռան սահմաններում, այնպես էլ հարևան սիրիական հողատարածքում, Բաշիր II-ը եզրկատական իշխանութեաննորից առաջին իսկ օրից ստացել էր իր հպատակների հետ կատարյալ ինքնակամութեամբ վարվելու լիազորութեան:

Ավելին, Բիկայայի հովիտը, Բաայրակի շրջանով հանգերձ, ոչ շատ վաղ անցյալում (1786 թ.), օսմանցիների կողմից խլվել էր իշխանապետութեանից և որպես սիրահիլիք շնորհվել Գամասկոսի փաշայի հեծելազորային զնդրի առաջնորդներին: Իբրահիմ փաշայի թողալութեամբ Բաշիր II-ը կարողացել էր վերջնականապես ձեռքը դնել Անգրիբրանանի հացահատիկային հարուստ այդ շտեմարանի վրա, այն ժառանգել և որպես ավառ բաժանել իր սահմակիցներին ու գրաժոններին, մեկընդմիջա իր սիրույթին կցելով նաև Տրիպոլիի փաշայի յուրացրած Զուբայի շրջանը<sup>28</sup>, Լիբանանյան անվավերագիր ինքնավարութեանը նվիրագործելուց, անձնապես հարկային հարցում ամեն մի կաշկանդումից հերքազատվելուց և հողային իր նվաճումներին հակառակամտող չգտնելուց բացի, ամիրը եզրկատական հովանավորութեանը օսմանյան

<sup>26</sup> X. C. Салтанов, Очерки по истории Ливана, стр. 95.

<sup>27</sup> O. Young, Corps de Droit Ottoman (Recueil des Codes, Lots, Réglements, Ordonnances et Actes les plus importants du Droit Interieur, et d'Études sur le Droit Coutumier de L'Empire Ottoman), vol. I, Oxford, 1905, p. 113.

<sup>28</sup> X. M. Бизман, Сирия и Палестина..., стр. 145.

գերիշխանութիւնից նախապատիվ Համարելու ուրիշ պատճառներ ևս ունենր:

1810-ական թվականների վերջերին իշխանապետը, ճիշտ է, հրաժարվել էր մահմեդականութիւնից և քրիստոնէութիւն ընդունել, իր որինակեղով վարակելով և՛ Շիհար տոհմի ամիրների մեծ մասին, և՛ Մամբնի տերերին՝ Արի Համա ամիրներին, սակայն թուրքերի ներկայութեան պայմաններում հարկադրված էր ոչ միայն գեթ երևութապես նրանց կրօնի կարգը պահպանել, այլև մշտապես մտավախ մնալ, քանի որ իսլամի որոնքով մահապատիժ էր նախատեսվում ժուրթատների՝ հազատուրացների նկատմամբ, մինչդեռ հազարաքի հարցում ազատամիտ եգիպտացիների համար ոչ մի նշանակութիւն չունենր, թե իրենց վասալներից ո՞վ ինչ կրօն է դաժանում<sup>29</sup>:

Իշխանապետը օսմանցիների հազանական վերադարձից ավելի քան մտավախ էր նաև այն պատճառով, որ նրանց առաջ մի շարք անզամենր հանցապարտ էր եղել նաև քաղաքական հողի վրտ և միշտ էլ կարողացել էր մի կերպ հետաձգել իր հետ տեսնելիք հաշվեհարդարը:

Եգիպտական վարչակարգի հարցում ամիրը ևերին-քաղաքական հետաքրքիր հաշվարկներ ևս ունենր: Խոշոր ու միջակ ավատապետների հետ հաշվեհարդար տեսնելու և երկրի կառավարման բոլոր լծակները իր ասի մեջ կենտրոնացնելու, տեղերում կարգելու կանոնը ամրապնդելու ճանապարհով առևարին ու արդյունագործութեանը զարկ տալու և իր առանց այդ էլ հարուստ գանձատուներ է՛լ ավելի ճոխացնելու համար ուղղակի հենվելով եգիպտական դինական ուժի աջակցութեան վրա, Բաշիր II-ը միտածանակ հակաժողովրդական ամեն մի քաղաքական խտտամիջոց ու հաշվեհարդար, առավել ևս հարկային ամեն մի անօրինականութիւն շտեմելված անպարարութեամբ շնտում էր արձանագրել սալ Կահիրէի լիազոր ատիճանավորների հաշվին և իրենից գեղի վերջիններիս կողմը վանել լիբանանյան շեռականների ցատումը:

<sup>29</sup> Արևելյան մահմեդական իշխանավորների համար անտարբեթաց ազատամրտութեամբ Իբրահիմ փաշան 1824 թ. ապրիլի 21-ին, սրինակ, իր 800 զինվորների հետ միացել է 10500 հայ ուխտավորների քաղմութեանը, նրուազեմի սուրբ Հարութիւն տաճարում ևերկու լինելու Հայոց պատրիարքի կողմից կատարվող սլուսաւանութեան արարողութեան (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգայատում, մաս երրորդ, նրուազեմ, 1927, էջ 2640—2641):

Տեղին կլինի մի փոքր կանգ առնել իշխանապետի հարկային անօրինակաբույութենների խնդրի վրա, քանի որ դա ևս որոշակիորեն կօգնի պարզարանելու 1840 թ. մայիսյան զինատ շարժման սկզբնավորման հանգամանքները:

Միբիայում և՛ զինվորական, և՛ քաղաքացիական հարցերի զերազույն լիազորը Իրրահիմ փաշան էր, սակայն քաղաքացիական վարչության բուն պետը Շերիֆ փաշան էր, իսկ ֆինանսական վարչության տնօրենը՝ Հաննա Բահրի բնյը: Առաջինին անմիջականորեն ենթարկվում էին քաղաքների և շրջանների մուսուլլիմները, որոնց նախագահության ներքո էլ զործում էին տեղական մեջլիսները: Երկրորդը, որպես ամբողջ երկրամասի և՛ հարկերի ու տուրքերի, և՛ բոլոր մեջլիսների ֆինանսական գործողությունների ամենազոր վերահսկիչը, առնվազն նույնքան շուք ու հեղինակություն ուներ:

ժամանակակիցները վկայում են, որ Հաննա Բահրին, հոմանցի կաթոլիկ, բառ ոմանց՝ ծագումով հայ, առանձին քուլտություն ուներ իր հայրենակից—գաղանակիցների նկատմամբ: Խորամանկ Բաշիր II-ը, քաշատեղյակ այդ քուլտությանը, արտադրություն և քուրքացիություն հռչակված հոմանցի կաթոլիկ Բուսրու Փարամին, որին Գայր ալ-Կամարում պահում էր որպես իր որդիների դաստիարակ և պալատական բանաստեղծ, եզրպատկան տիրապետության հենց սկզբին իր արքունիքի նախկին խոստովանահայր, հայ կաթոլիկների հոգևոր պետ Հակոբ—Փետրոս Հոլասյանի խորհրդով և անշուշտ ոչ-առանց հետին մտքի, իշխանապետություն քախիա կարգեց:

Ամիրի ամենազոր վարչապետը դառնալով և ամիրալության վարչական ու տնտեսական բոլոր գործերի ղեկը իր ձեռքն առնելով, հատկապես Հաննա Բահրի միջոցով Իրրահիմ փաշայի համակրությունն ապահովելուց հետո, Բուսրու Փարամին սկսեց արտակարգ բժանելզրությամբ հոգալ Բաշիր II-ի անձնական շահերը, չնոսանալով, իհարկե, անձամբ հարստանալու մասին: Ըստ որում այդ նաևապարհին նա կանց չեք առնում ոչ մի միջոցի, այդ թվում և՛ կաշառակերություն առաջ<sup>20</sup>, ժամանակագրերներից Ա. Լո-

<sup>20</sup> Ա. Լորանի հազարամյա ճյժ վարկասունը կորցնում էին պարտապանից իրենց դուստր տեղաներով Հանգրե ևս ստանալու հույսը. զիմում էին Քարամին: Քախիա, վարկասուրց կանիկ ստանալով ինչքա աստիս դուստրի կնք, պարտապանին հարկազրում էր թեկուզ կորնակվելու զեով նույն քն իսկ վնարկ իր պարտը (տե՛ս A. Laurent, Relation Historique des Affaires

րանն անշուշտ հիմքեր ունենք, երբ Քաշիբին և Քարամեհին հորջորջում էր արքանանյան ժողովրդին կպած ազրուկները<sup>21</sup>։ Նույնիսկ սկզբնազրյուրներին քաշածանոթ այնպիսի մի հեղինակ, ինչպիսին Ա. Արիմսկին է, կաթուղի Քարամեհի կողմից ուղղափառներին հալածելու քաղաքացիանությունն արգարացնելով հանգերձ, գտրձ անգամ չի անում շքմեղելու նրա հարկային քաղաքականությունն արնդհանրապես լիբանանյան ամբողջ ազգաբնակչությանը, հասկապես շքավորներին նկատամամբ։ Նա իրավամբ պնդում է, որ իշխանապետն ու նրա վարչապետը Եշառ սիրով շնորհաուշում էին եզրպատացիների ֆինանսական բնույթի պահանջներին, քանի որ նույնիսկ հիմն եզրպապական հարկերը չափավոր էին (իսկ դրանք իրոք էլ չափավոր էին), այպա լիբանանյան իշխանությունները հարկահաճաքի ժամանակ կարողանում էին կարգին լցնել սեփական գանձարկղը, նույնիսկ եզրպատացիների այլ բնույթի պահանջներից կարողանում էին նյութական շահույթ քամել լիբանանցիներին<sup>22</sup>։

Ասենք, որ վերջին հաշվով ինչպես ամբողջ Միջինասիայում, այնպես էլ լիբանանյան իշխանապետությունն շրջանակներում, եզրպապական հարկային քաղաքականությունը, Օսմանյանի հետ համամատած, մեղձ էր։ Միջինասիայում պահպանելով և խստիվ կարգավորելով օսմանյան ժամանակաշրջանի հիմնական հարկերը՝ խստաշրջ (հողահարկը) և զիբան (քրիստոնյաների և մոզրիսականների գլխահարկը), որպես նորամտություն եզրպատացիները հաստատեցին ֆիրզեն՝ առանց կրոնի ու դավանանքի խարսխան 16—60 տարեկան բուրբ աղամարդկանցից գանձվող հկամտահարկը<sup>23</sup>։

de Syrie depuis 1840 jusqu'en 1842. Statistique Générale du Mont Liban et Procédure Complète dirigée en 1840 contre les Juifs de Damas, vol. Ie, Paris, 1846, p. 10—11.

<sup>21</sup> Նույն անգամ, էջ 39.

<sup>22</sup> А. Е. Крымский, История новой арабской литературы (XIX—начало XX века), М., 1971, стр. 365.

<sup>23</sup> Յիրզեն շառ արենքի գանձվում էր հկամտի 1/12 չափով, Քաշիբի պրնքմամբ՝ չափորներին նվազագույնը 15, Նորտի պնգմամբ՝ 25 զուրուշ, իսկ ունեղրներին ուսովելագույնը մինչև 400 զուրուշ։ Օկամտահարկերից զերձ էին հոգեորականները, պետական ծառայողները և հյուպատոսներին ուղտարկողները։ Փաստորեն ֆիրզենից կարող էին զրգովձել մահմեդականները միայն, քանի որ ուրյաների հետ համահավաստեղջում էին, մինչ քրիստոնյաները, հասկապես աննար իսկները, հերթաղտաղելով իրենց հարտությունն օսմանյան շնչաքաղջ ուստիանավորներին քաղարկելու հարկաշրաներից և շահարկման աղառ ապարնկ նետելով իրենց դրամապայտները, զգուհելու հիմքեր չունեին։



Սահայն նույնիսկ այդ պայմաններում իշխանապետին, իր քա-  
խիայի օգնութեամբ, հաղորդում էր հավաքել քառապատիկ ավելի  
հարկ, քան նախատեսված էր եղիպտական իշխանութիւնների  
կողմից՝ 6500 քակի փոխարեն 25000 քակի<sup>34</sup>, Այդ բանին քա-  
խիան հասնում էր առանձին-առանձին հավաքելով և՛ հնամենի  
հողահարկը, և՛ XVIII դ. վերջերին ամիր Յուսուֆ Շիհարի կողմից  
նորամուծված գլխահարկը, և՛ եղիպտացիների հաստատած եկամ-  
տահարկը: Ըստ որում, ֆիրզին գանձվում էր ոչ թե խստիվ 16,  
այլ հանախ 12—15 տարեկանից սկսած<sup>35</sup>, այն էլ ոչ թե պաշտոնա-  
կան, այլ կամայականորեն զգալի բարձրացված դրույքներով<sup>36</sup>:

Եղիպտական իշխանութիւնները բնականաբար իմանում էին,  
որ իշխանապետը հարկային իր բոլոր անօրինականութիւնները  
ժողովրդի մտա փորձում էր արդարացնել սգիտեմ, որ ծանր է,  
սակայն այդպես է պահանջում իրրահիմ փաշանս ստապատիր  
չմեղանքով<sup>37</sup>, նույնիսկ Մուհամեդ Ալիի զորահրամանատար որ-  
դին այդ կապակցութեամբ բավականին կծու դիտողութիւն էր  
արել, սակայն Քաշիր II-ը առանց իրեն կորցնելու պատասխանել  
էր. «Պայծառափայլ փաշա, ես հարկադրված եմ այդպես վարվել  
մեր ընդհանուր հանգստութեան սիրույն: Մեր լեռան բնակիչները  
լիբանանյան շորիների սովորութիւնն ունեն և նրանց հետ էլ  
պետք է վարվել այնպես, ինչպես շորիների հետ... Մի՞թե մեր եր-  
թերի ժամանակ չեք նկատել... որ լիբանանյան շորիները կայանից  
կայան հանգիստ գնում են այն դեպքում միայն, երբ տեղական  
սովորութեամբ ուղիղ 80 բասման (շուրջ 1300 կիլոգրամ—Ն. Ն.)  
բննավորված են լինում: Պակասեցրեք բծուր, և նրանք ամբողջ  
ճանապարհին շարանհիութիւններ կանեն ու բծուր կզցեն, արտինգ  
կտան ու կրկնակի կհոգնեն»<sup>38</sup>:

<sup>34</sup> К. М. Вазилл, Сирия и Палестина..., стр. 145 (5 սկիզբ հավասար էր 500 զուրուշ կամ մեկ քակի):

<sup>35</sup> F. Perrier, La Syrie sous le Gouvernement de Méhémet-Ali jus-  
qu'en 1840, Paris, 1842, pp. 99—100.

<sup>36</sup> Զբաղմը գլուզացիներից 15—25 զուրուշ փոխարեն պահանջում էին 40  
զուրուշ, այլ խոսքով՝ զուրուշ բարձրացնում էին 80—160 տկոսով, մինչ ունե-  
վորներից 400-ի փոխարեն վերցնում էին 500 զուրուշ, այլ խոսքով՝ բարձրացնում  
էին միայն 25 տկոսով:

<sup>37</sup> А. Е. Крымский, История новой арабской литературы..., стр.  
366.

<sup>38</sup> К. М. Вазилл, Сирия и Палестина..., стр. 147—148.

Հարկազրգծած լինելով իշխանապետութիւնն և կառավար առանձնաշահաւոր վերաբերմունք ունենալ, ինչպէս նաև շահազրգրուած լինելով 6500 քսակը կանոնադրաբար ստանալու, եզրպատկան իշխանութիւնները մեականորին բաժարարվում էին ամբիբ ինքնաորոգարացմամբ: Ազիլին, պատերազմական նախապատրաստութիւնների հորձանքում ֆինանսական զգվարութիւնների մասնակցած և զստահ, որ Քաշիք II-ը կընգառաջի իրենց պահանջին, նրանք 1840 թ. իրանան լեռանը կարգազրել էին 3 տարվա հարկը կանխիկ մուծել գանձարան: Քախիան, այդ կարգազրութիւնը նոր անօրինականութիւնների, սոնվալն վաշխառուական իր տործարքների համար պարարտ հող համարելով փութացել էր, իբր անգորութիւնից, համաձայնել այդ պահանջի հետ<sup>39</sup>, հակադիպտական տրամազրութիւնների նոր բռնկում առաջացնելով լեռնականների շրջանում:

Ազելացեանք, որ տարապարհակ աշխատանքները ևս փաստորին Քաշիք II-ի և նրա վարչապետի համար ծառայում էին որպէս եկամտի յրացուցիչ աղբյուր ու հակահզիպտական կրքեր բորբոքելու հավելյալ միջոց: Վերհիշենք, թեկուզ, լեռնականներին այնքան վրդովեցրած կոռուպի ջարածիքի հանքի պարագան: Իրականում հանքի շահագործման համար Հաննա Քաշիքի բնի գանձարկզից Բուտրոս Քարամեխին բաց էր թողնված որոշակի մի գումար, որպէսզի հանքափորներին տրաջարք վճարվի: Քախիան գումարի հիմնական մասը փակել էր իշխանապետական գանձարանում և ջանում էր գործն առաջ տանել տարապարհակ աշխատանքների միջոցով, այս դեպքում ևս վկայակոչելով եզրպատկան իշխանութիւնների կողմից իբր թե տրված ինչ-որ կարգազրութիւն<sup>40</sup>:

Հարկային և այլ անօրինականութիւնների նախաձեռնութիւնը եզրպատացիների շուրջ բնեացնելով, Քաշիք II-ն իրականում ոչ միայն վահանազրվում էր իր հպատակների հազանական պոսթիման զեմ, այլև իրանան լեռան վրա որպէս ժողովրդական մասհազութիւն անգործեցուցիչ և անհնազանգութիւն փարատիլ՝ անհրաժեշտ և անփոխարինելի զեկազարի իր վարկն ու կշիռն էր մեծացնում կահիրի վերադասների ժող:

<sup>39</sup> A. Laurent, *Relation Historique...*, vol. I, pp. 8-9.

<sup>40</sup> Նույն տեղում:

Ամիրը չէր անգիտանում, որ Մուհամեդ Ալին ևս խաղում էր երկակի խաղ: Փսթորկահուլը ժամանակներում որպես աշակից ժամանակավորապես նրա զանր զորացնելով, Մուհամեդ Ալին միաժամանակ Քաշիբի զեմ կրթեր էր բորբոքում և աստիճանաբար ուժեղացնում անձնակազմ ազդեցությունը (իրանեան լեռան վրա<sup>41</sup>, Ազնիին, իշխանապետի նկատմամբ սիրալիրությունը բազմապատկելով, ևս նրա դեմ նախապատրաստում էր զորեղ մի հաղթաթուղթ՝ նասաման Ջումրլուտին, որը սուլթանական շնորհի արժանանալուց և ամիրից իր հոր՝ Քաշիբ Ջումրլուտի կալվածքները վերախլելուց հետո, առաջին իսկ օրից Իրբահիմ փաշային առաջարկել էր համանաշնել Քաշիբ II-ի զանընկեցությունն ու Շիհաբ սոհմից նոր իշխանապետի բնաբույժանք, փոխարենը խոստանալով զզալիսթեն մեծացնել Երկրից Կահիրե առաջվող հարկաչումարը: Ամիրն իր լրտեսների միջոցով իմացել էր այդ մասին, սակայն առանց դրան էլ չէր կասկածում, որ Միրիալի վրա Մուհամեդ Ալիի սոհմի ժառանգական իրավունքների համընդհանուր ճանաչում գտնելու օրն իսկ իր իշխանապետությունը կվերացվի<sup>42</sup> և շանում էր իր սիրույթում մտահուզությունն անպակաս անել և նորանոր գլխացածանքներ պատճառել եզիպտացիներին, որպեսզի մշտապես զզալի դարձնի իր անհրաժեշտությունը:

Իրանեանյան իշխանապետի համար զազանից չէր, որ ինչպես ինքն է մի կերպ հանդուրժում եզիպտացիներին, այնպես էլ վերջիններս նե մի կերպ տանում իրեն: Քաշիբին, որ այդ օրերին Բնյուսից ուշի ուշով հետևում էր իրադրությանը, այդ վեհակը լսով է պատկերել, գրելով. «Եթե մի կողմից ամիրի նկատմամբ փաշայի բարյալացականությունը հիմնված էր լով քաղաքական հաշվարկների վրա, ապա Մուհամեդ Ալիի նկատմամբ ամիրի նվիրվածությունը ևս ոչ նվազ չափով անձնական զրդապատճառներ ուներ: Ամիրը չէր կարող չկանխազգալ, որ իրադրության փոփոխության հետ իշխանասենյակ փաշան անպայման կկործաներ (իրանեան լեռան վրա իր շանքերով այնքան խնամքով կառուցված վարչակարգը և այն կհամարարժեք Միրիալի քաղաքական ընդհանուր վարչակարգի հետ: Ամբողջ ութ տարի շարունակ Երկու ծերունիները՝ փաշան և ամիրը այսպես խորամանկում էին մեկը մյուսի առաջ: Առաջինը լով Միրիալի վրա իր իրավունքների կարևորագույն

41 К. М. Вазел: Сирия и Палестина..., стр. 146.

42 Նույն տեղում, էջ 188—189.

հարցի լուծմանն էր սպասում՝ տապալելու համար իր սիրեցյալին, իսկ նրկորդը ձգտում էր իր ժողովրդին անվասահույթուն ներշնչել իր հովանավոր փառայի նկատմամբ և բարդացնել իրավիճակը, որպեսզի անփոխարինելի մնար և կիրանանի վրա իր ու իր տոհմի իրավունքը ավելի ամուր հիմքերով հաստատեր<sup>43</sup>։

Այս բուր հաշվարկներն այնքան ներգործուն էին, որ 1840 թ. զարնանը չէին կարող երևան չգալ։ Տասնամյա դազարից հետո պատերազմական գործողությունները հաճանարար շատ շուտով վերսկսելու էին, իսկ յիբանանյան իշխանապետը բուր գեպեթում բնմի վրա իր անզանցաձելի սեզն ու զերջ պետք է ունենար Գրա համար հարկ էր թույլ շտալ, որ լեռնականները իսպառ զինաթափվեին, ավելին՝ հրամայական անհրաժեշտություն էր իր հպատակներին մղել ցուցադրական զինված շնորհման, Եթե տեղի ունենար անցանկալիև ու եվրոպական արքունիքներն ամբողջ Միրիայի վարչակառավարումը ժառանգական իրավունքով զիջեին Մուհամեդ Ալին, ապա կիրանան լեռան խոտվրի ժաճալումը կանխելով ամիրը կհատնայեար փոխարքային, կրկին ապացուցելով, որ իշխանապետության շրջանակներում գժվար է առանց իրեն իրավիճակը խաղաղ ու կայուն պահպանել։ Գրա համար էր, անշուշտ, որ զինաթափման կարգադրությունից անմիջապես հետո, ամուսնացող ամպրուպի նախանշաններին հետևելով Բայթ աղ-Գինի իր պալատից, Բաշիր II-ը, ինչպես վկայում է ականատես և ականջալուր Բազիլին, 1840 թ. մայիսին սեննդ նաոերով բորբորում էր ժողովրդի կրքերը<sup>44</sup>, իսկ եթե եվրոպական արքունիքները սուլթանին զրզեին մերժելու նգիպտոսի փոխարքայի պահանջը, և զինաթափումը վերսկսվեր, ինչ որ ավելի հաճանական էր, ապա պատերազմական գործողությունների էլքից անկախ մայիսյան ժողովրդական ցուցադրական զինված խոտվրը զարնայի անհրաժեշտ էր իշխանապետին։ Եթե այս անգամ օսմանյան բանակը հաղողություն հասներ, ապա գժվար չէր լինի ցուցադրական զինյալ հուզմունքը անմիջապես փոխակերպել համաժողովրդական ապստամբության, զեկավարել այն և Մուհամեդ Ալին թիկունքից հասցված հարվածով շնորհակալություն որոնել Բարնբազույն Գուան մոտ և իր մեղքերը թաճել։ Իսկ եթե նորից հաղթանակեր նգիպտական բանակը, ապա նա չէր հապաղի ար-

<sup>43</sup> Աւյն սեզում, էջ 147։

<sup>44</sup> Աւյն սեզում, էջ 189։

յան մեջ խեղդելու իր իսկ մեղքով ու գրգամք շղթայազերծված շարժումը և դրանով ոչ միայն կարգաբացներ իր բացակայութիւնը սազմադաշտից, այլև թիկունքում մատուցած իր նշանակալից ժառանգութեան համար մեծապէս կպարտավորեցներ փոխարքային:

Այս հաշվարկները չէին կարող որոշակի գեր յիստալ 1840 թ. մայիսին Դայր ակամարի շրջանում շղթայազերծված զինված անզական շարժման գործում: Վերջին հաշվով մայիսյան շարժումը սկզբնական օրերին որևէ կերպ ուղղված չէր իշխանապետի անձի ու աթոռի դեմ, ավելին, այն նախ և առաջ շղթայազերծված էր Քաշիի II-ի անձնավորութիւնն էլ նվազագույնով և աթոռի հենարանները թուլացնող զինաթափման մասին կարգադրութեան դեմ: Եվ Քաշիի հունիսի II-ի իր զինանազիտական տեղեկագրում գրելով, որ Մայրալուսն հիմնավորված Մուլիյման փաշան և Դամասկոսից Սիրիան զնկավարող Եարիֆ փաշան տերկիրը խողացնելու կոչված միջոցառումները: Էշտորոշելու համար անընդհատ խորհրդակցում էին լիբանանյան իշխանապետի և հաշվի նստում նրա խորհուրդներին հետ, մի անգամ ևս սրատեսութիւն էր հանդես բերում, շարունակելով. «Այս իշխանը (Քաշիի II-ը—Ն. Ն.) և իր տոհմի բազմաթիվ անդամներ Մուհամեդ Ալիի իշխանութեանն իրենց հավատարմութիւնն են հավաստում, սակայն ամիր Քաշիի երկիմաստ կնքվածքը ներկայումս նպաստում է կառավարութեան աչքում նրան կասկածելի դարձնելուն և վատնող կա, որ եւ Լիբանանի վրա իր ամբողջ իշխանութեանից զրկվի»<sup>45</sup>:

Այժմ անգրագաստանք այն հարցին, թե աշխարհագրական ի՞նչ տարածք էին ընդգրկել խեղրտ առարկա զինված իւրիքները: Ասենք, որ ավելի հեշտ է թվարկել իշխանապետութեան կենտրոնական և հարավային այն շրջանները, ավելի շուտ բնակավայրերը, որոնք այս կամ այն աստիճանի գործունե, բայց ոչ համընդհանրական դիրքորոշում ունեցան ապաստարանական նպատակով, քան այն բնակավայրերը, առավել ևս շրջանները, որոնք սահմանափակվեցին միայն առանձին կամավորների կամ կամավորների փոքր խմբեր տրամադրելով շարժմանը: Բնութագրական է, որ ինչպէս Քաշիի II-ի իշխանապետական, այնպէս էլ նրա տոհմի ավատապետական հեղինակութիւնն ու ներգործութիւնը ավելի անմիջական էին բուն իսկ խոռվահույզ կենտրոնական և հարավա-

<sup>45</sup> L. de Testa, Recueil des Traité... t. 3<sup>e</sup>, 1<sup>er</sup>, p. 17.

լին շրջանների վրա, պարագա, որք չի կարող չհուշել իրազարմու-  
թյունների հեա Քաշիք II-ի ունեցած սերա ազերուր: Ի. Մ. Սմիլ-  
լանսկայան, ըստ հրեայթին ֆրանսիական հյուպատոս Քուրրինի  
ազլայների վրա հենվող Ա. Իսմաիլի քվարկած և ազելի քան 10  
շրջաններ (Շուֆ, Վերին Ղարթ, Զուրդ, Շահհար, Մունասիֆ,  
Ջիդզին, Մաթն, Քարաուտն, և այլն) ընդգրկող ապստամբական  
5 զլխավոր կենտրոնները ոչ լիարժեք համարելով, մասնանշել է  
միայն ու միայն 3 հիմնական կենտրոններ՝ Գայր ալ-Կամարում,  
Քաարգայի մերձակայքում և Քեյրուսի հարթավայրում<sup>66</sup>, Աշխար-  
հաշրական տարածքի սահմանափակությունից էլ ըիտում է ազրս-  
տամբների սկզբափոփոխությունը: Արձանագրելով հանդերձ աստ-  
կան հյուպատոս Քաղիլիի, ֆրանսիական հյուպատոս Քուրրինի և  
լիբանանցի ժամանակագիր աշ-Շիդիակի ազլայները, ըստ որոնց  
զինական շարժման ամենաշատը 2—5 հազար մարդ է մասնակ-  
ցել, Ի. Սմիլլանսկայան գրում է, որ ապստամբների ռազմական  
գործողություններին մասնակցեց շուրջ 5—7 հազար մարդ, և  
էզրակացանաւ. «Հեռուտար, ապստամբությամբ րանկված լին  
առնվազն 15—20 հազար քնակություն հաշվող շրջաններ»<sup>67</sup>, եթե  
շմոռանանք, որ առանց ժողկզբրյա և անգրիբանանյան խոշոր  
քնակավայրերի (Քեյրուսի, Տրիպոլի, Սայդա, Քասրթակ և այլն)  
լիբանանյան հարկատու տղամարդկանց թիվը, ըստ սկզբնաղ-  
բյուրների ազլայների<sup>68</sup>, ազելի քան 100 հազար էր, ապա էլ  
ազելի հասկանալի կզտոնա այն փաստը, որ 1840 թ. մայիս-հուլի-  
սյան շարժումները համալիբանանյան չէին կարող լինել: Ահհրա-  
մեշտ է նաև եշել, որ զինված շարժմանը նախահեռնարկ եղավ  
8—10 հազար քնակություն<sup>69</sup> հաշվող և լիբանան լիճան տևտրա-  
արդյունագործական հայտնի կենտրոն Գայր ալ-Կամարը, որի հա-  
մարյա մշտագո և իշխանապետի տարվել հուսայի հենարանն ու

<sup>66</sup> Հմմտ. И. Смиланская, Крестьянское движение в Ливане, стр. 64—65; А. Ismaïl, Histoire du Liban, t. IV, pp. 60—61.

<sup>67</sup> И. М. Смиланская, Крестьянское движение в Ливане... стр. 72.

<sup>68</sup> 85\* օրինակ, ... كتاب الشدياق، كتاب اخبار الاعيان...

من ٢٢٦

<sup>69</sup> С. В. Churchill, The Druzes and the Maronites under the Turkish rule from 1840 to 1860, London, 1862, p. 104; А. А. Рафаэлович, Записки русского врача, отправленного на Восток (Журнал Министерства внутренних дел\*, 1848, ч. 22, стр. 445).

աշակիցը հանդիսացող աշխարհագործ կորիզը կազմում էին՝ գլխավորապես առևտրականները, մանր արդյունաբերողներն ու արհեստավորները<sup>50</sup>։

Մայիսի 24-ից սկսած, երբ Դաշը ալ-Կամարից զորաշուկաուղարկվեց Նախ Մուստասիֆի և Շահնարի շրջանները՝ խափանելու տեղի ազգաբնակչությանից զինահավաքը, ապա և Զիսր աջ Ուլլա՝ փոսկիլու Մազդաշից գեղի Լիրանան լեռ թափանցելու հնարավորություն տվող միակ կիրճը, ապաստամբյան դրոշ պարզած՝ մարդիկ 5 օր շարունակ բացահայտորեն խուսափում էին եգիպտական զինվորների հետ բախվելուց, ընդհանուր առմամբ որևէ արյունահեղությունից<sup>51</sup>։ Այդ փաստը, որը կարող է վկայել Դաշը ալ-Կամարի զենավարների զսպվածությունը և սպասողականությունը, թույլ է տալիս գրանց հետևում անպայման նշմարել Բաշիր II-ի հեղինակավոր ձեռքը, քանի որ հարաբերաբար խաղաղ հեղափոխակից հետո Լիրանան լեռան շրջանակներից զուրս ապստամբական երկրորդ օջախի առաջացումը ևս որոշ իմաստով ազերպում է իշխանապետի անվան հետ՝ նրա գրածուներից Աբու Մամրա Ղաևեմի միջոցով։

Առևտրով հարստանալով Շիհար իշխանապետական տոհմի կալվածքների կտտավարիչ դարձած քարտաշի որդի Աբու Մամրան, ինչպես հաղորդում է նրան սլիթանական հերոսա համարող Խալիլ Լուսամա Ֆարիզը, մայիսի վերջերին սկսել է շրջել Բելլուսի գաշտավայրի գլուղական բնակավայրերում և մարզկանց կոչ անել միանալու ապստամբական շարժմանը<sup>52</sup>։ Նրա շուրջ համախմբված աշխարհագործ, ինչպես ենթադրում է Ի. Մմիլյանսկայան<sup>53</sup>, հիմնականում հավաքագրվել է հենց շրջանի խոշորագույն ազատատերերը հանդիսացող Շիհարների կալվածքների ինչպես մշտական, այնպես էլ օրավարձու աշխատողներից։ Ի դեպ, բնավ էլ պատահական պիտի չհամարել այն փաստը, որ սկսած Դաշը ալ-Կամարի մայիսի 27-ի երգման արարողությունից և վերջացած Անթիլիասի հունիայան բազմամրոխ հավաքություններով, ապստամբական բոլոր միջոցառումներին առևտրականների, մանր արդյու-

<sup>50</sup> طنوس الشدياق. كتاب أخبار آلعیان... ص ۵۹۰

<sup>51</sup> W. Polk. The opening of South Lebanon..., pp. 200—201.

<sup>52</sup> خليل همام فائر، ابوسمران غانم... ص ۴۴

<sup>53</sup> И. М. Смиданская, Крестьянское движение в Ливане..., стр. 66.

Նաքերոզների, արհեստավորների և գյուղացիների կողքին մասնակցել են նաև ֆեոդալական տոհմերից շատերի ներկայացուցիչներ, որ Շիհաբ և Արի Լաժա ամիրները, Արու Նակիտ, ալ-Խուրի, ալ-Իյազ, ալ-Խազեն և այլ շեյխեր իրենց կալվածքներից աշխարհազոր են հավաքել և եռանդուն մասնակցել շարժմանը<sup>54</sup>, վերջին հաշվով մայիսի 27-ի պլատֆորմի հիմնական հարցերը՝ հրամանագրված ղեկավարումը և զրան որպես հետևանք ակնկալվող քնդհանուր զորահավաքը, չէին կարող չհուզել ավատապետերին, որոնց անհատությունները, զրկվելով աշխատող ձեռքերից, բնականաբար նքայքայվեին։ Պատահական չէր, դարձյալ, որ շարժման էնդումից հետո ձերբակալված 57 ազստամբական ղեկավարներից 12-ը ամիրներ ու շեյխեր էին, իսկ մնացած 45-ն էլ, հենց իր Ի. Մմիլյանակայայի պնդմամբ, «բուրժուական տարրեր»<sup>55</sup>,

\*\*\*

1840 թ. մայիս-հուլիսյան իրադարձությունների հետ իշխանապետ Բաշիր II-ի տնայնի հարցը պարզաբանելուց հետո չի կարելի գեթ թուցիկ կանգ շտանել նաև մի այլ՝ մեր կարծիքով կարևոր, հարցի վրա։ Դա մեծ պետությունների և օսմանյան գաղափարության գործակալների որոշակի դերի ու մասնակցություն հարցն է։

Հայտնի է, որ Արևելյան Հարցը XVIII դ. վերջին փաստորեն ծնվեց ժամանակի հզորների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի՝ Օսմանյան կայսրության ստրկացված ժողովուրդների ազգային անկախության պայքարից օգտվելով սուլթանական տիրույթից տեսնական ու քաղաքական առավելագույն կենսահյուսթ քամելու մուտցրից։ Մրցամարտում չկայողանալով վեռական գերակշռություն ձեռք բերել, պետություններից յուրաքանչյուրը շանում էր պահպանել կայսրության գոյավիճակը և կանխել նրա մասնատումը՝ հարմար առիթով այն ամբողջությամբ սեփական գաղափ գարձնելու ակնկալությամբ։ Մարքսը և Զ. էնգելսը ոչ առանց հեղանակի գրել են, որ պահպանել թուրքիայում ստատու-թվոն նույնն է թե սփորձել մի որոշակի աստիճանի վրա կասեցնել սատկած ձիու դիակի ներսումը և կանխել նրա լիակատար քայքայումը<sup>56</sup>։ Հասկանալի է, որ գոյավի-

<sup>54</sup> ٥٩٣ من الشدياق، كتاب اخبار الاعيان...

<sup>55</sup> И. М. Смирнская, Крестьянское движение в Ливане... стр. 74.

<sup>56</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 5.



Ճակի ժամանակաշրջանն պահպանման հոգսը չէր կարող խան-  
գարել, որ Արևելյան Հարցի ծննդյան օրվանից իսկ անբուժյուննե-  
րից յուրացանչյուրն այս կամ այն կերպ, այս կամ այն լափով  
անձվի կայսրության շրջանակներում սարկացված ժողովուրդնե-  
րի օրյակով իրավիճակից քելագրվող պայթյունների հետ և ջա-  
նազանք ծառայեցնել առնվազն սուլթանից նոր զիշումներ կոր-  
չելու, սեփական ազգեցության ոլորան ընդարձակելու գործին:

Արևելյան Հարցի թասերարեմի մերձավոր-արևելյան արա-  
բական գոտում մա՛նու և կենաց գոտեմարտը հիմնականում մղ-  
վում էր կապիտալիստական զարգացման ուղու վրա առաջինը  
սոսք դրած Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Հենց XVIII դ. մայրա-  
ժուտին, Բոնապարտի բառերով սմահվան դատապարտված Օս-  
մանյան կայսրությունը առաջին հերթին ֆրանսիական բուրժուա-  
զիայի լքուղանսիայի օրյակուն էր:

Հակամարտության առաջին խաղափուլն սկսվեց 1798 թ. զե-  
պի Եգիպտոս և այնտեղից էլ զեպի Միքիա նապոլեոնյան զինար-  
շավով Աքալում, սահայն, Ահմադ Ջազզարի մամուլները, սուլ-  
թանական զորքերը և անգլիացի կոմսդոր Միզենյ Սմիթի նավա-  
խումբը համասեղ շանքերով տապալիցին ֆրանսիական ծրագրե-  
րի իրագործումը:

Առաջին խաղափուլում պարտված Ֆրանսիան կարճ ժամանակ-  
անց երկրորդում իր համար էլ անակնկալ կերպով Հաջողության  
հասավ: Մուհամեդ Ալին Եգիպտոսում իշխանության գլուխ ան-  
ցավ փաստորեն Անգլիայի կամքին հակառակ, Հայանի է, որ  
Եգիպտոսը նապոլեոնյան զինարշավից բազաապրիլուս Հարցում  
օգնելով սուլթանական կառավարությանը, Անգլիան ապա թի-  
կունք ավեց թուրքական-մամուլյան իշխանություններին՝ փոր-  
ձելու շախշախել Եգիպտական ժողովրդի պայքարը, պայքար, որից՝  
էլ օգտվեց Մուհամեդ Ալին, հայտնվելու համար իշխանության  
զազաթնակնաում: Մուհամեդ Ալին 1807 թ. նույնիսկ ռազմի գաշ-  
տում Եգիպտոս իր զեմ մամուլներին թեկավորելու համար Ալեքսան-  
դրիայի շրջանում ափ զուրա եկած անգլիական զորախմբին և ապա  
կատորեց թուրք-անգլիական ներթափանցման հենարան մամուլ-  
ներին:

Իշխանության գազաթնակնաում ամրագնդվելուց հետո իր  
սարենորոգությունները իրականություն դարձնելու համար հենվե-  
լով համարյա բացառապես Ֆրանսիայի վրա, Եգիպտոսի փոխար-  
ան ակամայից հավելյալ սրություն ավեց իր նկատմամբ Ալբի-

Եի թշնամանքին, որը ետք որակ ստացավ 1831 թ., այն բանի հետևանքով, որ Սիրիայի վրա եգիպտական զորիշխանության հաստատումը համազոր էր Մերձավոր Արևելքում Զրաեթայի դիրքերի ամրապնդմանը: Անգլիական իշխանավորները, որոնց համար կենսական հարց դարձավ ամեն զետիկ Մուհամեդ Ալիի հետ հաշվեհարդար տեսնելու գործը, համոզված էին, որ այնպես, ինչպես Սիրիայում եգիպտական տիրապետության հաստատումը նպաստավորվել էր Քաշիր II-ի և ընդհանրապես լիբանանյան լեռնականների բարյացակամ դիրքորոշումից, այնպես էլ այդ տիրապետության վերացումը կարող էր զգալիորեն փոփոխվել Լիբանան լեռան հակաեգիպտական պոսիվմամբ:

Ահա այստեղ է, որ պիտի որոնել 1840 թ. մայիս-հուլիսյան իրադարձությունների քաղաքական ետևամուտքի զլխավոր բունալին, ինչպես դա ժամանակին արել են Վ. Բ. Լույզին, Ֆ. Կազանը, Փ. Ս. Սալիբին և ուրիշներ: Ք. Սալիբին, որինակ, գրել է. «Արաբին քաղաքական ուժերը կարևոր դեր խաղացին 1840 թ. լիբանանյան ապստամբության հրահրման գործում»<sup>57</sup>,

1833 թ. մայիսի 4-ին, հակասուլթանական իր զինարքավում հաղթանակ տարած Մուհամեդ Ալին, մեալով շախաթիոված իր վեհապետի վասալը, նրանից մզիպտոսի, Արաբիայի, Սուդանի և Կրեանի վրա իր իրավունքները հաստատող, իսկ Կիլիկիան ու Սիրիան ցմահ իր կառավարմանը հանձնող մի ֆիրման ձևոք բերեց պարզապես (Փյոթահիայի պալատակիրը): Փոխարքան դժգոհ էր, անշուշտ, իրեն տրված փաստաթղթի ինչպես կիսա-պոստուլթանից, այնպես էլ միջազգային իրավունքի տեսակետից գրախախտությունից: Մտեղծված իրավիճակից, սակայն, առաջել գժգոհն Անգլիան էր: Ձևականորեն միատեսակ Օսմանյան կայսրության շրջանակներում գործնականում ստեղծվել էին հրկու ինքնուրույն պետություններ՝ Մահմուդ II-ի և Մուհամեդ Ալիի կայսրությունները: մրկորողում, որն ավելի ընդարձակածավալը, բազմարձակիլը, հարուստն ու հզորն էր, բացարձակ զերակչություն ուներ ֆրանսիական ազգեցությունը: Մյուս կողմից՝ Մուհամեդ Ալին ու միախ լուրջ խուլընդոս էր արևելյան Միջերկրականի բացարձակ վերահսկողությունը ձևոք բերելու անգլիական ձգտման առաջ, այլև սպառնալիք էր Արաբական ժոցում բրիտանական դիր-

<sup>57</sup> К. С. Селзбик, Очерки по истории Ливана, стр. 93.

քերին և Հնդկաստանի հետ նրա կապերի անվտանգութիւնը<sup>98</sup>։  
Հեռեւարար լոնդոնում պիտի Եզրիպոստի տիրակալի հետ հաշվե-  
հարդար տեսնելու ուղիներ որոնվեին։ Իսկ այդ ուղիներից մեկը,  
ինչպես նշեցինք, անպայման հանգուցվում էր Լիբանան լեռան  
հետ։

Պատահական չէ, որեւէն, որ շեյխաթ արզեն տեղում վխտա-  
ցող մեծաթիվ անգլիական գործակալներին, 1835 թ. 4. Պոլսի ան-  
գլիական դեսպանատան կցորդ Ռիշարդ Վուլը երկարատե հատուկ  
առաքելութեամբ Ատան ուղարկվեց, հիմնական առաջադրանք  
ստանալով Լիբանան լեռան մեծազոյնիկ իշխանապետին ամեն  
զեւով պահել Մուհամեդ Ալիից, հակադրել նրան ու խախտել վեր-  
ջինիս դիրքերը։ Վուլը, ինչպես վկայում են ժամանակագիրները,  
չվարանեց իր խաղաթղթերը բացել ամիրի առաջ, սակայն վերջի-  
նից սոսկ տարտամ ու խուսափողական պատասխան ստացավ։  
Առանց հուսալքվելու, նա դիմեց մի այլ Քաշիբի, Եախորդ իշխա-  
նապետ Յուսուֆի եղբոր՝ Կասեմի որդի և ազագա ամիր Քաշիբ  
III Շիհարին, որն իշխանապետական աթոռն ստանալու խոստ-  
մանը պատասխանեց անգլիացիներին հետ համագործակցելու և  
հակաեզրիպոստական զինված շարժումը զեկաժարելու հանձնառու-  
թեամբ<sup>99</sup>։

Վուլը շուրջ մի տարի զազանարեն և մեծ եռանդով մշակեց  
նաև զրուգ խոշորագույն և առաջել հեղինակավոր ավաապետե-  
րին, նրանց նախապատրաստելով իշխանապետի և եզրիպոստինե-  
րի դեմ վճռական ապստամբութեան նա լավ էր հասկանում, որ  
զրուգներին համար, որպես համայնքի, եզրիպոստական տիրապետու-  
թեան վախճանը պիտի նշանավորեր և՛ Մուհամեդ Ալիի գաշնակից  
ատելի իշխանապետ Քաշիբ II-ի տեկումը, և՛ իրենց հալածական  
շեյխերի վերադարձն ու նրանց իրավունքների ու հզորութեան վե-  
րականգնումը, և՛ մարտնական օրավուր ամրապնդվող գերակայու-  
թեան վախճանը, և՛ զորագրման վտանգի՝ վերացումը։

Հեռաքրքիր է այն հանգամանքը, որ անգլիական գործակալի  
հետ բանակցելուց բացի, զրուգական համայնքի զեկաժարները շո-  
շափվելու էին նաև իշխանապետի մարդկանց կողմից, արդեն  
1840 թ. գարնանային խառնակ օրերին, և ի գիտութեան էին ըն-

<sup>98</sup> В. Б. Луцкий и др. Новая история арабских стран, М., 1961, стр. 85-99.

<sup>99</sup> К. С. Саламбж. Очерки по истории Ливана, стр. 86.

դունելու իշխանապետի ամենազոր քախիայի՝ Ռուսրոս Փարամեի այն հավաստիքը, որ իրազրույթունից հազթական դուրս գալու ղեկաբում Քաշիբ II-ը պիտի զաղարեցնի իր հակազրուգական քաղաքականությունն ու պիտի ուշակցի Լիբանան լիտան շրջանակներում գրուգական ազգեցություն վերականգնմանը՝ առաջին հերթին պետական պաշտոնատաներում քրիստոնյաներին փոխարինելով գրուգ ուքքալներով<sup>60</sup>,

Անգլիացի Ռիչարդ Վուլը, որը, անշուշտ, ոչ պատահական ընտրություններ, կաթուղի էր, աշքաթող շարեց ևսև մարտնական համայնքին: Վերջինս եզիպտական իշխանություններից և Քաշիբ II-ից զգոհելու հիմքեր չունենալով, որոշ ղեկավար շրջաններից հրահրվող մի երազանք էր փայլեայում. տարանջատվել լիբանանյան իշխանապետությունից (որի քարերագույն ուրտներում կամ կաթուղիկացած ևախկին գրուգներն էին, ինչպիսին իշխանապետ Միհարն էր, կամ էլ հույն կաթուղիկները, ինչպիսին իշխանապետի քախիա Փարամեն էր) և ստեղծել սեփական-մարտնական իշխանապետություն<sup>61</sup> (Ջիրբաստ Բշարրիի, Բիլատ Բաթրունի, Ջուրայիի, Ջիրբաստ ալ-Մունայթրայի, Ֆութուհի, Փաթայի և Մաթնի շրջանակներում): Փաղատեղյակ մարտնական այդ երազանքին, ի շարս այլ առաջադրանքների ևսև մարտնականներին Տրանսխայից հիասթափեցնելու զծվարին առաքելություններ 1835 թ. Ասանն ուղարկված Վուլը 1840 թ. սկզբներին արդեն իսկ կարողացավ սիրաշահել մի շարք մեծազգեցիկ ղեմքերի, այդ թվում և պատրիարք Տուսուֆ Շորեյլին, քարերագույն Դուսև անունից խոստանալով եզիպտացիների արտաքսումից հետո ստեղծել մարտնական ամիրայություն՝ նշանակալից ինքնավարություններ և հարկային գրուգներին շտափելի նվազեցմամբ<sup>62</sup>:

Ավելացնենք, զերչապես, որ, արիիվային փաստաթղթերի վկայություններ, մարտի 24-ին սկսած ապստամբական խաղաղ հնգորյակից անմիջապես հետո, երբ Աբու Մամրա Ղաննեմի գլխավորությամբ ապստամբական երկրորդ և արդեն բռնկուն սջախը ստեղծվեց Բելլուսիի հարթավայրում, հենց այնտեղ էլ անմիջապես գաղտնորեն հայանվեց Ռիչարդ Վուլը և ղեկաված շարժումը աշխուժացնելու տգտին քարողություն մեծնարկեց՝ խոստանալով ան-

<sup>60</sup> A. Laurent, Relation Historique..., vol. 1, p. 39.

<sup>61</sup> К. С. С а з а б е, Очерки по истории Ливана, стр. 85, 91.

<sup>62</sup> Ասև սեղում:

գլխական գիւնական «ժանգակութիւն»<sup>63</sup>, Բնութագրական է, որ Բեյ-  
րութի շրջանի ապստամբական նամբարի զեկաժարներից մեկը  
անգլիական հյուպատոսարանի «թարգման» նույն թրատն էր<sup>64</sup>,  
որն իր գործընկերների հետ «տար, հատկապես հյուպատոսական  
շրջանակներում եռանդուն բացատրական աշխատանք էր կատա-  
րում հոգու ապստամբական շարժման»<sup>65</sup>։

Ի զեզ Բաղիլին, սրպես ցարական Ռուսաստանի գիւնականգի-  
տական շահերի նախնուն պաշտպան, օբյեկտիվ իրականութիւնը  
գնահատեց զնալու զնով իր աշխատութեան էջերում շանք չի խնա-  
յիլ հերքելու 1840 թ. մայիս-հուլիսյան իրադարձութիւնների վրա  
արտաքին ուժերի ներգործութեան փաստը, առաջին հերթին,  
«Թարմարդուն Դուան գործակալներին և անգլիացիներին ազգեցու-  
թյան» վերաբերյալ պնդումները, «Դա անհիմն է,—գրել է նա, ու  
շարունակել,—Այստեղի (Բեյրութի—Ն. Ն.) եմբողացիներից մի-  
այն ֆրանսիացիները, ում կատարութիւնն այնքան սրտանց  
Մուհամեդ Ալիի կողմն էր, գործուն համակրանք տածեցին սպրս-  
տամբների նկատմամբ, հայթայթեցին վառող, զեկաժարեցին նը-  
րանց գործողութիւնները և մասնակցեցին նրանց խորհրդակցու-  
թիւններին»<sup>66</sup>։

Բաղիլին, անշուշտ, տվյալ տողերը գրելիս ոչ այնքան  
անգլիական կամ թուրքական, որքան ցարական Ռուսաստանի  
գործակալների մասնակցութեան փաստն էր ջանում սրտելու «Եմ-  
բողայի ժանգարմի»՝ Նիկոլայ I-ի, զիւնժաժ միջամտութիւնն ու  
Հյունքար Իսկելեսիի պայմանագիրն էին, որ 1833 թ. սուլթան Մուհ-  
մեդ II-ին փրկել էին Մուհամեդ Ալիի առաջ խայտառակ կապի-  
տուլյացիայի նեթարկվելու վտանգից։ Նիկոլայ I-ն էր, որ Մլուն-  
խենզրացում Ավստրիայի կայսեր, ապա և Պրուսիայի հետ «Եմբող-  
տական փաշայի» հաճակնութիւնների զեմ կնքված գաղտնի պայ-  
մանագրի ներգործութեամբ 1839 թ. խափանել էր Իբրահիմ փաշա-  
յի հաղթական զորաբանակների ներթափանցումը Տաճրոսյան լեռ-  
ներից հյուսիս։ Եւ 1840 թ. գարնանը Սիրիայի ուղղափառների  
«Ետվանաժորի» ու պաշապանիչ իր գիրքերն «ամբայնզհիւ» ձգտող  
ցարի հոգևոր ու աշխարհիկ գործակալները, հասկանալիորեն չէին

<sup>63</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 701, л. 51.

<sup>64</sup> П. Успенский, Книга бытия моего. Дневники и автобиографиче-  
ские записки, т. III, СПб, 1896, стр. 192, 396, 440 и 598.

<sup>65</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 701, л. 36.

<sup>66</sup> К. М. Базилл, Сирия и Палестина..., стр. 191.

կարող հակաեզդիպական և հակաիշխանապետական տրամադրու-  
թյուններ շնորհիվ իր թվաշատութիւնը լիբանանյան քրիստոնէա-  
կան երկրորդ համայնքը կազմող հույն ուղղափառների շրջանում:  
Այս համայնքի ծագումը հույն հոգևոր և աշխարհիկ վերնախավը  
հանկին ցարական Ռուսաստանից հովանավորվող ու երան նրախ-  
տապարտ Բարձրագույն Գոան պիտի վերազաներ Սիրիայում կա-  
թոլիկութեան դեմ իր պայքարում հուսալի մի հենարան, մինչ  
ծագումը արար թե հույն հասարակ մահկանացու ուղղափառների  
հոսք պիտի ներբազաւմեր զովանական այն անշուքից, որին ուղ-  
ղութիւն էին տալիս Հաննա Բահրին և Բուտրուս Փարամեն: Վեր-  
ջինս, պնդել է նկղեցարկան մի տարեգրութիւն, այնքան բրտորն  
էր հալածում ուղղափառներին, որ շատերը շահակազգծեցին հա-  
րել կաթոլիկական հերձմածինս<sup>67</sup>, Բազիլին ևս, անշուշտ, ոչ ա-  
ռանց զունազարգման, զրել է, որ Շիհարեհրի օրոք կիբանան լի-  
նան ուղղափառները կաթոլիկ-մարտնականներից ավելի շատ գա-  
ժանութիւններ են կրել, քան Օսմանյան կայսրութեան մնացյալ  
հատվածներում քուն իսկ մահմեդականներից<sup>68</sup>, Չմտանանք եշել,  
որ ուղղափառ համայնքը, հատկապես նրա հունական շերտը, Սու-  
համեդ Ալիին՝ հունական ազատագրական շարժումը արյան մեղ  
խեղզողին, առնու ազգային-քաղաքական պատմապետներ ևս ուներ:

Հետաքրքրական է Բազիլիի գիտողութիւնը ֆրանսիական գիր-  
քորոշման վերաբերյալ: Ֆրանսիական հյուպատոսը, հակառակ իր  
կառավարութեան հրահանգին, որ շանա Եպսոսակ երկրի խաղա-  
ղեցմանը, բտերտ ու կասկածելի կապերի մեղ էր ապստամբների  
հետ և բուր միշտցներով օգնում էր նրանց, զրել է Բազիլին իր  
հյուպատոսական զննուցազրերից մեկում<sup>69</sup>, հետագայում այդ  
խեղրին վերստին անդրադառնալու համար. բնույն ինքը Բեյլութի  
ֆրանսիական հյուպատոսութիւնը, ի հեռուկս իր միևնաբարութեան  
քաղաքականութեան, ապստամբութիւնը բորբորեց այն անկա-  
լութիւնը, որ Երբահիմ փաշան, ի վիճակի չլինելով լիոնականնե-

<sup>67</sup> 56՝ А. Е. Крымскиѣ, История новой арабской литературы...  
стр. 363.

<sup>68</sup> К. М. Вазилѣ, Сирия и Палестина..., стр. 147. Պերֆրի Ուսլեն-  
սկին ևս իր ետմովներում ու զննուցազրում բնութեղը Հաննա Բահրին միտա-  
վոր ուղղակիք է ստեղծել (տ՛՛՛ս П. Успенскиѣ, Материалы, т. I, стр.  
248 и т. II, стр. 153).

<sup>69</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», д. 701, л. 48.

րին զենքի ուժով խաղաղեցնել, զհարկադրվի դիմել Զրանսիայի միջամտությանը և զրանով էլ Զրանսիան մեռք կրերի նոր իրավունք և ազդեցություն լիբանանյան ազգաբնակչության շրջանում, որի մեծամասնությունը կաթոլիկական տարրն է, Արևելքում ֆրանսիական քաղաքականության այդ զենքը՝ նույնիսկ եզրկատական զինվորների կողմից մի ֆրանսիացու հասցված վերազորանքի կուպակցությամբ հյուպատոսը հարաբերությունները խզեց անզական իշխանությունների հետ և զրոշը իջեցրեց։ Լիոնականները զու պատերազմի հայտարարություն համարեցին<sup>70</sup>։ Բազիլին այնուհետև ընդգծել է, որ ապաստամբությանը քաշալերողների թվում չպետք է մտնանալ միզվիա միսիոներներին, որոնք բնական էին շուրջ պղտորել և որոնք շատագուցեցին ու տարածեցին խռովությունը՝ հուսալով կրանանում կաթոլիկական անկախ իշխանապետություն հիմնել<sup>71</sup>։

Ի. Մ. Սմիլյանսկայան փաստորեն բնական է հայտարարել<sup>72</sup> ինչպես ռուսական հյուպատոսի, այնպես էլ ֆրանսիական հյուպատոս Բուրբեի պնդումը, որ հենց ֆրանսիական ճիզվիա միսիոներներին բնորոշումը ի հայտ եկան որսահմլիկ կաշիք, որոնցում լիոնականներն իրենց համար օրինակ էին հայտարարում ֆրանսիացիներին, համեմատում էին իրենց մակարայեցիների հետ, խոսում ազատության մասին, քարոզում ժողովրդական հավաքներ և մատնացույց անում հույներին, որոնք աստուծու օգնությամբ տապալել էին թուրքական տիրապետությունը<sup>73</sup>։

Իրազարմությունների ականատես և պաշտոնի բերմամբ նաև մասնակից երկու զինվանագնեսների հավաստման ստուգությունը բնավ կասկածելի չէ։ Պարզապես պետք է փոքր անել հասկանալու այն բնականությունը, որ առաջին հայացքից ակնբախ է ֆրանսիական կողմի դիրքորոշման մեջ։ Հարկ է նկատի ունենալ, որ Զրանսիան ապրում էր բուլղարյան միապետության ժամանակաշրջանը (1830—1848 թթ.), իրը լուի Ֆիլիպ Թագավորի կառավարությունն Արևելյան հարցում վարում էր մի այնպիսի քաղաքականություն, որից աչ ու մախ կանգնած էին ընդդիմադիր երկու զոր հոսանքներ՝ լեզիտիմիստները և հանրապետականները։

<sup>70</sup> К. М. Вазил, Сирия и Палестина..., стр. 191.

<sup>71</sup> Указ от 1831 г., № 122.

<sup>72</sup> И. М. Смиланская, Крестьянское движение в Ливане..., стр. 75.

<sup>73</sup> К. М. Вазил, Сирия и Палестина..., стр. 192.

1833 թ. փետրվարի 20-ին, երբ ցարական Նազատորմը սուլթանին փրկելու առաջադրանքով հայտնվեց Անգուցներում, ահաբեկ Անգլիան և Ավստրիան հարկադրաբար միացան Ֆրանսիային՝ Բարձրագույն Գուանը ստիպելով բավարարել հզիպտական փոխարքայի պահանջները և հնարավորություն ստանալ որոշ լափով թոթափելու ուսանկան ազգեցությունը: 1839 թ. երբ հզիպտական հաղթական զորախմբերը Լարից անարգել շարժվում էին դեպի Կոստանդնուպոլիս, արևմտյան մայրաքաղաքները ուսանկան բանակի ու Նազատորմի միջամտության հավանականությունից խուճապի մատնվեցին: Անգլիան Ֆրանսիային առաջարկեց համաանդ Նազատումը ուղարկել Գարգանել, սակայն Լուի Ֆիլիպի կառավարությունը խուճափեց ծանրակշիռ այդ քայլից: Ավստրիան առաջարկեց Վիեննայում համաժողով հրավիրել ու թուրքիան վերցնել տերությունների կուկտիվ հովանու ներքո: Մեծերնիխի նախահանույթումը հուլիսի 27-ին 5 տերությունները՝ Անգլիան, Ավստրիան, Պրուսիան, Ռուսաստանը և Ֆրանսիան միասնաբար հուշագրով հայտարարեցին, որ թուրքիային վերցնում են իրենց հավաքական վերահսկողության տակ և որ Բարձրագույն Գուանը պուանց իրենց վճար որևէ վերջնական որոշում չի կարող ընդունել: Անգրապուանայով իր երկրի գերբարոշման խնդրին, Ֆրանսիացի պատմաբան Ա. Գերիգուրը գրել է. «Համաձայնության հանգելը հեշտ չէր, և հույսեր քիչ կային: Լուիսյան կառավարությունը Մուհամեդ Ալիի կողմն էր, իսկ Ֆրանսիական ժողովուրդը, Անգլիայի նկատմամբ ատելությունից զրզված, ցանկանում էր, որ Ֆրանսիան ևս խնդրի նման փաշային հավատարիմ մեա: Ֆրանսիական կառավարությունը հուլիսի 27-ի հուշագրին միացավ միայն այն բանից զրզված, որ պուս շմեա եվրոպական համերդից, միամտմանակ հոգու խորքում համոզված լինելով փոխարքայի անպարտելիության մեջ»<sup>74</sup>:

Իրականում, եթե Ֆրանսիական արքունիքում որոշ զիջումներով նպաստավոր իրավիճակը պահպանելու և մյուս տերությունների համաանդ հակառի հեռ բախումից խուճափելու կողմնակիցներ կային և կառավարությունն էլ հարկադրված միաժամանակ այդ շրջանների գիծն էր ստաշ տանում, ապա հանրապետական գիժադրությունը, որի հայրենասիրական լողունները մեծ ներ-

<sup>74</sup> А. Дебриуэ, Восточный вопрос («История XIX века», под ред. Лависса и Рамбо, т. 4, М., 1938, стр. 347).



գործութիւն ունենի ժողովրդական զանգվածների վրա, միայն-  
տին ու կառավարութիւնը մեղադրում էր բնական երկշտու-  
թիւնն և Անգլիային բնական զիջումներն կատարելու մեջ:  
Միշտ է, որ ընդդիմադրական մյուս հոսանքը՝ լեգիտիմիստները,  
որոնք համախմբում էին հին ազնվականական և կղերական վերա-  
խափի որոշակի զանգված, ևսլեպես, բայց արդեն աչից, քննադա-  
տում էին արքայինքի քաղաքականութիւնը, սակայն երանց ազ-  
դեցութեան ուրաշ սահմանափակ էր: Երկրի քաղաքական կլիման  
էլեկտրականացնողը հանրապետականներն էին և վարչապետ  
Սուլիթը, գրութիւնը վերահսկել կարողանալու համար ոչ միայն  
նսյեմբերի 26-ին դիմադարձ կատարելով պաշտոնական հուշա-  
գրով Անգլիային հաղորդեց Ֆրանսիայի անհամաձայնութիւնը  
եզիպտական փոխարքայի որն է զիջմանը, այլ և 1840 թ. սկզբնե-  
րին հարկադրվեց աթոռը հանձնել բացարձակ անգիշող հուշակված  
Քիերին, որի ազգային զգացմունքը զգայիորեն ավելի ուժեղ էր,  
քան լուի Ֆիլիպինը<sup>75</sup>:

Մակայն ստահանաբար ավելի ու ավելի էր ուրվագծվում  
Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի համախմբու-  
մը լոնդոնյան այն բանակցութիւններում, որոնց ֆրանսիական  
զնայան Գիզոն մասնակցում էր ու թե հարցի լուծումը փութաց-  
նելու, այլ ձգձգելու համար, որպեսզի Քիերը ժամանակ ունենա  
սուլթանի և փոխարքայի զաղտնի համաձայնութիւնը զլուխ բն-  
րելու և մյուս տերութիւններին կատարված փաստի առաջ գնելու:

Ահա հենց այդ ժամանակ էր, որ լիբանան լեռան վրա պայ-  
թում էր մայիսյան զինված շարժումը: Ընարագոր է կոտհել, որ  
Քիերի զաղտնի խաղաթղթներին ծանոթ խորամանկ Փալմերստոնի  
զործակալների մասն անխուսափելիորեն պետք է որ խառնվեր  
այդ շարժմանը: Կարելի է նաև ենթադրել, որ մյուս տերութիւննե-  
րի հետ բախումը կանխարգելելու և հանրապետական ձախ ընդ-  
դիմադրութիւնն էլ զանգվածների վրա ներգործելու հար մի զնն-  
քից զրկելու հարցում խորապես շահագրգռված մազդիկ, արքունի-  
քի շափավորականները լինեն դրանք, թե աչ ընդդիմադրականնե-  
րը, Փարիզից կարող էին ներգործել Լեանտի իրենց համախոհների  
վրա, որպեսզի վերջիններս անզում բորբոքեն հակաեզիպտական  
արամադրութիւնները և փութացնեն սուլթան-փոխարքա վեճի  
զորդյան հանգույցի լուծումը: Ի զեպ, անհերքելի փաստ է, որ Քել-  
րութիւն և ընդհանրապես լիբանան լեռան վրա ֆրանսիացիների

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 248.

չրչանում ազնիւ մեծաթիւ էին ինչպես ազնվականական ծագմամբ, այնպես էլ հոգևոր ծառայութիւններ այն մարդիկ, որոնք ՎՄուհամեդ Ալիին համարում էին նշխարաբար Բուսպարի հոգևոր ծառանդորդը<sup>76</sup> և որոնք անկասկածելիորեն երկյուզածութիւններով պիտի արձագանքեին Փարսիէից՝ արքունիքի շահաւարականներից թէ աչ ընդդիմադրութիւնից եկող հորդորներին: Բազիլին իր աշխատութիւն էներում, հոգ չէ թէ անտեղի և ազնիւորգ ծագումով, ներկայացրել է այդպիսի մի ֆրանսիացու, իր տոհմաբանութիւնը խաշակիրներին ու անհայտ զննվար Գոզըֆրուա զը Բուլլոնից սկսող երիտասարդ կոմս Օնֆրուային, որն իր ամբողջ հարստութիւնը գործի լծելով և սրբ յուրաքանչյուրին Յ զուրուշ զնարելով իր շուրջն էր հավաքել 2—3 հազար զինված լիբանանցիների ու նրանց՝ կզիպաացիների զեմ պայքարի գուրս բերելու համար նշանակել էր ծագմամբ եմբոպացի սշտարի պետ, շտարի հերթապահ սպաներ և համհարզներ<sup>77</sup>:

1840 թ. մայիս-հուլիսյան անցուդարձերի ետևում արտաքին ուժերի ներգործուն ձեռքի առկայութիւնը մի վերջին անգամ ընդգծելու համար վկայակոչենք անվանի արարազետ Վ. Ք. Լուցիուս. «1840 թ. մայիսին Ֆրանսիան, գործելով հակահեղափոխական կոալիցիա կազմած չորս անբուխութիւնների թիկունքում, զուրս բերեց Քուրդիայի և նշխարաբար միջև համաձայնութիւնը, որով սուլթանը Մուհամեդ Ալիին որպես ժառանգական տիրուպետութիւն տալիս էր նշխարաբար և Սիրիան: Պետութիւնները որոշեցին ձախաղել այդ համաձայնութիւնը, նրանք յայնորին սպառազորներին Սիրիայում և Պաղեստինում տիրող դժգոհութիւնը և մի շարք ապստամբութիւններ բարձրացրեցին կզիպաացիների զեմ: Առանձնապես խոշոր եղավ 1840 թ. մայիսին Լիբանանում բռնկված ապստամբութիւնը<sup>78</sup>»:

Այս բուրդից զժվար չէ կըրակացնել, որ, հիշա է, կզիպաական իշխանութիւնների սոցիալ-տնտեսական (հատկապես սոմանյան կառավարութիւն զեմ մղվող պատերազմական գործողութիւնների պայմաններում անցկացվող) միջոցառումները բավականին խորը դժգոհութիւն էին առաջ բերել լիբանանյան ժողովրդի շրջանում, սակայն այդ դժգոհութիւնը հակահեղափոխական զինված

<sup>76</sup> X. C. Салиж, Очерки по истории Ливана, стр. 85.

<sup>77</sup> К. М. Вазили, Сирия и Палестина..., стр. 192.

<sup>78</sup> В. Б. Луккин, Новая история арабских стран, стр. 101.

ազատամբության նախադրյալի զերանց իշխանապետ Քաշիբ II-ի կողմից արհեստականորեն խորացվելու հետևանքով միայն Մյուն կողմից, բուն իսկ ազատամբությունը, որ շղթայագերծվեց ամիրի որոշակի ներգործությամբ և որին մասնակցություն բերեց լիբանանցիների մի փոքր հատվածը միայն, տեսանելիորեն կրում էր արտաքին ուժերի նուանդուն քարոզչության գրոշմը:

Е. О. НАДЖАРЯН

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВОССТАНИЯ В ЛИВАНЕ В МАЕ—ИЮЛЕ 1840 г.

### Резюме

Социально-экономические аспекты этого восстания достаточно широко освещены как в советской (И. Смелянская), так и в зарубежной (А. Исмаиль, Ф. Казань, К. Салиби и др.) историографии.

В статье рассматриваются политические аспекты восстания 1840 г. Социально-экономические мероприятия, осуществленные египетскими властями в Ливане, вызвали недовольство народных масс, переросшее в антиегипетское восстание. Этому в немалой степени способствовала политика эмира Башира II. Показана также деятельность агентов великих держав в османском правительстве, поощрявших и поддерживавших ливанское восстание в своих целях.

بغيا تجاريان

بعض قضايا انتفاضة مايو—يوليو 1840 في لبنان

(ملخص)

ان النواحي الاجتماعية والاقتصادية لهذه الانتفاضة موضوعة  
بإسهاب في التاريخ السوفياتي (ايرينا سميليانسكايا) وفي  
التاريخ الاجنبي ايضا (عادل اسماعيل فواد قازان وكمال  
صليبي).

هدفنا من هذا المقال ايضاح التواحي السياسية لانتفاضة  
عام ١٨٤٠. ويؤكد المقال على ان التدابير الاجتماعية  
والاقتصادية التي اجرتها السلطات المصرية في لبنان قد اثارت  
نقمة الجماهير الشعبية، مما ادى لقيام الانتفاضة المعادية  
للمصريين. وقد مهد الامير بشير الثاني لهذه الانتفاضة  
لمجيدا لاغنى عن ذكره. هذا وينوه المقال بنشاط عملاء الدول  
الكبرى والسلطنة العثمانية، الذين اهتموا بامر ضعفة مواقع  
محمد علي، فشجعوا ودعموا الانتفاضة اللبنانية.

ՍԻՐԻԱՆԻ ՀԱՅ ԿՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ XIX Գ. ԿԵՍԵՐԻՆ—  
XX Գ. ՍԿՋՐՆԵՐԻՆ

XIX Գ. 40-ական թվականներից Սիրիան և Լիբանանը ներքաշվեցին Համաշխարհային կապիտալիստական շուկայի ոլորտը, իսկ հետագայում դարձան օտարերկրյա կապիտալի արտահանման սուպարեզ, Վ. Ի. Լենինը գրել է, «կապիտալի արտահանումն ազդեցություն է գործում կապիտալիզմի զարգացման վրա այն նրկերներում, ուր ետ ուղղվում է՝ լատիպական արագացնելով այդ զարգացումը»<sup>1</sup>։ Զգալի լատիպ զարգացավ արտաքին առևտուրը, հիմնադրվեցին բանկեր, վարկային հաստատություններ, ցամաքային ու ծովային օրհնապարտի գործակալություններ, մեծացավ արտահանվող հումքի և ներմուծվող արդյունաբերական ապրանքների ժափալը։ Ավանդական արհեստներն անկում ապրեցին, երևան հեկան հումքի աարքեր տեսակներ նախնական մշակման ենթարկող մանուֆակտուրաներ, որոնք, աննշան բացառությամբ, պատկանում էին օտարերկրյա, հիմնականում ֆրանսիական կապիտալին համ էլ ենթարկված էին երա վերահսկողությունը։ Սակայն կապիտալիզմի տարրերը լկարողացան ֆեոդալական մամուր կեղևը պատռել և ընդգրկել արտադրության բոլոր բնագավառները։ Չնդալիզմը ըավական խոր արմատներ ուներ հասկապես գլուղում, թեև ապրանքային հարաբերություններն ազելի ու ազելի էին զարգանում գլուղատնտեսության մեղ։

Փորձենք ալդ հարաբերությունների ընդհանուր ֆանի վրա ներկայացնել հալ աշխատավոր գլուղացիության սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը Սիրիայում։

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկր, հ. 22, էջ 221։

Միրիայի հայ գյուղացիությունն պատմության հարցերին եվիր-ված հետազոտություններ առճաստարակ չկան ո՛չ մեզանում, ո՛չ էլ արտասահմանում: Միրիայի հայկական գաղթաշահների պատմու-թյունն ուսումնասիրող սփուռքահայ հեղինակները՝ Ա. Սյուրմեյա-նը<sup>2</sup>, Ա. Մանչյանը<sup>3</sup> և ուրիշներ, հակվելով գլխավորապես ազգային-եկեղեցական, մշակութային, մասամբ էլ առևտրատնտեսական հարցերի վրա, համարյա աշքաթող են արել սիրիահայության հիմ-նական զանգվածը կազմող գյուղացիությանը: Թեև նրանց աշ-խատություններում զգալի քանակությամբ նյութեր են կուտակված Հյուսիսային Միրիայի հայաբնակ գյուղերի վերաբերյալ, սակայն գյուղացիության վիճակի բացահայտման հարցը չի մտել նրանց խեղդի մեջ: Օտար հեղինակները հաճախ են անդրադարձել Միրիա-յի գյուղացիության պատմության հարցերին, սակայն, հաշվի չառ-նելով ազգային ու կրոնական պատկանելիության դերը գյուղացի-ների հարստահարման գործում, երբեմն առայ էն քաշել այնպի-սի տեսակետներ, որոնց ստվերի ներքո ազավազվում է նաև հայ գյուղացիության սոցիալ-տնտեսական և քաղաքական դեմքը: Այս-պես, օրինակ, արաբ տնտեսագետ է. Գաննաթեն փորձում է ցույց տալ, որ իբր Միրիայում մահմեդական և քրիստոնյա գյուղացի-ները հավասար շահով էին նշվում ու կեղծքով<sup>4</sup>, հաշվի չառնե-լով այն լրացուցիչ հարկերն ու պարհակները, որ գրվում էին քրիստոնյա, այդ թվում հայ, գյուղացիության վրա: Այդ թյուր կար-ծիքը վաղուց ներթափանցել է նաև եվրոպական պատմագրության մեջ<sup>5</sup>:

Օսմանյան տիրապետության ներքո Միրիան արոճված էր մի շարք վարչատնտեսաբան միավորների՝ Հալեպի, Միրիայի, Բնյ-րութի վիլայեթների կամ նահանգների և Գեյր էլ-Ջորի մուֆասս-րիֆաթի, որոնք իրենց հերթին բաժանված էին ավելի փոքր միա-վորների՝ սանջակների, կազաների, նահիենների: Ընդարձակվելով Կիլիկիայի, Միջագետքի և Պաղեստինի հաշվին, դրանք գրավում էին շուրջ 1/3-ով ավելի մեծ տարածություն, քան այսօրվա Մի-

<sup>2</sup> Ա. Սյուրմեյան, Պատմության Հալեպի հայոց, Է. Յ. Փարիզ, 1950:

<sup>3</sup> A. K. Sanjian, The Armentan Communities in Syria under Otto- man Domintion, Cambridge, 1965.

<sup>4</sup> E. Gannagé, La Réforme des impôts directs au Liban et en Syrie, Beyrouth, 1947, p. 259.

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Н а н т, Революционные переворот в Турции, М., 1914, стр. 44.

րիան՝ և ներկայացնում էին տարբեր ժողովուրդների ու կրոնների մի խնամակար: Զանազան ազգութիւնների (արաբ, քուրդ, շերքեզ, քուրբ, քուրբմէն և այլն) պատկանող մահմեդականները քրիստոնյաների (արաբ, հույն, ասորի, հայ և այլն) նկատմամբ ունեին թվական գերակշռութիւն՝ Յ:1 հաշվով:

Միջիայի հայերի վերաբերյալ պահպանվել են սոսկ կցկտուր վիճակագրական տեղեկութիւններու Մակայն ներքոհիշյալ աղյուսակում ամփոփված տվյալները<sup>7</sup>, ակնկերտորին պահասավոր լինելով հանդերձ, կարող են մոտավոր պատկերացում տալ նրանց թվաքանակի և տեղաբաշխման մասին:

Հայաբնակ վայրեր	1870—1890-ական թվականներ		
	Հայերի ընդ. թվաքանակը	Ժողատեղիքի բնակչութիւնը	Յլուզական բնակչութիւնը
1	2	3	4
Կարեղի նահանգ <sup>8</sup>			
1. Հայեզ քաղաք . . . . .	8.000	8.000	—
2. Այնքառնդընթի կազա . . . . .	8.700	700	8.000

<sup>7</sup> Հայեզի նահանգը ուներ 78.000, Սիրիան՝ 100.000, Քիլիկիա՝ 30.500, Գնըր և-Ջորի մարտարկիթաթը՝ 100.000, շեղամենը, 309.000 կմ<sup>2</sup> տարածութիւն: Այլուր՝ Միջիայի տարածութիւնն է 185.000 կմ<sup>2</sup>:

<sup>8</sup> Հաշվումները կատարել ենք ըստ հետևյալ աղբյուրների. «Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 24.VI.1887, «Մասիս», Կ. Պոլիս, 22.XI.1879, 2.I.1880, «Երուզանդեան», Կ. Պոլիս, 12.XII.1901, 18.VI.1906, ԳԱԹ-ի արխիվ, Դ. Ք. Ազատյանի ք. 2, Վ. 45-Ա. Սյուրբեյան, Պատմութիւն Հայեզի Հայոց, Է. 3, էջ 334, Ս. Լ. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մէջ, Քիլիկիա, 1921, էջ 444, 445, 449, 451, 452—457, Մ. Քեթիկյան, Զմայտու Հայ վանքը, Քիլիկիա, 1949, էջ 78, Ա. Քեթիկյան, Յնապ, Քիլիկիա, 1956, էջ 80, 79, E. Chantre, De Beyrouth à Tiflis, Paris, 1892, pp. 11 & 32 V. Cuinet, Syrie, Liban et Palestine, Paris, 1896, pp. 82, 162, 307 & 394-La Turquie d'Asie, Paris, 1892, pp. 193, 201—202, 214, 221—222. Կրկնէ ամլայնները վերջում լինելով հիմնականում թուրքական սալնամեներէք, կրում են միտումնազոտութիւն փեր: Այդ պատճառով, նրանց գիծէ ենք միայն իրա տներտնէտութիւն գեպրում: Աղբյուրներում Հայերի թվաքանակն երբեմն ճշմտ է ըստ շերքի, երբեմն էլ ըստ տների: Ընդունված ստորութիւն համալայն յարաբերչութիւն թաղաքային տանը հաշվել ենք 5, Յլուզականը՝ 10 լույն:

<sup>9</sup> Աղյուսակում լինչ ընդգրկել Հայեզի նահանգի կազմում գտնվող, բայց պատմաաշխարհագրական առումով կրկնիայի մաս կաղծող Մարաշի և Ուրֆայի տնէտնէտութիւն Հայերին, սակայն տներտնէտութիւն գեպրում այս կամ այն լուփով տեղաբաշխել ենք նաև նրանց վիճակին:

1	2	3	4
2. Քեյլանի կազմ . . . . .	5,310	3,000	2,310
4. Անտիոքի Ե . . . . .	37,784	3,784	34,000
5. Զոր Եււզրի Ե . . . . .	2,000	—	2,000
6. Արթուրի Ե . . . . .	3,000	2,000	1,000
7. Քիլիսի Ե . . . . .	4,000	1,000	3,000
<b>Միրիայի նահանգ</b>			
1. Գամակուս քաղաք . . . . .	1,500	1,500	—
2. Համա և Հոմս . . . . .	5,000	6,000	—
<b>Քեյրուքի նահանգ</b>			
1. Քեյրուք քաղաք . . . . .	750	750	—
2. Հատակիս . . . . .	1,600	1,600	—
3. Արամո, Մարշալուս և ալլ զյուզեր	2,131	—	2,131
4. Գեյր էլ-Ջորի մուքաթարիֆաթ	450	450	—
<b>Ընդամենը . . . . .</b>	<b>81325</b>	<b>26784</b>	<b>52441</b>

Ազյուսակի ավայաները ցույց են տալիս, որ հայեր կային Միրիայի բոլոր նահանգներում, սակայն նրանց հիմնական զանգվածը հաստատված էր Հալեպի համաևսուն սանջակի տարրեր կազաներում<sup>9</sup> և նահանգի վարչատնտեսական կենտրոն Հալեպ քաղաքում։ Ուշագրավ է, որ Հալեպի սանջակում հայ գյուղացիությունը քաղաքարևակների նկատմամբ ուներ թվական զգալի գերակշռություն։ Նրանց միջև թվալին հարաբերակցությունը մոտավորապես 2:1 էր, այն դեպքում, երբ մյուս նահանգներում քաղաքարևակներն անհամեմատ ավելի խոշոր թիվ էին կազմում, քան գյուղացիությունը։ Այդ պատճառով, քննվող հարցերի մեծագույն մասն ուղղակիորեն առնչվում է Հյուսիսային Միրիայի կամ աշուպես կոչված Հալեպի նահանգի համաևսուն սանջակի հայ գյուղացիության հետ։

Միրիայում ողջ գյուղացիությունն ապրում էր համաաարած թշվառության մեջ։ Սակայն սխալ կլիներ րացարհակ կերպով նույնացնել մահմեդական և քրիստոնյա գյուղացիների վիճակը։ Մահմեդականների ակնը, սեփականությունը և պատիվն ան-

<sup>9</sup> Հալեպի սանջակի մյուս կազաների՝ Լարնի, Իլլիբի, Մուարաի, Բաք-Ջերաի, Էրեկ-Սեմաանի, Մեմրիբի, Թակկայի հարերի թվաքանակի վերաբերյալ չեզ հայտնի աղբյուրներում ավայաներ չկան։



ձեռնմխելի էին: Բացի այն բոլոր կեղեցումներից, որոնց ընդհանրապես նեթարկվում էր գյուղացիութունը, քրիստոնյաները հարբատահարվում էին եւս որպէս անհազարտ՝ գյաղուր:

Քուրքիայի անհազարտներիս նման Սիբիրիայի քրիստոնյաները եւ գանձում էին իրազգուրդ վիճակում և չէին կարող ապավինել օրենքի պաշտպանութիւնը: Դատարանում ամբաստանողի էր խոր միջնադարից կեղծ այն համոզմունքը, որ մահճեղականի և քրիստոնյայի հարաբերութիւնները չեն կարող սարքեր լինել ստրկատիրոջ և սարունկի հարաբերութիւններից:

Մինչև նիզամական կամ այսպէս կոչված արգիական դատարանների հաստատումը քրիստոնյաների անշարժ գույքի, ամուսնական, ժառանգութեան, դավանանքի վերաբերյալ գործերը վճռվում էին շարիաթի դատարանում, որի հիմքում ընկած էին Ղուրանի դոգմաները, մուֆթիների ֆեթվաները և մահճեղական ավանդույթները: Նիզամական դատարանները զեկավարվում էին դուստուրով, որը քուրքական և եվրոպական օրենքների մի յուրօրինակ խառնուրդ էր: Դատավարութեան պրոցեսը, ընթանալով ազգային ու կրօնական խարականութեան պայմաններում, ժառայում էր մահճեղականների և քրիստոնյաների միջև թշնամութեան սերմանմունք:

Ըստ Թանզիմաթի, նիզամական դատարանում կրօնն ու ազգութիւնը դեր չէին խաղում, բայց գործնականում այդպէս չէր: Նահանգային վարչական կենտրոններում քրիստոնյայի վկայութիւնն ընդունվում էր միայն քրիստոնյայի և հրեայի գեմ, իսկ կազաներում և նահիհներում այն ոչ մի ուժ չունէր: Այդ պատճառով էլ անհրաժեշտ համարվեց Քեռլինի վեհաժողովի փաստաթղթում զետեղել հատուկ հոդված, որտեղ ասված է. «Սմամեյան կատավարութեան բոլոր հպատակներին առանց դավանանքի խարութեան պետք է թույլատրվի վկայութիւն տալ դատարանում»: Դրանով քուրքական կատավարութիւնը միջազգային պարտավորութիւն ստանձնեց կյանքում կիրառելու Հաթթը-հումայունի համապատասխան կետը, որը մնացել էր թղթի վրա:

Սակայն դժգոյս էր վերացնել այն հակասութիւնը, որ գույթիւն ուներ մահճեղական դոգմաների և միջազգային պարտավորութիւնների միջև Ղուրանը և մահճեղական իրավունքը, ինչպէս նշել է Կ. Մարքսը, ամբողջ աշխարհի ժողովուրդներին բաժանում էին նրկու մասի՝ հազարացիների և անհազարտների<sup>12</sup>: Ուստի

<sup>12</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. X, стр. 6.

թուրքական կառավարութիւնն այդ միջազգային պարտավորութիւնը ձեւական բնույթով ճիշտ անպես, ինչպես Հաթթը-Հումայունի մյուս սկզբունքներին, 1879 թ. Հալեպի քաղաքապետարանի անունից Բարձրագույն դասնը ներկայացված մի դիմումում ասված է. «Դատարանաց առջև մահմեդականի դեմ քրիստոնեից վկայութիւնը չի բռնվիր, հարկ կհամարվի որ... ըստ հրովարտական արամադրութիւն, քրիստոնեից վկայութիւններն առանց վարանման ընդունվին, և ասոր հակառակ վարվողը թանր պատասխանատվութիւն ներքո իյնաւ»<sup>11</sup>,

Զնայած Սիրիայում քրիստոնեյաներն իրավազուրկ էին, սակայն տարբեր գույնութիւն պատկանող բանհավատները միևնույն շարքով և միևնույն հոանգով չէին ճնշվում, կաթոլիկները (մարոնական, հույն, հայ, ասորի, լատին և այլն) գտնվում էին Ֆրանսիայի, Ավստրիայի և Վատիկանի, իսկ ավետարանականները կամ բողոքականները՝ Անգլիայի և ԱՄՆ-ի պաշտպանութիւն ներքո: Զօգազնույզ հմրոպական պետութիւնների քրիստոնեյաններին հովանավորելու քաղաքականութիւն քարտիքներին, Սիրիայի հայութիւն ավելի քան 90 տոկոսը կազմող հայ լուսավորականները կամ ուղղափառները գտնվում էին անտանելի զիւճակում: Անպաշտպան էր մանավանդ հայ գյուղացիութիւնը, որի ունեցվածքի, կյանքի և պատվի ապահովութիւնը թիկուղ նվազագույն շարքով երաշխավորված չէր:

\* \* \*

Սիրիայում և Լիբանանում գերիշխում էր ֆեոդալական արտադրանական: Իրավարանորեն հողը համարվում էր սուլթանի սեփականութիւնը, բայց իրականում գտնվում էր ֆեոդալների ձեռքում: Կ. Մարքսը նշում է, որ Արևելքում հողի գերագույն սեփականատերը պետութիւնն է. սգերիշխանութիւնն այստեղ ազգային մասշտաբով համակենտրոնացված հողային սեփականութիւնն է: Բայց այս դեպքում ոչ մի մասնավոր հողային սեփականութիւն չկա, թեև կա հողի ինչպես մասնավոր, այնպես էլ համայնական տիրում ու սգաազործում»<sup>12</sup>,

Քանզիմաթի կիրառումով նախկին խասերի, զիամեթների և թիմարների փոխարեն ստեղծվեց ֆեոդալ-կալվածատիրական հողատիրութիւն և հողի նկատմամբ բազմական լայն իրավունքներով օժտված ֆեոդալ-կալվածատիրների դասակարգ: Ծ. Էնզելսը, ան-

<sup>11</sup> ՄՄսօս, Ե. IX. 1879:

<sup>12</sup> Կ. Մարքս, Կապիտալ, Է. 2, Դ. 2, Երևան, 1949, էջ 329:

կատկած, այդ հողատիրութիւնը նկատի ունեն, երբ գրում էր. «Արևիկըսում միայն թուրքերն առաջին անգամ մտցրին մի տեսակ կուլտուրատիրական ֆնոդալիզմ իրենց նվաճած երկրներում»<sup>17</sup>.

1858 թ. ապրիլի 21-ի օրենքով հողը պաշտոնապես դարձավ պետական սեփականութիւն և բաժանվեց հինգ կատեգորիայի՝ արազի-մեթրուքն, արազի-մեզաթ, արազի-միրիեն, վակֆական և մուլքային: Առաջին երեքի մեջ մտնում էին պետական, շորթորդի մեջ՝ կրօնական-բարեգործական հաստատութիւնների, իսկ վերջինի մեջ՝ մասնատիրական հողերը: Այսպիսով, անխախտ պահպանվեց նախկինում գոյութիւն սեւեցող պետական, վակֆական և մասնավոր հողատիրութիւնը:

Արազի-մեթրուքն համարված հողերը՝ արտաավայրերը, անասաները և այլն, առուծախի ենթակա չէին: Արազի-մեզաթ կատեգորիայի մեջ մտնում էին խոպան հողերը, որոնք արվում էին մշակելի դարձնելու և երկու տարի հետո միայն հարկ վճարելու պայմանով: Ցուրացված խոպանը դասվում էր արազի-միրիեն հողերի շարքը: Արազի-միրիեն կոչվում էին գերազանցապես վարելահողերը, որոնք մեռք էին բերվում թափուի իրավունքով: Թափուն հողի օգտագործման իրավունքի փաստաթուղթ էր, որը կարող էր արվել բնակչութիւն թուր խավերին՝ նահանգային իշխանութիւնների կողմից: Այդ փաստաթղթով, անժամկետ հողին տիրելու պայմանով, այն օգտագործողը պարտավորվում էր միանվագ վճարել սահմանված գումարը և տարեցտարի մուծել ունեան: Հողը կարող էր ժառանգարար անցնել օգտագործողի սերնդին, սակայն ամեն անգամ անհրաժեշտ էր նոր թափու ստանալ, կատարելով ունեայի և նախնական գումարի վճարումը: Եթե անհարգելի պատճառով հողը երեք տարի անընդհատ անմշակ էր մնում, ապա թափուն կորցնում էր ուժը, և հողը կարող էր ուրիշի փոխանցվել: Թափուի ինստիտուտը հնարավորութիւն էր ընձեռում զանազան պատրվակներով հափշտակելու գոյուղացիների ունեցվածքը:

Վակֆական հողերը հանդիսանում էին մզկիթների, եկեղեցիների, վանքերի և բարեգործական հաստատութիւնների անձնորն-մխելի սեփականութիւնը: Դրանք թափուի իրավունքով օգտագործման էին արվում գոյուղացիներին: Սակայն, ի տարբերութիւն արազի-միրիենի, չէր թույլատրվում վակֆական հողերը օտարել վաճառելու, գրավ գնելու կամ մի որևէ այլ (բացի ժառանգելու) միջոցով:

<sup>17</sup> Յ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երևան, 1952, էջ 225.

Մուլքային հողերը կազմում էին առանձին անձանց մասնավոր սեփականությունը: Դրանք լինում էին ինչպես մեծ, այնպես էլ փոքր տարածություններով: Մեծ հողատարածությունները կենտրոնացված էին ֆեոդալական վերնախավի, փոքրերը՝ գյուղացիների ու քաղաքացիների մեռածում: Որոշները որոշ շահով սահմանափակում էր այդ հողերից օգտվելու եղանակները, սակայն մուլքատերը համարվում էր լիիրավ սեփականատեր՝ օժտված իր կալվածքը վաճառելու, գրավ դնելու, ժառանգելու, նվիրաբերելու և այլ իրավունքներով: Անժառանգ կալվածատիրոջ մուլքային հողերը դասվում էին արագի-միջին հողերի շարքը:

Հետագայում ևս օսմանյան սուլթանները հրատարակեցին հողային օրենքներ, որոնք, սակայն, չակն փոփոխություններ չմտցրին հողատիրության մեծում: 1557 թ. մայիսի 21-ի օրենքը գյուղացիներին պարտադրում էր իրենց հողակտորները մեակերպել թափուով: Նույն թվականի հունիսի 18-ի օրենքով օտարերկրացիներին անշարժ գույք մեռք բերելու իրավունք արվեց: 1573 թ. հրապարակվեց սուլթանի կարգադրությունը՝ թափուների ստուգում անցկացնելու մասին:

Սուլթանների նոր հողային քաղաքականությունից զլխավորապես օգտվեցին ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչները, և այն տարրերը, որոնք այդի էին ընկել միապետությանը մատուցած ծառայություններով: Նոր օրենքով արտոնված պետական հողերի վաճառքը ֆեոդալ-կալվածատեր գարձնից նախկին ռազմաֆեոդալներին, որոնք այդ հողերին տիրում էին խոստ, զիամեթի կամ թիմարի իրավունքով: Գյուղացիությանը հող չհասավ, և նրա հիմնական զանգվածն առաջվա պես հողազուրկ կամ սակավահող էր:

Սիրիայում աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալներն ունեին ընդարձակ տիրույթներ: Մի քանի հարյուր հազար հեկտար տարածությամբ ամենաարգավանդ հողեր պատկանում էին սուլթան Արղուի Համիդին: Հալիպի, Սիրիայի և Բեյրութի նահանգներում գարձր ի վեր կալվածներ ունեին մարոնական, ուղղափառ, լատին վանքերն ու եկեղեցիները, ինչպես և ֆեոդալական քաղմաթիվ գերդաստաններ: Հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալ-կալվածատերերը փոքրաթիվ էին և չակն դեր չէին կատարում Սիրիայի առցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում: Սակայն հայ վանական-եկեղեցական հողատիրությունը քաղական ակնառու տեղ էր գրավում:

Օրուսազեմի հայոց վանքի բվակըք եզեալս կալվածները մեծ

մասամբ գտնվում էին քաղաքներում: Լաւիպում, բացի ուխտագորական հյուրատներից, կային այդ վանքին պատկանող ութ տներ, որոնց տարեկան եկամուտը կազմում էր շուրջ 7500 դրուշ<sup>14</sup>: Երուսաղեմի հայոց վանքին էին պատկանում Բեյրութի ս. Նշան, Լատակիայի ս. Աստվածածին, Գամախսի ս. Սարգիս եկեղեցիները և Երանց առնթիւր կառուցված հյուրատները: Տարբեր հազարգումներում հիշատակվում են Եան այդ քաղաքների մերձակա վայրերում հզօղ կրտսաղեմապատկան կալվածներ, սակայն առանց ճշտելու դրանց բնույթը, տարածութիւնը, եկամտի քանակը և այլն: Այդ քաղաքներում կստում էր Երուսաղեմից Եշանակված սկալվածոց տեսուչը<sup>15</sup>:

Լաւիպի առաջնորդարանի անշարժ գույքը գնահատվում էր շուրջ 12.000 օսմանյան ոսկի: 1878 թ. հաշվառման ցուցակի համաձայն առաջնորդարանն ուներ 23 բնակելի տուն և խանութներ, որոնք տարեկան ապահովում էին 37.343 դրուշ եկամուտ: 1890-ական թվականներին վատ մատակարարման հետևանքով, ազգապատկան կալվածների թիվն իջել էր, և Երանց եկամուտը հասել է 20—25 հազար դրուշ էր<sup>16</sup>:

Կալվածներից զոյացած եկամուտը հիմնականում հատկացվում էր առաջնորդարանի վերահսկողութիւն և ներքո գործող դպրոցի կարիքներին:

Ջմմառի հայ կաթոլիկ վանքն ընդարձակ կալվածներ ուներ Լաւիպում, Լատակիայում և այլ վայրերում, սակայն Երա հողային ֆոնդի հիմնական մասը գտնվում էր լեռնային լիրանանում, Ջրմամուում, Ջունիում, Ջպտիում, Մթեյնում, Բեյթ էդ-Գիմում, Ինի-Ֆունում, Քարարիայում և այլ գյուղական վայրերում կային ազելի քան 120 կմ<sup>2</sup> տարածութիւնամբ վանքապատկան արգավանդ հողեր<sup>17</sup>: Բացի այդ, վանքը կալվածներ ու շինքեր ուներ Ջզարթայում, Մազրայում և Բեյրութում: Երան պատկանող ս. Եղիս եկեղեցու վակֆ էր Բեյրութի Սուկ ալ-Արման կոչվող շուկայի ու միայն հողը, այլև այնտեղ կառուցված շինքերն ու խանութները<sup>18</sup>:

Լաւ աշխարհիկ ֆեոդալ-կալվածատերերն այդպիսին էին դարձել մեծ մասամբ անարավաշխատուկան գործարքների մի-

<sup>14</sup> Ա. Ս շ ի Ր ժ Ն յ ա ն, Պատմութիւն Լաւիպի հայոց, Ե. 3, էջ 802:

<sup>15</sup> \*Սթոն, Երուսաղեմ, 1868, էջ 162:

<sup>16</sup> ԳԱՔԻ արխիւ, Ֆ. Քորոս Ազատյան, բ. 3, Վ. 48, թ. 3:

<sup>17</sup> Ս. Լ. Վ ա թ ա ու ղ ա յ ա ն, Լաւիքը լիրանանի մէջ, էջ 271:

<sup>18</sup> Կալն տեղում, էջ 262:

չոցով՝ սեփականագրկվող գյուղացիների հաշվին: նրանց տիրույթները տեղաբաշխված էին հիմնականում Հալիպի, Լատակիայի և Անտիոքի շրջաններում:

Զարգացման մակարդակով բավական բարձր էր կանգնած Հակոբոս Ոսկանի տնտեսությունը: Հալիպ քաղաքի մերձակայքում տարածված նրա կալվածներում զբաղվում էին հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ, տնտեսապահությամբ և, որ ուշադրաբար է, այնտեղ հաստատված էր նաև մի տիպար ազարակ: 1908 թ. լինելով Հակոբոս Ոսկանի կալվածքներում Գ. Արսլանյանը գրել է. «(Հալիպից) երկուք ու կես ժամեն կհասնինք հեռանալի գաշտի մը մեջ, տիպար ազարակն է: Երբ տնոր սահմանները կմտնենք, որոշ կանսնվի թե զիտական մեթոդն ինչեր ըրած է... Կհասցնեն թթենի և ծաղկններու տեսակներ, պաղապու, ծառեր. զրհան մը շուր կհայթայթեն...: ամեն զործիք եվրոպական է...»<sup>19</sup>: Թվում է, դա կարևոր տնտեսություն էր, քանի որ Հալիպից դուրս եկող ճանապարհներից մեկը սհատակ ազարակին համար շինվածա էր<sup>20</sup>:

Լատակիայի և Անտիոքի հայ ֆեոդալ-կալվածատերերի վերաբերյալ պահպանվել են ընդհանուր բնույթի նյութեր: Հազորդումներում բերվում են մեծ մասամբ նրանց կողմից գյուղացիների հարստահարման, գյուղացիական հողակտորների հափշտակման և այդ կարգի այլ փաստեր: 1874 թ. Լատակիայի հոգետան տեսուչ Ակավյանը նշում է, որ երուսաղեմապատկան կալվածներից մեկը հափշտակվել է հայազգի ֆեոդալ Եաքիբ Սալիզի կողմից, սակայն վերադարձվել է՝ պետական բարձր պաշտոնյա Մեսրոպ Պուպլեի միջնորդության շնորհիվ<sup>21</sup>:

Ֆեոդալ-կալվածատերերը զավթում էին մանավանդ գյուղացիական հողակտորները: Պատմելով հայաբնակ Արամո գյուղի մասին, «Միտեն»-ի թղթակիցը գրում է, որ ծագումով հավանաբար հայ Մուղազզեմ ֆեոդալական զերդաստանի անդամները պյուզացի հայոց վերա քիշ-քիշ ազդեցություններն մեծցնելով, սկսած են բռնանալ, և անոնց ձեռքը գանձված բոլոր հայրենական կալվածները և անշարժ սեփականությունները խլիլով տիրած են»<sup>22</sup>:

19 «Երուզոնցի», 28.IV.1908.

20 Եսլե տեղում:

21 «Մուրխա» տարիցույց, Հալիպ, 1925, էջ 217.

22 «Միտեն», 1888, էջ 160.

Քաղաքացի է, որ Ֆեոդալ-կալվաթաւորներն իրենց հերթին ենթարկվում էին վաշխառուական կապիտալի քննմանը: Այդ առումով բնութագրական է վերոհիշյալ կալվաթաւորների հետ պատահածը: Ըստ «Միտես-ի հաղորդման «Մուզագոզեմը բազմական ժամանակ պարտական լինելով, Արամս գյուղին (հանգերձ արահերով) յորս մասին մեկը Գաղղիո հյուպատոսին անցած է 20.000 դահկանի տեղ: Անցյալ տարի դարձյալ Մուզագոզեմը բանաւարկվելով, գյուղին երկու մասն ալ, որ 33.000 դահկանի գրով գրված էր, կանցնի Լազաքիո ուսուց հյուպատոս Մարկո Իլիասիս և այլն<sup>23</sup>:

Ազրյութներում հիշատակվում են Սերգո, Խաշո, Ծառո և այլ հայ Ֆեոդալ-կալվաթաւորների անունները, որոնք բանագրավել են կամ վտրձել են բանագրավել հաշկական վանքերին, հիկզեցիներին և հատկապես հայ գյուղացիներին պատկանող հողերը:

Այսպիսով, Քանգիմաթը և Երանից բխող օրենքները նպաստեցին պետական և գյուղացիական հողերի հաշկին Ֆեոդալ-կալվաթաւորական հողատիրության ձևավորմանը:

Հողատիրության թուրքական սխտեմը բացասաբար էր անգրադանում գյուղատնտեսության զարգացման վրա: Քանգիմաթը հռչակողները, տեսնելով գյուղատնտեսության անկումը, ստեղծեցին նահանգային հատուկ հանձնաժողովներ, որոնք պետք է ուսումնասիրեին և վերացնեին «հողագործության մահացման պատեանները: Սակայն երանք չկարողացան քիչ թե շատ արդյունավետ գոր կատարել, քանի որ անձեռնամխելի էր մնում հողագործության մահացման հիմնական պատեանը՝ Ֆեոդալական կարգը:

1880-ական թվականներից թուրքական կառավարության տրեստեական նոր քաղաքականությունն ավելի խորացրեց գյուղատնտեսության քանձամը: Ռուս-թուրքական պատերազմից հետո պաշտոնապես սեանկ հայտարարված թուրքիայի պարտապաններից կազմված «Օսմանյան պետական պարտքի վարչությունը» ստանձնեց պետական եկամուտների գանձումը: Իրանով ֆրանսիական կապիտալիստների մենաշնորհը դարձավ Միլիայի մետաքսահումքի, բրդի, աղի ու խմիչքների առևտուրը, ֆրանսիական բեմեթո ընկերության վերահսկողության ենթարկվեց ծխախոտամշակությունը և այլն: Ֆրանսիական կապիտալին պատկանող

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 161:

սկրեզի կոննե բանկի մասնաճյուղերը զեկազար զեր են կատարում Սիրիայի տնտեսության համարյա բոլոր բնագավառներում:

Յրանսիական կապիտալիստները նպաստում էին Սիրիայում գյուղացիական հողերի հաշվին ֆեոդալ-կալվաժատիրության ժա-  
վալմանը, որպեսզի հողազուրկ և սակավահող գյուղացիների  
հորատյին աշխատանքով ավելացնեն իրենց անհրաժեշտ հումքի  
արտադրությունը: Սակայն որոշ վայրերում, հատկապես սիրիա-  
կան լեռնաշխարհի գյուղերում, նրանք պահպանեցին մանր գյու-  
ղացիական տնտեսությունները և նրանց հարկադրեցին անցնել  
հումքի տարբեր տեսակների արտադրության: Դրանց թվում էին  
Հալեպի սանջակի հայաբնակ շատ գյուղեր:

Սիրիան արտադրում էր հացահատիկային, տեխնիկական,  
ցիտրուսային և այլ կուլտուրաներ: Ամենատարածված և բերքա-  
ուստ կուլտուրան ցորենն էր, որը ոչ միայն բավարարում էր տե-  
ղական կարիքները, այլև արտահանվում էր հարևան երկրներ:  
Արտահանվում էին նաև զարին, բրինձը, ձիթազատուղը, ծխախո-  
տը, պիստակը, բնկուլզը և տարբեր պտուղներից պատրաստված  
չիրքի: Հալեպի, Դամասկոսի և մյուս քաղաքների շուկաներում վա-  
ճառվում էին հարևան գյուղերից բերված բանջարեղեն, թարմ  
պտուղներ և այլն:

Սիրիական լեռնաշխարհը հնարավորություն չէր բնօրնում  
հացահատիկային կուլտուրաների զարգացման համար: Քեկտրում,  
Նշել է Ա. Քեմֆրյանը, սշկան ընդարձակ գաշտեր ու արտեր, այլ  
ամեն սեղ ժայռ ու լեռ է: Ժողովուրդը արյուն քրտինք թափելով,  
քարերու և ժայռերու հեռ շահվելով, կարողացավ սեփական տուն  
մը, պարտեզ մը շինել, տնկելով տարբեր-տարբեր պտղատու ծա-  
ռեր<sup>24</sup>, Խնչոնս Քեսաբի, ախպես էլ Սվեդիայի հայ գյուղացիների  
համառ փորձերը՝ լեռնալանջերին արմտիք և զետեախնեճոր մշա-  
կելու, անբարենպաստ կլիմայական պայմանների հետևանքով,  
վերջանում էին անհաջողությամբ<sup>25</sup>: Լեռնավայրի գյուղերում այն-  
քան քիչ էր հացահատիկ և զետեախնեճոր արտադրվում, որ անգամ  
չէր բավարարում գյուղացիների սպառողական կարիքները: Նը-  
ջանց տնտեսական կյանքում առաջնակարգ նշանակություն  
ունեին այգեգործությունը, ծխախոտամշակությունը, շերամապա-  
հությունը և դափնու ձեթի պատրաստությունը<sup>26</sup>:

24 Ա. Քեմֆրյան, Քեսապ, էջ 35:

25 Եթուզանգիոն, 28. IV. 1911:

26 Եմվետարեթ, Կ. Պոլս, 1910, № 29—40, էջ 314—315:



Այգեգործութիւնը: Անտիոքի և Բելլանի շրջանի գյուղերում լայն տարածում էր գանձ խաղողի և այլ բազմատեսակ պտուղների մշակութիւնը: Այգեստաններն առճասարակ զետեղված էին լեռնալանջերին ու ձորակներում և մշակվում էին բազմաանէկ աշխատանքով<sup>27</sup>: Հայ գյուղացիներն անեցնում էին խաղողի շուրջ տասը ազնիվ տեսակներ: Մասցվող բերքի քանակութիւնն զերարեւել տվալները լիան, սակայն անգամ ընդհանուր ընդլայն հազարումներէն հրկում է, որ խաղողի մշակութիւնը հայրենակ գյուղերում բավական լայն լայն էր ընդունելու: Խաղողի բերքը ոչ միայն բազմաբարձ էր այգետիրոջ սպասողական պահանջները, այլև թարմ վիճակում շուկա էր հանվում և ավելի մեծ քանակութիւնը էլ սպասարկվում էր ուսւ, օղի և լամիլ պատրաստելու համար:

Խաղողից բացի, հայ գյուղացիները մշակում էին զգալի քանակութիւնը ցիւրուսային կուլտուրաներ՝ նարինջ, կիտրոն, Բացի ալո, նրանք մշակում էին թզի, խնձորի, սալորի, նշի, կեռասի, բալի, թթի և այլ ծառեր:

Այգեգործութիւնն տեխնիկան շարժազանց պարզունակ էր: Գյուղացիները գրեթէ զինված չէին վնասատուների դեմ պայքարի միջոցներով: Այդ պատճառով էլ այնպիսի սովորական հիվանդութիւն, ինչպիսին էր փոշեցազը կամ քուլլեմեն, պարբերաբար ավեր էր գործում այգիներում<sup>28</sup>:

Միախառնի մշակութիւնը բավական զարգացած էր Լատակիայի, Ջոր Շուրի ու Անտիոքի կազաներում և կազմում էր Աբամուսի, Կարադուրանի, Եթիզ-Սուլիի հայ գյուղացիների հիմնական զբաղմունքներից մեկը:

Լատակիայի և Կարադուրանի արու ռիճա կուլված բուրսամեղմա զնա ծխախոտը բարձր էր գնահատված ոչ միայն տեղում, այլև Եվրոպայում: Մասնագետների կարծիքով այն կարող էր մրցել ամերիկյան բլիթիւնային հնա<sup>29</sup>, նրա պահանջարկը մեծ էր մասնավորապէս Անգլիայում, Գերմանիայում և Եգիպտոսում:

Սակայն Սիրիայի ծխախոտամշակութիւնը, դառնալով ֆրանսիական բնեծիւն ընկերութիւն մենաշնորհը, զարգացման հնարավորութիւն չունեցավ: Բնեծիւն-ն սահմանում էր ծխախոտի ցան-

<sup>27</sup> ԵՄԻԵՆ, 1868, էջ 74:

<sup>28</sup> ԵՄԻԵՆ, 28.IV.1880:

<sup>29</sup> Ա. Սուրմէյե, Սուրիա, Հայեզ, 1940, էջ 214:

քառասունութուամյակների շափքը, որոշում տեսակը, գինը և այլն: Հնդ որում, ժանդարմական հատուկ շոկատները խստորեն հետևում էին նրա հաստատած կարգի պահպանմանը: Անդրադառնալով Քնսաքի ծխախոտամշակութային անկման պատճառներին, Ա. Քնմիրյանը նշել է. «Երբեք մոռնալով ըլլալեն անգին, ամեն մարդ չէր կրնար իր ուզածին շափ ծխախոտ անկել, և, մշակվածին ալ փոխարժեքը բնկերութայնը լման չէր վճարեր»<sup>30</sup>, Գյուլացիները հարկադրված էին ամիսներով գեղերիչ «Երեմիա-ի գոների առաջ» ծխախոտ ցանելու Թուրքութայն ևնք բերելու կամ ստացված բերքը նրան վաճառելու համար<sup>31</sup>: Չնայած դրան, Միրիայում արտադրվում էր «Երեմիա-ի սահմանածից անվազն երկու անգամ ավելի ծխախոտ: Վ. Կիննի հաշվումներով, ծխախոտի արտադրութայն իսկական ծավալը Միրիայում կազմում էր շուրջ 800.000 կգ. որի միայն կեսն էր արվում «Երեմիա-ին, իսկ մնացածը վաճառվում էր սեղում, կամ մաքսանենգների միջոցով ուղարկվում էր արտասահման»<sup>32</sup>:

Երեսմարտի 1917-ի զարգացման համար նպաստավոր պայմաններ կային Միրիայի ժողովները շրջաններում: Գրեթե բոլոր գյուղերում այս կամ այն չափով զբաղվում էին շերամարսութայնը, սակայն այն առավել զարգացած էր Անտիոքի կազայի հայաքնակ գյուղերում: Հաջի-Հարիրիի հինգ քնակչից մեկը, իսկ Կարսուխայի, Բիտիասի և մյուս գյուղերի քնակչութայն զգույն մասը շերամ էր բուծում<sup>33</sup>: Մի խոսքով, շերամարսութայնն այդ կազայի հայ գյուղացիութայն նկատման գլխավոր աղբյուրներից էր: Իրենց արտադրանքի քանակով և շերամ բուծելու վարպետութայնը Բիտիասի գյուղացիները նշանակալից տեղ էին գրավում Հյուսիսային Միրիայում: Նրանք 25 դրամ սերմից ստանում էին 40—45 քաշ (1 քաշը հավասար է 1282 գ) խոզակ, այն դեպքում, երբ 20—25 քաշը համարվում էր խրախուսանքի արժանի արդյունք: Նրանք տարեկան արտադրում էին մոտավորապես 20.000 քաշ խոզակ: Այդ հաշվարկները պայմանավորված էին ոչ միայն կլիմայական բարենպաստ պայմաններով, այլև օգտագործված սերմի որակով<sup>34</sup>: Բիտիասիները մեծ մասամբ օգտագործում

<sup>30</sup> Ա. Ս. Քնմիրյան, Քնսաք, էջ 36:

<sup>31</sup> «Գյուլացիներ», 21.4.1888:

<sup>32</sup> V. Guinet, Syrie, Liban et Palestine, p. 154.

<sup>33</sup> A. K. Sanjian, The Armenian Communities in Syria, p. 54—55.

<sup>34</sup> «Գյուլացիներ», 26.11.1911: Շամալյան պետական գրադարանի գրադարան

էին իրենց իսկ մասնագիտների պատրաստած սերմերը, որոնք անհամեմատ ավելի ընտիր էին և անզական պայմաններին հարմարեցված, քան Եվրոպայից ներմուծվածները:

Անտիոքի շրջանի հայկական գյուղերում արտադրված մետաքսահումքի (սեփակնդերունի մետաքս) մի մասն արտահանվում էր Ֆրանսիա և այլ երկրներ, իսկ մյուս մասն ոգտազործվում էր Անտիոքի, Հալեպի ու Դամասկոսի մետաքսազործարաններում: Սակայն արհեստական մետաքսի գրոհը մի կողմից, օսմանյան պետական պարտքի վարչության գործադրած ճնշումը մյուս կողմից, բացասաբար էին ներգործում բովանդակ Սիրիայի մետաքսագործության վրա: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Անտիոքի շրջանի գյուղացիները, շերամարուծության մեջ հետանկար շտեմնելով, թթաստանները ոչնչացրին և անցան ավելի եկամտաբեր կուլտուրաների՝ նարնջի, բանանի, դեղձի ու նշի մշակութայնը<sup>26</sup>:

Վերահիշյալներից բացի, հայ գյուղացիները զբաղվում էին մի շարք արհեստներով և գյուղատնտեսական հումքի որոշ տեսակների մշակումով: Վերջիններից պետք է հիշատակել դափնու ձեթը, շոր մրգերը, ոգիից ըմպելիքները և այլն, որոնք պատրաստվում էին վերին աստիճանի պարզունակ տեխնիկայով: Դափնու ձեթը, օգտագործվելով օճառի արտադրության մեջ, զգալի եկամուտ էր ապահովում դափնեծառի ընդարձակ անտառներով հարուստ Սվեդիայի և Փնսարի գյուղացիներին: Մյուս մթերքները շուկայական նշանակություն չունեին և հազիվ բավարարում էին գյուղացիական ընտանիքի սպառողական պահանջները:

Արհեստները թվով սահմանափակ էին և գտնվում էին զարգացման ցածր աստիճանի վրա: Ամենից շատ տարածված էին սանրագործությունը, ջուլհակությունը, երկաթագործությունը, չրաղացպանությունը և այլն: Առաջին երկուսը, կատարելով Անտիոքի առևտրականների պատվերները, ընդգրկում էին ամենից ավելի աշխատող ձեռքեր: Այսպես, Ծոզուն-Օլուն գյուղի քնակիչների շուրջ կեսը սանրագործներ էին, Վակըֆում և Նըղր-Քեկում զգալի թիվ էին կազմում ջուլհակները և այլն<sup>27</sup>: Արհեստ-

կողմից 1907 թ. Անտիոքում կազմակերպված շերամարուծության մրցույթում քերտացնենքը ձեռք Ան Ինրժի գերազանց արդյունքներ:

25 Ա. Սյուրմեյաե, Սուրիա, էջ 216:

26 Եվհուսթեր, 1910, էջ 915:

ները գրեթէ բոլորն էլ հանդիսանում էին ապրուստի ստանդան մի-  
շոց:

Հայ գյուղացիները մեթարկվելով Ֆեոդալ-կալվածատերերի, պետական աստիճանավորների և վաշխատուների կեղծքմանը, չէին վայելում սեփական քրտինքով մեռք բերված բարեքնները: Նրանց թշվառության ականատեսն ասում է. «Անտեք ոչ՝ ամառը դադրում ունին, ո՛չ մեծեր, ո՛չ գիշեր և ոչ ցեղերի գիտմն», բայց ապրում էին «ամենախեղձ խրճիթներու և մերդերու մեջ պատրա-  
պարված՝ Հեռին աղքատությունը»<sup>27</sup>:

Չկար ոչ մի որևէք, որին ապավինելով գյուղացիները կարողանային թեկուզ նվազագույն շահով պաշտպանվել գիշատիչների անիրավություններից, և շահագործվում էին դաժան կերպով: Ընչպես կարգում ենք «Միտեն»-ում, «թե՛ քրիստոնյա, թե՛ անքրիստոնյա գյուղապետերը, ըստ առաջին սովորության, խեղձ գեղացի հայոց սակորները կծծեն, և բուրդին հեռ մորթն ալ վերավորելով կխուզեն»<sup>28</sup>:

Ֆեոդալական անտառի սարածված մեծրից էր արտատես-  
սական հարկադրանքը, որը գյուղացիներին դնում էր նորաային վիճակի մեջ, նրանք պարտավոր էին վարել ու ցանել քայրոնիչ կամ խավանայի (հայ գյուղացիներն այդպես էին կոչում Ֆեոդալ-կալվածատերերին) արտերը, քարերից ու մուլխոտերից մաքրել նրա ցանքսերը, բերքը տուն տանել և ամբարել, աշխատել նրա տան, գոմի և տխոտի կառուցման վրա և մատուցել դաժմաթիվ ալլ ծառայություններ: Արտատեստեսական հարկադրանքի մասին բնութագրական է հետևյալ վկայությունը: Արամո գյուղի քրիստոնյա կալվածատերերից մեկը, հափշտակելով «Ատավածաժին վանքին պատկանող դահլենիների անտառը, հայ գյուղացիներին ստիպում է իր համար ամառանոց կառուցել: Գյուղացիներն ընդատարում են նրան, վախենալով որ տառապանաց ծանր շղթաներու տակ կաշկանդվելու պիտի դատապարտվին»: Կալվածատե-  
րը, ինչպես նշել է ականատեսը, «այն աստիճան ձրի (անկարիա) և չարաչար կաշխատեցնել խեղձ գյուղացիքը, որոնցմէ մեկը չկրնալով դիմանալ սկսավ պտուալ՝ խավանա, մապիշորզը (չեմ աշխատիր, պարտե)»<sup>29</sup>, Բնութագրելով նորաափրակյան անտեսու-  
թյունը, Վ. Բ. Լենինը գրել է. «Ընթե՛ կալվածատերն անմիջական

27 «Միտեն», 1888, էջ 100:

28 Եւր. տեղում, էջ 191:

29 Եւր. տեղում:

իշխանութիւն շունենար գյուղացու անձի վրա, ապա եւ չէր կարող հարկագրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական անտեսութիւն է վարում: Հետևաբար, անհրաժեշտ է քարատնտեսական հարկադրանքը, ինչպես ասում է Մարքսն այս տնտեսական ոեժիմը քննարկելիս<sup>40</sup>:

Անտիքրի շրջանի հայ գյուղացիները պարտավոր էին կալվածատիրոջը ընկերներն առ ուրախութիւն և տիրութիւն զանազան առիթներով: Երբ պարտնը խրախճանք էր սարքում կամ հյուրեր էր ընդունում, գյուղացիները ստիպւած էին լինում նրա սեզանին զենել լավագույն այն մթերքները, որ ունեին: Փոխադարձաբար պարտնը մասնակցում էր գյուղացիների ուրախութիւններին: Ոչ որ իրավունք շուներ էլուր ազդիկը կամ աղայն նշանել և կարգել առանց գիտութիւն պարտնին, առանց անոր հաճանութիւնն ընդունելու, և այս ոչ թն ձրի, այլ քանի մի հարյուր զահեկան տարով իրր պսակ-գրամս<sup>41</sup>:

Կալվածատերերը ֆեոդալական տնտաւ ստանում էին նաև կիսաբարութիւն միջոցով, նրանք կորզում էին այնքան, որքան ցանկանում էին կամ կարողանում, քանի որ չկար պետութիւն կողմից սահմանված որոշակի լափ: ԵՄիտե-ի թղթակիցը նշել է, որ Արամո գյուղի կալվածատերերը, կիսաբարութիւն սկզբունքով հայ գյուղացիներին աշխատեցնելով նախկինում իրենց պատկանած հողերում, խլում էին նրանց վաստակը<sup>42</sup>:

Ֆեոդալական տնտաւի ձևերից էր նաև աւսպես կոչւած օթեվանի պարհաչը: Այն սովորական պարհակներից տարբերվում էր նրանով, որ կապված էր քրիստոնյա բնակչութիւն ընտանեկան սրբութիւնների ռանահարման հետ: Երեւնքով սահմանված էր, որ մահմեդական հանապարհորդը՝ սկսած մուրացկանից մինչև պետական ամենաբարձր պաշտոնյան, իրավունք ուներ երեք որ հյուրընկալվելու քրիստոնյայի տանը: Վերջինս ոչ միայն իրավունք շուներ հրաժարվելու հյուրընկալութիւններից, այլև պարտավոր էր սհյուրիէ համար հայթայթել այն ամենը, ինչ նա կպահանջեր: Մի-րիայի հայաբնակ գյուղերի մտախն մի հաղորդումում ասված է, ԵՏեզական իշխանութիւնն ալ կարեպես ծանրացած է խեղճերուն (հայ գյուղացիներին—Շ. Ք.) վերա. անոր ձիագորները թն պատ-

40 Վ. Բ. Է Ե Ի Ե, Երկր, Ե. Ծ, էջ 224:

41 ԵՄիտե, 1860, էջ 109:

42 Լուչն սեզում, էջ 121:

նառով և թե առանց պատճառի հրքից պակաս չեն ասոնց բնակարաններն, թե՛ իրենց կկերակրեն և թե իրենց միանջրը<sup>43</sup>։

Այսպիսով, Սիրիայում միաժամանակ տեղա էին հաղային սենտայի բույր երեք մեկը՝ աշխատանքային, արդյունավճար և փողային Կ. Մարքը նշել է, որ փողային սենտան սենթադրում է առևտրի, քաղաքային արդյունաբերության, ընդհանրապես ապրանքային արտադրության ու նրա հետ էլ փողային շրջանառության արդեն նշանավոր զարգացումը<sup>44</sup>։

Արդ, սենտայի երեք մեկից ո՞րն էր գերիշխողը հայաբնակ շրջաններում։ Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ վիճակագրական տվյալները բացակայում են, սակայն ակներև է, որ Սիրիայի ներքին զավառներում տիրապետում էր արդյունավճար սենտան, իսկ ժողովները, հատկապես քաղաքներին հարող շրջաններում, որտեղ տեղաբաշխված էր հայ գյուղացիների ճնշող մեծամասնությունը, գերիշխում էր փողային սենտան։

Փողային սենտայի առկայությունը, պայմանավորված լինելով ապրանքազրամական հարաբերությունների զարգացումով, ուժեղացնում էր վաշխառուական կապիտալի ներհոսքը գնացի գյուղ. միաժամանակ սրում պետական բարձր պաշտոնյաների և ֆեոդալ-կալվաժատերի ընդաքաղցությունը։ Նրանց հարստության գլխավոր աղբյուր էին ծանր հարկերը։

Հալեպի, Սիրիայի և Բեյրութի նահանգները ենթարկված էին հարկային գրեթե միակերպ սեմիմի։ Գրանցում հարկային լուծը զգալի չտփով ավելի ծանր էր, քան կոնային կիբանանում։ Ե. Գաննատեի հաշվումներով կոնային կիբանանում յուրաքանչյուր բնակիչ տարեկան միջին հաշվով վճարում էր 40, իսկ Բեյրութի նահանգում՝ 188 սամանյան լիրա<sup>45</sup>։ Գրությունը համարյա նույնն էր Սիրիայի և Հալեպի նահանգներում։

Բավաճաթիվ ուղղակի հարկերից գլխավորներն էին. կալվածահարկը՝ էմլաթ, տասանորդը՝ աշար, անասնահարկը՝ ազնամ, եկամտահարկը՝ թեմեթու, ճանապարհահարկը՝ թոփրակ-բասան, բեզել-անկերիեն և այլն։

Կային նաև շուրջ մեկ տասնյակ այլ ուղղակի և անուղղակի հարկեր, որոնք ծանրանում էին քաղաքային և գյուղական բնակ-

<sup>43</sup> «Սիւն», 1866, էջ 150։

<sup>44</sup> Կ. Մարք, Կապիտալ, Է. 3, Ժ. 2, էջ 236։

<sup>45</sup> E. Gannagé, La Réforme des impôts directs au Liban et en Syrie, p. 292.

լության վրա: Բոլոր դեպքերում Հարկային լծի հիմնական ծանրությունը կրում էր գյուղացիությունը: Տասանորոգը, կալվածաճարկը և անասնահարկը, որոնցից գոյանում էր քնդհանուր հարկերի ավելի քան 70 տոկոսը, գանձվում էին հիմնականում գյուղական բնակիչներին:

Հարկերի ծանրությունը պայմանավորված էր ոչ միայն նրանց լավերով, այլև Հարկագանձման գիշատիչ ձևերով: Հաթիճը-հումայունը հրապարակողները խոստացել էին ուղղել Հարկերը և առանձնապես տասանորոգը գանձելու գծով լարաշահությունները, հարկերը կապարով առյու փոխարեն հասնողական և ամենակարճ ժամկետում կիրառել ուղղակի գանձման սխեման և այլև: Սակայն այդ ուղղությունը կատարված փորձերն անցան ապարդյուն, շարունակվեց Հարկային քառոր, առաջվա նման Հարկագանձման կապար վաճառվում էր: Ով շատ էր վճարում, նա էլ տիրանում էր այդ իրավունքին: Ընդ որում, առանց կաշառքի երբեք ահուրդ չէր լինում: Քուրբական կառավարությունը, ինչպես նշել Ի. Գուրբուրովն, քրազմիցս գիտակցել էր կապարային սխեմայի վնասը, որովհետև անգական վարչությունները հաճախ գործարքի մեջ էին մտնում կապարառուների հետ և դիտավորյալ պակասեցնում էին կապարի գները, զբաղեցնում ուղղակի վնաս հասցնելով գանձարանին: Բայց հին Հարկագանձման սխեմայի փոփոխության ամեն մի փորձ, հանդիպելով օսմանյան աստիճանավորների անբարեխղճությանը և ազդեցիկ բնյերի դիմադրությանը, չախլախվում էր: Ամեն մի ակնարկ խփում էր ուղղակի նրանց զբաղանքին<sup>66</sup>, Ձեռք բերելով մի ամբողջ կաշառքի հարկերը գանձելու կապարային իրավունքը, կապարառուն սովորաբար այն վերավաճառում էր քաղվաթիվ միջակ ու փոքր կապարառուների և զբաղեցնում իսկ ստեղծվում էր կնդեքիչների յուրօրինակ մի աստիճանակարգ: Հարկերը գանձելու գործում նրանց պարտավոր էին օժանդակել պետական իշխանավորները՝ վալին, մուֆտասարիֆը, մուգիրները, ոստիկանապետը, գառավորները և այլն: նրանց օժանդակությունն իրական և ազդու էր լինում միայն այն դեպքում, երբ նրանք անձնապես շահագրգռված էին, այսինքն՝ բաժին էին ստանում հարկերից:

Կապարառուն գյուղ էր գնում աստիճանավորների մի ամբողջ

<sup>66</sup> Н. Н. Голобородько, Старая и новая Турция, М., 1908, стр. 166.

ոճմակով և պահանջում էր հարկերը: Եսայած Երա արտոբանկին, տասանորոգը կարող էր հասնել բերքի 20—40 տոկոսին: Քե կապալառուն ինչպիսի շարիք էր հասցնում գյուղացիներին, ցույց է տալիս Քիլյուսթի նահանգապետի մի գեկուցագիրը, որտեղ ասված է. «Այս շրջանում, ինչպես և մյուս շրջաններում աշարը կապալառուներին վաճառվում է անուրդով: Լեռեանքը լինում է այն, որ ժողովուրդը մեկ տասանորոգի գոխարեն վճարում է մի քանի տասանորոգ: Յույց տալու համար, թե ուր է տանում այդպիսի ներումը, հս պետք է բերեմ հետևյալ փաստը: Այս շրջանի բնակիչները կապալառուներից խուսափելու համար, այսինքն՝ որպեսզի իրենց ծառերի ամբողջ պտուղը կապալառուին տալուց հետո նաև զրամական տուգանք չվճարեն, կտրել և ոչնչացրել են տանվաղն 15.000 մթննիշտ<sup>47</sup>»:

Հարկահաններն առաջիկա ամառվակ էին զործում հայաբնակ գյուղերում: Մի հազարդուսուսում ասված է. «Շարաթն երկու-երեք տնգամ հաղալն կուղարկվեն վերանին, միրքի, ֆերդիի ու պետելյրեի տարբեր պահանջելով: Տասնորդական տուրքը, որ բաա կաշոնի և օրինաց պետության 10 տոկոս է, իրենք շորսեն մեկ կաշունե<sup>48</sup>»: Գյուղացիները հաճախ չէին կարողանում վճարել նման օտոնացված հարկերը, լեայած անոք տնված ամենազաժան միջոցներին:

Հարկագտնեման կապալները կապալառուներին հնարավորություն էին տալիս տիրանալու հողից ստացվող արգյունքի առյուծի բաժնին: Ա. Ալիմովի ազյալներով Քուրքիայում երկրագործությունից ստացված եկամուտների 12,5 տոկոսն անցնում էր պետությանը, 26,8 տոկոսը՝ ֆեոդալներին, 26,2 տոկոսը գյուղական վերնախավին, վաշխառուներին ու պետական պաշտոնյաներին, և սոսկ 34,5 տոկոսը՝ գյուղացիությանը<sup>49</sup>: Այսպիսով, Քուրքիայի բնակչության 5 տոկոսին բաժին էր ընկնում գյուղացու անոք բերած արգյունքի 65,5 տոկոսը:

Միրիայի աշխատավոր գյուղացիությունն ապրում էր համատարած թշվառության մեջ: Սակայն առանձնապես ծանր էր հայ գյուղացիների վիճակը: Վարդապետ Ուլենցին Հալեպի նահանգի

<sup>47</sup> А. Алимов, Турция («Очерки по истории Востока в эпоху империализма»). М.—Л., 1934, стр. 8.

<sup>48</sup> «Միւս», 1886, էջ 100.

<sup>49</sup> А. Алимов, Турция, стр. 27.



հայարեակ գյուղերի մասին հազարգում է Ֆոնուզ. «Այս ան-  
գուանքն 180 տուն հայ կա... ամենքն ալ հետին խեղճության մեջ,  
մերկութենն ի գատ շատերուն ձեռքը լոկ կելկիլի հաց անգամ  
շանցներ ուտելու...»<sup>60</sup>,

Տրնդիւր. «100 տուն հայ կա, ամենքը ձորի մը մեջ կրնակին  
և հուսահատույալ են ի պատճառս իրենց դժբախտ և եղհելի վի-  
ճակին... Ասոնք վերջի աստիճան թշվառ կացության մեջ  
կգտնվին, սրական պարենի կարոտ են...»:

Պաւա. «80 տուն հայ կա... Տուրքի տակ կճեշվին և ինչ  
ընելնին չեն գիտեր...»:

Խասեր. «40 տուն հայ կգտնվի... Ժողովուրդը վերջին ժայռ  
աղքատության մեջ կատուապի...»:

Լարանք. «40 տուն հայ կա: Ասոնք ամենեն խղճալի և սրական  
հացի կարոտ են, հազուտուն բոլորովին զուրկ կգտնվին, մարդուտ  
սիրտը չի դիմանար սր վրանին նայի...»:

Հասանպակի. «100 տուն հայ կգտնվի... Այս ժողովուրդն ալ  
հետին շրջաբնության մեջ խեղճվելու վերա են. կազալիս ասոնց  
չուտով օգնություն մը կարնք»:

Քիչնեղ. «Այս գեղին հայ բնակչիքը 30 տուն են..., անպատ-  
մելի թշվառ վիճակի մեջ են...»:

Քիլիս. «Այստեղ 400 տունի շարք՝ շորս հազար հայ ունիմք...  
ծանր տուրքերու ներքև ճեշվելով, հուսահատության մեջ ինկած  
են...»<sup>61</sup>, Ուլեկցին համարյա միևնույն մասալ գույներով է պատկե-  
րում նաև Բնլլանի և Անտիոքի կազաների հայարեակ գյուղերի  
վիճակը:

Այսպիսով, օսմանյան սուլթանների ազդարային նոր քաղա-  
քականությունը, և նրա իրականացնողների՝ ֆեոդալ-կալվածատե-  
րերի, պետական աստիճանավորների և ամեն կարգի այլ գիշա-  
տիչների կեղեքումներն ու ավերումները հանգեցնում էին գյուղա-  
ցիության տևտեսական քայքայմանը:

\* \* \*

Միրիայի հայ գյուղացիությունը ենթարկվում էր նաև թուրքա-  
կան կառավարության ազգային ճեշման քաղաքականությանը:

Թանգիմաթի շրջանում անցկացված անֆուրմները շփոխեցին  
օսմանյան ֆեոդալական կարգի կուլտուրը, Հաթթը-շերիֆը հուս-  
կողներին՝ ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչների, նպա-

<sup>60</sup> «Արշալույս Արարատյան», 27.VI.1867.

<sup>61</sup> Նույն տեղում:

տակն էր փրկել սուլթանական միապետութիւնը: Համբը-հումա-  
յունը հրապարակվեց մեծ պետութիւնների հնշման ներքո և դիտ-  
վում էր որպես Քուրքիայի կողմից ստանձնված միջազգային  
պարտավորութիւն, որը չէր կարող չեղյալ համարվել կամ փո-  
փոխութիւն ենթարկվել առանց այդ պետութիւնների համաձայ-  
նութիւն: Սակայն հանդիսավորապես խոստացված անֆորմները  
մեծ մասամբ մնացին թղթի վրա: Ոչ միայն բոլոր հպատակների  
իրավահավասարութիւն, մամուլի և խզճի ազատութիւն, անձի և  
ունեցվածքի ազահնովութիւն չհաստատվեց, այլև սկսվեց համիդ-  
յան բռնութիւնների, հալածանքների և արշուճահզութիւնների մի  
դաժան ժամանակաշրջան: Վ. Ի. Լենինը սուլթան Աբդուլ Համիդին  
համարում էր սթուրքական նիկոյայ երկրորդը<sup>52</sup>, Ալլ Ֆոնի վրա  
գծվար չէ հասկանալ այն պատճառները, որոնք իրիանցին Օս-  
մանյան կայսրութիւն կազմի մեջ հզած ժողովուրդների ազգային-  
ազատագրական շարժումները:

Քուրքական բռնակալութիւն դեմ պայքարի դուրս եկավ նաև  
հայ ժողովուրդը: Վ. Ի. Լենինը գրել է. «Ոչ միայն 1855, 1859, 1864,  
1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և  
1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ  
Քուրքիայի պատերազմի և հայկական հուլումների) ժամանակ,  
պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակու-  
թիւնն են հղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեո-  
դալիզմի տարրեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարա-  
կութիւնն սրղանձումները»<sup>53</sup>,

Սվրոպայի մեծ պետութիւնները, բաժանելով ռուսական զեն-  
քի շնորհիվ ձեռք բերված ազարը, մոռացութիւն ավին թեոլիսի  
պայմանագրի 61 հոդվածը, որով Բարձրագույն դուռը պարտա-  
վորվում էր անհասպող տեֆորմներ իրականացնել հայերով բնա-  
կեցված մարզերում և ապահովել նրանց անվտանգութիւնը՝ չեր-  
քնզներից ու քրդերից:

Մինչև XIX դ. 80-ական թվականները Սիրիայում հայերը և  
քրդերը պահպանում էին պարզապես զրացիական հարաբերու-  
թիւններ: Այսպես, օրինակ, Իսլահիեի գլուղիրում և այլ վայրե-  
րում շշտա հայ բնակիչներ..., մեկ տնով, հինգ տնով և մինչև  
տաս տնով զատ-զատ քրդերու մեջ էին ապրում<sup>54</sup>, Հայերն իրենց

52 Վ. Ի. Լենին, Երկեր, Կ. 16, էջ 216:

53 Վ. Ի. Լենին, Երկեր, Կ. 21, էջ 176:

54 «Արշալույս Արարատյան», 24.VI.1867:

հարկերը վճարում էին քուրդ աշիրաթապետներին, իսկ սրանք էլ, որինակ, թուլլատարում էին, որ հարևան շրջանների հայ քահանան պարբերաբար այցելի նրանց: Ավելին, ինչպես նշել է Ուլենցին, կարգադրություն է արվել քրդական գյուղերում բնակվող հայերի համար մեայան քահանա մի ուղարկելու և մատուռ մի շինել տալու մասին<sup>25</sup>:

Քեռլինի վեհաժողովից հետո թուրքական կառավարության գործակալներն ամեն ինչ արեցին, որպեսզի թունավորեն հայ-քրդական հարաբերությունները: Նրանք ամենուրեք տարածում էին սասանոզ լուրեր այն մասին, որ իբր հայերը զինվում և պատրաստվում են ապսամբության, որ արտասահմանից անհաշիվ քանակությամբ զենք ու զինամթերք են ստանում, զինվորական զաղանի խմբեր են կազմակերպում, ցանկանալով ինքնուրույն պետություն ստեղծել, Քրդոստանը Հայաստանի վերածել և ազատ քրդերին ուսյա դարձնել: Այդ հակահայկական պրոպագանդային Կ. Պոլսում շերմեռանդորեն արձագանքում էին ԵՍտամբուլ, Էվազըթ, ԵՍիմաֆուռ քեթեթերը, իսկ Եվրոպայում՝ միշտ քրդ կաշաղված գրչակներ: Այդ պրոպագանդան խոշոր շտաբով նպաստեց հայերի զանգվածային բեռնեման գործիքի՝ համիդի գեղերի, ստեղծմանը, որոնց ասպատակություններից զերծ լմնաց նաև Միրիալի հայությունը:

Միրիալում համիդի գեղերը բազկացած էին ոչ միայն քրդերից: Միշտ է, այդ գեղերում պատասխանատու պաշտոններ էին զբաղեցնում քուրդ ֆեոդալներն ու ցեղապետները, սակայն նրանց կազմում թվական զերակշռությունը պատկանում էր լեռքեզներին, լեռններին, աչարներին և այլ մահմեդական տականքների, որոնք 1877—1878 թթ. ուսու-թուրքական պատերազմից հետո Կովկասից գաղթել էին Միրիա և մինչև համիդի գեղերի կազմվելը լարիք դարձել հայ գյուղացիության համար:

Զերեզներին և մահմեդական մյուս տարրերի գաղթը, ինչպես նշել է Կ. Պոլսի անգլիտական զեսպանատան աշխատակից Ստ. Զոնը, կազմակերպեցին թուրքական պետական աստիճանավորները, շուրջիցով շրջուցիլ խոստումներ, այն է՝ մի տարի շարունակ հացով ապահովում՝ կառավարության հաշվին, ամենահամար պետական հոգերում բնակեցում՝ ցանկացած տարածությամբ հողով, լիակատար ապահովում՝ երկրագործական գործիքներով և անասուններով, պետական վարկ՝ տներ, մզկիթներ, դպրոցներ կա-

<sup>25</sup> Այս անգամ.

ուսցնելու համար և այլն: Սակայն տեղ հասնելուց հետո գաղթականներն ընկնում էին թշվառության մեջ: Հյուպատոսական մի այլ զեկուցագրում ասված է. «Գաղթականների գրությունն այնքան ծանր է, որ նրանք ազերսում են Ռուսաստան վերադառնալու մասին»<sup>56</sup>,

Քուրբական կառավարությունը բուխրովին լզբազվեց այդ գաղթականներին նպաստ տալու հարցով, որովհետև նրան հարկավոր չէր այդ զանգվածը, առանց նրա թշվառության: Կենսամիջոցներից իսպառ զրկված գաղթականներին զինելով, թշում էին կայարության՝ հայերով բնակեցված շրջանները: Մի րիա թշված լեբքեզների հեշող մեծամասնությունը բաժին հանվեց Հալեպի նահանգին: Չերքեզական բնակավայրեր հաստատվեցին հայահոծ Անտիոքի, Քիլիսի, Հարեմի և Մեմֆիշի կազաններում: Ենչ մի բան չի կարող արգարացնել այն, ինչ անցյալ տարի նեոնարկից Քուրբական կառավարությունը, — ասված է անգլիական մի փաստաթղթում, — զինված մարդկանց մի ամբողջ ամբոխ 19նելով այն երկիրը, որի անմեղ բնակիչները նույնիսկ սովոր չեն զենք կրել»<sup>57</sup>:

Բացի զինքից ուրիշ ուլիչ լուսեցող այդ տարրերի վերաբնակեցումից հետո Հալեպի նահանգի քաղաքներում և գյուղերում կոզապուտներն ու հափշտակումներն աներևակայիչ լափերի հասան: 1873 թ. փետրվարի 13-ին Հալեպից Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում էին, որ հայարևակ շրջաններում սխաղազությունը վրդովված է գլխովին: Ուլիսիա, Փրնուզ և Ալպաշ գյուղերն իրենց շուրջը գտնված պեշենցի, քերթմենցի, լեբքեզ և այլ Քուրբերեն պաշարված են: Սույն հայ գյուղերեն զով որ տեսնեն դուրսը կկոդապեն, կվիրավորեն և կմեղցնեն: Տեղական կառավարության այս մասին եղած բողոքներն ապարդյուն կմեան, վասնզի տեղական իշխանության միակ նպատակն է արգեն այս կոզմերու հայությունը... իսպառ փշայնեիլ»<sup>58</sup>:

Չերքեզները և նրանց միացած տեղական տարրերը ցեղերի հրոսակներն անպատիժ ասպատակում էին նաև Մարաշի սանջակի հայարևակ գյուղերը: Մի հազորգումում կարգում ենք, որ լեբքեզները եզիշերները, շատ անգամ տեղացի առևիկներու առաջ-

<sup>56</sup> «Положение армии в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896, стр. 71.

<sup>57</sup> Եսյն անգում, էջ 59:

<sup>58</sup> «Մարաշ», 11.III.1873:

նորոգութիւնները տունները կ'մտնեն, ընտանյաց մարդիկը կ'վերազո-  
րեն, և տունները կ'թալանեն. սնողոցներու մեջ, և շուկաները հայերը  
կանուղաւորվին, կ'զանազոծվին<sup>59</sup>: Մարաշում և նրա շրջակա հա-  
յարեակ գյուղերում կողոպուտը, թալանը և սպանութիւններն  
այնպիսի լապիս էին ընդունել, որ օտարերկրացի միտրոններն  
տեղական իշխանութիւնից պահանջել են հատուկ ոստիկանների  
միջոցով երաշխավորել իրենց անկի ու ունեցվածքի ապահովու-  
թիւնը: Նրանց պահանջը համարվել է անպատեհ և չի բավա-  
րարվել: Ուստի նրանք քաղաքից հեռացել են իրենց հարազատնե-  
րի հետ միասին<sup>60</sup>:

Հայկաջ քաղաքում շրջիցներ շրջաբնակեցվեցին: Այնտեղ  
այբրում էին մեծ մասամբ վարչական ու ոստիկանական պաշ-  
տոններում նշանակված նրանց առաջնորդները: Սակայն քաղաքի  
շուկաները միշտ էլ լցված էին լինում շրջից մուրացիկաներով  
և թափառաշրջիկներով, որոնք հաճախ թալանում էին խանութնե-  
րը, վաճառատնութիւններ գործում՝ առանց հաշի տանելու գոհերի  
կրտական և ազգային պատկանելիութիւնը: 1880 թ. գետնավարին  
Հաչնոցում ծագած հերթական խռովութիւնը վերջ է տրվել հա-  
հանգապետի ազգու միջամտութիւն շնորհիվ: Նշելով, որ ձերբա-  
կալվել են խռովութիւն մասնակիցներից 40-ի լափ անձինքը,  
«Մասիս» լրագրի թղթակիցը շարունակում է. «Այսօր բոլոր շու-  
կաները բաց են և երկուրդներն եթէ ոչ բողբոջվին, այլ մեծ մա-  
սամբ վերջացած է...: Ըսել է թէ կատարութիւն պաշտոնյայք,  
երբ պատիվ և պատիժ հավասարապես գործադրեն երբեք ոչ մի  
խռովութիւն չի ծագիր»<sup>61</sup>:

Ռուսն-ժաբմներ գրել է. «Կարելի՞ է արդոք գտնել մի որևէ  
այլ այնպիսի երկիր, որի կառավարութիւնը ձգտեր սեփական  
մարդիկը լցնել վաճի հորդաներով և ինքը նրանց առաջ այնպիսի  
երկրորդանք զենք՝ կա՛մ ապրել թալանելով ու կողոպուտով, կա՛մ  
ազգատնութիւնից ունենալու Քուրդիայի իշխանութիւնների վար-  
քագիծը ստիպում է մատենլ, որ նրանց մեջ միայն է ծագել քալ-  
քայլ և ունեացնել քրիստոնյա բնակչութիւնը»<sup>62</sup>: Այսպէս եզրա-  
կացնում է, որ գաղտնեցիկում ամենաբարձրութիւնները, գոն զեպքերի  
մեծ մասում, ստեղծում է ինքը՝ Քուրդիանը<sup>63</sup>:

<sup>59</sup> Եւլիս Թեղում, 22.IV.1879.

<sup>60</sup> Եւլիս Թեղում.

<sup>61</sup> Եւլիս Թեղում, 25.IV.1880.

<sup>62</sup> «Положение армян в Турции...», стр. 68—69.

<sup>63</sup> Եւլիս Թեղում, էջ 69.

Ավելին, թուրքական իշխանությունները պատժում էին այն հայերին, որոնք փորձում էին շերքեզների հարձակումներից պաշտպանել իրենց կյանքը, պատիվը և ունեցվածքը: Ծրբ հայ գյուղացիները դիմադրում էին կամ հա էին մղում թալանչիներին, ասպարեզ էին իջնում սասիկանեական ջոկատները, որոնք սոսկ շարունակում էին այդ շարագործների կիսատ թողածը: «Մասիսա-ի Հալեպի թղթակիցը հազորդում է, որ սուտիկանները, որպես կանոն, խրախուսում էին թալանչիներին, իսկ երանց դիմադրող հայ գյուղացիներին սիրբև ասպտամբ աւ անհնազանդա մերթապալում և արսորում էին»<sup>64</sup>:

Սակայն թուրքական կառավարությունն անհրաժեշտ էին ավելի արյունահեղ, ավելի բարբարոսական գործողություններ, և Քարձրագույն դուռը կենսամուխ հղամ ահա՛ որ բուռնցքի՝ համիդիե գնդերի ստեղծմանը, որպեսզի հասնի հայաշինչ այն ծրագրի իրականացմանը, որ հղացել էր տակավին սուս-թուրքական պատերազմի նախօրյակին: 1879 թ. սկզբներին Հալեպից արագանգում էին, որ սքրդերը և ուրիշ վանազան ցեղեր... կքաշալերվին<sup>65</sup>: Նշելով, որ Ջեզիրեի քրդերի պարագլուխները Հալեպ են հրավիրվել և բնեծ պատվով՝ ընդունվել նահանգապետի կողմից, «Մասիսա-ի թղթակիցը եզրակացնում է. «Ե՛րխանությունք օգտակար և աշխատասեր հպատակները վնասակար, իսկ վնասակարներն օգտակար դատելով իրենց ընթացից մեզ կքաշալերեն ասպազային զանոնք իրենց ունայն նպատակին ծառայեցնելու համար»<sup>66</sup>: Արդեն տրվագծվում էր համիդիե գնդերի վտանգը: Դրանք շուրջ մի տասնամյակ հետո պետք է մեծագույն շարիքներ պատճառեն ներքին զավառների հայ բնակչությանը:

Համիդիե գնդերի օարսափներից զերծ լմնաց նաև Հյուսիսային Միրիալի հայությունը: 1892 թ. Հալեպի անգլիական հյուպատոս Ա. Կետոնին, պատմելով Ազանալի նահանգում տեղի ունեցած արյունալի իրադարձությունների մասին, նշում էր. «Ե՛րխատարար համարյա միևնույն դեպքերն են կրկնվում նաև Հալեպի նահանգում... և հակված եմ մտածելու, որ եթե ազգու միջոցներ ձեռք լառնվեն, ապա թուրքերի վարքագիծն այդ վայրերի քրիստոնյա բնակչության համար կարող է լուրջ հետևանքների հանգեցնել»<sup>67</sup>:

<sup>64</sup> «Մասիս», 22.IV.1879:

<sup>65</sup> «Մասիս», 7.IV.1879:

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> «Генцид армян в Османской империи», Ереван, 1966, стр. 15.

1854 թ. Արեւմտյան Հայաստանի կոտորածներին զուգընթաց, թուրքական իշխանութիւնները զործողութիւններ անուարկեցին նաև Հալեպի նահանգում: Սակայն, ի տարբերութիւն այլ վայրերի, այստեղ, որտեղ ձերբակալութիւններից և արտոյից այն կողմ չանցան, թէև մի նահանգից մյուսն արտոյից բնակիչները հաճախ խողովորում էին բազմազաններին կողմից, կամ էլ մահանում բռնաւում: Ըստ Հալեպի ուսական հյուպատոս Յակիմանսկու, 1854 թ. Ալեքսանդրեաւում հրաման էր ստացվել տխառրեն հեռեկէ հայ բնակչութիւն վարքին: Նա գրում է. «Եվայմակամք դրանում հարմար առիթ է տեսնում հազնցնելու քողարկված ընչարազցութիւնը... Նա շատուում է ձերբակալել հայ բնակիչներին և նրանց ուղարկել Հալեպի նահանգից մի ուրիշ նահանգ...: Որպես քաղաքականապես անհուսալի ձերբակալված հայերը փրկագրին են վճարում նայած իրենց հնարաւորութիւնը և նշուխական պայմաններին: Ձերբակալված մնացին միայն նրանք, ովքեր չէին կարողացել բաժարարել կայմակամի պահանջները»<sup>68</sup>:

Յակիմանսկու զննուցագրում Հալեպի հայերի վերաբերյալ նշված է. «Վերջին ժամանակներս այստեղ ձերբակալվել են 30 հայեր՝ մի որևէ քաղաքական դավադրութիւն մասնակցելու մեղադրանքով: Նրանց մի քանիսը որպես ամենավտանգաւորներ պահակախմբի ուղեկցութիւնը ուղարկված են Կոստանդնուպոլիս, ուրիշները՝ Ալանայի, Դիարբեքի, Կարբեքի նահանգները»<sup>69</sup>: Հայերին արգելված է նաև առանց ուստիկանութիւն թուլլուութիւն զուրս գալ քաղաքի սահմաններից: Ուստիկանական հսկողութիւն է հաստատվել անգամ Սսի կաթողիկոսի Հալեպի բնակարանի վրա: Դրութիւնը ժանր էր նաև Քեյլանում<sup>70</sup>:

1895—1896 թթ. հայկական կոտորածների ստուգարեզ գարձաւ նաև Հալեպի նահանգը: Առաջինը հարվածի տակ ընկաւ Ուրֆայի սանչակի հայութիւնը: Ըստ ուսական գերագույն շտաբի փոխ-գնդապետ Տոմիլովի հաղորդման, Ուրֆա քաղաքի հայերի կոտորածը սկսվել է 1895 թ. նոյեմբերի 6-ին, ընդ որում, առաջին

<sup>68</sup> Նայն տեղում, էջ 22:

<sup>69</sup> Նայն տեղում:

<sup>70</sup> Թուրք առտիկանաւորներին պատգարծում էին ամեն առիթ, սրելու Քեյլանի հայ և մահմեդական սղգարեակիութիւն հարաբերութիւնները: Նրանց գիտաւորայ կերպով հայերի կալմակերպած զործ էին համարում այնտեղ ծագած հրդեհը. չնայած որ էրի Եարակ էին գարնել ավելի շատ հայերի, քան մահմեդականներին տեղը:

որը թալանվել է 300 տուն և սպանվել է 125 մարդ: Այնուհետև հայերը փակվել են իրենց թաղամասում: Դեկտեմբերի 16-ին շտաբարարները խուժում են հայկական թաղամաս և վերսկսում կոտորածն ու կոզդուլուար: Միայն 2000 հայեր հրկիզվում են եկեղեցում: Ստաբերկրացի միսիոներները Տոմիլովին պատմել են, որ այդ բոլորը կատարվել է Կոստանդնուպոլսից ստացված հրամանով, որ թուրքական զորքը և համիդիե հեծելազորը մասնակցել են կոտորածին ու կոզդուլուարին: Վերջում Տոմիլովը նշում է, որ թուրքական իշխանությունները կրկնում էին այն պաշտոնական վարկածը, ըստ որի շտաբերկրացի առաջ են բերել հայ հեղափոխականները, որոնց աշխատում էին անկարգություններով և նույնիսկ իրենց եղբայրակիցների արյան գեղով քրիստոնյաներին ապստամբության գրգռել, առաջ բերել նվաճողական տերությունների միջամտությունը, որպեսզի այդ միջոցով ինքնավարություն ևևս բերեն, անպատիժ կերպով շահագործեն և տեսեապես ստրկացնեն իրենց ասելի մահմեդականներին<sup>71</sup>:

Ջաղաբարարներն ավելի մուկնություններ են գործել Հայկաի նահանգի ներքին զավառներում: Այսպես, որինակ, Քիրեջիկում հայերից ովքեր էլ մորթվեցին կամ ծփրտա գետը լեռավեցին և հարկազրկված էին մահմեդականություն ընդունել<sup>72</sup>:

1895—1896 թթ. կոտորածների ալիքը չհասավ Հայկաի նահանգի հյուսիս-արևմտյան շրջանի հայաբնակ գյուղերին, սակայն նրանց վիճակված էր ապրել 1909 թ. Ազանայի կոտորածի ստրասպները:

Երիտթուրքերը, նոր եռանդով շարունակեցին սուլթան Աբդուլ Համիդի հայաշինչ քաղաքականությունը: 1909 թ. մարտի 31-ի գիշերը Ազանա քաղաքում սկսվեց հայերի կոտորածը, որին զոհ գնաց ավելի քան 30 հազար մարդ: Ազանայի կոտորածները սոցի

<sup>71</sup> «Отчет о поездке по Азиатской Турции генерального штаба подполковника Томилова в 1904 г.», ч. I, СПб, 1907, стр. 293—294. Ռեֆայի կոտորածի վերաբերյալ մի ֆրանսիացի պատեռոնի վերաբերյալ է գտնվում ֆրանսիական շնչի կոզդուլուարի մեկում, որով սպառնացվում է, որ թուրքական կառավարությունն է նախապատրաստել և իրականացրել կոտորածը: Ըստ այդ պարբերի, կոտորածին մասնակցել են 3000 թուրքական, 1500 համիդիե զինվորներ և քաղաքի մահմեդականները: Միայն երկու օրում կոտորվել են շուրջ 10.000 հայեր:

<sup>72</sup> «Братская помощь пострадавшим в Турции армянам», М. 1897, стр. 110—111.



հանեցին նաև Հալեպի նահանգի թուրքերին և մյուս մուսուլման  
 մահմեդականներին: Հալեպի նահանգի գյուղերում և քաղաքնե-  
 րում կոտորվեցին կամ թալանվեցին մեծ թվով հայեր: Կոտորած  
 և թալան կատարվեց անգամ Հալեպ քաղաքում, որտեղ սպան-  
 վեցին 368 հայեր, թալանվեցին հայերին պատկանող խանութնե-  
 րը և այլն<sup>73</sup>:

Հյուսիսային Միջինասիայի հայկական կոտորածների մասին Կոս-  
 տանդնուպոլսի ուսուսական դեսպան Ջինոզևը հաղորդում էր.  
 «Անգանայի մահմեդականների օրինակին հետևեցին Տարսուսի  
 մահմեդականները. (այսրիկի — Ն. Ք.) 3-ին սկզբեցին հրդեհները,  
 կոզուպուտները և սպանությունները: Այնուհետև անկարգություն-  
 ները տարածվեցին նաև հարևան վայրերում, առանձնապես Ա-  
 լեքսանդրիայում, որի շրջակայքում այրվել են մի շարք գյուղեր:  
 Կրկնխանում մորթուվել են 50 հայ ընտանիք, իսկ Պայասում  
 ազատ են արձակվել անդի բռնտում արդիլափակված 500 բան-  
 տարկյալներ, որոնք համաձայնել են մասնակցել վայրագություն-  
 ներին... Հակաքրիստոնեական ցույցեր են տեղի ունեցել նաև  
 Ջեյթունում, Մարաշում, Անտիոքում և Բիբրեչիզում: Այնուհետև  
 Ջինոզևը նշում է, որ եվրոպական ռազմանավերի ժամանման  
 շնորհիվ ծավաճեց շրջաններում անգործությունը՝ վերահաստատ-  
 վել է, իսկ տափից հեռու վայրերում սպանող շարունակվել է<sup>74</sup>:  
 Անգրագառնալով այսրիկի 12—14-ի կոտորածներին, Ջինոզևը հա-  
 վաստում է, որ թուրքական կանոնավոր զորքի Ագանա մանելուց  
 հետո կոտորածները «նոր ուժով վերսկսեցին» նաև Հյուսիսային  
 Միջինասիայում: Եվրոպական ռազմանավերը, որոնք զորք էին իջեցրել  
 Մերոսիում և Ալեքսանդրիայում, ոչինչ չէին անում ապահովելու  
 համար ներքին գավառների հայության անվտանգությունը: «Ան-  
 կասկած, եվրոպացիների այս զարմանալի վարքն ավելի համար-  
 ձակություն տվեց մարզասպաններին և թալանիներին: Եվ Կրկն-  
 խանի, Բեյլանի, Փեսարի, Անտիոքի, Մարաշի, Քիլիսի, Օսմանիեի,  
 Համիդիեի և նրանց շրջակա գյուղերի հայության զգալի մասը  
 սհրկիզվել և մորթուվել է<sup>75</sup>»:

Յուրաքանչյուր գյուղի, քաղաքի և շրջանի հայությունը յուրօ-  
 վի այսրիկի 1909 թ. այսրիկի ողբերգությունը: Մեկուսացված վայ-

73 Մ. Քեյչյան, Սին մատյակ, Բեյրութ, 1949, էջ 251:

74 «Генерал армян в Османской империи», стр. 168.

75 Նույն տեղում, էջ 171:

բերի հայ գյուղացիները կոտորվել են մինչև վերջին մարտը: Սովաձերձ լեռնային շրջանների հայերը կոզմետիկ քաշվել են անառիկ բարձրունքները կամ ետհանել գեղի հարավ: Եղել են եսև ոչ քիչ թվով գյուղեր, որոնք ինքնապաշտպանութուն են կազմակերպել և հերոսական մարտերով ետ մղել թշնամուն: Հատուկ հիշատակութան է արժանի Գեորգ-Յուլի կամ Չորք-Մարզվանի գյուղացիների հերոսամարտը: Մինչև ապրիլի 2-ը Չորք-Մարզվանում խաղաղություն էր տիրում: Սակայն հարձակման ենթարկված հարևան գյուղերից Չորք-Մարզվան լցվեցին շուրջ 5000 հայեր, իսկ երանց հետքերով գալիս էր 20—30 հազարանոց թշնամին՝ թուրքական կանոնավոր բանակի միավորներ և շարժրոզացի, մարաշցի, ալեքսանդրի, քուրդ-գաղցի բաշիրոզուկներ: Գյուղացիները որոշում են պաշտպանվել և գյուղի շուրջը կառուցում են 150 պաշտպանական հրակնատներ: Գործի է դրվում շտապ կառուցած զինագործակա՞ն արհեստանոցը, որտեղ բավելի քան 100 մարդ պատրաստում էին փամփուշտ, պատրոն և հատուկ թնդանոթներ՝ լարով փաթաթված հաստ գերաններով: Առաջին օրերի վախից հետո սղամարդկանց միացան նաև գերանդիներով և մանգաղներով զինված շուրջ 100 կանայք...: Առաջին հարձակումները հաջողությամբ ետ մղելուց հետո, սհայերն արդեն պատրաստվում էին վերջին բախմանը: Պատրաստված էր 3000 նիզակ, որոնցով պե՞տք է զինվելին միայն կանայք և անշափահանները...: Վճռված էր հարձակման անցնել և, պաշարման շղթան ճեղքելով, Ալեքսանդրեոս հասնել<sup>78</sup>, Մայիսի 3-ին Չորք-Մարզվան է ժամանում հաշտարար հանձնաժողովը, որը և շարզարարներին օտիպում է հեռանալ:

Հոծ թվով հայերով բնակված վայրերում թուրքերը, որպես կանոն, զիմում էին կեղծիքի և խարդավանքի: Երանք գործադրում էին ամեն հնարավոր միջոց, որպեսզի մթաղեն հայերի զգոնութունը և զինաթափեն երանց: Անտիրում, օրինակ, հայերը հանձնեցին զենքերը, հավատարով կայմակամի հանդիսավոր խոստումին, թե զինաթափվելու զեպքում կերաշխավորվի երանց անվտանգութունը: Սակայն դրանից հետո տարբեր շրջաններից հավաքված ընչաքաղց բաշիրոզուկները, քաղաքի մոլիսանդ մահմեդականները և թուրքական կանոնավոր բանակի զինվորները հարձակվեցին անզեն ու անպաշտպան հայաբնակ թաղերի վրա: Մի քանի օր տևող կոտորածից ազատվեցին լոկ սակավաթիվ հա-

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 177—178:

չիւր Հայերի ամբողջ ունեցմանը թալանվեց, իսկ գատարկված աներն ու խանութները հրո ճարակ դարձան<sup>77</sup>։ Անտիոքի Հելա և արդյունավետ ասպատակութունից Հետո բաշիբոզուկների խաժամուժը ուղղութիւն վերցրեց դեպի Քեսար։ Քեսարի Հայերի Լահատագրի մասին լատին միսիոնար Սարաստինոս պատմում է. «Ապրիլի 23-ին 30 հազար թուրքեր (որոնց մեջ բավական թվով չիբեզներ), այրելի հոքը Կալալըզի, Էսկի-էորձն և Չինարջիկ գլուղները, երեք կողմերն շրջապատեցին Քեսար ավանը։ Քեսարցիները, որոնք զենքեր ունեին, անմիջապես գլուղն զուրա դիրքեր բռնեցին, որպեսզի առնվազն մի քանի ժամ զանգաղեցնեն թուրքերու առաջխաղացքը, և կիներն ու մանուկները կարենան լոնեբրը փախչելու... երեք հարյուր կտրիճները, որոնք երեք կետերու վրա կաշառուանեին Քեսարի մուտքը, հաղիվ մեկ ժամ դիմադրելուց Հետո նահանջեցին. անոնց դիրքերը Էնզքված էին...»<sup>78</sup>։ Այնուամենայնիվ այդ դիմադրութիւնը Քեսարի բնակչութիւնը ճնշող մեծամասնութիւնը հարավորութիւն է ավելի ասպատանելու լոնեբրում՝ ժողովնյա Կարադուրան գլուղի մերձակայքում։ Քուրքական ամբոխը կուտորէ է Քեսարում մնացած ծերերին ու հիվանդներին, թալանել ու այրել աները, եկեղեցիները և պարոցները։ Գրանւով քեսարցիների ողբերգութիւնը լավարտվեց։ Մինչ շարզարարները թալանով էին զբաղված, ազնույաները շարժվում են դեպի հարավ Լատակիա, բայց հենց առաջին թուրքական գլուղում հարձակման ենթարկվելով՝ Լանապարհը շեղում են դեպի համեմատաբար անվտանգ Բասիա գլուղը, և Սարաստինոյի գլխավորութիւնով ներկայացուցիչներ են ուղարկում Լատակիա՝ օգնութիւն առանալու համար։ Բասիտում են ասպատանում նաև Բողչաղաղի, Չինարջիկի, Կարադուրանի, Էսկի-էորձնի, Կալալըզի և Էկիզ-Օլուկի ազնույաները։ Պատասխանելով քեսարցիներին օգնութիւն կանչին, Ֆրանսիական սփյու Ֆիրիս և Ենիժերե նավերը Բասիտում հավաքված շուրջ 6000 հայերի տեղափոխում են Լատակիա<sup>79</sup>։

Քուրքական շարզարարների գրոհին ենթարկվեցին նաև Սվեդիայի հայկական գլուղները։ Քեսարի և նրա շրջակա գլուղների թալանն ավարտելուց Հետո բաշիբոզուկների բազմահազարանոց խաժամուժը թեքվում է դեպի հյուսիս՝ Մուսա լեռան շրջանը։

<sup>77</sup> P. Jacquot, Antioke, II, Beyrouth, 1931, pp. 313—314.

<sup>78</sup> Տե՛ս Ա. Ք ժ մ ի բ յ ա ն, Քեսար, էջ 55—57։

<sup>79</sup> G. Brézel, Les Turcs ont passé-là..., Paris, 1911, p. 264—265.

հըզը-բեկի հայ գյուղացիները պատրաստվում են ինքնապաշտպանութան, սակայն նրանց օգնության է հասնում անգլիական «Տըրումֆ» զրահանավոր Զարգարարներն Անտիոք են վերադառնում, թալանելով ու այրելով իրենց նախապարհին հանդիպած անպաշտպան գյուղերը: Կարտախն, Յոզոն—Օլուկ, Վակնք, Բիտիաս և Լաչի-Լարիբլի գյուղերը կրում են նյութական հսկայական վնաս, և տալիս են զգալի թվով զոհեր: Ազետն այդ գյուղերում թողնում է 340 այրի և 222 որս<sup>80</sup>:

1909 թ. ապրիլի վերջերին կոտորածները զազարեցին, և սկսվեց հանցագործությունների հետաքննությունը: Ծրիտթուրքերը մաքիավելական հնարանքներ գործադրեցին պատասխանատվությունից խուսափելու համար: Թուրքական կառավարությունը ցուցադրական մեղով բնականացեց աղետալիների օգնության գործին<sup>81</sup>, որը կազմակերպել էին հվրոպական զանազան բարեգործական ընկերություններ, և ստեղծեց զինվորական հատուկ ատյան, որը իբր պետք է դատեր և պատժեր կոտորածների պատասխանատուներին: Սակայն պարզվեց, որ զինվորական ատյանին ներքին կարգով հանձնարարված է եղել ոչ թե հանցագործներին պատժել, այլ քապացուցել, որ հայերն ապատամբություն են քարկրացրել, իրենց դեմ զրգելով թուրք ազգաբնակչությունը: Դրա հետևանքով քապատամբության ղեկավարներից 12 անմեղ հայեր մահվան դատապարտվեցին, իսկ 44 հոգի՝ տարբեր ժամկետով արգելափակման: Զինվորական ատյանը մահվան էր դատապարտել նաև շուրջ 50 թուրքերի, սակայն այդ մահավճիռներից միայն քսանն ի կատար ածվեցին: Կոտորածների ամենապղծավոր կազմակերպիչները՝ երիտթուրքական պարագլուխները, մնացին անպատիժ:

Կեղծիքն այնքան բացահայտ էր, որ զինվորական ատյանի հղրակացությունը լարժանացավ անզամ թուրքական պառլամենտի հավանությունը: Մտեղծվեց պառլամենտական քննիչ հանձնաժողով (Յուսուֆ Քեմալ, Լակոբ Պապիկյան և ուրիշներ), որը

<sup>80</sup> «Ազնաբեր», 1910, էջ 944:

<sup>81</sup> Աղետալիների օգնության հարցը թեև արվել է թուրքական պառլամենտում. որովհետև է 100.000 լիրա հատկացնել կոտորածներից առժամանակին, 50.000 լիրա՝ որդերին և այրիներին, ինչպես և 50.000 լիրա վարկ տուլ թալանված անարականներին: Բացի այդ, զբաղական օգնության խոստում է արվել նաև Անտիոքի և Քեսարի շրջանների հայ գյուղացիներին:

պէսք է լիներ ազեաի վայրերում և ստուգեր զիստերը: Գործադիր իշխանութիւնն իր հերթին նշանակեց մի ուրիշ հանձնաժողով (էսաթ բնւ, Հարութիւն Մասիւլյան և ուրիշներ), որը պէսք է գործեր առաջինից անկախ: Այդ հանձնաժողովները պաշտօնապէս հաստատեցին հայերի անմեղութիւնը և կառավարութեան ուշադրութիւնը հրաժիրեցին հանցագործների վրա, սակայն վերջինս ոչ մի միջոց չձեռնարկեց նրանց դեմ: Պատշաճ նախապէս հանձնաժողովի անդամ Հակոբ Պապիկյանը, որը կառավարող կլիկի ցուցումների համաձայն չէր զեկուցագիր կազմել, վախճանկեց խորհրդավոր պայմաններում: Կոտորածների հարցը փակված համարվեց 1909 թ. հուլիսի 31-ին, երբ թուրքական կառավարութիւնը պաշտօնապէս հայտարարեց, որ հայերն սոսմանյան պետութեան որինապաւ հպատակներն են և պատասխանատուութիւն չեն կրում կոտորածների համար<sup>82</sup>:

Արդ, ինչպիսի՞ դերք զրավեցին Սիրիայի արարները հայկական կոտորածների ժամանակ: Ակնբախ իրողութիւն է, որ արարներն այնքան էլ փութկոտութեամբ չէին կատարում երիտթուրքական կառավարողների հրամանները, Հակոտակ զեպցում կոտորածները կու կտային նաև Հարավային Սիրիայի հայերին, այնինչ, հիշատակութեան արժանի հակահայ զեպքեր շարանգեցին ո՛չ Դամասկոսում, ո՛չ Համարում, ո՛չ էլ Հոմոսում: 1909 թ. հայկական կոտորածների կենտրոն Ադանայից զեպի հարավ ցընցումների ալիքները զնալով թուլացան և չհասան անգամ մինչև Լտասիկիա, որովհետև այդ շրջաններում զնալով փոքրանում էր թուրք ազգարնակչութեան թիվը: Զբացտեխով հանգերձ որոշ մոլնոանց մահմեդական արարների մասնակցութիւնը կոտորածներին, պէսք է նշել, որ դա մասնակի բնույթ էր կրում և ամենկին շփրածվեց հայ-արարական թշնամանքի:

Այդ է վկայում այն արդարամտութիւնը, որ արարական մամուլի շատ օրգաններ ցուցաբերեցին հայկական կոտորածների պատճառները քննարկելիս: Դրանք բազմական համարձակ կերպով կոտորածների պատասխանատու էին համարում իրենց կրոնակից թուրքերին, մանավանդ երիտթուրքական կառավարութեանը: Հաշեպի ԵԱԼ-թակագրումա արարական լրագիրը նշել է. «Մահացու մեղք է կարծել, թե Ատանայի զեպքը պատահական, տառնց կան-

<sup>82</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 3, Երևան, 1929, - էջ 2120—2121.

խամտածութիւն զորժածված է։ ... Հայերը, իրենց ափին մեղ ունենալով սանձը վաճառականութեան, կրթութեան և արհեստի, անբաղդասեւի կերպով զարգացած և հառաչազեմ վիճակ ունեն զիրենք շրջապատող տարրերուն, մանավանդ քուրքերուն մեղ, սակայն միշտ շլատված էին քուրքերուն կողմն և ընկճված տեղական կառավարութեան հարվածներուն տակ։ ... Հայերը բնականաբար ամենեն ակնի խանդավառութեան նշաններ ցույց տվին, օրախոսութեամբ գրկեցին Սահմանադրութիւնը, քանզի ... կարծեցին թէ այնս թո՞ք փառած են զիրենք զարեւելի վեր տառապեցնող ազիտութեան լուծը։ ... Սահմանադրութեանն անաչ հայերն կողմնադրած զրամներուն, հափշտակած կալվածներուն համն իր քմաց այնքան անուշ եկած էր, որ հիմա այդ կեղեքումները զորժողրելու առիթ շունենալով, երիտքուրքական կառավարութիւնը քորքորած բարկութեամբ կզիտեր անոնց շարժումներն և կակնածեր անոնցմն, վախենալով որ մի գուցն այն կաթնատու կովը, զոր միշտ կկթիւր ուզածին պես, այժմ առյուծի փոխված ըլլալով, զիրենք բզքան արդար վրեժխնդրութեամբս<sup>83</sup>։

1911 թ. իտալո-քուրքական պատերազմի ժամանակ, երբ Սիրիայի մահմեդական հետադեմ շրջանները պահանջում էին շիհա՛ կրօնական պատերազմ հայտարարել, բազմաթիվ արար մտավորականներ հատերով, կոչերով և հողվածներով նպաստեցին հակաքրիստոնեական կրքերի մեղմացմանը, լավ իմանալով որ շիհատը պատրվակ էր ծառայելու քրիստոնեաներին, մասնավորապես հայերին կոտորելու և թալանելու համար։ Գրանցից Վալի ադ-Ցեկենը գրել է. «Մեր իսլամ հրապարակագիրներն ազգը կառաջնորդեն կորստյան համբան... Իտալիո հեռ մեր ունեցած դժբախտութիւնը պատեառ եղավ, որ մեր նախկին մուլեուանց հիմարութիւնները կրկենենք, որոնք մեզ ամոթ օւ նախատինք բերելն զաս օպտակարութիւն մը լուսին բնավ։ ... Ճիհա՛ արբազան պատերազմի կմզին ժողովուրդը, ոչ թէ Իտալիո զեմ հակատելու, այլ քրիստոնեութեան զեմ ելլելու. ժողովուրդին աշակցութիւնը կպահանջեն ոչ թէ թշնամի նավատորմը վանելու, այլ նոխազը հալածելու, որպես թէ պատերազմողները մեզի հայրենակից քրիստոնեաներն եղած ըլլալին... Քրիստոնեութիւնն ոչ Իտալիո սեփականութիւնն է, և ոչ ալ բոլոր քրիստոնեաներն անոր զինվորներն են. և՛եր քրիստոնեա եղբայրներուն սրտերը հանգաբանեցնելու

83 Մեղրեումը օմ'ս շրջանագրեմ, 25.VIII.1909:

շանացիք անկեղծ ու բարի վերաբերումով, մի արյունեք այն սրբ-  
անբր, որոնց մեջ դուք տեղ մը ունենալու եք սիրվելու համարս<sup>84</sup>։

1912—1913 թթ. Միրիայի արարական մամուլը հանդես էր  
գալիս Բեռլինի պայմանագրի 61 հոդվածի կենսազորածան օգտին։  
Հաղորդելով, որ օսմանյան կառավարությունը որոշել է բարենե-  
րոգումներ կատարել հայկական նահանգներում, Հալիպի բնի-  
թակազդում-ը գրում էր. «Չկարծվի որ մասնավոր շնորք մ'է կա-  
ռավարության կատարելիք այդ բարենորոգումները, հայոց ար-  
գար իրավունքն է, որ այնքան ատենն ի վեր կպահանջվեր հաս-  
տատամիտ և քաջակորով դիմամեներով...» Հայ ազգը իր զովելի  
ձեռներեցություններ, համբերատարություններ ու խոհեմություններ  
կրցած ամեն արկածի ու պատահարներու կուրծք տալ, դիմանալ,  
և մինչև իսկ սուլթան Համիդի բանտերուն, աքաղաղներն ու շար-  
դերուն հանդեպ արհամարհանոք վերաբերվելով։ Հայը իր վերո-  
հիշյալ բարեմասնություններով հաշոգեցած իր ազգային միություն-  
ներ պահպանել, և այդ միություններ ալ հաշոգեցած ազատության  
մեծ գործին մեջ ակնառու գործունեություն ցույց տալ։ Ուստի այդ  
ազգը արժանի է շատագուվանքի։ Իցիվ թե մեր երկրի մյուս տար-  
րերն ալ օրինակեն, և հետևին հայ նկարագրին ու բարեմաս-  
նությունը<sup>85</sup>։

Այսպիսով, Միրիայի հայությունը համարյա միևնույն լավով  
բաժանում էր ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Կիլի-  
կիայի հայության դառն ճակատագիրը։ Երբունակելով Արդու Հա-  
միդի հայաշինչ քաղաքակախությունը, երիտթուրքերը Միրիայում  
էլ հայերի դեմ անպատիժ հանցազորությունների էին մղում ոչ  
միայն թուրքերին, այլև մահմեդական ընչաքաղց ու մուսուլման  
տարրերին։ Հայ-արարական հարաբերությունները երբեք թշնա-  
մանքի չվերածվեցին, այլ, ընդհակառակը, ավելի ու ավելի սեր-  
տացան մասնավանդ այն ժամանակ, երբ ուժեղացած արարների  
ազգային-ազատագրական պայքարը օսմանյան տիրապետության  
դեմ։

Ամփոփենք. թուրքական սուլթանները մեծ մասամբ լկենսա-  
զործեցին ՔանդակաՔը և Նրան հետևող հոգային օրենքները, որոնք  
կարող էին ճանաչարհ բանալ թուրքիայի և նրա տիրապետության  
ներքո գտնվող երկրների, այդ թվում Միրիայի, կապիտալիստա-  
կան զարգացման համար։ Նրանց պարարային նոր քաղաքակախու-

84 Մեյրեբումը ակ'ս ետի սեզում, 13 և 14.XII.1911:

85 նույն սեզում, 9.VI.1913:

Թյունը, ի սպաս դրվելով ազգային ճնշման քաղաքականության  
 նպատակների իրականացմանը, պաշտպանում էր ֆեոդալական  
 վերնախավի շահերը: Ռազմա-ֆեոդալական հողատիրությանը  
 փոխարինող համեմատաբար ավելի զարգացած ֆեոդալ-կալվա-  
 ժատիրական հողատիրությունը հանգեցրեց Օսմանյան կայսրու-  
 թյան քաղաքագր աշխատավոր գյուղացիության սոցիալ-տնտեսա-  
 կան և քաղաքական վիճակի վատթարացմանը: Ֆեոդալ-կալվա-  
 ժատիկները, իրախուսվելով Թուրքական կառավարողների և օ-  
 սարները կապիտալիստների կողմից, բռնազրավում էին գյու-  
 ղացիական հողերը, աստիպեցնում հողազուրկ ու սակավահող  
 գյուղացիների շահագործումը և, հնարավորության դեպքում, սահ-  
 մանափակում նրանց անձնական ազատությունները: Կեղծքիչներն  
 առավել ասնձարձակ էին գործում քրիստոնյա, հատկապես հայա-  
 բնակ գյուղերում: Հայ գյուղացիության ճնշող մեծամասնությունը,  
 զրկված լինելով եվրոպական պետությունների պաշտպանությու-  
 նից, ոչ միայն բարբարոսաբար կեղծքվում ու կոռուպվում էր,  
 այլև ենթարկվում էր ազգային դաժան ճնշման: Այդ քաղաքակա-  
Հոկտեմբերի 11-ին իսրայելական զորքերը սիրիական սազմաճակատում դիմեցին հակահարձակման և Դամասկոսի ուղղությամբ անցան կրակի դադարեցման գծերը։ Մակալն սիրիա-իրաքյան և պաղեստինյան զորքերի հերոսական դիմադրության շնորհիվ այդ հակահարձակումը կասեցվեց։

Այդ մարտերում սիրիական բանակը ցուցաբերեց բարձր կարգապահություն, իսկ խաղաղ բնակչության մեջ շնչառվեց որևէ խուճապ։ Բուլոբը համակված էին մեծ վնասականությամբ<sup>16</sup>։

Սովետական Միությունը պատերազմի առաջին օրվանից պաշտպան կանգնեց արաբական ժողովուրդների արդարացի պայքարին։ Սովետական կառավարության 1973 թ. հոկտեմբերի 8-ին հրապարակված հայտարարության մեջ խիստ զարտապարզվեց Իսրայելի էքսպանսիոնիստական ու արկածախնդրական քաղաքականությունը։ «Սովետական Միությունը, — ասված է հայտարարության մեջ, — հաճառարիմ ազատության ու անկախության մզտող ժողովուրդներին զորավիզ լինելու իր սկզբունքային քաղաքականությունը, հետևողականորեն հանդես է գալիս որպես արաբական պետությունների հուսալի բարեկամ»<sup>16</sup>։

1973 թ. հոկտեմբերի 12-ին հրապարակվեց ՏԱՍՍ-ի հայտարարությունը, որտեղ ասված էր, «Սովետական Միությունը չի կարող անտարբեր լինել իսրայելական սազմաժոյնների հանցավոր

<sup>13</sup> ۲۵۷ «التصير»

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 258:

<sup>15</sup> ۲۱ «الأخبار» العدد ۱۳۶، ۲۰-۹-۱۹۷۵، ص ۲۱

<sup>16</sup> ۲۷ «الأخبار» العدد ۳۹، ۲۷-۱۰-۱۹۷۳، ص ۲۷

<sup>16</sup> «Սովետական Հայաստան», Բ.Մ. 1973:

գործազուսթյունների նկատմամբ, որոնց շարունակումը լուրջ հեռանկարների կհանգեցնի հենց Իսրայելի համարը<sup>17</sup>։

Արար հանրահայտ բանաստեղծ Մահմուդ Գարվիշն այդ թեմ սրերին տալ-Ախրար-ի էջերում հանդես եկա՞վ մարտական մի ակնարկով, որտեղ համեմատություն մեջ էր դնում Սոփիստական Միության և ԱՄՆ-ի բուստ գիրքերը պատերազմի նկատմամբ «Սիմա քոսին, նշում էր նա, սպասելով է արարներին, իսկ սոփիստական հավատարիմ բարեկամների ուղարկած հրթիռները պաշտպանում են հայրենի հողը ամերիկյան պատերազմի աստօնցի «ԱՄՆ-ը,— շարունակում է Գարվիշը,— ոչ թե թշնամու պաշտպանն է, այլ հենց ինքն է արարների գլխավոր թշնամին<sup>18</sup>։

Սակայն Իսրայելի կառավարող շրջաններն անսալով բանականություն հասնել և սղաճելով ամերիկյան իմպերիալիզմի հովանավորությունից, կարողացան սիրիական սաղմաճակատում հասնել զգալի հաջողությունների Այնուհետև՝ Հոկտեմբերի 15-ին, իսրայելական զորքերը հակահարձակման անցան նաև եգիպտական սաղմաճակատում։ Նրանց հաջողվեց Հեղեբել սաղմաճակատը և անցնել Սուեզի ջրանցքի արևմտյան ափը։

Սկզբնական շրջանում Սուեզի ջրանցքի արևմտյան ափն անցած իսրայելական զրահատանկային զիվիզիային գլուրությունաբարելի էր նա մղել, եթե եգիպտական ու նրանց սղնաղ ալմիրյան զորքերը ժամանակին հակահարձակման անցնեին։ Սակայն դա անելի լուծեցա՞վ և մինչև Հոկտեմբերի 22-ը Իսրայելը ջրանցքի արևմտյան ափ անզափսխեց նա 7 զրահատանկային զիվիզիա ու Հնասազալում բավականին ահանություններ պատահանեց Եգիպտոսին։

Հոկտեմբերի 17-ին պարզ դարձավ, որ Եգիպտոսի սաղմական վեճակը սպասնայից է։ Այդ պայմաններում Սոփիստական Միությունը հարկադրված էր վճռական քայլերի գիմելու իսրայելական ազրեսիան կասեցնելու և կրակը դադարեցնելու համար։ 1973 թ. Հոկտեմբերի 16—19-ը Կահիրեում էր գանձում ՄՍՀՄ Միջադարձների սովետի նախագահ Ա. Ն. Պոսիզինը, որը մի շարք հանգիպումներ ունեցա՞վ Եգիպտոսի պրեզիդենտ Ա. Սադատի հետ, քննարկելով գինազազարի շուրջը համաձայնություն գալու հարցերը։

<sup>17</sup> Նույն տեղում, 12. I. 1973:

<sup>18</sup> V «الاجل», العدد 38, 1973—10—20.

Քացի այդ, Սովետական Միությանը կոնտակտներ հաստատեց ԱՄՆ-ի կառավարության հետ: Մոսկվա ժամանեց ԱՄՆ-ի պետական քարտուզար Հ. Քիսինջերը, որը հոկտեմբերի 20—22-ը բանակցություններ էր վարում ՄԱԿԿ Կենսկամի գլխավոր քարտուզար Լ. Ի. Քրեմենի հետ: Այդ բանակցությունների հիման վրա հոկտեմբերի 22-ին Սովետական Միության ու ԱՄՆ-ի խնդրանքով հրավիրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստ, որը ընդունեց Մ 338 բանաձևը: Այդ բանաձևով Անվտանգության խորհուրդը կոչ էր անում որոշման ընդունումից ոչ ոչ քան 12 ժամ հետո դադարեցնել կրակը, զորքերը թողնելով իրենց զբաղված դիրքերում: Քացի այդ, շահագրգռված կողմերին կոչ էր արվում անհապաղ սկսել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի Մ 242 բանաձևի գործնական կատարումը: Անվտանգության խորհուրդը միաժամանակ որոշեց շահագրգռված կողմերի միջև բանակցություններ սկսել համապատասխան հովանու ներքո, նպատակ ունենալով արգար ու կայուն խաղաղություն հաստատել Մերձավոր Արևելքում<sup>19</sup>:

Այդ ժամանակ արաբական ժողովրդական զանգվածները դեռ ապրում էին պատերազմի առաջին օրերի հաղթանակների խանդավառությունը և հույս ունեին, որ բոլոր տվյալները առկա են հաղթանակի համար: Այդ իսկ պատճառով նրանք անակնկալի եկան Անվտանգության խորհրդի այս բանաձևից:

Արաբական որոշ աշ հոսանքներ փորձեցին վերհիշյալ բանաձևը ներկայացնել որպես սովետական նախաձեռնություն, որպես արաբներին պարտադրված մի քայլ: Մերկացնելով այդ շրջանների հեղուրանքները, տալ-Ախրաբ-ը գրում էր, որ «Դա միանգամայն Եզիպտոսի խնդրանքով է կատարվել»<sup>20</sup>:

Եզիպտոսի կառավարությունն իր համաձայնությունը տվեց բանաձևին: Նույնպեսի դիրք զբաղեց նաև Միրիայի կառավարությունը: Հրապարակված սիրիական պաշտոնական հաղորդագրությունում ասված էր, որ «Առաջադիմական ազգային նահատի Կենտկոմը քննարկեց Անվտանգության խորհրդի Մ 338-րդ բանաձևը և որոշեց ընդունել այն, քանի որ դա նախատեսում է իսրայելական զորքերի դուրսբերում արաբական օկուպացված տերիտորիաներից»<sup>21</sup>:

<sup>19</sup> «Սովետական Հայաստան», 22. I. 1973:

<sup>20</sup> «الخبير», العدد 39, 27-10-1973, ص 5

<sup>21</sup> «الخبير», العدد 39, 27-10-1973, ص 6

Իսրայելի ներկայացուցիչը հայտարարեց, որ իր պատվիրակությունը «զրահան է վերաբերվում» բանաձևի նախագծին<sup>22</sup>։

Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) ներկայացուցիչը հայտարարեց, որ պաղեստինյան հեղափոխությունը ոչ մի առնչություն չունի այդ բանաձևի հետ<sup>23</sup>։ Իրաքը նույնպես միտական զիջք զբաղեց Անվտանգության խորհրդի այդ բանաձևի հանդեպ։

1973 թ. Հոկտեմբերի 22-ին Լիբանանի կոմունիստական կուսակցության կենտկոմի քաղցյուրոն արտահերթ նիստ գումարեց՝ Անվտանգության խորհրդի որոշման լույսի տակ քննարկելու Մերձավոր Արևելքի իրազրությունը, Քաղցյուրոն կոչ էր տեսում խուսափել արաբական առաջադիմական շարժման պառակտումից, որին ձգտում էին խմբերիպիչներ ու սիոնիզմը, «Արաբական և միջազգային առաջադիմական ուժերի միասնությունը», — ստված էր քաղցյուրայի հայտարարության մեջ, — գլխավոր նրաշիթն է պայքարի հարատևման համար՝ ի խնդիր արաբական օկուպացված տերիտորիաների ամբողջական ազատագրման և Պաղեստինի արտ ժողովրդի օրինական իրավունքների պահպանման<sup>24</sup>։

Սակայն, Հոկտեմբերի 23-ին Իսրայելը խախտեց կրակի դադարեցման որոշումը և ուխտագրոթորեն հարձակվեց եգիպտական զորքերի զիջքների, ինչպես նաև խաղաղ բնակչության վրա։ Իսրայելական զորքերը շրջապատեցին Սուեզ քաղաքը և կարեցին այնտեղ զննվող եգիպտական Զ-րդ բանակի մատակարարման ճանապարհը։

Սովետական Միությունը վճռականորեն դատապարտեց կրակի դադարեցման վերաբերյալ որոշման խախտումները Իսրայելի կողմից։ 1973 թ. Հոկտեմբերի 23-ին հրապարակվեց սովետական կառավարության հայտարարությունը, որտեղ ստված էր. «Սովետական կառավարությունը Իսրայելի կառավարությանը նախազգուշացնում է այն շատ ծանր հետևանքների մասին, որ կհարուցի նրա ագրեսիվ գործողությունների շարունակումը ընդդեմ Սօցիալ-

<sup>22</sup> «Անվտանգության Հայտատու», 22.1.1973։

<sup>23</sup> Դ, «الاجبل», العدد 139, 10-11-1973, ص 6

<sup>24</sup> «الاجبل», العدد 139, 10-11-1973, ص 12

տոսի Արարական Հանրապետության և Միջին Արարական Հանրապետության<sup>25</sup>։

Հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց մի նոր բանաձև՝ N 339, պահանջելով, որ զորքերը վերադարձվեն այն դիրքերը, որ նրանք զբաղում էին կրակի գազարեցումը ուժի մեջ մտնելու պահին։ Բանաձևը նախատեսում էր ՄԱԿ-ի զիտորդներ ուղարկել, որպեսզի նրանք հսկեին կրակի գազարեցման ապահովումը Եգիպտոսի և Իսրայելի միջև։

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հոկտեմբերի 25-ին ընդունեց N 340 բանաձևը, որով նախատեսվում էր մեծացնել ՄԱԿ-ի զիտորդների թիվը երկու կողմերում։

1973 թ. հոկտեմբերի 26-ին Մոսկվայում զույգարժան խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսում արտասանած նառում ՄՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևն ասաց, — «Մենք պատրաստակամություն հայտնեցինք բազարարել Եգիպտոսի խնդրանքը և արդեն ուղարկել ենք այդպիսի ներկայացուցիչներ։ Գրա հետ մեկտեղ, մենք խորհում ենք նաև այլ հնարավոր միջոցների մասին, որոնց ձեռնարկումը կարող է պահանջել իրազրությունը»<sup>26</sup>։

Եգիպտոսի պրեզիդենտ Ա. Սադատը 1973 թ. նոյեմբերի 1-ին էլուլթ ունենալով մամուլի կոնֆերանսում ընդգծեց, որ Մովստական Միությունը որպես բարեկամ և խաղաղության պահպանման համար պատասխանատվություն կրող տերություն, կատարում է իր պարտականությունը։ Նույն կոնֆերանսում անդրադառնալով ԱՄՆ-ի դիրքին, նա նշեց, որ ընայած Միացյալ Նահանգները Իսրայելին զենք են մատակարարում, դրա հետ միասին եզանսարուկտիվ դիրք բռնեցին խաղաղության հասնելու նպատակով<sup>27</sup>։

Այս հայտարարությունն արվեց այն ժամանակ, երբ պատերազմական գործողությունները շին գազարեցվել սիրիական ուղեմանակատում, և ԱՄՆ-ը շարունակում էր զինել Իսրայելին Հայտարարությունից երևում է ԱՄՆ-ին արդարացնելու Եգիպտոսի հե-

<sup>25</sup> «Մովստական Հայաստան», 24.X.1973։

<sup>26</sup> Լ. Ի. Բրեժնև, Հանուն արդարացի, զեմոկրատական խաղաղության, Հանուն սոցիալիզմի անվտանգության և միջազգային համագործակցության, Երևան, 1973, էջ 15—16։

<sup>27</sup> «الاجل»، العدد ٤٠، ١٩٧٣—١١—٤٠، ص ٣٧

ատգա քաղաքականությունը բնորոշ այն դիրքորոշումը, ըստ որի հոկտեմբերյան պատերազմից հետո ամերիկյան ղեկավար շրջանների խորատվել են և շանում են «ենչում» գործադրել Իսրայելի վրա ևս քաղվելու արարական հոգեբից:

Մազաթի այս քաղաքականությունը ղժգոհություն առաջացրեց արարական առաջադիմական շրջաններում:

Պաղեստինի ազատագրության ժողովրդա-գեմոկրատական Հակառի ղեկավար Նայիֆ Հաուսթման (այ-Ախրարա-ի Բզթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ նշեց, որ պաղեստինյան հեղափոխությունը և արարական առաջադիմական բուր ուժերը պայքարեցին հոկտեմբերյան սահմանափակ պատերազմը երկարատև ազատագրական պատերազմի վերածելու համար: Սակայն, նշեց նա, Ա. Մազաթը շտապեց զրա հանապարհը փակել, նպատակ ունենալով պահպանել պատերազմի սահմանափակ ու բուրժուական բնույթը<sup>28</sup>:

Նոյեմբերի 14-ին Եզիպտոսի և Իսրայելի ներկայացուցիչները ՄԱԿ-ի դիտորդներին ներկայությունամբ ստորագրեցին վեց կետերից բաղկացած համաձայնագիր, ըստ որի իսրայելցիները վերացնելու էին Կահիրե-Սուեզ հանապարհի իրենց պահակակետերը, զորքերը վերադառնալու էին այն դիրքերը, որ նրանք զբաղել էին հոկտեմբերի 22-ին: Գրանից հետո կողմերն ձեռնամուխ էին լինելու ռազմագերիների փոխանակմանը և բանակցությունների շարունակմանը, Կահիրե-Սուեզ հանապարհի 101-րդ կիլոմետրում:

Իսրայելը շարունակ խուսափում էր համաձայնագրի 2-րդ կետի կենսագործումից, որով նախատեսվում էր իսրայելական զորքերի նաքաշումը մինչև հոկտեմբերի 22-ը զբաղած դիրքերը: Մինչդեռ միանգամայն պարզ էր, որ խոսքը վերաբերում էր այն կոնկրետ սերիտորիային, որ իսրայելական զորքերը զբաղել էին հոկտեմբերի 23-ին և 24-ին:

Այդ պահանսով Նոյեմբերի 30-ին Եզիպտոսի կառավարությունը որոշեց դադարեցնել բանակցությունները Իսրայելի հետ:

Արարական առաջադիմական ուժերը բազմիցս նախազգուշացրել էին եզիպտական կառավարության և ԱՄՆ-ի միջև տեղի ունեցող մերձեցման հետևանքների մասին: Կրանանի առաջադիմական սոցիալիստական կուսակցության XXIV համագումարում կուսակցության ղեկավար Քամալ Եուսրաթն ասաց. «Մենք պա-

<sup>28</sup> 376 «الاجل» العدد 17، 1973-12-22، ص 376

տերազմի և խաղաղության հարցում չպետք է հավատանք քիսի-  
ջերյան դիվանագիտությանը: Ամերիկյան ղեկավարության «խա-  
ղաղափրական» ծրագրերը լուր կեղծիք է, այլապես այն կհրաժար-  
վեր Իսրայելին զենք տալուց, կստիպեր նրան նահանջել արաբա-  
կան բռնագրավված հողերից և կնպաստեր պաղեստինցիների վե-  
րագարձին»<sup>29</sup>:

Հոկտեմբերյան արաբ-իսրայելական պատերազմից հետո  
տեղեփված քաղաքական իրադրության պայմաններում խոշոր  
նշանակություն ունեցավ 16 արաբական պետությունների ղեկա-  
վարների 1973 թ. նոյեմբերի 26-ին Ալժիրում զումարված ժողովը,  
որին մասնակցում էին նաև ՄԱԿ-ի ներկայացուցիչները: Կրթիան  
և Իրաքը, որոնք ՄԱԿ-ի բանաձևերի նկատմամբ գրավել էին ժրի-  
տական դիրք, ժողովին շահանակցեցին:

Ժողովի որակարգում զբաղեցրած էին քաղաքական, տնտեսական և  
ուզմական բնույթի հարցեր:

Սովետական կառավարությունը ժողովի մասնակիցներին հղեց  
ողջույնի ուղերձ, որն ընկալվեց որպես իսրայելական ազդեցիկ  
զեմ արաբական ժողովուրդների պայքարը Սովետական Միության  
կողմից պաշտպանվելու ևս մի դրսևորում: ԵՍՍՀՄ-ական Միու-  
թյունը—սոված էր ուղեկրում,—համակողմանի օգնություն և օ-  
ժանդակություն է ցույց տվել և այսուհետև էլ ցույց կտա իսրա-  
յելական ազդեցիկ զժճ դարձած արաբական պետություննե-  
րին»<sup>30</sup>:

Ժողովը մի շարք որոշումներ ընդունեց, որոնցից ամենակա-  
րևորներն են.

1. Ճանաչել ՊԱԿ-ը որպես Պաղեստինի արաբ ժողովրդի օ-  
րինական և միակ ներկայացուցիչ:

2. Ազատագրել Իսրայելի սկուպացրած արաբական բուր-  
տերիտորիաները, այդ թվում նաև՝ Երուսաղեմի արաբական  
մասը<sup>31</sup>:

Սակայն վեհաժողովը համաձայնության չհանգեց նավթը որ-  
պես զենք օգտագործելու հարցում: Այստեղ Սաուդյան Արաբիայի,  
Քուվեյթի և Քուեյտի դիրքորոշումը հաղթանակ տարավ: Նրանք

<sup>29</sup> ٢٢ من ١٩٧٣—١٢—١، العدد ٤٤، «الاجبال»

<sup>30</sup> ԵՍՍՀՄ-ական Հայաստան, 27.IX.1973:

<sup>31</sup> ٥—٤ من ١٩٧٣—١٢—١، العدد ٤٤، «الاجبال»



զանում էին, որ Շնավթի արգելքը վնասում է եվրոպական որոշ բարենկամ երկրներին. մի բան, որը Իսրայելը օգտագործում է որպես զենք՝ արարներին հակահարված տալու համար<sup>22</sup>:

ժողովի մասնակիցները բարձր գնահատական տվեցին այն քաղաքական, սոցիալական և տնտեսական օգնությունը, որ ցույց էին տալիս Սովետական Միությունը և սոցիալիստական պետությունները արարական երկրներին:

ժողովը միաժամանակ զատապարտեց ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում:

Արարական պետությունների զեկավարների ժողովի արգելանքները դրական բնույթ էին կրում: Այդ ժողովը նպաստեց արարների միացյալ զիբբորոշման հաստատմանը հանգուցային հարցերի վերաբերյալ:

\* \* \*

Մերձավոր Արևելքում ծագած սազմական կոնֆլիկտի կարգավորման և իսրայելական ազրհսիայի հետևանքները վերացնելու համար շահագրգռված կողմերը, ինչպես նաև Սովետական Միությունը և ԱՄՆ-ը, համաձայնության եկան ժնեում հրավիրել հաշտության կոնֆերանս: Նախատեսվում էր, որ կոնֆերանսին մասնակցելու էին Եգիպտոսը, Միրիան, Հորդանանը, Իսրայելը ինչպես նաև ՄԱՀՄ-ը և ԱՄՆ-ը: Վիեննի էր մնացել Պաղեստինի ազատագրության կազմակերպության մասնակցության հարցը, որի զեմ խստիվ առարկում էր Իսրայելը:

Հաշտության կոնֆերանսի գումարման կարևոր նախապայմանը հանդիսանում էր այն, որ պատերազմող կողմերն իրենց զորքերը հեռ քաշեին մինչև հոկտեմբերի 22-ը գոյություն ունեցած սահմանները: Իսրայելը համառում էր, այդ պատճառով էլ եգիպտական կառավարությունը բազմիցս հայտարարել էր, որ չի մասնակցելու ժնեի հաշտության կոնֆերանսին, քանի զեռ Իսրայելը չի կենսագործել զորքերի նտքաշման պահանջը:

Ցավոք, Եգիպտոսի այդ զիբբորոշումը քացահայտորեն փոխվեց 1973 թ. զեկտեմբերին Լ. Քիսինջերի Եգիպտոս կատարած երկրորդ այցից հետո: Այն ժամանակ, երբ պատերազմական գործողությունները Գոլանի բարձունքներում վերակվել էին, երբ արարական առաջադիմական ուժերը Եգիպտոսից պահանջում էին չինթարկվել ԱՄՆ-ի խարուսիկ քայլերին, եգիպտական կառավար-

<sup>22</sup> «الاجبار» العدد ٤٤، ١-١٢-١٩٧٣، ص ٣٦

բությունը գտնում էր, որ պետք է բանակցությունները տեղափոխել ժնՆ՝ ԱՄՆ-ի մտադրությունները բառուղիուս համար:

ԵԾԳԻՎԱՏՈՍԻ կառավարությունը.—ինչպես նշում էր Էալ-Աիրարը,—չերմեռանդորին ձգտում է բարելավել իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Գա ահազոր վտանգ է ներկայացնում, որի հետևանքով մենք խաղաղ պայմաններում կարող ենք կորցնել այն, ինչ ձեռք ենք բերել արյան գնով: Զիշումների քաղաքականության հետևանքով մենք կվերադառնանք նախապատերազմյան վիճակին, եթե շասենք առավել վատթար վիճակին՝ անցագիր շնորհել ամերիկյան կարգավորման ծրագրերին<sup>23</sup>:

1973 թ. դեկտեմբերի 21-ին ժնՆում սկսվեցին Մերձավոր Արևելքին նվիրված հաշտության կոնֆերանսի աշխատանքները: Կոնֆերանսի առաջին փուլին մասնակցում էին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կ. Վալզհայմը, ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիկոն, ԱՄՆ-ի պետական քարտուղար Լ. Քիսինջերը, Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր Ի. Ֆահմին, Հորդանանի արտաքին գործերի մինիստր Զ. ա-Ռիֆարին և Իսրայելի արտաքին գործերի մինիստր Ա. էրանը:

Միջին հրաժարվեց մասնակցել ժնՆի կոնֆերանսին, պատճառաբանելով, որ ավլալ պայմաններում այն ի վիճակի չէ հասնել հարցի կարգավորմանը Մերձավոր Արևելքում:

ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստր Ա. Գրոմիկոն իր ելույթում ավեց ու միայն Մերձավոր Արևելքի իրադրության ռեալ գնահատականը, այլև կոնստրուկտիվ առաջարկ արեց այդ շրջանում կայուն և արդարացի խաղաղություն հաստատելու համար, որը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ Իսրայելը նահանջի 1967 թ. արգեսիայի հետևանքով օկուպացրած արաբական ուղիոր հողերից և վերականգնվեն Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքները: Այնուհետև Ա. Գրոմիկոն հայտարարեց, որ Եթովպիական Միությունը պաշտպանել է և կպաշտպանի արաբական ժողովուրդների շահերը հզուտ Մերձավոր Արևելքի շրջանում կայուն և արդարացի խաղաղության հաստատմանը<sup>24</sup>:

Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր Ի. Ֆահմին իր ելույթում նշեց, որ Եգիպտոսը մտադիր չէ հրաժարվել հետևյալ հիկ սկզբունքներից.

<sup>23</sup> ٢٩—٣٨ ص، ١٩٧٣—١٢—٤٤، العدد ٤٧ «الاجبال»

<sup>24</sup> «Սոցիալիստական Հայաստան», 22.III.1973:

1 Իսրայիլական զորքերը պետք է լքի՞վ զուրա բերվեն 1967 թ. Հունիսի 5-ից Հեռոս սկսուպացված արաբական տերիտորիաներից:

2 Պետք է ազատազրվի Երուսաղեմի արաբական մասը:

3 Պետք է իրականացվի Պաղեստինի արաբ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

4 Պետք է Հորդովեն այդ շրջանի յուրաքանչյուր պետության տերիտորիալ տեղեկանքի լիազորումն ու քաղաքական անկախությունը:

5 Խոշոր տերությունները կամ ՄԱԿ-ը, կամ էլ Երանք միասին պետք է երաշխիքներ տան Մերձավոր Արևելքում հաստատվելիք Համապարզի վերաբերյալ<sup>26</sup>:

Սակայն Իսրայիլի արտաքին գործերի մինիստր Ա. Էրանը հայտարարեց, որ 1949 և 1967 թթ. զինադադարի գծերը վերադարձ չի կարող լինել<sup>26</sup>:

Այդ իսկ պատճառով ժենևի Հաշտության կոնֆերանսը կանգնեց փակուղու առջև և չկարողացավ որևէ զրահական որոշում ընդունել:

Դրանից Հեռոս՝ 1974 թ. Հունվարի 18-ին, ԱՄՆ-ի միջնորդությամբ, սուրբազրվեց եգիպտա-իսրայիլական սազմանակատում զորքերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիրը, ըստ որի իսրայիլական զորքերը զուրա բերվեցին Սուեզի ջրանցքի արևմտյան ափից և ետ քաշվեցին մոտ 20 կմ<sup>27</sup>:

Այսպիսով, ժենևի Հաշտության կոնֆերանսում առաջադրված իսրայիլական զորքերի բլիսկատար զուրաբերման հիմնադրույթը փոխարինվեց եզորքերի տարանջատման գրույթով, որն իր հերթին նանապարհ Հարթից մերձավորարևելյան պրորիեմի մասնակի ու հասպային և ոչ թե լիակատար կարգավորման համար:

Անդրադատնալով այդ համաձայնագրին, ՍՄԿԿ Գեներալիզիբավոր քարաուղար Լ. Ի. Բրեժնևը Նչել է, որ սգա զուս սազմական բնույթի սոսկ մասնավոր միջոցառում է, ընդ որում, այն առաջիմ ընդգրկում է պատերազմական գործողություններին մասնակցած արաբական երկրներից միայն մեկին: Դրա վրա կանգ առնել, իհարկե, չի կարելի<sup>28</sup>:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> К. Вощенков, СССР в борьбе за мир, стр. 211.

<sup>27</sup> «Внешняя политика Советского Союза», М., 1975, стр. 326.

<sup>28</sup> «Սովետական Հայաստան», 31.7.1974:

«Ալ-Ախբարա»-ը մեծ տեղ է հատկացրել եզրույտա-խորանայնական համաձայնագրի իսկական էությունն բացահայտմանը: Քերթի կարծիքով համաձայնագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ ստարանշատում Ծգրիպտոսի ու արարական ազգային-ազատագրական շարժման միջև, սերտ միացում արարական հետազոտություն հետ, արարատվետական բարեկամության պատակաբանում և ամերիկյան իմպերիալիզմի վերազարմ Մերձավոր Արևելք, այն էլ ամենալայն գոնիցս<sup>39</sup>:

1974 թ. փետրվարին Ալժիրում տեղի ունեցավ արարական շորս պետությունների՝ Ծգրիպտոսի, Սիրիայի, Ալժիրի և Սաուդյան Արաբիայի ղեկավարների հանդիպումը, որտեղ քննարկվեցին հետևյալ հարցերը. Իսրայելին պաշտպանող երկրներն արատահանման վրա մտցված արգելքը, արարական երկրների դիրքորոշումը ԱՄՆ-ի ձկատմամբ և զորքերի տարանշատումը սիրիական ռազմաճակատում:

Վեհաժողովում գոյացել էին իրարամերժ երկու ճակատ. Եզրիպտոսն ու Սաուդյան Արաբիան հանդես եկան հոգուտ հավթի արատահանման վրա մտցված արգելքի վերացման, ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարելավման և սիրիական ռազմաճակատում զորքերի տարանշատման իսկ Սիրիան և Ալժիրը մերժեցին որևէ դիշում կատարել, քանի որ ԱՄՆ-ի դիրքավորումը գրակաճորեն չէր փոխվել արարների հանդեպ:

Անդրազատնալով վեհաժողովի անդրկուլիսային անցուկարձին, ալ-Ախբարա-ը գրում էր. «Արժանահավատ ազգյուրները հազորում են, որ Ա. Սադաթը պնդեց, թե պետք է անպայման վերացնել հավթի արգելքը ԱՄՆ-ի նկատմամբ, այլապես նա կզազարի «խաղաղություն» համար իր շանքերը գործադրելուց: Սակայն, Հաֆեզ Ասադն ու Հուարի Բումեդիհենը համառորեն մերժեցին այս գաղափարը, ցույց տալով, որ ընդհանրապես, դա կհասցընի արարների ձեռքում եղած շահատոմսերի կորստին»<sup>40</sup>:

Հանդիպման ժամանակ կողմերը վերջիվերջո եկան կոմպրոմիսի՝ Սիրիայի պրեզիդենտ Հ. Ասադը համաձայնվեց ԱՄՆ-ին հանձնել իսրայելցի ռազմագերիների ցուցակը, իսկ Ա. Սադաթը ժամանակավորապես հրաժարվեց հավթի արգելքի վերացման վրա պնդելուց:

<sup>39</sup> «الخبير»، العدد 57، 1974، ص 37

<sup>40</sup> «الخبير»، العدد 57، 1974، ص 37

Սգիպատսի կողմից զորքերի տարանջատման համաձայնագիրը ստորագրվելուց հետո Միբիան կանգնեց զժգարին ու բարդ կացության առաջ: Սակայն, արարական առաջադիմական ուժերն ամեն շանք գործադրեցին, որպեսզի Միբիան մենակ չմնար: Միբիայի պաշտպանությունը հանդես էին գալիս Ալիբիրը և Իրաքը: Նրա կողքին էին կանգնած նաև Սովետական Միությունը, սոցիալիստական մյուս երկրները և աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերը<sup>41</sup>:

Միբիայի ղեկավարները համոզված էին, որ ազատագրական պայքարը շարունակելու արարական ժողովրդական զանգվածների կամքն ավելի զորեղ է, քան թե արար որոշ ղեկավարների ձգտումը՝ մերձենալ ԱՄՆ-ի հետ: Բացի այդ, նրանք վստահ էին, որ արարական ժողովուրդները չեն հրապուրվի ամերիկյան սրբաշարժականությունից և ԱՄՆ-ի քաղաքականության շարժական գնդակության առասպելով և, որ սովետա-արարական բարեկամությունը թղթի պատասխի չէ, որ կարելի է դեն նետել ԱՄՆ-ից նոր խոստումներ ստանալիս, այլ արարական ազգային-ազատագրական պայքարի անկյունաքարն է: Սվ, վերջապես, սիրիական ժողովուրդը չի կարող զոհարենել քառորդ դար տևած իր պայքարի արդյունքը հանուն նրանց, ովքեր ցանկանում են անցազրի տալ քրիստոնեական գիվանդապետությունը<sup>42</sup>:

Միբիական ուղղմանակառում զորքերի տարանջատումը այլ բնույթ կրեց, քան թե եզիպտականում: 1974 թ. մարտին Իսրայելի նախահարձակման հետևանքով պատերազմական գործողությունները Միբիայի և Իսրայելի միջև վերսկսվեցին:

Ամերիկա-իսրայելական գիվանդապետությունը Գոլանի պրոբլեմի կարգավորման ուղղությամբ առաջադրում էր իսրայելական զորքերի դուրս բերումը միայն այն հողերից, որոնք գրավվել էին հոկտեմբերյան պատերազմի ժամանակ<sup>43</sup>, Սակայն Միբիան մերժեց այդ առաջարկությունը և պահանջեց Գոլանի բարձունքների մեծ մասի, ալ-Քունեյթրայի և 1973 թ. գրավված հողերի ազատագրումը<sup>44</sup>:

<sup>41</sup> ԲՄ, «الاجل», العدد ٦٤, ٢٠-٤-١٩٧٤, ص ٢٧

<sup>42</sup> «الاجل», العدد ٦٦, ٤-٥-١٩٧٤, ص ٤-٥

<sup>43</sup> «الاجل», العدد ٦٤, ٢٠-٤-١٩٧٤, ص ٢٧

<sup>44</sup> Նշենք, որ 1967 թ. սպեմբերի հետևանքով Իսրայելը Միբիայից գրավեց մոտ 1000 կմ<sup>2</sup>, իսկ 1973 թ. հոկտեմբերյան պատերազմում՝ մոտ 500 կմ<sup>2</sup> տերիտորիա (Կանել, Բեյրութ, Ց.Մ.1974):

Սովետական Միությունը լիովին պաշտպանեց Սիրիայի դիրքորոշումը: Սովետական Միության և Սիրիայի տեսակետների լիակատար համընկնումն այդ հարցում գրանորվեց, երբ 1974 թ. ապրիլին պաշտոնական այցով Մոսկվա ժամանեց սիրիական կուսակցական-կառավարական պատվիրակությունը՝ պրեզիդենտ Լ. Ասադի գլխավորությամբ:

Բանակցությունների ընթացքում հանգամանորեն կարծիքներ փոխանակվեցին Մերձավոր Արևելքի, ինչպես նաև միջազգային հրատապ այլ պրոբլեմների շուրջը: Կողմերը հավաստեցին Իսրայելի օկուպացրած արաբական բուլոբ հողերի ազատագրմանն քսամենայնի նպատակու իրենց վեհականությունը<sup>45</sup>:

1974 թ. մայիսին ՍՍՀՄ-ի արտաքին գործերի մինիստր Ա. Գրամիկոն այցելեց Սիրիա: Բանակցությունների ժամանակ սիրիական կողմը հավաստեց իր դիրքորոշումը այն կապակցությամբ, որ Սովետական Միությունը պետք է մասնակցի Մերձավոր Արևելքում արգար ու կայուն խաղաղության հաստատման նպատակին ուղղված կարգավորման բուլոբ փուլերին և բուլոբ բնագավառներին<sup>46</sup>:

1974 թ. մարտին ժամալված պատերազմական գործողությունները տևեցին 90 օր և Իսրայելի համար ստացան հյուծիչ պատերազմի բնույթ: Սիրիական բանակի տեղումություն, ՍՍՀՄ-ի ցույց տված ազմական, տնտեսական ու քաղաքական օժանդակության և արաբական առաջադիմական ուժերի քաշարի պայքարի շնորհիվ, Սիրիան գիմացավ իսրայելական ենշմանը և ազրեսորը լկարողացավ որնէ հաղողության հասնել: Այս ամենի շնորհիվ Սիրիայի համար բարենպաստ պայմաններում ժննում բանակցություններ սկզվեցին Սիրիայի և Իսրայելի միշն: 1974 թ. մայիսի 31-ին ստորագրվեց սիրիա-իսրայելական զորքերի տարանշատման վերաբերյալ համաձայնագիր: Այդ համաձայնագիրը նախատեսում էր իսրայելական զորքերի դուքսերումը սիրիական այն հողերից, որ նրանք գրավել էին 1973 թ., ինչպես նաև 1967 թ. գրավածի մի մասից, այդ թվում նաև զավտուական կենտրոն այ-Քունեյթրայից: Երկու կողմերի բուՖներային զոնայում հաստատվեցին ՄԱԿ-ի զորքերը<sup>47</sup>:

<sup>45</sup> «الاجل» العدد ٦٤، ٢٠-٤-١٩٧٤، ص ٢٧

<sup>46</sup> Սովետական Հայաստան, 31. V. 1974.

<sup>47</sup> «Внешняя политика Советского Союза», М., 1975, стр. 327.

Միբիայի պրեզիդենտ Հ. Ասադին ՍՄԿԿ Կենսակոմի գլխավոր քարտուղար Լ. Բ. Քրեմենի հզած նամակում ընդգծված է, որ «զորքերի տարանջատումը լոկ մի քալլ է մերձավորարևելյան կոնֆլիկտի վերջնական կարգավորման Հանապարհին, որի առանցքը պետք է լինեն խորայնական զորքերի դուրսերումը 1967 թ. օկուպացված ընդ որ արաբական տերիտորիաներից և Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական ազգային իրավունքների ապահովումը»<sup>68</sup>, Այնուհետև Լ. Բ. Քրեմենը ընդգծում էր համաձայնագրի նշանակությունը, որպես միբիական ժողովրդի քաշարի պայքարի արգասիք:

1974 թ. նոյեմբերին Միբիայի կոմկուսի Հիմնադրման 50-րդ տարեդարձի տոնակատարության առթիվ կայացած հանդիսավոր միտինգում կուսակցության գլխավոր քարտուղար Կ. Բակդաշն անդրադառնալով զորքերի տարանջատման համաձայնագրին, այն դիտել որպես միբիական ժողովրդի խելախ պայքարի արդյունք: Միտմամանակ նա ընդգծեց, որ «եթե լինե՞ր Սովետական Միությունը, ապա Միբիայի ազգային դրոշը չէր ժածանվի ազատագրված Քուենեյթրայի երկնքում»<sup>69</sup>:

Դրանով իսկ ավարտվեց եզիպտա-իսրայելական և միբիա-իսրայելական զորքերի տարանջատման առաջին գուլը:

Արաբական առաջադիմական ուժերը, Սովետական Միությունը, առցիալիստական երկրները և առաջադեմ մարդկությունը բազմիցս նախազգուշացրել են ավյալ համաձայնագրերը որպես մերձավորարևելյան պրոբլեմի վերջնական կարգավորում ներկայացնելու վտանգի մասին:

1975 թ. ապրիլի սկզբներին արաբական երկրների կոմունիստական ու բանվորական 3 կուսակցությունների խորհրդածողովք քննարկեց արաբական աշխարհի իրադրությունը, հատկապես արաբական օկուպացված հողերի ազատագրման, արաբական առաջադիմական կարգերի ամրապնդման և Պաղեստինի արաբ ժողովրդի իրավունքների վերականգնման հարցերը:

Խորհրդածողովի հրապարակած գլխավոր դեկլարացիայում սահմանված են արաբական առաջադիմական ուժերի առջև ծառայած խնդիրները: Անդրադառնալով արաբական առաջադիմական կարգերի ամրապնդման հարցին, խորհրդածողովքը կոչ է ա-

<sup>68</sup> «Սովետական Հաշտտան», 1.VI.1974.

<sup>69</sup> «نضال الشعب»، دمشق، العدد 1971، 19 أيلول وأكتوبر 1974.

ևում. 1. ամբապնդել առաջադիմական կարգերը Միբիալում, Ի-  
րաքում, Ալժիրում, ժողովրդա-դեմոկրատական Եմենում, 2. աշակ-  
ցել Եգիպտոսի առաջադիմական ազգային ուժերին՝ հանուն առաջա-  
դիմական կուրսի կիրառման, կապիտուլյացիոն լուծումների  
մերժման, դեմոկրատական ազատությունների ապահովման և  
առաջադիմական ուժերի դեմ կիրառվող հալածանքների կանխ-  
ման<sup>50</sup>։

Հոկտեմբերյան պատերազմի առաջին շաբաթում արաբական  
բանակների հաղթանակները վերափոխեցին ուժերի հարաբերակ-  
ցությունը Մերձավոր Արևելքում, հօգուտ արաբների։

Փշրվեց Իսրայիլի բանապարտելիության առասպելը։ Իսրայի-  
լը մեկուսացման մեջ ընկավ։ Պատերազմում կրած անհաջողու-  
թյունները Իսրայիլի ներսում սուր քաղաքական ճգնաժամ առա-  
ջացրին։

Պատերազմը կրկին հաստատեց, որ արաբական ժողովուրդ-  
ներն ի դեմս Սովետական Միության ունեն հուսալի դաշնակից,  
որը հետևողականորեն հանդես է գալիս հանուն մերձավորարևել-  
յան ճգնաժամի արդար ու կայուն լուծման։

Միաժամանակ, պատերազմը կրկին բացահայտեց ԱՄՆ-ի  
իմպերիալիստական քաղաքականության էությունը, որը հանդես է  
գալիս արաբների անմիջական թշնամու և Իսրայիլի հավատարիմ  
պաշտպանի դերում։

Պատերազմում առաջին անգամ լայն լափերով դրսևորվեց  
արաբական միասնությունը, մասնավորապես արաբական առաջա-  
դեմ ուժերի միակամ ձգտումը՝ միավորել իրենց շանքերն ընդդեմ  
ԱՄՆ-ի և նրա կողմից հովանավորող Իսրայիլի էքսպանսիոնիս-  
տական քաղաքականության։ Դրա արտահայտությունը հանդիսա-  
ցավ արաբական երկրների որոշումը նազիկն օգտագործել որպես  
քաղաքական զենք՝ ճնշում գործադրելու թուրք այն պետություն-  
ների վրա, որոնք այս կամ այն կերպ աշակցում էին Իսրայիլին։

Որոշակի կերպով երևան եկավ պաղեստինյան դիմադրու-  
թյան շարժման մասնակցությունն ազատագրական պայքարի  
տարբեր ռազմաճակատներում։

Հոկտեմբերյան պատերազմը արաբական ժողովուրդների  
համար հանդիսանում է որպես ազգային-ազատագրական, արդա-  
րացի, առաջադիմական, հակաիմպերիալիստական, խնկ Իսրայիլի

<sup>50</sup> «الاقبال»، العدد 113، 5-4-1975، ص 23



համար՝ սղրեւիճ, անարգարացի, հետադիմական և իմպերիալիստական բնույթ կրող պատերազմ:

Չնայած հետպատերազմյան շրջանում իմպերիալիստական, սիոնիստական և հետադիմական ուժերի ակտիվութիւնն ու աշխուժացմանը, այնուամենայնիճ, պատերազմում արարական ժողովուրդների ձեռք բերած նվաճումները կմնան որպէս արարական ազգային-ազատագրական շարժման պատմութիւն կարևոր էջ:

Այսպիսով, «ալ-Ախրար» շարաքաթները հետևողականորեն և սկզբունքային դիրքերից լուսարանում է արարական ազգային-ազատագրական շարժման խնդիրները, անդուլ պայքար մղում իմպերիալիստական և սիոնիստական ժրգրների դեմ, մերկացնում արարական հետադիմականութիւն քաղաքականութիւնն Արարական Արևելքում:

П. А. САРАДЖЯН

## АРАБО-ИЗРАИЛЬСКАЯ ВОЙНА 1973 г. И ПОЗИЦИЯ ПРОГРЕССИВНЫХ АРАБСКИХ СИЛ

### Резюме

Арабо-израильская война 1973 г. занимает значительное место в современной истории народов Ближнего Востока.

В статье освещены ход арабо-израильской войны 1973 г., ее характер и последствия, а также позиция прогрессивных арабских сил на основе материалов органа Ливанской коммунистической партии газеты «Ал-Ахбар».

ب. ه. ساراجيان

الحرب العربية-الاسرائيلية في اكتوبر ١٩٧٣ موقوف  
القوى التقدمية العربية

تحفل الحرب العربية-الاسرائيلية في اكتوبر ١٩٧٣ مكمنا  
بملزا في التاريخ المعاصر لشعوب الشرق الادنى.  
هدفنا من هذا المقال القا الضو على مجرى ونتائج طبيعة  
حرب اكتوبر وتبيان موقف القوى التقدمية العربية حسب  
جريدة «الاعخبار» لسان حال الحزب الشيوعي اللبناني.



ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ



Ա. Հ. ՔՈՓԱՆՅԱՆ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՔԱՆԻ ՄՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԲՂՁԵՐ

Արարական Արեւելքում տիրող բարդ իրադրութիւն մեկ ուրույն տեղ ունի պաղեստինեան պրոպրիետը, որը հանդիսանում է անգլո-ամերիկեան իմպերիալիզմի և սիոնիզմի գործարքի տրազուիթային քաղաքականութեան արդյունքը:

1947 թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան որոշում ընդունեց Պաղեստինը բաժանել երկու անկախ պետութիւնների՝ արաբական (Պաղեստին) և հրեական (Իսրայել): Արարական պետութիւնը պետք է զբաղեցնէր 11,1, իսկ հրեական պետութիւնը՝ 14,1 հազար կմ<sup>2</sup> տարածութիւն: Սակայն 1948 թ. մայիսի 15-ին, անգլո-ամերիկեան իմպերիալիզմի հրահրումով, Պաղեստինի տարածքի վրա Իսրայելի և արաբական երկրների՝ Եգիպտոսի, Հորդանանի, Իրաքի, Լիբանանի ու Սիրիայի միջև պատերազմական գործողութիւններ սկսվեցին: Դրա հետևանքով Պաղեստինի արաբական պետութեան համար ետխառնեցված տարածքից 6,8 հազար կմ<sup>2</sup>, այդ թվում Երուսաղեմի արևմտյան մասը, զավթեց Իսրայելը, իսկ 5,5 հազար քառ. կմ<sup>2</sup> անցավ Հորդանանին<sup>1</sup>: Այսպիսով, Պաղեստինի արաբական պետութիւն ստեղծելու մասին ՄԱԿ-ի 1947 թ. նոյեմբերի 29-ի որոշումը մնաց թղթի վրա: Բացի այդ, առաջացավ պաղեստինցի զաղթականների պրոպրիետը: Այսօր, մտա 1,5 մլն պաղեստինցիներ բռնի արտաքրուված են իրենց հայրենի հողից:

Հայրենի երկիրն ազատագրելու նպատակով ծնունդ առավ պաղեստինեան դիմադրութեան շարժումը, որն իր էութեամբ ազգա-

<sup>1</sup> Г. С. Никитина, Государство Израиль, М., 1968, стр. 58.

յին-ազատագրական պայքար է, Այն ամբողջությամբ վերցրած ունի հակազազութային, հակաիմպերիալիստական բնույթ, Այդ պայքարի բովում 1964 թ., ստեղծվեց Պաղեստինի ազատագրութայան կազմակերպությունը (ՊԱԿ), որի մեջ սկսած 1970 թ., միավորվել են թվով 11 պաղեստինյան քաղաքական-պարտիզանական կազմակերպություններ<sup>3</sup>:

Դրանցից առավել ազդեցիկ կազմակերպություններն են Եմաթհեճ<sup>4</sup> Ցասիր Արաֆատի գլխավորությամբ որը ստեղծվել է 1955 թ., 1967 թ. նոյեմբերին Հիմնադրված ԵՊաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատը<sup>5</sup>, որի ղեկավարն է Զորջ Լաբաշը և ԵՊաղեստինի ազատագրության ժողովրդազենմուկրատական ճակատը, որը կազմավորվել է 1969 թ. փետրվարի 21-ին, Նայիֆ Լավատմայի գլխավորությամբ<sup>6</sup>:

Պաղեստինի ազատագրության կազմակերպության Հիմնական ծրագրային փաստաթուղթը ԵԱԿԳային խարտիանն է, Այն սահմանում է Պաղեստինի դիմադրության շարժման առեկ կանգնած խռնդիրները և մատնանշում դրանց լուծման ուղիները: Խարտիան Պաղեստինի ժողովրդի օրինական իրավունքների վերականգնումը ազգային պարտք է հայտարարում և հռչակում, որ դրան կարելի է հասնել արարական միասնության հաստատման, արաբական ընդ որ երկրների ջանքերի միավորման և աշխարհի առաջադիմական ուժերի աջակցության շնորհիվ: Առաջին անգամ այս Խարտիայում է, որ հստակ կերպով ձևակերպված են ՊԱԿ-ի երեք գլխավոր լուղունգները՝ ազգային միասնություն, ազգային մորիլիզացում և ազատագրում: Խարտիայից սկնհայտորեն երևում է, որ ապագա պաղեստինյան պետությունը պետք է խորսխված լինի դեմոկրատական սկզբունքների վրա: Դրա հետ միասին դժվար չէ նկատել, որ Խարտիան գերծ չէ առանձին թերություններից և սխալներից: Գերազանահատված է Պաղեստինի նշանակությունը արաբների ազագա պատմական ճակատագրում: Դա ակնհայտորեն երևում է Խարտիայի 13-րդ հոդվածից, որտեղ նշված է, որ

<sup>3</sup> عزى خورشيد دليل حركة المقاومة الفلسطينية بيروت

1791 ص 11

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 117:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 143:

արար ազդի ճակատագիրը և նրա բուն գոյությունը պայմանավորված է պաղեստինյան պրոբլեմով: Միայն է նաև ժխտական, ոչ ոնալ վերաբերմունքը ՄԱԿ-ի 1947 թ. նոյեմբերի 29-ի որոշման նկատմամբ, որով, ինչպես Հայաստանի է Պաղեստինը բաժանվեց երկու մասի և ստեղծվեց իսրայելական պետությունը:

Պաղեստինի գիմադրության շարժման ժրագրային փաստաթղթերում սեղ գտած առանձին թերությունները իրավացիորեն քննադատության են ենթարկվել սովետական պատմագրության մեջ: Միաժամանակ շեշտվել է, որ ետրոփայում առաջ քաշված հիմնական գրույթները ճիշտ են և դրանք արտացոլում են Պաղեստինի արար ժողովրդի կենսական պահանջները<sup>6</sup>: Միակամայն ճիշտ են սովետական պատմաբաններ Ե. Գմիարինը և Վ. Լադեյկինը, կրք նշում են, որ «Վարելի է լքեղունել նրա (Պաղեստինի գիմադրության շարժման—Ա. Ք.) պայքարի մեթոդները, բայց չի կարելի շամամայնել Պաղեստինի արար ժողովրդի երազանքները կենսագործելու ձգտման օրինական լինելու հետ՝ իր սեղական հողում ինքնուրույն գոյության, իր օրինական ազգային իրավունքների վերականգնման վերաբերյալ»:

Ընդհանուր առմամբ այս փաստաթուղթը արժանի է դրական գնահատականի, որովհետև հանդես է գալիս հօգուտ պաղեստինցի արար ժողովրդի օրինական իրավունքների:

Երկրորդ կարևոր փաստաթուղթը Պաղեստինի տղատագրության կազմակերպության կանոնադրությունն է:

Այն սահմանում է ՊԱԿ-ի կառուցվածքը և նրա ֆունկցիաները: Կանոնադրությունն օգնում է հստակ պատկերացում կազմելու ՊԱԿ-ի իրավական ստատուսի և նրա առանձին օրգանների իրավասության մասին:

Պաղեստինյան պրոբլեմի ամենակարևոր հարցերից մեկը պաղեստինյան խնդիրը զեմոկրատական ուղիով լուծելու հարցն է:

Պաղեստինի գիմադրության շարժումը միատարր չէ. որոշակի են տարրեր հասանքների, քաղաքական տարրեր հայացքներ դավանող ու գիծ անցկացնող ուժերի առկայությունը: Գրան համապատասխան էլ ՊԱԿ-ի ներքում գոյություն ունեն առանձին կազմակերպություններ, որոնց մի մասը կարելի է բնութագրել որպես

<sup>6</sup> Յճ. Է. Դմիտրև, В. Ладейкин. Путь к миру на Ближнем Востоке, М., 1974, стр. 69—70, 72—74.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 74.

գեմոկրատական, իսկ մյուսն էլ՝ ծայրահեղական: Դեմոկրատական թևին պատկանող կազմակերպություններից առաջին հերթին պետք է նշել, ԵՊՀԵՍԻՆԻ ազատագրության ժողովրդագեմոկրատական ճակատը, որի քաղաքական կազմակերպչական մասին կարելի է գաղափար կազմել ստորև հրատարակվող ծրագրային փաստաթղթից:

Հիշյալ փաստաթղթում առաջադրված են պաղեստինյան հարցի լուծման գեմոկրատական սկզբունքները: Հատկապես ուշագրավ է ծրագրի այն կետը, որը մերժում է պաղեստինյան հարցի էքստրեմիստական լուծումը և առաջադրում պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

ԵՊՀԵՍԻՆԻ ազատագրության ժողովրդագեմոկրատական ճակատը, ինչպես նշված է ծրագրում, գեմ է Եհրեաներին մորթելու և ժողը թափելու սկզբունքին և հանդես է գալիս հօգուտ պաղեստինյան ժողովրդագեմոկրատական պետության ստեղծման, որտեղ արաբները և հրեաները կապրեն առանց խարականություն: Եման տեսակետի երևան գալը նշանակալից երևույթ է և պատմական առումով հեռանկարային: ԵՊՀԵՍԻՆԻ ազատագրության ժողովրդագեմոկրատական ճակատն առաջադրում է պաղեստինյան ազգային առաջադիմական ուժերի դիրքորոշումը և առաջարկում պաղեստինյան հարցի լուծման ավելի իրական ուղիներ:

1972 թ. արաբ-իսրայելական պատերազմից հետո Մերձավոր Արևելքում կատարված տեղաշարժերը նոր իրադրություն ըստեղծեցին, որը, քնականարար, ՊՍԿ-ից պահանջում է ճշգրտել իր դիրքորոշումը և որոշ փոփոխություններ մտցնել ծրագրային փաստաթղթերի և քաղաքական կուրսի մեջ: Այդ նպատակն էր հետապնդում Ազգային խորհրդի 12-րդ նստաշրջանը, որը զուամբովեց 1974 թ. հունիսին: Նստաշրջանում ընդունված որոշումները կարելի է համարել Պաղեստինի ազատագրության կազմակերպության մեջ հեղափոխական գեմոկրատական ուժերի խոշոր հաղթանակ: Նստաշրջանում ընդունված որոշման կենտրոնական հարցը Պաղեստինի պետության վերականգնման խնդիրն է: Խորհուրդը միաձայն որոշում ընդունեց Պաղեստինի տարածքի որևէ մասի վրա ազգային պետություն հիմնել: Ազգային խորհրդի 12-րդ նստա-

\* 8 ص ١٩٧٤-٦-١٥، العدد ٧٢، بيروت ١٥ «الاخبار»



չրջանը սահմանեց եւս Պաղեստինի ապագա պետութիւն կառավարման ձևը: Պաղեստինյան ազգային իշխանութիւն սոցիալ-դասակարգային հենարանը հանդիսանալու եւ հայրենասիրական, զեմոկրատական բոլոր ուժերը: Այդ պետութիւնը պետք է վարի առաջադիմական, հակաիմպերիալիստական ու հակասեռնաստական քաղաքականութիւնը:

Այսպիսով, վերահիշյալ փաստաթղթերը ցույց են տալիս, որ Պաղեստինի դիմադրութիւն շարժման կազմակերպչական ձևավորման պրոցեսն արդէն ավարտվել է և ՊԱԿ-ն ունի իր ծրագիրը, կանոնադրութիւնը, համապատասխան ղեկավար մարմինները և ուրախ ֆունկցիաները:

Երա շնորհիվ ՊԱԿ-ի գործունեութիւնը զարձկ է ավելի արդունավետ, անել է նրա ազգեցութիւնը պաղեստինցիների շրջանում և բարձրացել հեղինակութիւնը միջազգային ասպարեզում: Այդ է վկայում եւս այն փաստը, որ 1974 թ. հոկտեմբերին Ռաբաթում զումարված արարական երկրների բարձր մակարդակի ժողովը միաձայն որոշեց ՊԱԿ-ը նանաշել որպէս Պաղեստինի ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչը: Այսօր ՊԱԿ-ը մի այնպիսի ուժ է, որի հետ ստիպված են ավելի ու ավելի շատ հաշվի եստել պաղեստինյան հարցը լուծելիս:

Սովետական Միութիւնը Պաղեստինի ժողովրդի պահանջներն ու պայքարը համարում է արդարացի և մշտապես հանդես գալիս նրա օրինական իրավունքների պաշտպանութիւնում: ՍՍՀՄ-ի այդ տեսակետը վերստին հազաստվեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բ. Բրեժնևի հաշվատու զեկուցման մեջ, արված կուսակցութիւն XXV համագումարին:

«Մերձավոր Արևելքում,— նշեց Լ. Բ. Բրեժնևը,— այժմ պատերազմ չկա: Բայց այնտեղ չկա եւս խաղաղութիւն, մասնավանդ անդորրութիւն: Եվ ով կհամարձակվի երաշխավորել, որ պատերազմական գործողութիւնների բոցը վերստին չի բռնկվի: Այդ վտանգը կպահպանվի, քանի զեռ իսրայիլական բանակները մշտնում են օկուպացված հողերում: Այն կպահպանվի քանի զեռ իրենց օրինական իրավունքներից զրկված են և հուսահատական պայմաններում ապրում են իրենց հողերից թշված հարյուր հազարավոր պաղեստինցիներ, և քանի զեռ Պաղեստինի արար ժողովուրդը զրկված է իր ազգային պետութիւնն ստեղծելու հնարավորութիւնից: Մերձավոր Արևելքի կայուն խաղաղու-

Տե՛ս նաև տեղում:

թյունը պահանջում է նաև, որ հրաշխավորվեն այդ շրջանի բոլոր պետությունների անվտանգությունը, նրանց անկախ գոյությունն ու զարգացման իրավունքը<sup>10</sup>,

Սովետական Միությունը պահանջում է նա Վերագործնել արարական բոլոր սկուպացված տերիտորիաները, նաևալել պազեստինցի ժողովրդի իրավունքը՝ ստեղծելու իր ազգային պետությունը և հրաշխավորել Մերձավոր Արևելքի կոնֆլիկտային շրջանում գտնվող բոլոր պետությունների անվտանգությունը:

Սանտոնիությունը ՊԱԿ-ի հիմնական փաստաթղթերի հետ կօգնի լրիվ և, որ ամենակարևորն է, ճիշտ պատկերացում կազմելու պազեստինյան պրոբլեմի և ՊԱԿ-ի գործունեության մասին:

Այդ նկատառումներից էլնելով էլ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում ՊԱԿ-ի հիմնական ծրագրային փաստաթղթերը, որոնք հայերեն հրատարակվում են առաջին անգամ:

#### ՊԱՂԵՍՏԻՆԱՅԸ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՑԻՆ

25 մայիսի 1964 թ. 11

Ա Յ Ա Ջ Ա Ր Ա Ն

Մենք՝ պազեստինցի արար ժողովուրդս, պայքարում ենք մեր հայրենիքի ապահովության և արժանապատվության համար:

Տարիներ շարունակ սվել ենք անմահ նահատակների հոծ խմբեր՝ գրելով զոհարելություններով, ցաղությունով ու սիրանքներով լի փայլուն էջեր:

Ազրեստինյան և անարգարության շարիքները, մեզ մեր հայրենիքից արտաքսելու, մեր հողերը բռնադրավելու, մեր սրբությունները սրբապղծելու նպատակին ուղղված միջազգային սիոնիզմի և իմպերիալիստական ուժերի զավաղությունները լրնկնեցին մեր՝ պազեստինցի ժողովրդի կամքը:

Մենք՝ պազեստինցի արար ժողովուրդս, հավատացած արարականությանը, հայրենիքն ազատագրելու և նրա ազատությունն ու արժանապատվությունը ձեռք բերելու մեր իրավունքին, վճռել ենք համախմբել մեր բոլոր ուժերը և շանքերը, սրբազան պատե-

10 «Սովետական Հայաստան», 25.11.1975.

11 1964 թ. մայիսի 25-ից հունիսի 2-ը նրառազմում հրավիրվեց Պազեստինյան արարական I կոնգրեսը: Այն ընդունեց Պազեստինի ազատագրության կազմակերպության գործունեության ծրագրային փաստաթուղթը՝ Պազեստինյան ազգային խորտեմ:

բազմի ճանապարհով շարունակելու պայքարը և շարժումը մինչև յիսկատար և վերջնական հաղթանակ:

\* \* \*

Լողված առաջին—Պաղեստինը արարական հայրենիք է՝ ազգային կապերով կազմված արարական մյուս երկրների հետ, ներսեց հետ կազմելով արարական մեծ հայրենիքը:

Լողված երկրորդ—Պաղեստինը բրիտանական մանդատի օրոք հզամ իր սահմաններով ներկայացնում է տերիտորիալ մի միասնություն, որը ենթակա չէ մասնատման:

Լողված երրորդ—Պաղեստինի արաբ ժողովուրդը հայրենիք ունենալու իր օրինական իրավունքների տերն է և արաբ ազգի անկապակի մասն է կազմում, մասնակից է նրա վշտերին և ակրնկայիքներին, ինչպես նաև հանուն ազատության, անկախության ու միասնության նրա մղած պայքարին:

Լողված չորրորդ—Պաղեստինի ժողովուրդը ինքը կորոշի իր ճակատագիրը, իր հայրենիքի ազատագրումն ավարտելուց հետո:

Լողված հինգերորդ—Պաղեստինցի լինելը մի այնպիսի հական, անհրաժեշտ և լանհետացող հատկանիշ է, որը հորից անցնում է որդուն:

Լողված վեցերորդ—Պաղեստինցիները արաբ այն քաղաքացիներն են, որոնք սովորաբար ապրում էին Պաղեստինում ընդհուպ մինչև 1947 թ., նաև նրանք, ովքեր մնացել կամ դուրս էին եկել այնտեղից, և բոլոր նրանք, ովքեր ծնվել են պաղեստինցի արաբ հորից, այդ թվականից հետո Պաղեստինում կամ նրանից դուրս:

Լողված յոթերորդ—Պաղեստինյան ծագում ունեցող հրեաները համարվում են պաղեստինցիներ, եթե համաձայն են խաղաղ և օրինապահ ապրել Պաղեստինում:

Լողված ութերորդ—Պաղեստինցի երիտասարդությունը արարական ազգայնականության ոգով դաստիարակելը պետք է լինի ազգային գլխավոր պարտքը: Գաստիարակության բոլոր միջոցներով կրթել, լուսավորել, հայրենիքի մասին խոր իմացություն տալ երիտասարդությանը՝ նրան հոգեպես և ամուր կապելով հայրենիք վերադառնալու ձգտման հետ:

Լողված իններորդ—Գաղափարական, քաղաքական, ինչպես նաև տնտեսական և հասարակական տարբեր սկզբունքները չպետք է պաղեստինցի ժողովուրդին շեղեն իր առաջնային պարտքից, իր հայրենիքն ազատագրելու պարտքից:

Քուրբ պաղծատինցիները, միավորված մեկ միասնական ազգային նահապի մեջ, իրենց ողջ զգացմունքներով, նյութական և հոգեկան կարողություններով գործում են հանուն իրենց հայրենիքի ազատագրման:

Հողված տասներորդ—Պաղծատինցիները ունեն երեք լուսնագազգային միասնություն, ազգային մորթիլիզացում և ազատագրում: Հայրենիքի ազատագրումն ավարտելուց հետո պաղծատինցի ժողովուրդը կրնարի իր արեւելահայրենի համապատասխան սոցիալատեսական և քաղաքական կարգ:

Հողված տասնմեկերորդ—Պաղծատինցի ժողովուրդը հավատացած է արարական միասնությունը: Այն իրագործելու համար այս խտպում երա պարտքն է պայքարել այն բոլոր ժրագրերի դեմ, որոնք ձգտում են թուլացնել և լուծարքի ենթարկել այդ միասնությունը:

Հողված տասներկուերորդ—Արարական միասնությունը և Պաղծատինի ազատագրությունը երկու միասնական նպատակներ են: Արարական միասնությունը տանում է զեպի Պաղծատինի ազատագրություն, իսկ Պաղծատինի ազատագրությունը տանում է զեպի արարական միասնություն:

Հողված տասներեքերորդ—Արար ազգի նահատակիքը կամ երա գոյությունը պայմանավորված է պաղծատինյան պրորիեմով: Այս փոխադարձ կապից ելնելով, արար ազգը շանում է ազատագրել Պաղծատինը: Եվ Պաղծատինի ժողովուրդը խաղում է ավանգարդային դեր այս սրբազան ազգային նպատակը իրագործելու մեջ:

Հողված տասնչորսերորդ—Պաղծատինի ազատագրությունը արարական տեսանկյունից ազգային պարտք է, որի պատասխանավությունը լրիվ ընկած է արար ազգի, երա կառավարությունների և ժողովուրդների վրա, մասնավորապես պաղծատինցի արար ժողովուրդի վրա: Սրանից ելնելով անհրաժեշտ է, որ արար ազգը մորթիլիզացի իր ռազմական, նյութական և հոգեկան ողջ կարողությունները Պաղծատինի ազատագրման համար:

Հողված տասնհինգերորդ—Պաղծատինի ազատագրումը հոգեվոր առումով սրբազան երկրում կատեզծի վստահության և կայունության մթնոլորտ, որի ներքո կպահպանվեն կրոնական բոլոր սրբությունները և կտպահովվի պաշտամունքի և ուխտագնացության ազատությունը, առանց որն էր ուսսայական, մաշկի գույնի, լեզվի և կրոնի տարբերություն:

Հողված տասնվեցերորդ—Պաղեստինի ազատագրումը միջազգային տեսանկյունից ընդունելի է, քանի որ այն համապատասխանում է մարզու իրավունքների պաշտպանությանը, ինչպես այն գրված է ՄԱԿ-ի կանոնադրությունում:

Գրա համար Պաղեստինի ժողովուրդը շանում է բարեկամանալ բոլոր ժողովուրդների հետ, ձգտում է ձեռք բերել ազատասեր, խաղաղասեր, արգարասեր երկրների աջակցություն՝ վերականգնելու Պաղեստինի օրինական իրավունքը, հաստատելու խաղաղություն և անվտանգություն այդ տերիտորիայում և հնարավորություն ընձեռնել նրա ժողովրդին՝ իրականացնելու իր ազգային գերիշխանությունը և ազատությունը:

Հողված տասնյոթերորդ—1947 թ. Պաղեստինի բաժանումը և Բուրայիի (պետություն—Ա. Ք.) ստեղծումն իր հիմքում անօրինական է, այն դեմ է Պաղեստինի ժողովրդի ցանկությունը և բնական իրավունքին, ՄԱԿ-ի կանոնադրության ընդհանուր սկզբունքներին և առաջին հերթին՝ ինքնորոշման իրավունքին:

Հողված տասնութերորդ—Չեղյալ համարել Բալթիկի գեկլարացիան և մանդատի վերաբերյալ փաստաթուղթը: Պաղեստինի նկատմամբ հրեաների պատմական կամ հոգևոր հավակնությունը չի համապատասխանում պատմական իրականությանը և զուրկ է պետություն ստեղծելու ճշմարիտ նախադրյալներից: Հրեականությունը, լինելով կրոն, ինքնուրույն ազգություն չէ, և հրեաները ինքնուրույն և միասնական ժողովուրդ չեն: Նրանք այն երկրի քաղաքացիներն են, որտեղ որ բնակվում են:

Հողված տասնիններորդ—Միտելզմը իր ծագումով իմպերիալիստական շարժում է, ազրեսիվ և էքսպանսիոնիստական՝ իր նպատակներով, ռասսայական՝ իր էությունը և ֆաշիստական՝ իր իդեոլոգիայով և գործելու միջոցներով:

Իսրայելը որպես այդ ավերիչ շարժման ավանգարդ և իմպերիալիզմի հենարան, մշտական ակունքն է վտանգի և խառնակչության՝ Մերձավոր Արևելքում մասնավորապես, և միջազգային կյանքում՝ ընդհանրապես:

Այդ պատճառով Պաղեստինի ժողովուրդը արժանի է միջազգային հասարակության օգնությանն ու աջակցությանը:

Հողված Դսաներորդ—Նազաղություն և անվտանգության, արգարություն և իրավունքի շահերը բոլոր պետություններից պահանջում են ժողովուրդների միջև պահպանել բարեկամական հարաբերությունները, իսկ քաղաքացիներին՝ իրենց հայրենիքում

մնայու իրավունքը: Միոնխատական շարժումը համարել որպես անօրինական և արգելիչ նրա գոյությունն ու գործունեությունը:

Հողված Բանմեկեւորող—Պաղեստինի ժողովուրդը հավատում է արդարության, ազատության, գերիշխանության, ինքնորոշման, մարդկային արժանապատվության սկզբունքներին: Ժողովուրդներին իրավունքն է դրանք կենսագործելու նա պաշտպանում է միջազգային այն բոլոր շահերը, որոնք հիմնված են համագործակցության ու արդարության վրա և նպաստում են խաղաղության հաստատմանը:

Հողված Բանեւեկեւորող—Պաղեստինի ժողովուրդը հավատացած է օրինականության վրա հիմնված խաղաղ գոյակցությանը, որովհետեւ ազրեսիայի և սկուպացիայի դեպքում իմպերիալիզմի հետ չի կարող լինել խաղաղ գոյակցություն:

Հողված Բանեւեւեւորող—Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը խաղում է զլխավոր դերն այս խարտիայի նպատակներին ու սկզբունքներին իրականացման մեջ և Պաղեստինի ազատագրության գործում, համապատասխան այդ կազմակերպության կանոնադրությանը:

Հողված Բանեւորութեւորող—Այս կազմակերպությունը որն է գերիշխանության չի հավանում Հորդանանի հաշիմյան թագավորության արեմոյան օփի, Ղազայի և ոչ էլ Հիմալի շրջանների վրա:

Այն գործելու է ազատագրական, կազմակերպչական, քաղաքական և ֆինանսական բնագավառներում, ելնելով ազգային, ժողովրդական սկզբունքներից:

Հողված Բանեհիեղեւորող—Այս կազմակերպությունը ազատագրական, կազմակերպչական, քաղաքական, ֆինանսական, արաքական և միջազգային հարցերում պատասխանատու է պաղեստինյան ժողովրդի շարժման համար՝ հանուն հայրենիքի ազատագրության մղվող պայքարում:

Հողված Բանվեցեւորող—Ազատագրության կազմակերպությունը համագործակցում է արաբական բոլոր պետությունների հետ, իր հնարավորությունների սահմաններում, չմիջամտելով արաբական որն է պետության ներքին գործերին:

Հողված Բանեւորութեւորող—Այս կազմակերպությունն ունի դրոշ, երգում ու հիմն, և այս բոլորի մասին հատուկ օրենքով ընդունվել է որոշում:

Հողված Բանութեւորող—Նարտիային ավելացվում է մի օրենք, որը կոչվում է Պաղեստինի ազատագրության կազմակեր-

պության հիմնական օրենք: Այն սահմանում է կազմակերպու-  
թյան, նրա օրգանների, հաստատութիւնների կառուցվածքային  
և յարաբանչութի պարտականութիւնները, որը զբովում է նը-  
րանց վրա, ըստ այս խարտիայի:

Հողված Բանիններդ—Այս խարտիան չի կտրելի փոփո-  
խության ենթարկել առանց Ազգային խորհրդի անդամների 3/4-ի  
մեծամասնութիւնն որոշման՝ ընդունված հասուկ այս նպատակով  
գումարված նիստում:

«ملف وثائق فلسطين الجزء الثاني من عام ١٩٥٠ الى ١٩٦٩»

عام ١٩٦٩ ص ١٢٧٨—١٢٧٥

«Պաղեստինի փաստաթղթերի ժողովածու 2-րդ մաս, 1950—1969 թթ., էջ  
1275—1278»

ՊԱԼԵՏԻՆԻ ԱԶԵՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՊԱՆՈՆԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ ա ս ա ռ ա չ ի ն—Հնգհանուր սկզբունքներ:

Հողված առաջին—Պաղեստինցիները, համաձայն սույն կանո-  
նադրութիւն, հիմնում են կազմակերպութիւն՝ Պաղեստինի ա-  
զատագրութիւն կազմակերպութիւն անվան տակ:

Հողված երկրորդ—Պաղեստինի ազատագրութիւն կազմա-  
կերպութիւնն իր պարտականութիւններն իրականացնում է հա-  
մաձայն ազգային խարտիայի և սույն հիմնական կանոնադրու-  
թիւն սկզբունքների, ինչպես նաև այն պլանների, ծրագրերի, որո-  
շումների, որոնք ընդունվել են նրանց կողմից:

Հողված երրորդ—Հարարերութիւնները կազմակերպութիւն  
ներսում, սկսած կազմակերպութիւն հիմքից մինչև նրա ղեկավա-  
րութիւնը, որոնք կապված են ամուր կապերով, հիմնված են  
պայքարի և ազգային գործունեութիւն անհրաժեշտութիւն կամ  
փոքրամասնութիւն կողմից մեծամասնութիւն կամքը հարգելու  
սկզբունքի վրա:

Կազմակերպութիւնը նվաճում է ժողովրդի վստահութիւնը  
համոզման և պայքարի հետագա զարգացման միջոցով, նա գոր-  
ծում է հանուն ժողովրդական զանգվածների հարատևող ազատա-  
գրական պայքարի:

12 Այս կանոնադրութիւնն ընդունվել է 1956 թ. մայիսին:

Ի կատարումն ու գործադրումն այս սկզբունքների, գործադիր կոմիտեն կազմակերպության տարրեր օգտկների վերաբերյալ ընդունում է հատուկ օրենք, նկատի ունենալով պաղեստինցիների պայմանները տարրեր վայրերում, նշնելով խարտիայի և կանոնադրության նպատակների իրականացման շահերից:

Հաղված շարտեր—Քուր պաղեստինցիները Պաղեստինի ազատագրության կազմակերպության բնական անդամներն են: Հայրենիքի ազատագրման իրենց պարտավորությունը նրանք կատարում են ըստ իրենց կարողության և ուժի: Պաղեստինի ժողովուրդը հանդիսանում է այս կազմակերպության գլխավոր հիմքը:

Մ ա ս ե Ր կ Ե Ո Ր Ղ—Ազգային խորհուրդ:

Հաղված Երեզերտը—Ազգային խորհրդի անդամներն ուղղակի ընտրությանը ընտրվում են պաղեստինցի ժողովրդի կողմից՝ գործադիր կոմիտեի կողմից այս կազմակերպության սահմանվող կարգի համաձայն:

Հաղված վեցերտը—Եթե խորհրդի հատուկ ընտրություններ անցկացնելու գործում առաջանան խուլընդուններ, Ազգային խորհուրդը կշարունակի իր գործունեությունը, մինչև որ ընտրությունների համար ստեղծվեն համապատասխան պայմաններ:

Հաղված յոթերտը—Ազգային խորհուրդը Պաղեստինի ազատագրության կազմակերպության գերագույն իշխանությունն է, և նա է, որ մշակում է կազմակերպության քաղաքականությունը, պլանները և ծրագրերը:

Հաղված ութերտը—Ազգային խորհուրդն ընտրվում է երեք տարի ժամանակով: Նրա նստաշրջանները հրավիրվում են նախագահի կողմից, յուրաքանչյուր տարվա մայիս ամսին: Արտահերթ նստաշրջանը կարող է հրավիրվել նախագահի կողմից՝ գործադիր կոմիտեի կամ խորհրդի անդամների 1/4-ի պահանջով: Նստաշրջանը գումարվում է նրուաղեմում կամ Ղազալում<sup>14</sup> և կամ այլ վայրում, հաշվի առնելով պայմանները: Եթե խորհրդի նախագահը չի հրավիրում այսպիսի նստաշրջան, ապա նստաշրջանը գումարվում է այն ժամանակ և աշտոնը, որ խորհրդի անդամները կամ գործադիր կոմիտեն կնշեն իրենց պահանջներում:

Հաղված իններտը—Ազգային խորհուրդն ունի զնկավար քյուրո՝ կազմված նախագահից, երկու անդամակներից և ընդհա-

<sup>14</sup> Այդ ժամանակ՝ 1964 թ., այս շրջանները գտնու սկուպացիա լին խաչիակա սպետարների կողմից:



և որ քարտուղարից, որոնց ընտրում է Ազգային խորհուրդն իր նստաշրջանում:

Հոդված տասներորդ—Ազգային խորհուրդն իր նստաշրջանում քննարկում է.

ա) գործադիր կոմիտեի կողմից ներկայացված տարեկան զեկուցագրերը՝ կազմակերպության և նրան ենթակա մարմինների գործունեության մասին.

բ) ազգային գրամատան զեկուցագիրը և բյուջեի կազմումը.

գ) կազմակերպության հանձնաժողովների կողմից ներկայացված առաջարկները.

դ) այլ հարցեր:

Հոդված տասներկերորդ—Ազգային խորհուրդն իր գործերի կատարման համար ստեղծում է այնպիսի հանձնաժողովներ, որպիսիք անհրաժեշտ կգտնվի:

Այս հանձնաժողովներն իրենց զեկուցագրերը և հանձնարարականները ներկայացնում են Ազգային խորհրդին, որն իր հերթին քննարկում է դրանք և այդ կազմակցությամբ ընդունում որոշումներ:

Հոդված տասներկուերորդ—Ազգային խորհրդի որոշումներն օրինական են, եթե ներկա են նրա անդամների 2/3-ը, և որոշումներն ընդունվում են ներկաների մայնների մեծամասնությամբ:

Մ ա ն Ե Ր Ե Ր Գ—Գործադիր կոմիտե:

Հոդված տասներեկերորդ—Ազգային խորհուրդն իր անդամներից ընտրում է գործադիր կոմիտեի նախագահ, որն իրականացնում է գործադիր կոմիտեի անդամների ընտրությունը:

Հոդված տասնչորսերորդ—Գործադիր կոմիտեն կազմված է 15 անդամներից, ներառյալ նախագահը, որոնք իրենց կազմից ընտրում են նախագահի տեղակալը:

Հոդված տասնհինգերորդ—Գործադիր կոմիտեն կազմակերպության քարձրագույն գործադիր մարմինն է, նա գործում է մշտապես, և նրա անդամներն իրենց աշխատանքի մեջ կենսագործում են այն քաղաքականությունը, ծրագրերը և պլանները, որ ընդունում է Ազգային խորհուրդը: Նա կուսկտիվ կերպով ու անհատապես պատասխանատու է նրա առջև:

Հոդված տասնվեցերորդ—Գործադիր կոմիտեն.

ա) ներկայացնում է պաղեստինցի ժողովրդին.

բ) հսկողություն է սահմանում կազմակերպության խմբերի վրա.

գ) ընդունում է ծրագրեր, հրահանգներ և արձակում և հասուկ որոշումներ ընդունում կազմակերպության գործունեության մասին, որոնք չեն հակասում խարտիային և կանոնադրությանը.

գ) իրավանաջնում է կազմակերպության ֆինանսական քաղաքականությունը և կազմում նրա բյուջեն:

Ընդհանուր առմամբ գործադիր կոմիտեն իրականացնում է Ազատագրության կազմակերպության բոլոր պարտականությունները, Ազգային խորհրդի կողմից հրապարակվող որոշումների և ընդհանուր ծրագրերի համաձայն:

Հոդված առանյութերուդ—Գործադիր կոմիտեի մշտական նստավայրը Երուսաղեմ քաղաքն է: Այն իր ժողովները կարող է գումարնի ալլ վայրում, եթե ինքը նպատակահարմար է գտնում:

Հոդված առանյութերուդ—Գործադիր կոմիտեն հիմնում է հետևյալ վարչությունները.

ա) հրատարակչական.

բ) քաղաքական գործերի և ինֆորմացիայի.

գ) պաղեստինյան ազգային գրամատան.

դ) ընդհանուր գործերի և ազգային կողմնորոշման.

ե) որևէ ալլ վարչություն, որի ստեղծումը անհրաժեշտ է գտնում կոմիտեն:

Ցուրաքանչյուր վարչություն ունի ընդհանուր տնօրեն և անհրաժեշտ թվով պաշտոնյաներ:

Ցուրաքանչյուր վարչության պարտավորությունների շրջանակը սահմանվում է գործադիր կոմիտեի կողմից, հատուկ օրենքով:

Հոդված առանիմներուդ—Գործադիր կոմիտեն ամրապնդում է իր հարաբերությունները և համագործակցում բոլոր այն արտազան և միջազգային կազմակերպությունների, միությունների և հասարակությունների հետ, որոնք համաձայն են նրա նպատակներին և օժանդակում են կազմակերպությանը, նրա խեղդրների իրականացման գործում:

Հոդված Բսաներուդ—Գործադիր կոմիտեի լիազորություններն ուժի մեջ են, և նա կատարում է իր պարտականություններն այնքան ժամանակ, քանի զեռ վայելում է Ազգային խորհրդի վստահությունը: Գործադիր կոմիտեն ներկայացնում է իր հրաժարականը Երրբնախր Ազգային խորհրդի առաջին նիստում: Քուլլատրվում է հրաժարական տվող կոմիտեի նախագահի վերջնաբուծություն:

Հողված ֆանմեկերուդ—Փորձագիր կոմիտեի որոշումներն օրինական են, եթե ներկա են նրա անդամների 2/3-ը, և որոշումներն ընդունվում են ներկաների ձայների մեծամասնությամբ:

Մ ա ս շ ու ռ ու ռ ղ — Ընդհանուր գրույթներ:

Հողված ֆանմեկերուդ—Ստեղծել պաղեստինյան հատուկ զորամիավորումներ՝ շահագրգռված արաբական երկրների համաձայնությամբ և օգնությամբ, ինչնով ուղղմական անհրաժեշտությունից և արաբական միացյալ ղեկավարության կողմից ընդունված ժրագրերից:

Հողված ֆանմեկերուդ—Փորձագիր կոմիտեն ձգտելու է պաղեստինցիների համար իրավունք ձեռք բերել արաբական երկրների ուղղմական ֆակուլտետներ և ինստիտուտներ ընդունվելու համար, նրանց ուղղմական կրթություն տալու և պատակով: Նա ձգտելու է մորիլիզացնել պաղեստինցիների բոլոր ուժերն ու կարողությունները և նրանց նախապատրաստել ազատագրական շարժման համար:

Հողված ֆանշոսերուդ—Հիմնվելու է գրամատուն՝ Պաղեստինի ազգային գրամատուն անվամբ, ֆինանսավորելու կազմակերպության գործունեությունը: Դա ղեկավարում է հատուկ վարչական մի մարմին, որը ստեղծվում է Ազգային խորհրդի կողմից՝ գրամատուն վերաբերյալ ընդունված հատուկ օրենքի համաձայն:

Հողված ֆանճինգերուդ—Ազգային գրամատուն եկամուտները կազմվում են.

ա) պաղեստինցիների վրա սահմանված կայուն հարկից, որը դանձվում է հատուկ օրենքով:

բ) արաբական կառավարությունների և ժողովուրդների ցույց տված ֆինանսական օգնությունից.

գ) արաբական երկրների փոստային բաժանմունքներում ըստ ստեղծված ազատագրական գրոշմանիչի վաճառքից ստացված եկամուտներից.

դ) Եվրատվություններից և հատկացումներից.

ե) արաբական և բարեկամ ժողովուրդների կողմից տրված օգնությունից և վարկերից.

զ) այլ եկամուտներից, որ որոշում է Ազգային խորհուրդը:

Հողված ֆանվեցերուդ—Արաբական և բարեկամ երկրներում հիմնել Պաղեստինի օգնության կոմիտեներ՝ օժանդակելու կազմակերպության ազգային ձգտումներին ու եվրատվությունների հավաքմանը:

Հողված Բամելյոթերոզ—Պաղեստինցի ժողովուրդը ներկայացվում է արաբական կոնֆեդերանսներում և հաստատություններում ախպիսի մակարդակով, որ սահմանում է գործադիր կոմիտեն, Գործադիր կոմիտեն Պաղեստինի ներկայացուցիչ է նշանակում Արաբական երկրների լիգայում:

Հողված Բամելյոթերոզ—Գործադիր կոմիտեն իրավասու է հրապարակելու հրահանգներ, որոնք անհրաժեշտ են այս կանոնադրության հողվածները կենսագործելու համար:

Հողված Բամելյոթերոզ—Այս հիմնական կանոնադրությունը հարող է բարեփոխվել, փոփոխության ենթարկվել և լրացվել Ազգային խորհրդի որոշմամբ, նրա անգամների մայնի 2/3-ի մեծամասնությամբ:

عملى وثائق فلسطين الجزء الثاني من عام ١٩٥٠ الى

عام ١٩٦٩ ص ١٢٨٧—١٢٩٠

«Պաղեստինի փաստաթղթերի ժողովածու, 2-րդ մաս, 1950—1969 թթ., էջ 1287—1290»

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԱՀԱՏԱՊԵՐՈՅԵԱՆ ԺՈՂՈՎՐԿԱՆՍՈՒՐԵՏԵԱՆԸ ԸՆԴՆՅԻ  
ԻՐԱԿՈՐԸ՝ ՎՊԱԼՍՅՈՒՄԵՆ ԸՐՄԻ ԺՈՂՈՎՐԿԱՆՍՈՒՐԵՏԵԱՆԻ ԼՅՈՒՄԵՆ  
ՄԱՍԻ

1.2.1990 թ.

Պաղեստինի Ազգային խորհուրդը, ելնելով պաղեստինյան հարցը զեմոկրատական ուղիով լուծելու Պաղեստինի ժողովրդի ձգտումից, որոշում է հետևյալը.

1. Մերժել (պաղեստինյան—Ա. Ք.) հարցի շտվինիստական, հեռադիմական, սիոնիստական և գաղութատիրական լուծումը, որը հիմնված է Իսրայելի պետության հանրաման վրա, որպես մատարված իրողություն Մերձավոր Արևելքում, քանի որ այդ լուծումը, ըստ էության, հակասում է իր սեփական տերիտորիայում պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքին, և ամբապնդում գաղութատիրության հեռ կապված և պաղեստինյան, արաբական ազգային-ազատագրական շարժմանն ու աշխարհի ազատագրական ողջ ուժերին թշնամի էքսպանսիոնիստական սիոնիզմի գոյության հիմքը:

2. Մերձիկ 1967 թ. հունիսից առաջ<sup>15</sup> և դրանից հետո ապարհեզ եկած արաբական և պաղեստինյան շովինիստների կողմից առաջարկվող լուծումը, որը ելնում է հրեաներին մորթելու և ժողը թափելու սկզբունքից:

3. Այն պայքարը, որ մղվում է պաղեստինյան հարցը և իսրայելական խնդիրը զեմոկրատական, ժողովրդական ճանապարհով լուծելու համար, ելնում է պետական մարմիններով՝ քրեականիզմ և սոստիկանություններ ստեղծած, ինչպես նաև շովինիստական և սիոնիստական քաղաքական և արհմիութենական այլ հաստատություններով ներկայացված սիոնիզմի վերացման և պաղեստինյան ժողովրդագրեմոկրատական պետություն հիմնելու սկզբունքից, պետություն, որտեղ արաբները և հրեաները կպարեն առանց խտրականության, և որտեղ բացառված է լինելու գաղակարգային և ազգային ամեն տեսակի հայածանք ու ձեռնմ, և որտեղ արաբները և հրեաները իրավունք կունենան սանդղծելու և զարգացնելու իրենց ազգային մշակույթը:

4. Պաղեստինը և արաբ ազգը պատմականորեն և ճակատագրով կապված են միմյանց հետ: Պաղեստինի ժողովրդագրեմոկրատական պետությունը կզատնա արաբական պետությունների միության սնրածանկի մասը և կզատնա մի պետություն, որը թշնամի կլինի գաղութատիրությանը, իմպերիալիզմին, սիոնիզմին և արաբական ու պաղեստինյան հետադիմությանը:

5. Առաջարկվող զեմոկրատական լուծումը հրաշխավորում է արաբ և հրեա մարզու ազատագրումը ամեն տեսակի ոտսայական և շովինիստական մշակույթի ազդեցությունից: Այն հրաշխավորում է արաբի ազատագրումը հետադիմության, իսկ հրեայի ազատագրումը՝ սիոնիզմի ազդեցությունից:

6. Գեմոկրատական լուծումը զեմ է գաղակարգային և ազգային ձեռնմներ: Այն ապահովում է Պաղեստինի տարանջատումը իմպերիալիզմից, և Պաղեստինը վերածում է իմպերիալիզմի և հակահեղափոխության զեմ մարտնչող ողջ առաջադիմական հեղափոխական ուժերի պատվարի:

7. Ազգային-ազատագրական շարժումը չի կարող հասնել Պաղեստինի ժողովրդագրեմոկրատական պետության ստեղծմանը, առանց զինված պայքարի և ժողովրդական ազատագրական պատերազմի՝ ընդդեմ սիոնիզմի, իմպերիալիզմի և հետադիմության,

<sup>15</sup> Խոսքը 1967 թ. հունիսի 5-ին արաբական երկրների զեմ սիոնիզմի և համալսարանային իմպերիալիզմի հովանավորությանը Եդուայիլ Կաննադերմա ազբնիզ պատերազմի մասին է:

առանց Իսրայելի պետության վերացման և սինիստական շարժման ազդեցությունից հրեաների ազատագրման, առանց պաղեստինյան հարցի շովինիստական, հետադիմական զաղութատիրական լուծումների դեմ ամենօրյա հետևողական զինված պայքարի, մինչև Պաղեստինի լիակատար ազատագրումը և դեմոկրատական պետության ստեղծումը, որի մեջ կմտնեն արաբները և հրեաները՝ ազգային իրավահավասարության սկզբունքների հիման վրա, պետություն, որը կծառայի ազգային ազատագրության և առաջադիմության համար պայքարող բոլոր ուժերին:

«الوثائق الفلسطينية العربية لعام ١٩٦٩» : بيروت، ١٩٧١

ص ٣٦٦—٣٦٧

Պաղեստինյան արաբական փաստաթղթեր, 1969 թ., Բեյրութ, 1971, էջ 366—367.

#### ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻ ԿԱԶՄԱԿԵՐԱԿՈՒՄՅՈՒՆԵՐԸ

Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը բոլոր միջոցներով, գլխավորապես, զինված պայքարով պետք է մարտնչի հանուն Պաղեստինի լիակատար ազատագրության և ազատագրված պաղեստինյան տերիտորիայի որևէ մասի վրա ժողովրդական իշխանության հաստատման:

Սա կիրականանա միայն այն դեպքում, երբ ուժերի հարաբերակցության մեջ տեղի ունենան խոշոր փոփոխություններ ի շահ մեր ժողովրդի և նրա պայքարի:

Ազատագրության կազմակերպությունը պայքարում է ամեն մի ծրագրի դեմ, որը մերժում է պաղեստինցի ժողովրդի պատմական իրավունքները՝ վերադառնալու իր հայրենիքը և որոշելու իր ապագան:

Պաղեստինի ազատագրության կազմակերպությունն ընդունում է, որ ազատագրված տերիտորիայում իշխանության հաստատումը պայքարի մի հանգրվան է միայն՝ ի խնդիր պաղեստինյան դեմոկրատական պետության հաստատման:

Ազատագրության կազմակերպությունը պայքարում է հորդանանյան ազգային ուժերի հետ՝ ստեղծելու պաղեստինյան-հորդանանյան

18 1974 թ. հունիսի 1—8-ը Կահիրեում կայացավ Պաղեստինյան Ազգային խորհրդի 12-րդ նստաշրջանը: Այն ընդունեց Պաղեստինի ազատագրության կազմակերպության բազմազան ծրագիրը, որը սահմանում է Պաղեստինի որևէ մասի վրա պաղեստինյան պետության ստեղծման պայմանները:

նանյան ազգային ճակատ, որի նպատակն է շորդանանի մեջ հաստատել ազգային դեմոկրատական իշխանություն:

Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը ձգտում է ստեղծելու պայքարի միասնական ճակատ արաբ և պաղեստինցի ժողովուրդների, արաբական ողջ ազատագրական ուժերի հետ, որոնք ընդունում են այս ծրագիրը:

Պաղեստինյան ազգային իշխանությունը կու է անում արաբական ընդդիմադիր երկրներին՝ պայքարել հանուն պաղեստինյան տերիտորիայի լրիվ ազատագրման, որը և լինելու է առաջին ֆալսե համաարաբական միասնության ճանապարհին:

Ազատագրության կազմակերպությունը ձգտում է սերտ համագործակցություն հաստատել սոցիալիստական երկրների և աշխարհի առաջադիմական ու ազատագրական ուժերի հետ՝ սխեմիզմի, հեաադիմության և խմբերիալիզմի բուրբ դավադրությունները ձախողելու համար:

Նլնելով այս ծրագրից, Ազատագրության կազմակերպությունը պայքարում է ազգային միասնությունն ամրապնդելու և այն այնպիսի մակարդակի վրա բարձրացնելու համար, որը հնարավորություն կաա նրան իրականացնելու իր ազգային պարտականությունները և խնդիրները:

Նլնելով այս ծրագրից, հեղափոխական ղեկավարությունը կմշակի այս նպատակների իրագործմանը նպաստող համապատասխան տակտիկա:

«الاجبار»، العدد ٧٢، بيروت ١٥—٦—١٩٧٤، ص ٨

ԵՄ-Ախրաբ, № 72, Քեյրոս, 1974 թ.

А. Г. ТОПАЛЯН

## НЕКОТОРЫЕ ПРОГРАММНЫЕ ДОКУМЕНТЫ ОРГАНИЗАЦИИ ОСВОБОЖДЕНИЯ ПАЛЕСТИНЫ

### Резюме

В публикации представлены основные программные документы Организации освобождения Палестины (ООП) — Национальная хартия, устав и решения Национального совета, в которых излагаются задачи, стоящие перед Палестинским движением сопротивления, пути их решения, дается структура и функции ООП.

ارشالويس طوبالين  
الوثائق البرمجية لمنظمة التحرير الفلسطينية

نعرض في مقالنا الترجمة الارمنية للوثائق البرمجية الاساسية لمنظمة التحرير الفلسطينية الممثلة في «الميثاق القومي الفلسطيني» و«النظام الاساسي» وقرارات المجلس الوطني الفلسطيني.

تشير الوثائق المذكورة الى المهام التي تواجه حركة المقاومة الفلسطينية والسبيل الصحيح لحلها، وتحدد كذلك تركيب ودرر منظمة التحرير الفلسطينية.



## Հ. Ս. ՍԱՐՅՍՅԱՆ

### ՔՈՒՐԲԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԱՐԱ-ՔՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՏԱԿ (1908—1918 թթ.)

Արարենքը մեծ խանգաճառությամբ ընդունեցին երիտթուրքերի 1908 թ. հեղափոխությունը և սահմանազրույթյան հռչակումը: Սահմանազրույթյան հռչակումից հետո արարենքն իրենց կենսական խնդիրների լուծումը և ազգային վերածննդի հնարավորությունն ակնկալում էին նոր թուրքիալի շրջանակներում: Սակայն արար ժողովրդի հույսերը շարժարացան, իշխանության զուխ կանգնած երիտթուրքերի քաղաքականությունը համարյա ոչնչով չէր տարբերվում Արդուլ Համիդի քաղաքականությունից, քանի որ նրանք ևս քարոզում էին օսմանիզմի, պանիսլամիզմի և շովինիզմի սեպակցիոն գաղափարները:

Արարական վիլայիթներում երիտթուրքերի թալանչիական և շովինիստական քաղաքականությունը ուժեղացրեց արարների դժգոհությունը: Դրությունն արարական վիլայիթներում ազնի սրվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ արարենքը ենթարկվեցին մեծ ազնուների ու զրկանքների: Նրանք անտարբեր վերաբերվեցին սուլթանի հայտարարած ջիհադին՝ սրբազան պատերազմին: Արար զինվորներն ու սպաները գասայքում էին թուրքական բանակը: Ամբողջ ժողովուրդն ուրախանում էր գերմանա-թուրքական բանակների պարտության համար: 1915 թ. սկզբներին Սուեզի ջրանցքի վրա թուրքական բանակի կատարած առաջին արշավանքի ձախողումն ուժեղացրեց արար զնկավարների անվստահությունը թուրքերի նկատմամբ և հանգեցրեց նրանց հարաբերությունների խզմանը իշխանությունների հետ: Ի պատասխան այս բուլտրի, Սիրիայում տեղակայված թուրքական 4-րդ բանակի հրամանատար Զեմալ փաշան մասսայական

տեղոր սկսեց արար Հայրենասերների դեմ: Ջեմալ փաշայի հրամանով Ալեյում (Լիբանան) զինվորական տրիբունալը, խախտելով օրինականության տարրական նորմաները, մահվան դատազմիւ կայացրեց արար հարյուրավոր Հայրենասերների նկատմամբ, որոնք 1916 թ. մայիսի 6-ին կախաղան հանվեցին Դամասկոսում և թելուծուծ:

Երիտթուրքերի այս քաղաքականությունն արարներին կանգնեցրեց թուրքական տիրապետության դեմ զինված ապստամբություն բարձրացնելու անհրաժեշտության առաջ, որը և տեղի ունեցավ 1916 թ. հունիսին:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող փաստաթղթերը և նյութերն ընդգրկում են երիտթուրքերի անփառունակ տիրապետության տասնամյա ժամանակաշրջանը: Դրանք մեծ մասամբ պատռնական փաստաթղթեր են, որոնցում արտացոլված է երիտթուրքական զինվածների դիքքորոշումը արարական հարցի նկատմամբ: Առաջին հերթին զրահում է այդ փաստաթղթերի գիտական նշանակությունը և զրանց հրապարակման անհրաժեշտությունը:

Հրապարակվող փաստաթղթերն արժեքավոր տվյալներ են պարունակում երիտթուրքերի տիրապետության շրջանում արարական երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակի, այդ երկրների նկատմամբ երիտթուրքերի վարած քաղաքականություն, թուրք-արարական փոխհարաբերությունների, թուրքական բռնատիրական լուծը տապալելու համար ուսցի ելած արարական զանգվածների պայքարի և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Սույն փաստաթղթերի հրապարակումը կօգնի ավելի ճիշտ ու լայն պատկերացում կազմելու խնդրո առարկա ժամանակաշրջանում արարա-թուրքական փոխհարաբերությունների մասին:

ԻՌԻՄԱԿԱՆ ՊԵՏԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ 1906 թ. ՕԿՈՍՅՈՍԻ 7-Ի  
ՈՐՈՇՈՒՄԸ ԵՄԵՆԻ ՄԱՍԻՆ

1. Սմենը բաժանել երկու նահանգի, առաջինը առափնյա և երկրորդը՝ լեռնային: Առաջինն ընդգրկում է Քիհաման և առափնյա տարածությունը, երկրորդը Ամրանի շրջանները՝ ալ-Կահլը, Քավիլան, Հուլուրը, Ջիմմարը, Քարիմը, Անիսը:

2. Լեռնային նահանգը հանձնել իմամ Յահյային, առափնյան՝ որևէ մեկին, որը ունի շնորհք և կարողություն:

3. Կառավարումը նահանգում իրականացնել ըստ շարիաթի, ընտրել կազմակերպիչ, ժառանգողներին, սատրապսս պաշտոնյաներին, ինչպես նաև ժանդարմներին: Հետքված կազմակերպիչ և պաշտոնյաների անունները ներկայացվում են մեծարզո սուլթանին:

4. Կիզորնի երկու նահանգներին՝ ժախսելու հարկերից կուտակված ֆինանսները և հիմն մեա զրամական որոշ գումար, այն սուլթանի սուլթանական կենտրոն: Այդ գումարի մի մասը ժախսվում է տեղական բարեկեցություն համար:

5. Մանահա զավաթը լինելու է բանակի կենտրոնատեղը: Միաժամանակ բավարար ութ թողնել Սանայում, ընդունակ հրամանատարներից մեկի զեկավարության տակ (հակելու) ընդհանուր ապահովությունը: Սակայն Կասարայում լպետք է թողնել զինվորներ, այն պետք է դառնա իմամի նստավայր: Որոշ թվով ուժեր պետք է թողնել Քիհամայում (ուժեղացնելու համար ապահովությունը):

6. Երկու նահանգների զեկավարները պարտավոր են յուրաքանչյուր տարվա վերջին սուլթանական կենտրոնին ներկայացնել բյուջեն, ցույց տալով ժախսերը և եկամուտները:

توفيق على برى العرب و الترك في العدد السنوري

العثماني ١٩٠٨—١٩١٤ القاهرة، ١٩٦٠، ص ١٥٠—١٥١

Քեզիքի Ալի Քերու, Արաբները և Քուրդերը Օսմանյան սահմանազրության շրջանում, Կահիրե, 1960, էջ 150—151

#### ՆԵՐՆԱԹՈՒՐԳԱՆԸ ԼՍԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆՎՈՐԸ

Պայմանագիրը կնքվեց 1911 թ. օրեղերի օրը՝ աստծուն, ապավինող իմամ Յահյա բին Մուհամմեդ Համիդ էդ-դինի և մեծ հրամանատար Իզզեթ փաշայի միջև՝ Սանաայում, Հալլում, Քավքարանում, Հալուրում, Անխում, Յարիմում, Ջիմմարում, Հարազում և Քարիզում գրությունը բարելավելու համար, որտեղ ապրում են պետության կառավարման տակ գտնվող զինվորները<sup>1</sup>:

1. Իմամը զեյզի ազանդից ընտրում է կառավարիչներ և այդ մասին տեղեկացնում է (Սանասա վիլայիթի) վարչին, իսկ այս վերջինս իր հերթին հազորգում է Սաամրուլ՝ Շեյխ ուլ-խալամի հաստատման համար:

2. Կազմվում է վեուարեկ դասարան՝ իմամի ներկայացրած բողոքները քննելու համար:

<sup>1</sup> Ջեյզինեթ—Մուսուլմանական չիա ազանդի հետեղները: Այդ ազանդ առաջացել է VIII դ. Հիմնադրել է Ջեյզ իր Ալին:

3. Այս դատարանի վայրը լինելու է Սաեաան. իմամն ընտրում է դատարանի նախագահին և անդամներին, իսկ կառավարութիւնը հաստատում է նրանց նշանակումը.

4. Դատաւճիռն ուղարկվում է Ստամբուլ՝ Ենյի ուլ-խալամի հաստատմանը, սուլթանական հրամանի հրապարակման համար: Դատաւճիռն իրագործվում է միայն հաստատումից ու հրամանի հրապարակումից հետո՝ շոքս օրվա ընթացքում:

5. Երբ պաշտոնյաներից (կառավարիչներ և ծառայողներ) որևէ մէկն է շարն է գործադրում իր պաշտոնը, ապա իմամին իրավունք է վերապահվում այդ մասին հայտնելու վաղիկին:

6. Կառավարութիւնն իրավունք է վերապահվում կրօնական դատաւորներ նշանակել ևրկրում ապրող եմենցիներից, որոնք հետևում են շաֆիական և հանեֆական աղանդին<sup>2</sup>:

7. Կազմվում են իսառը դատարաններ շաֆի-զեյդի դատաւորներից՝ զանազան աղանդներին հետևող անձանց բողոքները քննելու համար:

8. Կառավարութիւնը նշանակում է պաշտոնյաներ՝ շրջիկ դատարանների տեսուչների անվան տակ, որոնք պետք է շրջնէ գլուղներում, քննելու օրինական բողոքները և վերացնելու կառավարական կենտրոնները զնալու ընթացքում առաջացող զժվարութիւնները:

9. Վակուֆի և կտակների հետ կապված հարցերը քննում է իմամը:

10. Բացառութիւամբ լեռնային շրջանների, կառավարութիւնը նշանակում է դատաւորներ՝ շաֆի և հանեֆի աղանդներին հետևողների համար:

11. Ընդհանուր ներում հայտարարել քաղաքական հանցագործների և պետական ժամկետանց հարկերը շվհարող անձանց համար:

12. Արհարի և Հաուլանի բնակիչներից պետական հարկերի հաճարումը դադարեցնել տասը տարով՝ հաշվի տոնելով նրանց աղքատութիւնը և երկրի ավերվածութիւնը, սակայն այն պայմանով, որ նրանք պահպանեն բարեկամական կապերը կառավարութիւն հետ:

13. Պետական հարկ հաճարել ըստ շարիաթի:

14. Եարիաթի դատաւորներին կամ կառավարութիւնը պետական հարկահաճարներից բողոքներ հասնելու դեպքում դատա-

<sup>2</sup> Շաֆի և Հանեֆ—IX գ. մեզբուրված կրօնական աղանդներ:

վորենքը կառավարութեան հետ պետք է մասնակցեն քողոքներէ քննարկմանը և զատարկճոխ գործադրմանը:

15. Զնյդիներին իրավունք է վերապահւում իմամին եզերներ մատուցել ուղղակիորեն կամ գլուղի ավագների միջոցով:

16. Իմամը պարտավոր է իր ստացածի մեկ տասներորդը հանձնել կառավարութեանը:

17. Վերացնել պետական հարկերի հավաքումը Զերել ալ-Շարքից՝ տասը տարի ժամանակով:

18. Իմամը պետք է ազատ արձակի Մանաւի և Նրա հարևան Հարազայի ու Ամրանի բնակիչներից իր մտտ պահւող պատանդներին:

19. Կառավարութեան և իմամի պաշտոնյաները կարող են ազատորեն շրջել ողջ Եմենում, պահպանելով երկրի հանգստութեանը և սնվտանդութեանը:

20. Երկու կողմերը չպետք է խախտեն եզված սահմանները՝ այս պայմանների հաստատումից և դրանց վերաբերյալ սուլթանական ֆերմանի հրատարակումից հետո:

الشيخ عبد الواسع بن يحيى الواسعي اليماني— تاريخ

البيمن—القاهرة—١٣٤٦—ص ٢٠٧—٢٠٦

Ենչև Արդ ու Վտր ըին Յաւա ու Վտր ու Յաման, Եմենի պատմությունը, Կաէրի, 1946, էջ 206—207:

«ՏԱՆՆԵ ՔԵՐՔԻ ԽՄԲԱԿԻՐ ՀՈՒՍՅՆ ԶԱՂԻ ԲՅՅԻԿ ՀԱՏՏԱՐԱՐՑԻՔՅՈՒՆԸ

«Մենք՝ արարներս, և մասնավորապես Միրիալի արարները, շղիտի զոհանանք հին սխտեմի առաջարկներով, որպիսին է նահանգային ընդհանուր օրենքի մը հրատարակութեանը՝ Արարները իրենց ընդդիմութեանը պիտի շարունակեն, մինչև որ իրենց սեփական լեզվով վարչութեան ստանան իրենց համար իրենց կողմից ընտրված պաշտոնյաների միջոցով: Ու եթէ ասոր հակառակինք, վտանգը կրնա շատ լուրջ ըլլա, որովհետև քամիլական ընդ-

1 Հուանէ Զաէից (1876—1957)—Երթաթուրքերի Միութեան և Ասալադիմութեան կուսակցութեան գործիչ, «Tanino Թերթի Հիմնադր և Հրատարակիչ, ստանյան պալատնետի զնպատաս:

4 1913 թ. Մայիսի 5-ին երթաթուրքական կառավարութեան օրենք հրապարակեց նահանգների մասին, որով անյան շափով ընդլայնվեցին նահանգային խորհուրդների իրավունքները: Մական այդ օրենքը չի թավարարում արար ժողովրդի պահանջները և բողոքի նոր ալիք առաջացրեց Միրիալում ու Իրաքում:

դիմադիր երեսփոխանները՝ շփոթի վարանին ուժ տալու արարեն-  
բու քվեներուն՝ մեկիկ մեկիկ դեպի իշխանութիւն մագլցելու  
նպատակով, նոր քորսարուկցիոնն և ազնիի գեշ անկարգութիւն-  
ներ առաջ պիտի բերեն խորհրդարանին մեջ, բաժանում բանակին  
մեջ, ինչ որ դուրսութիւն պատճառ պիտի ըլլա Օսմանյան կայ-  
սրութեան վերջնական կործանումին Ասիո՝ իր վերջին ապաստա-  
րանին մեջ:

Իրողութիւնը այսպէս ըլլալով, կը կարծենք թէ խելացիու-  
թիւն է այդ ծրագիրը չթողուլ քամիլյան ընդդիմադիրներուն, ո-  
րոնք արդէն զործոն էնթրիկներ առաջ տարին Սոփաոսի մեջ, հա-  
մաձայնութեան մը զալ արարներուն հետ, նկատողութեան անհելով  
բոլոր իրենց պահանջները, և մեր ու անոնց միջև պահելով այն  
տեղա ու հին կապը այն խնդիրներուն մեջ, ուր արարական և թըր-  
քական շահերը հայանապէս իրարու հետ կը համաձայնին և ուր  
անհրաժեշտ է կառավարական միացումը զործողութիւն մը կա-  
տարվի:

Օրինակի համար, բնական է, որ թէ արարներու և թէ թուրքե-  
րուն շահերուն տեսակետով ազնիի ազնի է, որ անոնք անկախ ըլ-  
լան և խալիֆայի մը կողմէ կառավարվին, քան թէ օտար, ոչ իս-  
լամ վեհապետի մը հպատակները դառնան: Ահա ասկէ է, որ կը  
ծագի վեհապետական միութեան և արտաքին, պատերազմական,  
նազալին զործերու, ինչպէս նաև տնտեսական ու օրինադրական  
զործերու մեջ հասարակած վարչութեան մը անհրաժեշտութիւնը:  
Մենք այն կարծիքին ենք, որ եթէ անգամ մը այս տրամաբանու-  
թիւնը ընդունվի, այն ատեն կիսամիջոցներու պետք չպիտի մնա,  
ու եթէ արարները իրենց տեղական զործերուն վիճարանութեան և  
կարգադրութեան համար Դամասկոսի կամ Բեյրութի մեջ մասնա-  
վոր կանգնակի մը կամ խորհրդարանի մը ստեղծումը պահանջեն,  
պետք է տանք ատիկա, միևնույն ատեն հանրային զործերու, ար-  
տաքին քաղաքականութեան, բանակի, նազատորմի, ելևմտական ու  
տնտեսական զործերու մեջ միութեան առաջ բերելով:

Մեկ խոսքով, ամբողջութեամբ նկատի անկելով արարներու և  
թուրքերու զանազան հարաբերութիւնները—թուրքերը ազնիի պա-

Է նկատի ունի նախկին մեծ վեզիր Քամիլ փաշային ու նրա համախոհներին,  
որոնք պաշտպանութեան ինչ գտնում երիտթուրքերի դեմ սոցոզիցիա կազմած  
ճեւրդիմք վե Իթթիլաֆա (Ազատութեան և համաձայնութեան) կառուցութեան  
կողմէն:

տեղադրուող են և բիրտ, իսկ արարները՝ ավելի խելացի են և ճշուն, նկատի առնելով նաև ակներև նույնութունը իրենց շահին վերջին խաւամ կայսրութիւնը քրիստոնեյա Եվրոպայի դեմ պահպանելու մասին, մենք այն կարծիքին ենք, թէ մեր հարարներութիւնները արարներուն հետ կրեան ու պետք է կարգադրվին 1867-ի Ավրաստ-հունգարական նշանավոր համաձայնութեան հիման վրա, այսինքն թէ ստեղծել այնպիսի քաղաքական սիստեմ մը, որուն մէջ հասարակած ըլլան վեհապետութիւնը, դիվանագիտութիւնը, բանակը, նախատորմը, և, մնացածին համար, ինքնավարութեան ամենալայն իրավունքը:

Փակի մը որ առաջ Գամառնոսէն ստացա հետագիւր մը, ստորագրված արար ապակհներոնացումի կուսակցութեան նախագահ Բեֆիզ պեյ էլ Ազմեն, որ կըսէ, թէ կուսակցութիւնը բացարձակապես կը բողոքէ ներքին գործերու նախարարին կողմն հայտնված գաղափարներուն դեմ: Պէյրուսի կուսակալ Հազիմ պեյ, որ վերջերս պետք իր նոր պաշտոնաւեղին նահանգային օրենքը գործադրելու նպատակով, Պոլսն լմեկնած հետագիւր մը ստացած էր Սուրիայէն, որով կըսեր թէ ժողովուրդը հաստատապես կը պնդէ, որ գործադրվին բարենորոգումներու հանձնաժողովին կողմն գրի առնված ժրագրին տրամադրութիւնները:

Գիվանագիտական ձեռնհաս ազդրուրն մը առած տեղեկութեան նայելով կացութիւնը այնքան խռով է այսօր, որ կատարութիւնը ինքզինքը լուրջ անկարգութիւններու առջև կը գտնուի Պետք է հիշել, որ Հազիմ պեյ Պէյրուս հասնելուն պես, սիստեմաթիք ընդդիմութեան մը հանդեպ գտաւ ինքզինքը: Կանխորոշ հրահանգներու կապով և տեժնապես ալ կատարութեան գաղափարներուն համոզված կուսակից մը ըլլալով, կուսակալը իր տեղը հաստատ կենցամ, ցույց տվաւ իր կորովը և զոցնց բարենորոգական կոմիտեին ժողովատեղին: Միևնույն ատեն Պէյրուսի քաղաքական ամեն գույնի թերթերը համիմաստ հողված մը հրատարակեցին, պահանջելով կոմիտեին կողմն ուղղած բարենորոգումներուն գործադրութիւնը: Վերջապես երեք օր առաջ, իրեն բողոքի ցույց, ժողովուրդը զոցնց բուր խանութները:

Ահա այսպես է կացութիւնը Պէյրուսի մէջ, արարական խընդիրը ոչ թէ տեսականապես, այլ գործնական կերպով հարուցված է: Հարկ չկա այս խնդրին կարևորութիւնը շեշտելը:

Եժմանակ, Գ. Պոլս, 17.11.1912.

«Համաձայնությամբ սիրիացիների և բնդաւերապետ արարների հետ»,

Սա համազգացած էմ, որ մեր երկրում, եւսլնիակ մեր ամենա-  
յուսազորագած երիտասարդութեան շրջանում, շատ քիչ մարդիկ  
կլինեն, որոնք մտածեն արարական հարցի մասին և ծանոթ լի-  
նեն այն գծարութեանների հետ, որոնց հանդիպել են այդ հար-  
ցի հետ գործ ունեցող մարդիկ: Իմ հուշերի այս մասում, որտեղ  
խոսվում է որպէս զորարանակի հրամանատարի իմ գործունեու-  
թեան մասին, ես կշարադրեմ այս հարցի բոլոր մանրամասնու-  
թեանները, իսկ այժմ ես բավարարվում եմ դեպքերի համառոտ  
նկարագրումով միայն, որոնք ընդգրկում են 4. Պոլսում իմ եւ-  
հանգստակետի պաշտօնում եղած ժամանակաշրջանը:

Մի շարք պատեանների և գործունեների ազդեցութեան տակ  
իրենց երկրի համար ռեֆորմներ պահանջող արարները Քյումիլ  
փաշայի պրեմիեր-մինիստր եղած ժամանակ եւհանգստակետ էդ-  
հեմ բնիկ հատուկ քուլլաութեամբ Բելլրութում ազգային ժողով  
հրավիրեցին: Այդ ժողովում Միրիայի և ամբողջ արարական եւ-  
հանգստեանի համար նրանք նշեցին մի շարք ռեֆորմներ և հանձնե-  
ցին կառավարութեանը: Մահմուդ Մեվթիֆ փաշայի իշխանութեան  
զւումի անցնելու կապակցութեամբ ու կառավարութեան կազմում  
փոփոխութեան մտցվելու հետեւանքով կառավարութեանն ազգա-  
լին ժողովը համարեց տեսրիմակաւ և ցրեց այն, հայտարարելով,  
որ եւհանգստեանի կառավարման հարցը բացառապէս ենթակա է

6 Աւմեց Զեմալ Փաշա (1872—1882)—Քուլքիայի պետական գոր-  
ծի և երիտօրդերի ռեֆորմատ զա Քարակէի կառակցութեան ղեկավարներից  
մեկը:

«Համաձայնությամբ սիրիացիների և բնդաւերապետ արարների հետ զլուր  
վերջում է Զեմալ փաշայի «Հուշերի լատինատառ թուղթերն հրատարակու-  
թեանից, որը լրացրել, մշակել ու կազմել է Զեմալ փաշայի որդին՝ Բեհեթ  
Զեմալը, և 1889 թ. լույս ընծայել Կ. Պոլսում: Այս զլուրը ազգագրվում է որս  
կրեատուններով:

Զեմալ փաշան խելսութեան է պատմական փաստերը, նպատակ ունենալով  
արդարացնելու պատերազմի տարիների իր զաւեակն գործունեութեանը Միրիա-  
յում՝ զենեղաւ-եւհանգստակետի և 4-րդ բաւակի հրամանատարի պաշտօնում:



պատշաճանեալի տնօրինութեանը, հետևաբար Քելլուսթի ժողովի որոշումները ուշադրութեան չարժանի տեսնեն:

Միջիայում և Հիբանանում արարական անկախութեան ժունտիկներն այնքան էին շատացել, և կառավարութիւնն այնքան էր թուլացել, որ գտնվեցին մի քանի լիպիներ, որոնք համարձակվում էին շնորհի վրայ թիթիկներ կապել, որոնց վրա գրված էր նահանգապետի անունը՝ ակտուրեքթի Հագիմա: Գամակոսում Մուքրի ալ-Ասալին և Մուհամմեդ Քուրդ Ալին՝ համարձակորեն զետեմ են նահանգապետ մարտինցի Արիֆ քեյի մաս և պահանջում նրանից նահանգապետութեան քարտուղարի հետացումը: Միջիայից այն պատճառով, որ նա չի կարողացել հասկանալ արարքներն լեզվով գրված ու իրեն ներկայացված խնդրագիրը և համարձակվել է ասել, թէ թուրքերենի թարգմանեք այն: Միջիական բոլոր թերթերը կատաղաբար հարձակվեցին կառավարութեան վրա և իրենց էջերը լցրել էին հայհոյանքներով թուրք ժողովրդի հասցնելու: Տրիպոլիից (Միջիայում) Շեյխ Թաշիզ օրդան նգիպտատում հրատարակած ԵԱլ-Մանարա թերթում այնքան խիստ վիրավորական լեզվով էր մեղադրել իթթիհազ վա Քերակկիի զեկավարներին ու ընդհանրապես թուրք ժողովրդին, որ այս թերթը կարողացող թուրքիայի ամենալար թշնամին կզաննար: Երբ կառավարութիւնը զբաղված էր բուլկանյան պատերազմով, Հելիպոլի թերակղզում գտնվող արարական զիվիլիայի սպաները փոխանակ ազնվորեն կատարելու իրենց պարտքը, պաշտպանեցին Կ. Պոլսի արար հայրենասերներին և լույսները: Հետո արար զեկավարները մտադրվեցին արարական ընդհանուր կոնգրես հրավիրել: կառավարութիւնն արգելեց այն: Իմանալով, որ կառավարութիւնն օրինական միջոցների պիտի գիտնայ այս շարժման կազմակերպիչների գեմ, ֆրանսիական կառավարութեան համաձայնութեամբ ու նույնիսկ հատուկ հրավերով, նրանք որոշեցին կոնգրեսը հրավիրել Փարիզում և արարական բոլոր ներկաներին հրավիրագրեր ուղարկեցին, առաջարկելով պատվիրակներ ուղարկել այս կոնգրեսին: Այս շարժման նախաձեռնողների գլուխ էին կանգնած այն ժամանակ Համայնց պատշաճանեալի զեպուսասա Արդ ալ Համիդ ալ Չահրալի էֆենդին, Քելլուսթում լույս տեսնող ԵԱլ-Մուֆիտա թերթի հրատարակիչ Արդ ալ-Ղանի

7 Մուհամեդ Քուրդ Ալի (1876—1853)—արար ազգային զործի, 1918 թ. Գամակոսում հիմնված զետեմիկների արարական ակադեմիայի ստանին պրեզիդենտը, զրոյ և պատմարան:

ալ-Արքային և Եկէ Մունթասա ալ-Աղաբիս կազմակերպութիւն  
 նախագահ Արզ ալ-Քերիմ ալ-Խալիլը: Որոշ ժամանակից հետո,  
 Ֆրանսիական կառավարութիւն հովանավորութիւն և պաշտօնու-  
 թիւն տակ, այս կոնգրեսը փոխեց իր ծրագիրը և ակնհեր գարձավ,  
 որ գործը զերջանալու է Միբիալի Ֆրանսիական օկուպացումով:  
 Այդ ժամանակ ես քիչ էի զբաղվում արարական հարցով: Օս աշ-  
 խատեցի միայն ցույց տալ, թե ինչպես են օտարերկրացիները ու-  
 զում կրկնպատակութիւն զցել մահմեդական երկու մեծ ժողովուրդ-  
 ների՝ թուրքերի և արաբների միջև: Այս հարցում ես այն կար-  
 ծիքին էի, որ մեզ անհրաժեշտ էր հարաբերութիւնների մեջ մտնել  
 բարձրաստիճան մի քանի արաբների հետ, որոնց հայրենասիրա-  
 կան զգացմունքների և կրօնական համոզմունքների վրա մենք  
 կարող էինք հույս զնել և որոնց հետ միասին որոշել, թե արաբ-  
 ների պահանջներից ինչպիսիները կարող էինք բազարարել ա-  
 ռանց խախտելու մեր շեղհանուր շահերը և իսլամի միասնութիւն-  
 նը: Բարեբախտաբար, կառավարութիւնը համակարծիք եղաւ  
 նույն տեսակետին և Փարիզ ուղարկեց Միզհատ Շուքրի բնին ու  
 մի քանի օկտական գործիչների՝ կոնգրես ժամանած արաբ մե-  
 ծամեծների հետ բանակցութիւններ վարելու և համաձայնութիւն  
 գալու համար: Իրոք, կոնգրեսը տեղի ունեցավ, բայց Միզհատ  
 Շուքրիի և նրա ընկերների տեսակցութիւնը մահմեդական արաբ-  
 ների հետ, գործին այլ ընթացք տվեց և կոնգրեսը արաբների պիտ-  
 վոր պահանջները ներկայացնելուց հետո ցրվեց:

Մի օր Քալաթ քնել Կ. Պոլսի նահանգապետութիւն շննքը  
 գալով, հայտնեց ինձ, որ հրավեր է ստացել ոմն շեյխ Արզ ալ-Ա-  
 զիզ Եավիշից՝ ուրբաթ օրը այցելելու: Սուլեյմանի փողոցում  
 գտնվող նրա տունը և բանակցութիւններ վարելու արաբների հետ  
 համաձայնութիւն գալու համար: Այնտեղ մենք պիտի հանդի-  
 պինք արարական զաղտնի կազմակերպութիւն նախագահի հետ:  
 Նկատի ունենալով, որ ես համարվում էի այս համաձայնութիւն

Ե Քալաթ Փաշա Մեհմեդ (1876—1921)—սփութիւն և Առաջադեմու-  
 թիւն կուսակցութիւն պակթուրքան և Հայաստան պարագլուխներից մե-  
 կը: 1903—1916 թթ. եղել է Օսմանյան կայսրութիւն ներքին գործերի մինիստր  
 և կուսակցութիւն Կնարտական կոմիտէի նախագահ, իսկ մինչև 1918 թ. Ըն-  
 անմբերի 11-ը՝ մեծ վեզիրը:

Ը Ենչև Արզ Ալ-Ազիզ Եավիշ—1897 թ. ծննդատուն Հիմնված ունեց  
 վաթսնիս կուսակցութիւն ղեկավարներից մեկը և այդ կուսակցութիւն օրգան  
 Եկ-այստե թերթի խմբագիրը:

կողմնակիցներից մեկը և զեռ Քաղզազում նահանգապետ եղած ժամանակ շատ բան էի արել այս հարցի կարգավորման համար, Քալաաթ բնիւր ավելացրեց, թե կառավարութունը որոշել է, որ զուեւ մասնակցես այս բանակցութուններին:

Նշանակված օրը մենք գնացինք հանդիպման վայրը: Մեզ դիմավորեց կարճահասակ, 28—30 տարեկան, թուխ զեմքով մի անձնավորութիւն: Նրա սև և մեծ աչքերը ցույց էին տալիս իր մարտի պայծառութիւնը և ուժեղ բնավորութիւնն տեր լինելը: Որպես արարական գաղանի կազմակերպութիւն ներկայացուցիւ նա մեզ ներկայացավ Արդ ալ-Քերիմ ալ-Խալիլ անունով: Ճաշից հետո սկսվեցին բանակցութունները: Ես անմիջապես նկատեցի, որ նա զխավորապես ձգտում էր այն բանին, որպեսզի Կ. Պոլսում կարևոր պաշտօնների մեծ մասը տրվեր արաբ հայտնի անձնավորութիւններին և այն համոզման հկա, թե արարական ռեֆորմները հանգում էին միմիայն բավարարելու այդ մարդկանց փառասիրութիւնը, որոնք ձգտում էին քաղաքական կարևոր դեր խաղալ: Այնուամենայնիվ, մենք սկսեցինք համանաշխութիւն պայմանները մշակել, որոնք հետագայում շարադրվեցին հետևյալ վեց կետերով.

Տեղական վարչութիւնը կազմված պիտի լինի տեղացիներից, որոնք իրենց աշխատանքում պետք է զեկավարվեն նահանգների կառավարման մասին հատուկ օրենքով: Միշնակարդ և նախակրթական դպրոցներում լուսուցումը պետք է տարվի արաբերեն լեզվով: Պետական մի շարք պաշտօնատեղերում գործերի վարումը պիտի թույլատրվի նույնպես արաբերեն լեզվով: Քաղաքացիական և քրեական բոլոր գատաճեիտները պիտի զրվեն արաբերեն լեզվով: Պաշտօնական անձնավորութիւններին ուղղված արաբերեն լեզվով դիմումները պետք է քննուեմեն: Որոշակի թվով արաբներ պիտի նշանակվեն Սենատում, պետական խորհրդում, վճարակ գատարանում և Շեյխ ուլ-խալամի խորհրդում:

Սրանից հետո Արդ ալ-Քերիմ ալ-Խալիլի և շեյխ Արդ ալ-Համիդ ալ-Ջահրավիի հետ միասին այս հարցերը մի քանի անգամ քննարկեցինք Բերայի Երոնկերա հյուրանոցում: Այս բոլոր ռեֆորմները կենսագործվեցին կառավարութիւն կողմից հաստատվելուց հետո: Քալաաթը միակն էր, որ զեմ էր Արդ ալ-Համիդ ալ-Ջահրավի էֆենդիին սենատում նշանակելուն, որի վրա շատ արաբներ հույս չէին զետում: Արդ ալ Քերիմ ալ-Խալիլը մի քանի անգամ եկավ ինձ մոտ և խնդրեց այս հարցը վերջնականապես պարզել

Քալաթ բնի հետ Վերջապես կատարվեց Արզ ալ-Համիդ ալ-Զահրավիի ցանկութունը, սակայն նա բավարարված չէր սենատում իր նշանակումով, նա առաջնապես ցանկանում էր տեղ գրավել Ենյե ուլ-խալամի խորհրդում:

Այդ ժամանակվանից սկսած Արզ ալ-Քերիմ ալ-Խալիլը կարեւոր անձնավորութուն դարձավ և Միրիայում «Ալ-լամարբադի-լա»<sup>10</sup> կուսակցութիւնն զլիսավոր տեսուչի պաշտոնը ստանձնելով, վերադարձավ այնտեղ: Ներքին գործերի մինիստր Քալաթ բնի ձեռք առած արտակարգ և էֆեկտիվ միջոցառումների շնորհիվ Արզուլ-Քերիմ ալ-Խալիլին շահուղից ղեկուստանների պալատ մտնել, լեայած, որ նրա համախոհները շատ էին աշխատել, որպեսզի նա զեպուտատ դառնար: Գեպուտատների պալատի ընտրութուններում հաղթանակ տարան կառավարական, ազնիւ ճիշտ ասած՝ արարական նահանգներում մեր կուսակցութիւնն թեկնածուները:

Արարական հարցը ցնեարկելիս շեմ կարող շփշատակել մի զեպրի մասին, որ իմ կարծիքով շատ մեծ կարևորութուն ունի: Այդ ժամանակ էնվեր փաշան<sup>11</sup> զինվորական մինիստր էր, իսկ նա հասարակական աշխատանքների մինիստր էր: Ազիզ Ալի<sup>12</sup> բնը, ծագումով եգիպտացի, զլիսավոր շտաբի մայոր, փառասիր մարդկանցից մեկն էր, որոնց հանդիպած լինեի կրքնիցե: Նա չէր կարող համաձայնվել, որպեսզի Արզ Ալ-Քերիմ ալ-Խալիլը և Արզ ալ-Համիդ-ալ-Զահրավի ազնիւ մեծ հեղինակութիւն ունենալին արարների մտ, քան ինքը: Նա լիտիութիւն ունեցավ քացահայտութեն հայտարարելու, որ արարները կրքեք չեն բավարարվի նման համաձայնագրի պայմաններով և նրանք շուք կգործադրեն ձեռք բերելու ներքին անկախութիւն և ունենալու իրենց սեփական բանակը: Նա նույնպես հայտարարեց, որ արարները ձրգտում են քաղաքական միութիւնն թուրքերի հետ՝ Ազատը-հունգար-

10 «Ալ-լա մարբադի-լա» (Ազնեարեւոյտն կուսակցութիւն), հիմնվել է 1912 թ.՝ նպատակում ապրող արքա վարանդիների կողմից Ազնեարեւոյտն կուսակցութիւնը պահանջում էր Օսմանյան կայսրութիւն վերափոխուիչ պոլիտեմական սահմանադրական միակուսութիւն, վարչական լախ ազնեարեւոյտով:

11 էնվեր Փաշա (1881—1922)—Նրթաթուրքերի կուսակցութիւն պարզուելներից մեկը, 1914 թ. նշանակվում է ազմտկոն մինիստր: Արեմայան Հայտատանում հայերի բանակմային շարքի կազմակերպիչներից մեկը:

12 Ազիզ Ալի ալ Մայի (1875—1955)—Արարական զինվորական գործի, ալ-Անգո Հայրենասիրական գազանի կազմակերպութիւն հիմնադրը:

բական միապետութեան նման, Իրականութեան մեջ արարելիքը ավելի հեռու գնացին հունգարացիներէից և պահանջեցին, որպէսզի իրենց բանակում պաշտօնական լեզու ճանաչվի արարելիքը, Ազիզ Ալին շամաւնց հրապարակեալ հայտարարելու, թէ ովքեր բազմարժեքներն աննշան ռեֆորմներով, նրանք բացառապէս իրենց համար մենք բերեցին տաք տեղեր, հեռանալու նրանց պիտի համարել իրենց ժողովրդի զավակները և հետագայում նրանց հարկ կլինի գառնապէս զղջալ:

Ազիզ Ալի բելին ճանաչում եմ այն ժամանակվանից, երբ նա կապիտանի աստիճանով ավարտեց զինվորական դպրոցը: Կարծում եմ, այդ (1804) թվականին էր: Նա շատ աշխատեց և մեծ ծառայութեան մատուցեց Մակեդոնիայի Պետրովիչ և Օսմանիյի զավակներում քուլդար պարտիզաններին հետապնդելու գործում: Լեռո, Լուսնաստանի սահմանների մոտ, երկար ժամանակ կովեց հույն, քուլդար և ալբանացի պարտիզանների դեմ: Սահմանագրութեանից առաջ մտնելով Վիսոթիուն և առաջագիմութիունէ կուսակցութեան մեջ, կարեւոր ծառայութիւններ մատուցեց նրան: Նա 1825 թ. մարտի 31-ի (18 ապրիլ 1809) ռեակցիոն շարժումը ճնշելու համար Կ. Պոլսի վրա շարժվող գործող բանակի շոկատներէից մեկի հրամանատարն էր: Կայսրի կամուրջի զբազումից հետո, այս շոկատի հետ շարժվելով թափհանների զորանոցի վրա, նա հաջողութեամբ զուրս շարտեց այստեղ նստած խռովարարներին: Մինչև այդ ժամանակ նա լի իմանում, թէ այս անձնավորութիւնը ինչ որ կապ ունի արարելիքի հետ: Ինչ հետ հանդիպելիս նա միշտ եղել է արտահարգ սիրալիք և զրուցել է շատ քաղաքավարի:

Երբ նա Ադանայի նահանգապետն էի, մի անգամ Կ. Պոլսու եկա և հանդիպելով Ազիզ Ալի բելին, մտքերի փոխանակութեան կատարեցիք: Եճանինք թերթի թղթակից ոմն Ահմեդ Շերիֆ բելի հրատարակած ընամակներ Բելլութից և Սիրիայից՝ վերնագրով հոգվածների մասին: Երբ ես նրան ասացի, թէ այդ նամակները սպառնալիքի սաղմեր են պարունակում օսմանյան միասնութեան և մահմեդական խալիֆաթի հեղինակութեան համար արաքսկան նահանգներում, Ազիզ Ալի բելը պատասխանեց սառը տոնով, թէ Արարելիքը միանգամայն իրավացի են: Գուք, թուրքերդ մինչև հիմա ի՞նչ արեցիք մեզ, արարելիքս համար, բացի նրանից, որ ձգտեցիք մեզ ոչնչացնել, վերավորեցիք ու արհամարհեցիք մեզ և հիմա բարեկամական վերաբերմունք եք սպասում մեզնից: Մի՞թե

դուք մոռանում եք, որ այստեղ՝ Կ. Պոլսում շնորհիւ ձեզ մոտ կան-  
չելու համար Էւրօք, Արօք, Արօքս եք ասում: Ամենամթին և ան-  
հասկանալի հարցերը պարզարանելու համար ասում եք. ԷՄա Կ-  
րօքի մազի նման էս: ԷՄՂ արօքի դեմքը, և յՂ էլ Գամասկոսի  
քաղցրավենիքըս արտահայտութիւնը ձեր ամենասիրած խոսքե-  
րիցն է: Իսկ ձեր բանաստեղծներից մեկը ասել է. ԷՄն գիշերը,  
երբ ես դուրս եկա Գամասկոսից, ասացի, այո, որհնգած լինի այս  
գիշերըս: ՄԻ՞թե սա եւույնպէս ձեր ամենասիրած ակնարկներից  
մեկը չէ. ապա հիշեք, թէ ինչպէս սահմանադրութեան հայտարար-  
ումից հետո, հատկապէս արարքների վերազորելու համար, սի-  
րիական բանակի մարշալի պաշտոնին նշանակեցիք Հուլիպոսի  
սերնդից մեկին, առանց բարոյական սկզբունքների մի թաթարի,  
որին ասում են Բաղդադում և ամբողջ Իրաքում: Դուք շատ լավ  
գիտեք, որ արարքները ասում են թաթարներին: Օսման փաշա-  
լին 5-րդ բանակի հրամանատար նշանակելը, բացի արարքների  
արհամարհելուց, ուրիշ նպատակ չի հետապնդում:

Սա ապշելի էի լսելով այս աստիճանի անհնթիթ խոսքեր ին-  
տելիգենտ մի մարդուց: Օսման փաշայի մասին խոսքերը ես վերա-  
գրում էի նրա անձնական զգացումներին: Սա գիտեի, որ մի ան-  
գամ Մակեդոնիայի Կոստնա քաղաքում, որտեղ Ազիզ Ալի բեյը  
ժառայում էր բանակում, ես վեճի բռնվեց Օսման փաշայի հետ:  
Այս վերջինը Ոսկուրի բանակի հրամանատարը լինելով, զորա-  
տեսի ժամանակ զգուշացրեց նրան՝ իր վատ սովորութեամբ բուր-  
բի հետ ժաղրական տոնով և վերազորական նկատողութիւններով  
խոսելու համար: Սրան Ազիզ Ալի բեյը գոպիտ պատասխան տվեց:  
Լսելով այսպիսի պատասխան, Օսման փաշան ապշած մնաց և  
որպեսզի պաշտպանի իր արժանապատւութիւնը, գիմեց խիստ  
միջոցների ու հրամայեց բանասարկել Ազիզ Ալի բեյին: Այդ ժամա-  
նակվանից սկսած Ազիզ Ալի բեյը ատելութեամբ լցվեց այդ մար-  
դու դեմ:

Սա պատասխանեցի Ազիզ Ալի բեյին, որ թուրքերը, հատկա-  
պէս Անատոլիոսի թուրքերը, շատ բարձր են զնահատում արարքե-  
րին և որ միանգամայն սխալ կլինեն արարքների հանդէպ մեր վե-  
րաբերմունքի մասին դատել ուլինը նշանակող ասացվածներով:  
Այդպիսի կրթված մարդիկ, ինչպիսին դու ես, իրենց զգացմունքնե-  
րը հիմնելով անձնական հարաբերութիւնների վրա և թույլ տա-  
լով իրենց այդ ձևով խոսել, անուղղելի վնաս են հասցնում մահ-  
մեղական աշխարհին:

Այդ զեղծից հետո Ազիզ Ալի բնյև իր ցանկությամբ ուղարկ-  
վեց նմեն, Իզզեթ փաշայի շտաբում ծառայելու համար: Հետո ետ  
իմացա, որ նա սկսել է ասրվել արարական գաղափարներով և  
հոգեկան մեծ զլխացավանքներ պատճառել խեղճ Իզզեթ փաշա-  
յին: Հետագայում, երբ իտալացիները պատերազմի մեջ էին մեզ  
հետ, նա մեկնեց Կիրենաիկա և էնվեր ու Մուսթաֆա Փեմալ<sup>13</sup>  
բնիբի հետ միասին աչքի ընկավ Քենգազիի շրջակայքի քաղաք-  
ների պաշտպանության գործում:

Ազիզ Ալի բնյւ արար հեղափոխականների շարքում ամենա-  
կարեւոր անկնաճորություններից մեկն էր և հետագայում արա-  
րական աշխարհում շատ մեծ գործեր կատարեց: Այդ պատճառով  
սգտակար համարեցի իմ տպագրությունները մտարեբել նրա անց-  
յալի արժանիքների ու թերությունների մասին:

Hatıralar. Bahriye Nazırı ve 4 Ordu Kumandane Cemal Paşa, İstanbul,  
1909, s. s. 68—76.

Tamamlayan ve Tertibleyen Behcet Cemal

#### ԱՐԱՐԱ-ՔՈՒՅՔԱԿԱՆ 1912 թ. ՊԱՇՏԱՆԱԳՐՈՒՄ

Հաղված առաջին—Արարական բույրը երկրներում ասրական  
և միջնակարգ ուսուցումը պետք է լինի արարեղեն լնզվով: Բարձ-  
րագույն ուսուցումը եույնպես պետք է լինի մեծամասնության

<sup>13</sup> Մուսթաֆա Փեմալ Քեյ—նկատի ունի Մուստաֆա Փեմալ Աթաթուրքին:

<sup>14</sup> 1912 թ. Հունիսի 18—22-ը Փարիզում տեղի ունեցավ արարական I կոնգ-  
րեսը, որին մասնակցում էին Միրխայից, Լիրաններից, Իրաքից և ԱՄՆ-ի արա-  
րական գաղափիր էկան Յե պատվիրակներ ու ազելի քան 200 հուրեր: Քուրդա-  
կան կառավարությունը Հեծ շանքեր թափեց, որպեսզի ֆրանսիական կառավարու-  
թյունն արգելի կենդանի հրավիրումը, քայք պարզյուն: Քուրդական կառավա-  
րությունը ստիպված էր փոխել իր զիրքը և Փարիզ ուղարկել «Միություն և Ասա-  
շարժում»-ու կուսակցության քարտուղար Միգլոտ Նուրբի բնյև: Նա կոպ  
հաստատեց կոնգրեսի ղեկավարների հետ և մի շարք հարցերի վերաբերյալ «Մ-  
շխտաստեց արարներ» կազմակերպության Լերիայացուցի: Արդ այ-Փերիմ ալ-  
ետիլիի հետ համաձայնության գալով, վերադարձավ Փոլիս: Այտանց Արդ ալ-Ազիզ  
Շազիշի տեղի Քուլաթ և Հեմալ փաշաների ու իթթիհուդի ուրիշ ղեկավարների  
մասնակցությամբ շարունակվեցին քանակցությունները և երկու կողմերը ստորա-  
գրեցին 11 կետերից բաղկացած պայմանագիր: Հետագայում երիտթուրքերը քու-  
լուր միջոցները գործադրեցին, որպեսզի վիճեցնեն պայմանագրի կենսագործումը:  
Իսկ առաջին համաշխարհային պատերազմը առիթ հանգիստացավ, որպեսզի երիտ-  
թուրքերը վերջնականապես հրաժարվեն արարա-թուրքական այս պայմանագրից:

լեզվով: Սահայն օսմաներեն լեզվի ուսուցումը պարտադիր է միջ-  
նակարգ դպրոցներում:

Հողված երկրորդ—Կողմերը պայմանավորվում են, որ զեկա-  
վար պաշտոնյաներն ընդհանրապես լինեն արաբներն լեզվին զի-  
տակ: Մյուս բոլոր պաշտոնյաները պետք է նշանակվեն նահան-  
գի խորհրդի կողմից: Իսկ դատավորները և արգարազատության  
պաշտոնյաները, որոնք գործում են բարձրագույն հրամանով (այ-  
սինքն՝ սուլթանի հրամանով), պետք է նշանակվեն կենտրոնից:  
Նահանգապետները բացառությամբ են կազմում վերջ նշված պայ-  
մանից:

Հողված երրորդ—Վակֆային կազմածքները և հաստատու-  
թյունները, որոնց միջոցները հատկացվում են տեղական բարե-  
գործական կազմակերպություններին, պետք է թողնվեն տեղա-  
կան համայնքների խորհրդին՝ դրանք զեկավարելու համար սահ-  
մանված պայմաններով:

Հողված չորրորդ—Հասարակական աշխատանքները պետք է  
թողնվեն տեղական վարչություններ:

Հողված հինգերորդ—Խաղաղ ժամանակ արտք զինվորներն  
իրենց զինվորական ծառայությունը պետք է կատարեն արաբա-  
կան երկրների զինվորական այն շրջաններում, որոնց ամ-  
րացված են, իսկ այն զինվորները, որոնց այժմ անհրաժեշտ է ու-  
ղարկել Հիջազ, Ասիր և Ծմեն, աղարկվելու են օսմանյան բոլոր  
նահանգներից՝ որոշակի տեղոսային հարաբերությամբ:

Հողված վեցերորդ— Այն որոշումները, որոնք ընդունում են  
նահանգական գլխավոր խորհուրդներն իրենց օրինական լիազո-  
րությունների սահմաններում, պետք է կենսապրոծվեն բոլոր զեկա-  
քերում:

Հողված յոթերորդ—Որպես հիմնական սկզբունք ընդունել,  
որ միևիստերների կարիներում լինեն անվագն երեք արաբներ,  
ինչպես նաև եռույն թվով արաբներ լինեն կենտրոնական ազարա-  
ներում որպես խորհրդատուներ և օգնականներ: Հիմնական որոշում  
ընդունել, որ պաշտոնական հանձնաժողովներում, պետական խոր-  
հրդում, շենյեբի իսլամական խորհրդում և կենտրոնական այլ  
վարչությունների խորհուրդներում լինեն երկու կամ երեք արաբ-  
ներ, ինչպես նաև յուրաքանչյուր միևիստերությունում՝ յոթսու կամ  
հինգ տարբեր աստիճանի արաբ պաշտոնյաներ:

Հողված ութերորդ—Ներկայումս հինգ նահանգապետներ և  
տասը մուֆասսարիֆներ նշանակել արաբներից: Վերացնել քաղա-



քացիական, դատական և զինական վարչություններում արար պաշտոնյաների նկատմամբ կիրառվող խտրականությունը, որ չի զործադրվում այլ պաշտոնակիցների նկատմամբ:

Այսուհետև պաշտոնյաների նշանակումը, նրանց պաշտոնների բարձրացումը և կարգապահական տույժի ենթարկելը պետք է կատարվի հասուկ օրենքի համաձայն:

Հողված ինձնեւորող—Ցուրաքանչյուր արարական նահանգից երկու արար նշանակել սենատում:

Հողված ասսենրադ—Ցուրաքանչյուր նահանգում, ըստ անհրաժեշտության, նշանակել օտարերկրացի մասնագետ տնտեսներ: Այս տնտեսների լիազորությունները պետք է սահմանվեն հասուկ կանոնադրությամբ, որը կապահովի նրանցից ստանալու պահանջվող և ակնկալվող օգտակար բարենորոգումները:

Հողված ասսեմբլեւորող—Նահանգների տնօրինությանը թողնելով զհրատեսչությունների բյուջեներում գոյություն ունեցող զեֆիցիտը պետք է ծածկվի նահանգի բյուջի նկամուսների բավարար հավելումով: Բարեգործական հաստատություններին պահանջող շենքերից ստացվող նկամուսների կեսը հատկացվելու է տեղական վարչություններին՝ կրթական նպատակների համար:

Քալաթ

Արզուլ թերիմ ալ հալիլ

ساطع الحصرى—البلاد العربية والدولة العثمانية، بيروت

1970—1375 1375

Մագի ալ Հուսրի, Արարական երկրներ և սոմենյան գեոսթյունը, Քեյրուք, 1900, էջ 124—125:

## ՋԱԿԱ ԿՈՐԻ

ՄՈՒՍՈՒՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԿՆԱՆՆԱ

### Արարական հարցը

Գոյության համար զննի փոխարեն գոյության համար միություն. ահա այս երկրորդ տեսությունը ամենամատահելի, օգտակար և ամենատրամաբանական սկզբունքը կարող է լինել թուրքերի և արաբների համար:

15 Այս հատվածը վերջած է թուրք զուլ և հասարակական գործիչ Հեյալ Կուրթի (1877—1939) անպապ պատմությունը գրքից, որ 1912 թ. լույս է տեսել Կ. Պոլսում՝ «Քարիհ իսթիքարա» վերնագրով: Հեյալ Կուրթի գրքում, կար-

